



ԱՐՄԵՆԻԱ ԶՈԼԵՐՆԱ



Փափկազնի



792/479.25(692) Գաղեցիլ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ
ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ
ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԻՇԵԼ ԶԱՐՅԱԼ



ԺԵՓԽՈՅՑԻ

A 11
76518



ԵՐԵՎԱՆ • 1988

ԳՄԴ 49.7Հ

Փ311գ

ՀԱՅՈՒԹ
ՀԱՅՈՒԹ

Զարյան Ռ.

Փ311գ Փափազյան: [Հոդվածներ)] —Եր.: ՀԹԳՄ, 1988.—
131 էջ, 8 թ. նկ.

Սույն գրքում գետեղված են Սովետական Միության ժողովրդական արտիստ Վահրամ Փափազյանի մարմնավորած Օթելլոյի մասին հեղինակի տարբեր ժամանակ գրած բանավիճակին հոդվածները և հուշերը:

4907000000—01
Ձ 728(02)88 131—88 (Տ)

ԳՄԴ 49.7Հ

© Հայաստանի թատերական գործիչների միություն, կազմելու և առաջին անգամ հրապարակվող տեքստերի համար, 1988

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Հին մարդիկ երևի իրավացի էին, որ ասում էին՝ «Մարդը որոշում է, աստված՝ տնօրինում»: Դեռ 40-ական թվականների կեսերից ծրագրել էի Կահրամ Փափազյանի մասին մենագրական ուսումնասիրություն ստեղծել: Խոսքն այն տարիների մասին է, երբ գրված չէին ո՛չ «Սիրանովչը», ո՛չ «Ադամյանը»: Ոչ միայն գրված չէին, այլև մտքովս էլ չեր անցնում, թե մի օր գրելու եմ: Բայց գրվեցին: Ուրիշ գրքեր էլ գրվեցին, վերահրատարակվեցին, բայց «Փափազյանը» այդպես էլ մնաց չգրված: Տգրեցի նույնիսկ այն բանից հետո, երբ 1956-ին ստացա արտիստից նամակ այն մասին, թե կարդացել է «Սիրանովչը» և հույս ունի, որ իմ ստորագրությամբ լուս կտեսնի մի այդպիսի հատորյակ իր մասին:

Կսխալվի ընթերցողը, եթե չգրելս վերագրի չկամենալուն և ոչ թե պատասխանատվության զգացման: Մի բան է, երբ գրում ես չտեսածդ հանձարի մասին պահպանված նյութերի հիման վրա՝ թատերախոսական, նամակ, հուշ, որոնց հեղինակները քո ուժի և մակարդակի մարդիկ են եղել, ի վերջո, այլ բան է հանդգնել ու գրիչ առնել ծեռքը վերստեղծելու գեղարվեստական մի կյանք, որ քո աչքերի առաջ է անցել: Ուզում եմ երիտասարդ ընթերցողին զգուշացնել նաև, որ իմ և իր տեսած Փափազյանները նույնը չեն: Ծշմարիտ Փափազյանը, անհամեմատելի ու անկրկնելի, որի մասին միտք ունեմ պատմելու, 20-ական թվականների Փափազյանն է, մասսամբ 30-ական թվականների առաջին տարիների: Հըրաշը եր դա: Փալլատակեց ու անցավ ու հիմի, շատ

տարիներ անց, մեկ-մեկ պահեր են լինում, որ ինձ, 20-ական թվականների հափշտակված հանդիսատեսիս անգամ թվում է, թե մեր տեսածը, մեր ապրածն ու վերապրածն իրականություն չեր, այլ հեքիաթ, միՓ... Եվ այսօր դրա մասին գրողը պիտի կարողանա եթե ոչ հասնել, ապա գեթ մոտենալ այն կատարելության բարձրությանը, մտքի և հուզքի այն հրավառությանը, որ Փափագյան է կոչվում:

Հոգոս վրա ծանրացած այս պարտքը գեթ մասամբ մարելու նպատակով որոշեցի հրապարակել սույն ժողովածուն, որի մեջ ամփոփված են տարբեր ժամանակ իմ գրած հոդվածները Փափազյանի Օթելլոյի մասին, չընդգրկելով, սակայն, Օթելլոյին Նվիրված 1946-ի ընդարձակ դասախոսությունս, որից հրապարակել եմ ընդամենը երկու հատված («Թաշկինակ», «Վերջին արարված»), այն հուսով, թե, այնուամենալիվ, մի օր իրականացնելու եմ իմ վաղուցվա փափազը, և դա, իհարկե, վերամշակված վիճակում կազմելու է գրքի գլխավոր մասերից:

Այս գրքում տեղ են գտել նաև Փափազյանին նվիրված իմ հուշերը մի երկու դրվագի հավելումով, որ լսել եմ ուրիշներից և չեմ ուզենա, որ դրանք անհայտության մեջ մնան:

Ժողովածուի երրորդ բաժինը կազմված է արտիստի հորելլանների առիթով իմ պատրաստած գեկուումներից, որոնցից մեկն է միայն կարդացվել, իսկ մյուս երկու հորելլանները՝ 80 և 85-ամյակներ, նախատեսվել են, բայց չեն կատարվել, առաջինը՝ մահվան, մյուսը՝ անհասկանալի ու անհայտ պատճառներով, ու այս վերջին չկալացած հորելլանից հիշատակ մնաց մի սիրուն հրավիրատոմս:

Ահա, կարծես, բոլորը:

ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆԻ ՕԹԵԼԼՈՅԻ ՇՈՒՐՋ

ԲԱՑ ԽԱՍՏԱԿ Ս. ՆԵԼՍԻՆ

Հարգելի Սոֆյա Մարկովնա.

Վերջերս իմ ծեռքն ընկավ Զեր գիրքը՝ «Շեքսպիրը սովետական բեմում»: Կարդացի: Մտադիր չեմ քննության առնել Զեր գիրքն ամբողջության մեջ: Եվ, այնուամենայնիվ, չեմ կարող չասել, որ Զեզ բարի նպատակ է նեկավարել, և Դուք առաջինն եք, որ համարձակ փորձ արիք այդ ահագին, բազմակողմանի, մեծաքանակ «գործող անձեր» ունեցող ասպարեզի նյութը հավաքել, դասակարգել և դրա հիման վրա կատարել առաջին եզրակացություններն ու ընդհանրացումները: Ինձ հետաքրքիր թվացին Զեր աշխատության շեքսպիրյան էջերը, թերևս ավելի, քան բեմական մարմնավորման նվիրված հատվածները, թեև սրանց մեջ ել քիչ չեն ուշագրավ դիտողություններ, մտորումներ ու կոահօմներ: Զեմ կասկածում, որ տարիներ անց հանդես կգա մի ուրիշ թատերագետ և ծեռք կզարկի նույն նյութին, նույն հարցերին: Նրա գործն ավելի դյուրին կլինի, քանի որ նա, եթե անգամ առարկի Զեզ, գործ կունենա մի պրոբլեմի հետ, որի նախափորձն արդեն կա: Այսինքն՝ Զեր գիրքը:

Դժվարանում եմ ասել, Զեր աշխատությունը արժեքավորող հոդվածներ լուս տեսել են, թե ոչ: Ինչ-որ աչքովս չեն ընկել: Եթե չի արվել, ուրեմն՝ կարվի: Ու եթե ես հղաց Զեզ այս նամակը հասցեագրելու միտքը, ապա դրա պատճառը այն դժվարիասկանալի և, իմ խորին համոզումով, ոչ զիշտ գնահատությունն ու բացատրությունն է, որ ստացել է Փափազյանի Օթելլոն Զեր գրքում:

Դուք կարող եք արդարանալ Զեր գրքի առաջաբանի այն խոսքերով, թե գիրքը ոչ այնքան պատմական բնույթ ունի, որքան պրոբլեմային-տեսական: Հետևապես, քննության համար նկատի են առ-

Նըված «արժեքավոր, անգլիական դրամատուրգի ստեղծագործության հետ կապված, առանձին պրոբլեմների նորարարական լուծմամբ հետաքրքիր, դասական դարձած շեքսպիրյան ներկայացումները, ինչպես նաև վիճելի և դիսկուսիոն ներկայացումները»:

Դա Զեր իրավունքն է: Հեղինակային իրավունքը: Ոչ ոք չի կարող առարկել, թե ինչու եք այդպիսի բնույթ տվել Զեր շարադրանքին: Պրոբլեմների շուրջ համախմբելով Զեր ձեռքի տակ եղած նյութը՝ Դուք, անշուշտ, կարող եք, և այդպես ել արել եք, թատերական ինչ-որ երևույթի առավելություն տալ մյուսի նկատմամբ:

Դա այդպես է, իհարկե:

Այլ հարց, եթե Դուք պատմական հետազոտություն գրեիք: Ինչ խոսք, այն ժամանակ Դուք պարտադրված պիտի լինեիք պահպանել ժամանակագրական հետևողականությունը և բաց չթողնեիք աշքի ընկնող ոչ մի երևույթ:

Բայց այս ծշմարտության կողքին կա և մեկ ուրիշը:

Որքան ել աշխատությունն ունենա տեսական բնույթ, միևնույն եւ, նա ելնում է պատմությունից, այն փաստերից, որ իրենց ժամանակի ծնունդն են: Եվ, վերջապես, շեքսպիրյան կերպարների ըմբռոնումը սովետական թատրոնում մի քարացած ծշմարտություն չէ, որ, անկախ ժամանակից ու պատմությունից, քննության առնվի ու ասվի, թե որքան ու ինչ չափով է այս ոեժիսորի կամ այն դերասանի խաղը համապատասխանում այդ մշտակալուն ծշմարտությանը: Երևույթների քննությունը չի կարող ժամանակակից հետազոտողին ներկայանալ պատմական հաջորդականությունից և փոխադարձ կապերից դուրս: Խոսքս ժամանակագրական հետևողականության մասին չէ: Դասավորեք Զեր նյութը ըստ Զեզ հետաքրքրող հարցերի, բայց իո չե՞ք կարող այդ նույն հարցերի քննությունը կատարել՝ նկատի չունենալով դրանց պատմական ակունքները:

Եվ հետո:

Եթե երևույթը պատմական պայմաններից կտրված չդիտվի, այն ժամանակ վկա կլինենք նաև այնպիսի փաստերի, եթե մի եպոխայի համար պրոգրեսիվ երևույթը հաջորդ դարաշրջանում դադարում է այդպիսին լինելուց:

Հարգելի Սոֆյա Մարկովնա, չկարծեք, ի սեր աստծո, թե Զեզ դասեր տալու հավակնություն ունեմ: Շատ հեռու եմ այդ մտքից և

բնավ չեմ կասկածում, որ այս շատ պարզ Շշմարտությունները ամենքին ել լավ հայտնի են: Եվ եթե, այնուամենալիվ, անհրաժեշտ համարեցի հիշել դրանք, ապա միայն նրա համար, որ պատմականության սկզբունքը, որ Զեր գրքում բնավ էլ անտեսված չէ, անտես է առնվել, երբ բանը վերաբերվել է Փափազյանին:

Կարելի՞ է աչքաթող անել սովետական շեքսպիրյան թատրոնի այնպիսի փաստեր, որ ժամանակին երևույթ են համարվել: Ի՞նչ եք կարծում, կարելի՞ է արդյոք աշխատության տեսական բնույթի պատճառաբանությամբ, բանի տեղ չդնել, չուսումնասիրել և գրքից դուրս թողնել, նույնիսկ ընդհանուր ակնարկի մեջ չհիշատակել թատերական այնպիսի երևույթներ, որոնք գրականության մեջ բարձր գնահատության են արժանացել:

Երկու օրինակ միայն:

Աղրբեցանական թատրոնում Տուգանովը բեմադրել է «Համլետ»: Դա 1926-ին էր: Այդ բեմադրությունը ժամանակին վեճերի առիթ է տվել: Բայց Զեր գրքում դրա մասին մի խոսք անգամ չի ասված: Զեմ ասում, թե Եջեր Նվիրեկը, Ժավալվեկը այդ բեմադրության շուրջ, բայց այդ մասին հիշատակել հր կարելի՞ էր: Բացեք, խնդրեմ, իմ գրչակից ընկերոջ՝ պրոֆ. Զաֆար Զաֆարովի գիրքը՝ «Աղրբեցանական դրամատիկական թատրոնը» և Դուք այնտեղ հետաքրքիր բան կգտնեք Զեզ համար:

«Համլետի» հետ կապված մի այլ փաստ:

1925-ին, Ռուսավելու անվան թատրոնում Մարշանիշվիլին բեմադրեց Շեքսպիրի նույն ողբերգությունը: Միայն այն, որ ներկայացման հեղինակն էր Մարշանիշվիլին, 20-ական թվականների նշանավոր ռեժիսորը, պետք է որ այդ «Համլետը» գրավիչ դարձներ Զեր աչքին: Համլետի դերը կատարում էր Ռուշանգի Զխեհծեն, թեև այն ժամանակ բոլորովին երիտասարդ, ընդամենը քսանյոթ տարեկան, բայց մեծ ներքինի և սուր ինտուիցիայի դերասան, որը ըստեղծեց Դանեմարքայի իշխանի մի ինքնատիպ կերպար: Իր վիճելի հանգամանքներով հանդերձ՝ Մարշանիշվիլու բեմադրությունը և Զխեհծեի կատարումը անպայման երևույթ էին: Թե նյութի ուսումնասիրությունը Զեզ ինչ եզրակացությունների կրերե՞ ուրիշ հարց է: Դուք կարող եք այլ գնահատական տալ, քան տվել են ժամանակակիցները, քան այն, ինչ այսօր ասվում է այդ ներկայացման

մասին, բայց գոնե փաստն արծանագրել պարտավոր էիք: 1925-ին Բուրջալանի բեմադրությամբ և Հրազդա Ներսիսյանի կատարմամբ շեքսպիրյան հերօսը բարձրացավ հայկական բեմ: Այդ նույն ժամանակները, և նույն Անդրկովկասում, Երևանում, Թիֆլիսում և Բաքվում Փափազյանը մարմնավորում էր Համետի կերպարը: Մի՞թե Զեզ ոչինչ չի ասում այն փաստը, որ Անդրկովկասի երեք ժողովուրդներին, համարյա միաժամանակ, գրադեցրել է «Համետի» բեմական լուսաբանության պրոբլեմը:

Մի այլ օրինակ:

Զեր աշխատության մենագրական գլուխներում «Տասներկուերորդ գիշերին» նվիրված հատված չկա: Երբ կարդացի ընդհանուր տեսությունը և տեսա, որ Դուք բարձր կարծիքի չեք լենինգրադյան, ինչպես նաև մուսկովյան բեմադրությունների մասին, և, իմ կարծիքով, իրավամբ, հասկացա, թե ինչու հարկավոր չեք գտել ծավալվել դրա շուրջը և բավականացել եք մեր թատրոնների ձախողման փաստն արծանագրելով: Բայց մայրաքաղաքային թատրոնների անհաջողությունների կողքին կա հայկական թատրոնի հաջողությունը՝ «Տասներկուերորդ գիշերի» բեմադրությունը 1944-ին, Լենինականի թատրոնում: Շեքսպիրագետ Ս. Մորոզովը, որը, եթե չեմ սխալվում, Զեր ուսուցիչն է եղել, այդ բեմադրությունը նայելուց հետո իր տպավորությունը ծևակերպել է այսպես. «Տաղանդավոր Վ. Ածեմյանի բեմադրած «Տասներկուերորդ գիշերը» փայլուն, ուրախ, կյանքով լի ներկայացում է»: Թերևս Դուք այդ ներկայացումից տեղյակ չե՞ք: Կարող է պատահել: Բայց չպիտի պատահեր: Չե՞ որ Դուք հետազոտող եք, գիտական աշխատություն եք գրել, հետևապես չպետք է սահմանափակվեք Զեզ արդեն հայտնի նյութով միայն: Ես դիտավորյալ մեջբերում կատարեցի ոչ թե հայկական, այլ ռուսական մամուլից: Վերջապես, այդ ի՞նչպես է, որ Դուք կարող եիք տեղյակ լինել, գրել, նույնիսկ քննադատել Կիրովականի թատրոնի «Զմեռային հեքիաթ» բեմադրությունը, իսկ մի բեմադրություն, որ գերազանցում է այդ կոմեդիայի մյուս բոլոր սովետական բեմադրություններին, կարող էր հանկարծ աչքաթող արվել և դուրս մնալ Զեր գըրքից:

Ինձ համար դա առնվազն անհասկանալի է:

Դարձյալ մի օրինակ:

Թբիլիսիում, 1953-ին, Վերիկո Անջափարիձեն մարմնավորեց Կլեոպատրայի կերպարը: «Անտոնիոս և Կլեոպատրան» Շեքսպիրի այն պիեսներից է, որ մեզանում քիչ է բեմադրվել, և ոռուսական թատրոնը, որքան ինձ հայտնի է, չունի այդ պիեսի բեմադրության տրադիցիա: Ուրեմն՝ ինչքա՞ն հետաքրքիր պետք է լիներ անդրադառնալ մի այնպիսի դերասանութիւն խաղին, ինչպիսին Անջափարիձեն է, որի ողբերգական ուժն ունեցող արտիստուիի վերջին քսան տարվա թատրոնական կյանքում ես չեմ հիշում:

Մի ուրիշ փաստ ևս:

Մարշանիշվիլու անվան թատրոնում Բուշիթաշվիլին բեմադրեց «Ռիշարդ Երրորդը»: Եվ Գոծիաշվիլին մեծ հաջողությամբ անձնավորեց այդ նշանակալի կերպարը: Այդ դերով հանդես եկավ Մոսկվայում, Վրացական արվեստի տասնօրյակին: Եվ, որքան ինձ հայտնի է, այս բեմադրությունը ժամանակով նախորդում է մեր մյուս բեմերում վերջին տարիներս բավական հաճախ երևացող Ռիշարդներին: Զեր գրքում դրա մասին ել հիշատակություն չկա:

Մի օրինակ ել սովետահայ թատրոնից:

Փափազանից բացի, ուրիշ Օթելլոներ ել է ունեցել հայ թատրոնը: Հիշեմ միայն երկուսին՝ Հովհաննես Աբելյանին և Հրաչյաներիսիսանին:

Աբելյանի մասին Մարինետտա Շահինյանը «Իզվեստիայում» գրել է.

«Աբելյանից ավելի լավ Օթելլո ես երբեք ել չեմ տեսել»:

Ներսիսյանի մասին Յուզովսկին իր «Կերպար և դար» գրքում գրել է.

«Դառնանք Ներսիսյանին ու խնդրենք ընթերցողի ուշադրությունը, որովհետև այստեղ ֆեստիվալի լավագույն եցերն են. աչքի ընկնող, ուղղակի ասենք՝ Ներսիսյանի հանձարեղ նվաճումները»:

Իսկ Դուք այս երկու դերասանների մասին ոչինչ չեք գրել, նույնիսկ անունները չեք հիշել: Ես գիտակցարար հենվում եմ ոռուսական գրականության ձանաչված դեմքերի վրա: Իհարկե, կարծիքները կարող են տարբեր լինել, և Դուք իրավունք ունեք շատերի, այդ թվում և Շահինյանի ու Յուզովսկու հետ համաձայն չլինել: Բայց ես հարց եմ ուզում տալ՝ մի՞թե գիտության մեջ հնարավոր է այդպիսի երկու ժայրահեղություն. մի դեպքում հիացում, մյուս դեպքում՝ կատարյալ

լուրթյուն. իբր թե չկա ու չի եղել: Իմ կարծիքով՝ հնարավոր չե: Հնարավոր է մի դեպքում միայն, երբ իրարամերժ կարծիքները բախվում են, որպեսզի երևան բերեն ծշմարտությունը, և այդ տեսակետներին իրագեկ ընթերցողն էլ կողմնորոշվի: Ես չգիտեմ, թե Զեր գըրքում էցեր զբաղեցնող դերասաններից շատե՞րն են, որ իրենց շեքսափիրյան կատարման համար արժանացել են այդպիսի գնահատության, այն էլ այդպիսի հեղինակությունների կողմից:

Զեմ կամենում Զեզ որևէ դիտավորություն վերագրել: Դրա համար իհմք չունեմ: Կարծում եմ, որ Փափազյանին նվիրված մի քանի տոռը պարզապես նյութը լավ չիմանալուն պետք է վերագրվի և, իհարկե, նաև այն բանին, որ հանձն եք առել անդրադառնալ ու գնահատել մի երևութ, Նեղություն չտալով Զեզ պրատել մամուլը, աչքի անցկացնել այն, թե Ե՛րբ և ի՞նչ է գրվել Փափազյանի մասին անցյալում, այսինքն՝ 20-ական թվականներին:

Պիտի կարծել, որ Դուք փոխանակ ծանոթանալու Փափազյանի շուրջը եղած գրականությանը, դեկավարվել եք նրա ուշ շըրջանի մի կամ երկու խալից ստացած տպավորությամբ և այդ տարածել ամբողջ Փափազյանի վրա, նրա բեմական կյանքի նաև այն շրջանի վրա, երբ սովետական թատրոնում, որպես շեքսափիրյան ողբերգակ, քիչ է ասել, թե նա աչքի ընկնող երևութ էր, այլ մի չափանիշ, որից ելնում էին՝ շեքսափիրյան դերակատարումներ գնահատելու համար:

Եթե դա այդպես է, — իսկ փաստորեն ասում են, որ դա իսկապես այդպես է, — ապա ուրեմն, Սոֆյա Մարկովնա, Զեզ հասկանալի պետք է լինի իմ վրդովված զարմանքը, թե ինչպես կարող էիք մի ծավալուն գիրք գրել՝ «Շեքսափիրը սովետական թատրոնում» և հինգ հարյուր էշից գոնե մեկը չնվիրել նրան և բավականանալիք միայն տասներկու տողով, այն եւ, ըստ իս, ոչ ծիշտ լուսաբանությամբ:

Այսքանն ըստ կարգի:

Այժմ՝ ըստ Եռլթյան:

Քանի որ իմ այս նամակը փոստարկու գցելու փոխարեն ես հրապարակում եմ մամուլում, ապա հարկ եմ համարում նախ մեջ բերել այն, ինչ Դուք գրել եք Փափազյանի մասին, և նոր միայն իմ առարկություններն անել:

«Արտիստ Վահրամ Փափազյանը իր բեմական երկարատև կյանքի ընթացքում խաղացել է Օթելլոյի դերը Եվրոպական շատ բնմերում, տարբեր լեզուներով։ Հին ողբերգակների ոգուն համապատասխան, նա բացում էր մեծ մավրի կրքերի մոլեգնությունը։ Վերջին տարիներին, հանդես գալով Սունդուկյանի անվան հայկական դրամատիկական թատրոնի բեմում, դերասանը դարձավ ավելի զուսպ և պարզ, թեև խաղում էր նույնքան ուժեղ և տաղանդավոր։ Բայց հետո, կրքերի ետևից ավելի բացահայտ թափանցում էին նրա միտքն ու կասկածները։ Այդպիսով, սովետական շեքսպիրյան թատրոնի կատարողական ընդհանուր ոճն իրեն զգալ տվեց հեղափոխությունից շատ առաջ պատրաստված դերի վրա և կերպարը դարձրեց ավելի բազմակողմանի, հետևապես մարդկային»։

Սիա Զեր ամբողջ գրածը։

Սկսենք մի փաստական անձշտությունից։

Որ Փափազյանը Օթելլոյի դերը խաղացել է տարբեր լեզուներով՝ հայերեն, ֆրանսերեն, թուրքերեն, ռուսերեն, շատ հազվադեպ նաև իտալերեն, ծիշտ է, բայց ինչի՞ հիման վրա եք գրել, թե իբր նա այդ դերը խաղացել է Եվրոպական շատ բեմերում։ Հեմ հասկանում։ Գոնե ինձ այդ հայտնի չե՞մ։ Ծիշտ է, նա եղել է իտալական թատրոնի շրջիկ թատերախմբի դերասան, բայց այն ժամանակները բոլորովին պատանի էր։ Եվ երբ եռնեստո Նովելլին, այդ խմբի ղեկավարներից մեկը, կատարում էր Օթելլոյի դերը, Փափազյանը նովյան ներկայացման մեջ հանդես էր գալիս Ռոդրիգոյի դերակատարմաբ։ Հետագայում նա գործել է հայկական թատրոնում, հեղափոխությունից հետո՝ հայկական և ռուսական բեմերում։ Եվ ապա, այն էլ 30-ական թվականներին միայն, որպես սովետական թատրոնի դերասան մեկնել է Փարիզ՝ «Օդեոնի» թատրոնի դերասանների խաղընկերակցությամբ Օթելլո և Համլետ խաղալու։ Ու եթե նա Փարիզի ծանապարհին հանդես է եկել մերձբալթյան, հատկապես Ռիգայի, բեմերում, իսկ Փարիզից վերադառնալուց հետո էլ, երկու տարի անց, Իրանում, ապա բոլոր դեպքերում Փափազյանը Եվրոպայում և ոչ Եվրոպայում, որպես Օթելլոյի կերպարը մարմսավորող, բարձրացել է բնմ իբրև սովետական թատրոնի ներկայացուցիչ, իբրև մեր բեմական շեքսպիրիանայի լավագույն ներկայացուցիչ, ինչպես, հա-

մենայն դեպս, ընկալվում էր նա այն ժամանակ և՝ թատերական հասարակյանության, և՝ թատերական ընսադատության կողմից:

Ես հասկանում եմ Ձեզ և կարող եմ նույնիսկ ենթադրություն անել, թե այդ փաստական անշտությունը ի՞նչ պատճառով է տեղ գտել Ձեր գրածի մեջ:

Զկամենալով Փափազյանին իսպառ մոռացության տալ, բայց և, ըստ երևույթին, առանձնապես չգնահատելով նրան Օթելլոյի դերում, Դուք հարկադրված եք եղել պարզապես մի սիեմա հնարել հատուկ նրա համար: Եվ նյութին անժանոր ընթերցողին այդ սիեմայի մեթոդոլոգիական տրամաբանությունը կարող է համոզել և նովինիսկ հօգուտ Փափազյանի թվալ: Ձեր հիմնական միտքն այն է, թե նրա Օթելլոն եվրոպական ըմբռնումների օրինակի վրա է խըմորվել, և երբ նա տեղափոխվել է մեր երկիրը, շարունակել է միահամանակ խաղալ նույն ծևով, նույն մեկնաբանությամբ, մինչև որ սովետական թատրոնում մշակված շեքսպիրյան նոր ըմբռնումները ազդում և փոխում են նրա կատարման ընդիհանուր պատկերը: Եվ իբր այդ փոփոխությունն էլ տեղի է ունեցել վերջին տարիներին միայն:

Սոֆյա Մարկովնա՝, իրականությունը բնավ էլ այդպես չէ, ինչպես ուզում եք ներկայացնել Դուք: Նովինիսկ հակառակն է: Փափազյանի վերջին կատարումների մեջ ուշագրավ կողմեր, իհարկե, կան, մանավանդ, եթե նկատի առնվեն լենինգրադյան բլոկադային անմիջապես հաջորդած խաղերը Օթելլոյի դերում, Բաքվում, Երևանում. Թբիլիսիում, 1945 և 1946 թվականներին, բայց ոչ դրանից ուշ:

Ես այդ կատարումներն եմ հիշատակում, որովհետև պատերազմական տարիները, բլոկադան հատկապես, երբ վտանգի տակ էր բռվանդակ երկիրը, իրենց կնիքն էին որել կերպարի գաղափարական, հոգեբանական ընդիհանուր հյուսվածքի վրա:

Ամեն արտիստ ունի ստեղծագործական կյանքի և՝ վերելք, և՝ վայրեցք: Փափազյանի և մանավանդ նրա շեքսպիրյան դերակատարումների, հատկապես Օթելլոյի ամենաբարձր շրջանը վերաբերում է 1928—1932 թվականներին: Եթե, իհարկե, կարելի է ստեղծագործական որևէ շրջան, թվական առումով, խիստ ժամանակագրության ենթարկել:

Ճշտեմ ծնակերպում:

Այս տարիներին Փափազյանի հաջողությունը Օթելլոյի դերում հասավ այնպիսի աստիճանի, որ իր մեկնաբանության և կատարման ընդհանուր ոճով թելադրող և կողմնորոշող նշանակություն ունեցավ սովետական թատրոնում ընդհանրապես: Սա պատմական այնպիսի ժառայություն է, որ թվում է, թե իմանալու դեպքում չեր կարելի անտեսել: Հետագայում, 1935-ից սկսած, շեքսպիրյան ըմբռնումը սովետական թատրոնում ոտք է դնում նոր շրջափուլ, և առաջին գժի վրա հայտնվում են արդեն նոր անուններ: Ես ինձ վրա չեմ վերցնում մի այնպիսի դժվարին հարցի պարզաբանում (այդ պետք է Դուք անեხիք, որպես տվյալ թեման հետազոտող), թե Փափազյանից, որպես նախորդ շրջանի ամենափայլուն դեմքից, ի՞նչ անցավ շեքսպիրյան նոր ըմբռնման հեղինակներին: Կարող եմ միայն այսքանն ասել. անկարելի եր, որ ոչինչ չանցներ, եթե նորերն իրենց ամենամոտ անցյալից եապես տարբեր եին կամ նույնիսկ գիտակցաբար հակադրվում եին այդ անցյալին:

Արվեստի ու գրականության պատմական հաջորդականության օրենքները մեզ լավ ծանոթ են և նույնիսկ, առանց նյութի կոնկրետության մեջ խորանալու իսկ, կարելի եր պնդել, որ նորը չի կարող ամայի տեղում մնունդ առնել և ոչ ել մանանայի նման երկնքից իշխել: Նա ժնունդ է առնում պատմական կոնկրետ իրականության մեջ և ինքը հածախ նախապատրաստված է լինում նրա կողմից, ում հակադրվելով է ածում, հասակ առնում, ամրապնդվում, որպես ինքնուրուն արժեք:

Ես հեռու եմ այնպես մտածելուց, որ իբր Զեզ համար Օթելլոյի դերակատարումները՝ Փափազյան, Օստուժե, Խորավա, Թխափսան և ուրիշներ, մի շարքի մեջ են՝ բարձրից ցածր: Բանը նրանց գնահատական դնելը չէ, այլ արվեստի սերնդակցական կապի ձանաչումը. որդուն գնահատելիս չմոռանանք հորը, աշակերտին գովելիս թող անպայման հիշվի ուսուցիչը: Այլապես երևութեները կդիտվեն միմյանցից անջատ-անջատ, որպես իրարից անկախ կղզյակներ և, որ գիշավորն է, պատմական օրինաչափ հաջորդականությունից դուրս:

Մինչև փաստերին դիմելն ասենք, որ Զեր սխալն այն է, որ Դուք շնչում եք Փափազյանի պատմական դերը սովետական թատրոնի շեքսպիրիանայում, և դրա հետևանքով հետաքրքիր եք հայ-

տարարել այն, ինչ իսկապես հետաքրքիր լինելով՝ զիջում էր նույն Փափազյանի 20-ական թվականների Օթելլոյին՝ կերպարի ըմբռնման ինքնուրունության, նորարարության տեսակետից:

Այս մեկ:

Զժխտելով Փափազյանի վրա Եվրոպական հոչակավոր դերասանների ազդեցությունը մինչև հեղափոխությունը՝ անկարելի էր նկատելու չուալ և այն մեծ տեղաշարժերը, որ տեղի ունեցան Փափազյանի մեջ հեղափոխությունից հետո, նրա առաջին իսկ տարիներից սկսած, հեղափոխություն արած և նրա իդեալներով ապրող ու աշխատող ժողովրդի մեջ լինելով։ Եվ եթե Փափազյանը, որպես Օթելլոյի դերակատար Եվրոպա է գնացել, ապա իր հետ Եվրոպա է տարել այն, ինչ ստեղծվել ու մշակվել է նրա մեջ սովետական թատրոնում։

Ուրեմն, եթե Փափազյանը հայրենիք վերադառնալով՝ Եվրոպայից ինչ-որ բան բերել է հայկական բեմ, ապա հետագայում, այս-տեղ, արդեն սովետական թատրոնում, ստացածն է տարել Եվրոպա։ Ե՛վ ձանաչվել է Եվրոպայում, և՝ արձանագրվել է քննադատության մեջ։

Ես դիտավորյալ ասացի «ինչ-որ բան»։ Մեծանալով, հասակ առնելով Եվրոպական մեծահոչչակ դերասանների միջավայրում՝ նա չէր կարող և ինչո՞ւ պետք է ազատ մնար այդ ազդեցությունից։ Եվ ինչո՞ւ կարծել, թե Եվրոպականից նա վերցրել է անպայման ոչ ցանկալին։ Մանավանդ որ ալդպիսի պնդման համար իհմք չկա։ Իսկ հակառակը պնդելու՝ ինչքան ուզեք։ Բացի այդ, որքան էլ Եվրոպական դաստիարակություն ստացած՝ դերասան Փափազյանը, որպես արտիստ, ազգային բավական ուժեղ անհատականություն է։ Նա նույն երևություն է հայ թատրոնում, ինչ որ Զարենցը պոեզիայում, Թամանյանը Ճարտարապետության մեջ և Սարյանը կերպարվեստում։ Փափազյանը, ինչպես և հիշած անունները, ազգային արվեստագետ է, շատ մեծ անհատականություն, ուր բարդ խաչածնման մեջ է գտնվում Եվրոպական, ոռոսական, ինչպես նաև արևելյան փոխհագեցումը։

Իմ այս տպավորությունը, որ երկար տարիների դիտողության արդյունք է, ես կամենում եմ ամրապնդել մի հեղինակության վկայությամբ։ Խոսքը հայ դրամատուրգ և վիպասան, ամենքի կողմից

դասական հեղինակ ծանաչված Ռերենիկ Ռեմիրջյանի մասին է: Նկատեմ, որ նա Փափազյանին որպես դերասանի հիշում է 1913-ից՝ Թիֆլիսում նրա կատարած առաջին քայլերից:

«Փափազյանի մեջ,— գրում է նա,— ես որոշում եմ (դեռ այն ժամանակ պարզ որոշվում էր) բոլորովին այլ տիպի արտիստը: Ես չեմ ուզում ասել՝ Եվրոպականը: Փափազյանը շատ է հայ իր խառնվածքով և արվեստով: Նախ նրա դիկցիան և ինտոնացիան, նրա հայերենագիտությունը՝ Միխթարյաններից ստացած, նրա գիտակ լինելը հայ պատմության և կուլտուրայի: Զի կարելի ասել, թե նա զուտ Եվրոպական շկոլաների դերասան է: Նրա վրա մեծ ազդեցություն ունեցավ ռուսական շկոլան: Եվ նա կրթված էր այդ երկու շկոլաներում, յուրացրած է նրանց բոլոր կուլտուրան: Փափազյանը հայացրել է իր ստացածը և ստեղծել է նոր, հայկական ոճ, արվեստ: Նրա հայկական տարերքը շատ է ուժեղ և մինչև օրս չի թուշանում...»:

Ի դեպ, ինքը Փափազյանը խոստովանել է, որ իբրև դերասան հանդես է եկել հեղափոխությունից առաջ, բայց հղկվել ու վերջնականապես ձևավորվել է նրանից հետո:

Մի մեջքերում Փափազյանի գրուցից, որ տեղի է ունեցել 1933-ին, Փարիզից վերադառնալուց հետո և իրան մեկնելուց առաջ: «Տասնչորս տարի առաջ ես Սովետական Միություն բերի իմ արվեստը,— ասել է արտիստը գրուցի ժամանակ, — որպես մի մաս չմշակված մետաղի, տանում եմ այն հայրենիք, Ստամբուլ և Պարսկաստան, սովետական մետաղագործի կառող և հզոր ծեռքով հրղկված»:

Այս էլ երկու:

Հեղափոխության հաղթանակից հետո սովետական թատրոնը շատ հասկացություններ, արժեքներ և սկզբունքներ վերանայեց, բնականաբար պետք է որոներ ու գտներ Շեքսպիրի նոր իմաստավորման գեղարվեստական ելակետը:

Դա այնքան էլ դյուրին գործ չէր: Պետք էր հաղթահարել այն մերժելի տրադիցիան, որ, հակառակ ռեալիստական թատրոնի առողջ զգտումների, մշակվելով անցյալ հարյուրամյակում, խորացել էր մեր դարի առաջին երկու տասնամյակում: Տրադիցիա, ըստ որի շեքսպիրյան ստեղծագործության սոցիալ-պատմական բովանդակու-

թյունը, նրա բարձր մարդկայնությունը իբրև Վերածնության դարաշրջանի հումանիստական աշխարհայլեցողություն, փոխարինվում էր հոգեբանական խրժին ու իհվանդագին պրատումներով: Դրա հետևանքը լինում էր այն, որ դերասանը շեքսպիրյան կերպարի մեջ տեսնում էր արտացոլումը մարդկային միակողմանի մի հակումի և, այդպիսով, նրա ամբողջ բովանդակությունը հանգում էր այս կամ այն կրքից ծնունդ առած Ներքին հակասությունների: Այսպիսով, շեքսպիրյան ստեղծագործությունը, որպես մի ամբողջ ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական ըմբռնում, ըստ Էության չէր կարևորվում, փոխարինվում էր թեմայով կամ սյուժեով:

Սովետական թատրոնը, 20-ական թվականներից սկսած, կանգնած էր Շեքսպիրին՝ նորովի կարդալու մեջ՝ նպատակների առաջ: Նրա խնդիրն էր շեքսպիրյան հերոսներին պատկերել իրենց ռենտսանյան նկարագրով, ստեղծելով այնպիսի ներկայացումներ, որը պիտի արտացոլվեին մեծ դրամատուրգի դարաշրջանի՝ Վերածննդի պրոբելմեները, ինչպես հասարակական, պատմական, այնպես էլ փիլիսոփայական: Դա իրոք այդպես է, քանի որ Վերածննդի փիլիսոփայության գլխավոր պրոբելմեների, ինչպես, ասենք, աշխարհի ու մարդու ձանազումը, վերջիներօն այն հարցերն են, որոնք, կարելի է ասել, բնորոշում են շեքսպիրյան ստեղծագործության գաղափարական պարունակությունը:

Ցուց տալ, որ շեքսպիրյան բոլոր հերոսների ողբերգության հիմքում նույն փիլիսոփայական խնդիրն է ընկած, որպես հետևանք աշխարհի ձանաշման, հարկադրված վերանայումը այն ամենի, ինչ առաջ նրանց թվացել է ծիշտ ու անկասկած: Հարկադրված վերանայում, բայց ոչ հաշտեցում ձանաշված իրականության հետ: Ընդհակառակը՝ գործուն հակադրություն: Ե'վ Համլետը, և' Օթելլոն, և' Լիրը այդ գործուն անհաշտության զոհերն են: Զի բացառվում կասկածը, ոչ էլ տատանումները: Դրանք նույնպես հումանիստական մտածողության և հոգեբանական ընդհանուր կազմի մեջ են: Ողբերգականության այսպիսի ըմբռնումը հանգում է գաղափարի հաստատման: Գաղափարի կրողները կործանվում են, իսկ գաղափարը մնում է, անցնում է սերնդից սերունդ:

Հեշտ չէր Շեքսպիրի այսպիսի ըմբռնմանը հանգել: Դրա համար ժամանակ էր պետք: Եվ այդ Շեքսպիրին հասնելու ձանապար-

ի՞ մեկը չէր: Ամեն արվեստագետ որոնեց ու գտավ իր ծանապարհը: Փափազյանն էլ՝ իրենը:

Եվ իհմա ինձ գրադենում է ոչ թե ընդհանրապես Փափազյանի Վերագնահատության խնդիրը, այլ այն պատմական դերը, որ նա խաղացել է 20-ական թվականներին՝ այս նույն մտքերի խմորման շրջանում:

Փաստերի ուսումնասիրությունը ցուց է տալիս, որ Փափազյանը սովետական բեմի այս ողբերգակն է, որի անվան հետ կապված է շեքսպիրյան տրադիցիայի մշակումն ու կազմավորումը 20-ական թվականներին:

Ուուք, որպես նյութը բավական մանրամասն հետազոտած հեղինակ, ինձանից լավ գիտեք, որ մինչև 30-ական թվականների կեսերը ուսումնական սովետական թատրոնում շեքսպիրյան նշանակալի բեմադրություններ չեն եղել. կա, սակայն, ժամանակին աղմուկ հանած մի կատարդում: Դա Փափազյանի Օթելլոն է: Ըստ որում, իր սկզբունքներով դեպի ազգային թատրոնի պատմությունը գնացող (և ոչ եվրոպական, ինչպես կարծվում և ներկայացվում է), իսկ նշանակությամբ և մանավանդ իրական վիճակով՝ ազգային շրջանակից դուրս եկած:

Թաիրովի «Ռոմեո և Ջուլիետը» (1921) շատ հեռու էր այն նոր խոսքը լինելոց, որ պետք է ասեր սովետական թատրոնը Շեքսպիր բեմադրելով: Չեխովի պատկերած ծայրահեղ Նյարդային Համլետը (1924) որքան էլ ինքնատիպ և ներշնչված անձնավորում, նոր հասարակարգի նոր խոսքը չէր Շեքսպիրի մասին: Ակիմովի բեմադրած «Համլետն» էլ (1932) մի այլ ծայրահեղ, իբրև գուհիկ սոցիոլոգիական մտախնության նմուշ, նույնքան անընդունելի է:

Իսկ Յուրկի Օթելլոն, Մակբեթը, Լիրը, որքան էլ ասենք, որ հեղափոխության ազդեցության տակ դերասանը վերանայեց իր խաղը, միևնուն է, հազիվ թե ուրիշ բան ասվի, քան գրված է Զեր գրքում. «Ավելի առնական դարձավ նրա Օթելլոն», կամ՝ «ավելի նուրբ դարձավ սամոդուր Լիրի կերպարը»:

Ավելի հետաքրքիր է այն բացատրությունը, անշուշտ, որ Մոնախովը 20-ական թվականներին գտել է Շայլովի կերպարի համար:

Բայց այն, ինչ արել է Մոնախովը, և, մանավանդ, Յուրկը, կարելի էր անել և արել են ուրիշ դերասաններ մինչև հեղափոխու-



թյունը և հեղափոխությունից շատ ու շատ առաջ: Այստեղ չկա նորարարություն, չկա այն խոսքը, որ կոնցեպտուալ տեսակետից իսկապես մի նոր էպոխայի ծնունդ լիներ:

Հայտարարության սահմաններում չմնալու համար բերեմ մի ժամանակակցի վկայություն, հրապարակված Մոսկվայի «Վեչերնիլե իզվեստիայում» 1928-ին: Մի անհրաժեշտ մանրամասնություն. քաղաքը երեք-չորս օրվա ընթացքում միաժամանակ տեսել է շեքսպիրյան Օթելլոյի երկու նշանավոր կատարողների՝ Յուրիկի և Փափազյանի, միանգամայն տարբեր միմյանցից և՛ կերպարի մեկնաբանությամբ, և՛ բեմական խաղակերպով:

«Յու. Ս. Յուրիկն ամբողջովին ողբերգական կերպարի արտաքին պատկերագծման մեջ է,— գրում է քննադատը, — կեցվածքի, խաղի, ժեստի, ծիշտ է, արտակարգ գեղեցիկ և քանդակային արտահայտիչ, ծայնի հարստության մեջ, որ հիանալի է դրված և մըշակված ժոխ դեկլամացիայով, առատությամբ գունավորված կրքի պաթոսով: Նրա Օթելլոն— ինը թատրոնի տրադիցիոն ողբերգական կերպարը, կաշկանդված դասական գենք ու գրահի մեջ, հիանալիորեն կլանքի է կոչում թատրոնի պատմության վաղուց շրջված էջը»:

Իսկ ի՞նչ է ասում հոդվածագիրը Փափազյանի մասին:

«Բոլորովին այլ է Փափազյանի Օթելլոն: Նրա կատարման մեջ շեքսպիրյան կերպարը, չկորցնելով հանդերձ իր մոնումենտալությունը և ուժը, ծեռք է բերում մեծ պարզություն և բնականություն: Փափազյանը Օթելլոյին պոկում է ողբերգության հանդիսավոր ու սառը բարձունքներից և իշեցնում երկիր, դարձնում նրան մարդ և ոչ թե հերոս: Դա նրա Օթելլոյին մերձեցնում է ժամանակակից հանդիսականին, ստիպում է հավատալ նրան, դարձնում է նրան մոտ ու հասկանալի»:

Շեքսպիրի նոր ըմբռնման առաջին խոսքը սովետական թատրոնում պատկանում է Փափազյանին: Այդ նա է, որ, առաջինը լինելով, փորձ է անում հակադրվել Օթելլոյի կերպարի անցյալ լուսաբանություններին: Եվ հակադրվելով՝ ստեղծագործական խիզախ քայլ է անում, ողբերգական կերպարը հագեցնում է հասարակական-պատմական ըմբռնումով, գտնում այն, ինչը մեծ դրամատուրգին ժամանակակից է դարձնում և ալդպիսով պատմականը դարձնում արդիական:

Հիմա մի քանի փաստ:

Ես թույլ կտամ ինձ դասակարգել փաստերը, խմբավորված ներկայացնել նրանց, որպեսզի, մեկը մյուսին լրացնելով, գտնվեն որոշ տրամաբանական հյուսվածքի մեջ: Հուսով եմ, որ ոչ Դուք, ոչ ել ուրիշները, չեք ընդունի դա իբր կամայականություն, քանի որ, բոլոր դեպքերում, փաստը մնում է փաստ, մանավանդ որ իմ կողմից ոչ մի միջամտություն չի լինելու:

Ահա փաստերի առաջին խումբը, որի նպատակն է լինելու վը-կայել այսօր, ինչ գնահատության է արժանացել Փափազյանը որպես ողբերգու դերասան 1928 և 1932 թվականներին:

1. «Դեռ երեկ Մոսկվային բոլորովին անժանոյթ հայ դերասանը գերեց և առաջին իսկ ելույթով վաստակեց թատերական հանդիսատեսի և մամովի միահամուռ ծանազումը» (1928, Մոսկվա):

2. «Այս հայ ողբերգակի առաջին ելույթը, երբ հանդես եկավ նա ֆրանսերեն լեզվով, լիովին հաստատեց նրա համբավի հավաստիությունը, որ նա Շեքսպիրի հիմնալի կատարող է, և խոշոր հաջողություն բերեց նրան մեր հասարակության մեջ: Վահրամ Փափազյանը անկասկած թատերական խոշոր ու պայծառ երևույթ է և Օթելլոյի նրա մեկնաբանությունը, այդ կերպարի բեմական մարմնավորումը հագեցված է գեղարվեստական գերիշ պարզությամբ և ողբերգական ուժով» (1928, Մոսկվա):

3. «Թատերական հակայական կոլլտուրան, տեմպերամենտը, արագ վերամարմնավորման ընդունակությունը, խաղի արտահայտչականությունը դարձնում են Փափազյանին արդի ուժեղագույն ողբերգակներից մեկը» (1928, Մոսկվա):

4. «Ժամանակակից մեժագուն արտիստներից է Փափազյանը» (1932, Ռիգա):

Այս կարգի վկայություններ կարելի է բերել դարձյալ: Թվում է, թե կարիք չկա: Անցնենք փաստերի մի այլ խմբի, որի նպատակը պետք է լինի վկայել, թե 1928—1932 թթ. ինչպես է գնահատվել Փափազյանի Օթելլոն ընդհանրապես:

1. «Իր դերի կատարմամբ և ըմբռնմամբ պ. Փափազյանը կարող էր բավարարել ամենախստագույն պահանջները» (1932, Ռիգա):

2. «Անկարելի է պատկերել ավելի կատարյալ, ավելի կենսա-

կան վենետիկյան մավր, քան այդ անում է Փափազյանը» (1932, Փարիզ):

3. «Փափազյանը ամբողջապես ստեղծված է Օթելլոյի դերի համար» (1932, Էստոնիա):

4. «Համեմատելով նրան գերմանացի արտիստ Կորրների հետ, որին նույնպես համարում են Օթելլոյի հանձարեղ մեկնաբան, այնուամենայնիվ, Փափազյանի կերպարը ստվերի տակ է թողնում գերմանացու չափազանց ծշան խաղը, որը Փափազյանի վիրտուոզ խաղի կողքին պետք է հետին պլան քաշվի» (1932, Էստոնիա):

5. Մի քննադատ, անդրադառնալով Փափազյանի հանդիսատեսի վերաբերմունքին, գրում է.

«Քիչ անգամներ է վիճակվել ինձ տեսնել այդպիսի ոգևորություն: Ծիշտ է սակայն և այն, որ երբեք չեր վիճակվել ինձ տեսնել մի այդպիսի Օթելլո» (1932, Փարիզ):

6. «Փափազյանը տվեց «Օթելլոյի մի անձնավորում, որը եղավ ու կմնա այդ համաշխարհային կերպարի գերազանցներից և ամենախելացիներից մեկը» (1932, Փարիզ):

7. «Թվում է, թե Օթելլոյի կերպարը նրա համար է ստեղծված» (1932, Փարիզ):

Այս ամենից հետո Զեր ուշադրությանն եմ հանձնում փաստերի մի այլ խոմբ, որը պետք է վկայի այն մասին, որ Փափազյանի Օթելլոն 20-ական թվականների վեցերին և 30-ական թվականների սկզբներին հնառջ մի խաղ չեր, ինչպես գրել եք Դուք, այլ Նորարարական՝ ժամանակակիցների վկայությամբ:

Փաստերի այս շարքը ես թույլ կտամ սկսել գավառական մի քննադատի կարծիքով.

«Թվում է, թե ժամանակի մեջ վաղուց թաղված շեքսայիրյան ողբերգությունը և նրա հերոսը՝ կրօտ ու խանդոտ մավր Օթելլոն, այլևս չեին կարող ապրել մեր բնմում և հուգել ժամանակակից հանդիսականին: Եվ, իհարկե, Օթելլոյի կերպարը տաղտկալի և անհետաքրքիր կլիներ, եթե նրան ցուց տային ալնպես, ինչպես խաղում էին քսանիինգ տարի, թեկուզն տասը տարի սրանից առաջ: Սակայն հենց դրանումն է իսկական արվեստագետի ուժը, որ նա կարողանում է վերամարմնավորել և ցուց տալ իին կերպարն այնպես, ինչպես նա մինչ այդ մեզ անժանոր է եղել»:

Եվ այս քննադատը խոսում է այն մասին, թե ինչպես է Փափազյանը վերանայել ավանդական ըմբռնումը:

1. «Երևութեների չափանիշը է նրա Օթելլոն, որ մարդ է, և ոչ թե դիցարանական տիտան, ինչպիսին դարձել են նրան «տրադիցիաները» (1928, Մոսկվա):

2. «Փափազյանն իր մեկնաբանությունն անց է կացնում հետեւղականորեն ու պարզ»: Նա «Օթելլոյին իշեցնում է հանդիսավոր բարձունքներից» (1928, Մոսկվա):

3. «Ինչքան անգամներ մեզ ցուց են տվել «Էկզոտիկական» մավրեր: Բոլորովին տարբեր է ներկայացված Փափազյանի Օթելլոն» (1928, Մոսկվա):

4. «Այս հանգամանքը, որ թերթերն ազդարարում են, թե շուտով պետք է Օթելլոյի դերում հանդես գա Փափազյանը, որ տեսել է Սալվինին, խաղացել է Ցավկոնիի և Նովելլիի խմբերում, հակում էր մեզ դեպի պատմություն և արխիվ: Չե՞ որ մենք շատ առաջ ենք գնացել Օթելլոյի քարացած, դեկլամացիոն-մավրիտանական կրքերից: Այս ամենը շատ հեռու է մեր կյանքի բուժն թափից, մեր թատրոնից, մեր ալսօրվա կենդանի ու անհամեմատ մոնումենտալ և ավելի հափշտակող հետաքրքրություններից»:

Այս նախապաշարմունքով քննադատը գնում է թատրոն:

«Որքան անսպասելի, անքան ուրախալի էր հանդիպումը Փափազյանի հետ,— խոստովանում է նա՝ Փափազյանի խաղը նայելուց հետո:— Մարդը երևութեների չափանիշն է: Մարդը հաղթանակեց: Փափազյանը կարողացավ Օթելլոն գինաթափել կլասիկական գենք ու զրահի ժանրություններից: Կարողացավ ազատել նրան «մոնչացող» առյուծից» (1928, Մոսկվա):

5. «Փափազյանը իրեն անվանում է ողբերգու: Սակայն այս տերմինը, որ մեր հիշողության մեջ արթնացնում է անցած դարերի դերասանական վարպետությունը Քինի, Գարրիկի, Բառնալի, Կարատիգինի, Սալվինիի և Ռոսսիի կերպարներով, հազիվ թե լիակատար չափով կարելի լինի կիրառել Փափազյանի ինքնատիպ, ուլութամանակակից արվեստին» (1928, Լենինգրադ):

6. «Փափազյանը որոշ չափով հետևելով ողբերգական տրադիցիային, միևնույն ժամանակ հաղթահարում է նրան, միանգամայն յուրահատուկ կերպով բացահայտելով շեքսպիրյան կերպար-

Ները և մերձեցնելով Նրանց մեր աշխարհը մքոնմանը» (1928, Լե-
նինգրադ):

Նույն տպավորության է եղել նաև փարիզյան քննադատությու-
նը՝ ընդգծելով այն տարբերությունը, որ կա սովետական դերասանի
տված մեկնաբանության և իրենց ըմբռնման միջև: Փարիզից վե-
րահաննալով՝ Փափազյանը մի քանի առիթով անդրադարձել է դը-
րան:

Ֆրանսիացի մի լրագրողի հետ ունեցած գրուցի ժամանակ,
դեռևս Փարիզում, Փափազյանը քննադատում է այդ օրերին Կոմերի
Ֆրանսեզում տեսած «Համետը» «մի քիչ չափազանց ակադեմիկ
լինելու համար»: Նույնը սովետական լրագրողի հետ գրուցելիս.
«Ես այնտեղ տեսա «Համետ»— ժամանակի ոչ մի շունչ, խաղում
են անցյալ դարի կանոններով, չեն զգում ժամանակակից տեմպը»:

Ինչ վերաբերում է Օթելլոյին, ապա Փափազյանը այդ կապակ-
ցությամբ հետաքրքիր խոստովանություն է անում. «Ես ութը տարի
Սովետական Ռուսաստանում խաղացել եմ այդ դերը, շատ եմ մը-
տածել, շատ եմ փոփոխել, մինչև որ գտել եմ լիակատար միաձու-
լում հանդիսատեսի հետ: Օդեոնի դերասանները խաղում են այլ
կերպ, այնպես, ինչպես խաղացել են Նրանց հայրերն ու պապերը,
հարկադրված էի վերափոխել Նրանց, որպեսզի կատարման աներ-
դաշնակություն չլինի» (1932):

Այդ մասին Փափազյանն ասել է նաև մինչև հայրենիք վերա-
դառնալը, Ռիգայում:

Այդ տարբերության վրա ուշադրություն են դարձել նաև ֆրան-
սիացի քննադատները:

Մի քննադատ գրում է, որ Փափազյանը, ինչպես և ռուսական
թատրոնն ընդհանրապես, Շեքսպիրի գործերը մեկնաբանում է մի
այնպիսի գգացումով, որ հաճախ բավական հեռու է իրենց ըմբռնու-
մից:

Մի ուրիշ քննադատ, Նույն օրը, մի այլ թերթում, գրում է.
«Մինչև իսկ Շեքսպիրի գործի ոգին հասկացված և արտահայտված
է մեր վարժված ձևից բոլորովին տարբեր կերպով»:

Ֆրելու համար այն սխալ տպավորությունը, որ իր Փափազ-
յանի Օթելլոն այդ տարիներին կառուցվել է մավրի կրքերի մոլեգ-
նության վրա, ուրիշ խոսքով՝ հերոսի հոգեբանության մեջ հարցերի-

հարց է դարձել խանդը՝ ասեմ, որ ինքը արտիստը ծիշտ հակառակ ծևով է մտածում:

Անդրադառնալով այն հարցին, թե ինչպես է ինքը ըմբռնում և կատարում Օթելլոյի կերպարը, Փափազյանը գրում է.

«Օթելլոյին խանդոտ համարելը հակասում է հեղինակի բացահայտ գաղափարին: Այդ Յագոն է նրան խանդոտ համարում, որովհետև Օթելլոյի հոգեկան վշտի պատճառները անհասկանալի են մուռն Յագոյի նման մարդու համար, և նա (ինչպես և շրջապատող մյուս մարդիկ) այդ վիշտը բացատրում է ըստ իրեն և այն կոչում է խանդ (մի բան, որ ավելի համապատասխան է նրա հոգու չափին):»:

Սա գրվել է 1939-ին:

Երկու հնարավոր վերապահություն:

Առաջին. միշտ չէ, որ դերասանը կարողանում է իր մտածածը մարմնավորել բեմուն:

Երկրորդ. սա գրված է 1935-ից հետո, այսինքն՝ այն ժամանակ, երբ խանդոտ մավրի ըմբռնման քննադատական վերանայումը բեմում և գրականության մեջ արդեն հաղթանակել էին վերջնականապես:

Դրա համար թերևս ավելի ծիշտ լինի, եթե նկատի առնվեն ավելի վաղ շրջանի աղբյուրները և որպես հիմք ընդունվի ոչ թե այն, ինչ ասում է դերասանը, այլ ավելի օբյեկտիվ վկայություն, այն, ինչ ասում են ուրիշները դերասանի մոտեցման մասին՝ նրա խաղի հիման վրա:

Ահա մի կարծիք.

«Օթելլո խաղացող արտիստների մեծամասնությունը գրեթե միշտ ողբերգության առաջին պատկերներից ներկայացնում է մի մարդ, որին կրծում է խանդի կիրքը, մինչդեռ այստեղ, և դա, օ՛, ինչքան իրավացի և ծշմարիտ է, Շեքսպիրի հերոսը ողբերգության սկզբին ամենասուրբ օպտիմիզմով հագեցած մի եակ է. հավատում է կյանքին և իր շրջապատին, հպարտ է իր գինվորական առաքի-նությամբ, իր հաղթանակներով և իր սիրով դեպի Դեզդեմոնան: Խանդը նրա մեջ նույնիսկ բնազդական չէ, այդ սարսափելի կիրքը նրա հոգում ծնվում է հանկարծ, պատահաբար, Յագոյի դժոխային

մեքենայության հետևանքով միայն: Փափազյանի հիանալիորեն մը-տածված, մանրակրկիտ ուսումնասիրված մեկնաբանությունը ողբերգության երրորդ արարվածին հասավ գերագույն պարուսի մեծության» (1932, Փարիզ):

Ահա և մի ուրիշ կարծիք:

«Նա իր ներաշխարհով մնացել է պարզ ու երեխայի չափ միամիտ, անապատի պրիմիտիվ մարդը: Միամտությունը Փափազյան-Օթելլոյում նեղ աշխարհայացքի արդյունք չէ, այլ խորագույն պատվախնդրության, չարը չհասկանալու և չկարողանալ ընդունելու մարդաբանություն»:

1932-ին Լև Մաքսիմի ստորագրությամբ գրված այս բնորոշումը չի հիշեցնում արդյոք այն, ինչ տարիներ հետո գրել է ինքը՝ արվեստագետը:

Սակայն ավելի ծիշտ չի լինի, եթե տեսնենք, թե այդ տեսակետից ինչ են գրել Փափազյանի մասին Մոսկվայի ու Լենինգրադի, Կիևի ու Խարկովի քննադատները:

1. «Հեռանալով ողբերգության մեջ վերացական-պաթետիկ, երգուն-դեկլամացիոն ոճից, Փափազյանը Օթելլոն խաղում է կերպարի բնորոշ, մեղմացված պարզությամբ, դերի մշակումը հասցնելով ընդգծված վիրտուոզության: Դա կարծես հարազատ է դարձնում նրան Մոհսսիին, Զեխովին... Փափազյանի մոտ ոչինչ չկա «ինտելիգենցիայից», ոչինչ եվրոպական ժամանակակից կյանքից, շատ քիչ բան՝ «ասիխոլոգիզմից»: Նրա Օթելլոն կիրք է, հուզական մի կը-ժիկ— հյուսված սիրուց, խանդից, ատելությունից, հոսահատությունից» (1932, Լենինգրադ):

2. «Փափազյանի խանդը սեփականատիրոց զգացում չէ և ոչ էլ կենսաբանական բնագդ: Դա մարտնչող սերն է, հզոր, բայց և արյունահեղ-նախկի, մանկական վիրավորված զգացման արտահայտություն՝ անարգված իդեալի համար» (1928, Կիև):

3. «Փափազյանը առաջին իսկ տեսարաններից ցրեց ամբողջ վախը Օթելլոյի գուտ արտաքին և պրիմիտիվ մեկնաբանման նկատմամբ և, իրեն դրսնորելով որպես բեմի երևելի վարպետ, մարմնավորեց նրան հոգեբանական հազվագյուտ ամբողջականությամբ և ողբերգական հուզիչ ուժով:

Խանդը մեծ սիրո և խոր վստահության հողի վրա, խանդը,

որպես պայման իդեալի անսպասելի հիասթափության հետևանք, որպես թևավորող հավատի խորտակում — ահա այսպես է երևան գալիս այն հզոր կիրքը, որը կործանման հասցրեց վենետիկյան ազ-նիվ մավրին» (1928, Կիւ):

4. «Նա ծիշտ ուղիներ է գտել՝ մեր առջև հանդես բերելու մեկին, որն իր ամբողջ անցյալով դեռևս գտնվում է նախահեղափոխական ժամանակաշրջանի անդորրության մեջ և որը, սակայն, արդեն գգում է հումանիզմի ազատարար հողմը: Այդպես է մեր առջև ծնվում և իրեն հաստատում նրա Օթելլոն՝ Վերամնության մարդը» (1928, Մոսկվա):

5. «Նրա Օթելլոն այնքան խանդի ողբերգություն չէ («կանաչ աչքերով իրեց», ինչպես որակում են նրան պիեսում), որքան մեծ և քնքուշ զգացման մի դրամա: Նրա խանդր հետևանք է, պատճառը՝ սերը: Եվ նա խաղում է այդ սերը: Այն ժամանակ, երբ ըստ տրադիցիաների, ընդհակառակը, հածելի է Օթելլոյից խանդի մի մոնումենտ կառուցել, «կանաչ աչքերով իրեց», նա պարզեցրել, մարդկայնացրել է «մավրիտանական կրքերի» թանգարանային-ողբերգական կոթողը և նրան դարձրել սիրո մի քանդակ, որ երբեմն շանթվում է խանդի կաշմակներով: Նրա Օթելլոյի չափանիշը մարդն է, և ոչ թե դիցաբանական մի հսկա, ոչ թե խանդի Պրոմեթեասը, ինչպիսին դարձրել են նրան «տրադիցիաները» (1928, Մոսկվա):

6. «Արդյոք նման արտիստի միջոցով հեշտ և համոզիչ չի» բացահայտվում Շեքսպիրի մեծությունը, որ իր մավրի մեջ մեզ ցուց է տվել ոչ թե շիտակ ու կոպիտ մի խանդոտի, այլ ամենաազնիվ մի սիրտ՝ լի անսահման հավատով դեպի մարդկային լավագույն արժանիքները, մարդ, որը դառնում է իր այդ դյուրահավատության գոհը:

... Եվ գլխավորը, իբր Դեզրեմոնայի կործանումով նրա համար կործանվում է հավատը ամբողջ աշխարհի հանդեպ, և ինքը կամավոր հեռանում է այդ աշխարհից... «Օթելլոն խանդոտ չէ, այլ դյուրահավատ», — ասել է Պուշկինը: «Սակայն նա պիտի մեռնի, թե չէ ուրիշներին ել կխաբի այս աշխարհում», — ասել է Շեքսպիրը: Վերը հիշված այս հեղինակություններին համաձայն ել կատարում է Փափազյանն իր Օթելլոյի կերպարը» (1927, Մոսկվա):

Փարիզում, 1932-ին, ֆրանսիացի լրագրողի հետ գրուցելիս, Փափազյանը, հակադրվելով ֆրանսիական թատրոնին, այն միտքն է հայտնել, թե սովետական թատրոնը ինչպես Մոլիեր, այնպես էլ Շեքսպիր բեմադրելիս մեծ ուշադրություն է դարձնում գրական ըստեղծագրության հասարակական կողմի վրա:

Տեսնենք, թե Փափազյանի ըմբռնումով ո՞րն է այն հասարակական կողմը, որի հատիկը գտնելով, դերասանն այն դարձրել է Օթելլոյի դերի մեկնության հարցերի հարցը:

Մի քանի վկայություն:

Ահա թե ինչ է գրել մոսկովյան մի քննադատ 1928-ին:

Օթելլոն «Փափազյանի կողմից մեկնաբանված է որպես սոցիալական նախապաշտումներով ծնշված մարդ, որի դեմ ռասայական նախակարծիք է ստեղծվել»:

Ապա քննադատը շարունակում է.

«Եվ եթե Օթելլոյի մեջ խանդի զգացում կա, ապա այդ զգացումը ժառայում է իր մարդկային անձնական արժանապատվությունը պաշտպանելու նպատակին միայն: Նա չի կամենում իրավագործ ու մերժված լինել»:

Ահա և Մոկուսկու կարծիքը՝ գրված Փափազյանի լենինգրադյան գաստրոնոերի առիթով.

«Փափազյանը հետաքրքիր փորձ է անում՝ Օթելլոյի դերը փոխադրել մի նոր պլան: Նա ծգտում է կոնկրետացնել խանդրութի կերպարը, նրա ապրումների մեջ մոցնելով ռասայական անտագոնիզմի երանգներ: Նրա Օթելլոն մի րոպե անգամ չի մոռանում, որ ինքը սև է, և իր այդ սևության մեջ նա տեսնում է բոլոր չարիքների ու աղետների պատճառը: Դժբախտաբար, հանդիսականների մեծ մասի համար անհասկանալի լեզվով նրա խաղը հնարավորություն չի տալիս մանրամասների մեջ գնահատել այդ մոտեցման նորությունը»:

Մի կարծիք ևս:

«Նա ոչնչացնում է տասնամյակներում ստեղծված ողբերգական Օթելլոյի տրամադրությունը կերպարը և պարզեցն է նրան մինչ այդ ոչ հասուկ նոր գժեր, գտնում նրա մեջ սևամորթ, ծնշված ազգի ազգային բողոքը»:

Նույն է հաստատում նաև փարիզյան մի քննադատ:

«Մի մավրիտանացի,— գրում է նա Փափազյանի Օթելլոյի մա-

սին,— որի ողբերգությունը սպիտակների մեջ մավրիտանացի լինելն է»:

Սա ել գրվել է 1932-ին:

Ինչո՞ւ և ինչո՞ւ արտիստը հանգեց այս մտքին, հասարակական այս շեշտադրմանը:

Փափազյանը Թուրքիայում ծնված հայ է: Ծիշտ է, նրա պատանեկությունն անցել է Խոալիայում, Եվրոպայում ընդհանրապես, բայց վերադառնալով ծննդավայր՝ պատերազմի ահեղ տարիներն անցկացրեց հայկական միջավայրում: Որքան էլ, ասենք, հասարակական կյանքից կտրված լիներ, կարո՞ղ էր անարձագանք մնալ նրա հոգեկան աշխարհը հանդեպ այն ողբերգության, որ ապրեցին Թուրքիայում ապրող իր հայրենակիցները: Նրանց մի աննշան մասը մնաց տեղում, մեծ մասը բնաշխնչ եղավ, մի մասն էլ, գալիք ահից սարսափած, ցիրուցան եղավ աշխարհով մեկ: Հոժարակամ գալով դեպի հեղափոխություն, արտիստը չեր կարող իր հետ չըերել և այդ խորունկ վիշտը:

Չեմ ուզում ասել անմիջական, բայց միշնորդված կապ կարելի է և պետք է տեսնել մի ժողովրդի ապրած ազգային ողբերգության և նրա արվեստագետի՝ Օթելլոյի մեջ գտած ու ապրած հասարակական շեշտադրման մեջ:

Այդ շեշտադրումը միանգամից չի արտահայտվել: Եվ դա հասկանալի է: Ու երսի դա պետք է Վերագրվի այն բանին, որ Փափազյանի գործունեությունը հաղթանակած հեղափոխության երկրում ընդլայնեց արտիստի աշխարհայացքը, մղեց ողբերգության մեջ տեսնելու այնպիսի շեշտեր, որ առաջ չեր նկատել:

Այս մասին գրականության մեջ գրվել է: Դեռևս 1928-ին, լենինգրադյան մի թերթ, անդրադառնալով Փափազյանի մեկնաբանությանը, ասելով, թե նրա Օթելլոն ծնշված, հալածված ազգության զավակ է, գրում է.

«Մի՞թե այստեղ չի ինչում ձայնը հազարամյակներ շարունակ հալածված հայ ազգության, հայ Փափազյանի բնագրական բողոքը Փարիզի և Հռոմի տիրող հասարակության դեմ, ուր նետել էր նրան դերասանի ծակատագիրը»:

Այս առնչությամբ հիշեմ Փափազյանի ցանկությունը, որ ժա-

մանակին արծանագրվել է մամուլի Եշերում և չիրականանալով՝ շատերի համար մնացել է անհայտ:

Փարիզում եղած ժամանակ, 1932-ին, Փափազյանը նորից Փարիզ այցելելու ժրագիր է հեանում՝ ֆրանսիացի դերասանների հետ Շալլոկի կերպարը մարմնավորելու իր Ներքին պահանջին գոհացում տալու համար:

Ի՞նչն է դրա պատճառը:

Փարիզից վերադառնալով, իր մի գրուցում արտիստը քննադատում է ֆրանսիական թատրոնն այն բանի համար, որ «Վենետիկի վաճառականը» Փարիզում հակահրեական ոգով է խաղացվում:

Արվեստագետին, ինչպես տեսնում ենք, գբաղեցրել է նույն խնդիրը, ինչը «Օթելլոյում»:

Արտիստն իր պարտքն է համարում Փարիզի հասարակության առջև բեմ բարձրանալ Շալլոկի դերով: Նպատակը՝ ցրել այն թուր պատկերացումը, թե իբր «Վենետիկի վաճառականի» հեղինակը հակահրեական միտումնավորություն է ունեցել: Փափազյանը կամենում էր, Օթելլոյից բացի, մի ասիթ էլ ունենալ՝ բեմից արժարութեալու նույն խնդիրը. մարդիկ հավասար են, և կյանքի ընթացքը պետք է մոտեցնի մարդկանց, մտերմացնի, մինչդեռ ազգային խորականությունը նրանց հանում է միմյանց դեմ ու փոխադարձ ատելություն բորբոքում:

Փափազյանին չվիճակվեց իր ժրագիրն իրագործել: Ինչպես կխաղար՝ հայտնի չէ: Թե այդ դերակատարումը ինչ տեղ կգրավեր հոչակավոր ողբերգակի շեքսպիրյան խաղացանկում՝ նույնպես հայտնի չէ: Բայց եթե ձիշտ է, որ մարդուն ընորոշում է ոչ միայն արածը, այլև անելիքն ու ժրագրերը, ապա Փարիզում Շալլոկ խաղալու Փափազյանի մտադրությունը ինքնին վկայում է այն քաղաքական ոգին, որ կրում էր արտիստը:

Ի դեպ, Նպատեմ, որ երեսունից ավելի տարի է անցել, բայց Փափազյանը, որքան ինձ հայտնի է, Շալլոկ խաղալու մտքից չի հրաժարվել: Բեմական բանավեճը, որ կամենում էր մղել վարպետը, տեղի չունեցավ: Բայց երկի միտքը այնքան խորացավ կերպարի եռության մեջ ու այնքան հարազատ գժեր գտավ, որ այժմ էլ, չնայած առաջացած տարիքին, մտաժում է եթե ոչ ամբողջությամբ, գոնեն մի-երկու տեսարան խաղալ:

Մի այլ պատճառ էլ:

Փարիզի Շանապարհը ընկած լինելով Բեռլինի վրայով, ամրապնդեց արտիստի համոզումը, թե որքան իրավացի է ինքը՝ Օթելլոյում ալրախի շեշտադրում կատարելիս: Գերմանիայի մայրաքաղաքում, որ նա պատրաստվում էր Ռեյնհարդտի գլխավորած թատրոնում հանդես գալ Օթելլոյի դերում,— մի բան, որ չհաջողվեց երկրում տիրող քաղաքական մթնոլորտի պատճառով,— նա տեսավ ոչ միայն ֆաշիստների պայքարը՝ կառավարության գլուխն անցնելու համար, այլ նաև հակահրեական այնպիսի վայրենի տրամադրություն, որը չէր կարող նրան չիիշեցնել իր Շննդավայրում, Կ. Պոլսում տեղի ունեցած աղետալի դեպքերը՝ հայկական շարդերը:

Ի պատիվ ֆրանսիական առաջադեմ թատրական քննադատության, պետք է ասել, որ Փափազյանի խաղի մեջ նշմարելով այդպիսի շեշտադրում, նա ոչ միայն ընդգծել է սովետական արտիստի մեկնաբանության արմատական տարբերությունը իրենց մոտեցումից, այլև դա նրա մեծ առավելությունն է համարել:

Սա մի խնդիր է, որի շորջը կարելի է ժավալվել: Դա իմ նպատակից դուրս է և ցանկությունս ավելին չէ, քան ծանոթացնել Զեզ Փափազյանի Օթելլոյի «կենսագրության» այնպիսի կետերի հետ, որոնց անիրազեկ լինելն է պատճառ եղել, որ Դուք իրականությունը չեք տեսել:

Ամենևին չկամենալով այս խնդրի շորջ ավելին ասել, քան այն, ինչ պարունակում են բերածն փաստերը, այնուամենայնիվ, թույլ կտամ ինձ աղերս տեսնել այս հարցի ու նրա շորջը Զեր գրքում եղած դատողությունների միջև:

Այն, ինչ 1946-ին անցել է գրականագետ Բերկովսկու մտքով և իբր հիմնական դրույթ նա առաջ է քաշել իր աշխատության մեջ, Փափազյանն արտահայտել է իր խաղում դեռևս 20-ական թվականներին: Եվ, ըստ որում, ծիշտ այնպես, ինչպես Դուք եք բացատրում ու լուսաբանում խնդրու, վեծի բռնվելով Բերկովսկու հետ, չժխտելով, բայց վերանայելով և ծշտելով նրա միտքը:

Իհարկե, վենետիկյան հանրապետությունը, պաշտպանելով Օթելլոյին ընդդեմ Բրաբանցիոյի, պաշտպանում է և իր շահերը: Ես լիովին համաձայն եմ Զեզ հետ, երբ Դուք գրում եք, թե վենետիկյան հանրապետությունն իր մեջ կրել է Վերամշնության դարաշրջա-

Նի երկու հակառիր կողմերը — հումանիստական ազնիվ իդեալներ մի կողմից, և մաքիավելական փիլիսոփայություն՝ մյուս կողմից:

Դուք իրավացի եք, երբ նկատելով, որ չի կարելի, սակայն, դրանից եզրակացնել, թե իբր Օթելլոն իրեն օտար է զգում այդ հանրապետության մեջ: Ո՞չ Շեքսպիրի Օթելլոն, ո՞չ էլ Փափազյանի Օթելլոն հիմք չունեն կասկածի տակ առնելու սենատի վերաբերմունքի անկեղծությունը:

Դուք ասում եք, թե Օթելլոն զգում է իրեն, ինչպես հավասար հավասարների մեջ: Միանգամայն իրավացի եք: Եվ ձիշտ այդպես ել խաղում եր Փափազյանը: Ահա մի նկարագրություն նրա խաղի այդ տեսարանի մասին, որ թողել է քննադատ Լև Մաքսիմը 1932-ին, դիտելով դերասանի Օթելլոն Ռիգայում:

«Նայեցեք նրան. Նա կանգնած է պարթև հասակով՝ սենատի առաջ: Ուսից ընկնող լայն, սպիտակ բուռնուզը նրա վենետիկյան հարուստ զգեստին տալիս է անապատներից եկած ամենի բեղվինի տեսք, և տեսեք, ինչպես հուժկու մարդու համբերատարությամբ լըսում էր իր վրա թափվող ահավոր ամբաստանությունը: Տեսեք ինչպես խորամանկորեն բարեհոգի է սպիտակատամ ժպիտը նրա հաստու մսոտ շուրթերին, ինչպես է գլխի շարժումով ընդգծում Բրաբանցիոյի ամբաստանության անհիմն կողմերը: Նա գիտե, որ իրավացին ինքն է, որ ոչ մի անվայել կամ անպատիվ բան չի արել և որ իսկովն, մի րոպէ հետո թյուրիմացությունը կիեռանա, Դեզիմոնայի մուտքով կփարատվի մշուշը»:

Դուք գրում եք.

«Օթելլոն նույնիսկ ենթադրում է, թե իր ամուսնությունը Բրաբանցիոյի ուժեղ դիմադրությանը չի հանդիպի: Նա հավատում է, որ Դեզիմոնայի հայրն իրեն անկեղծորեն սիրում է: Ու երբ նա առաջին անգամ հանդիպում է իր, որպես ստոր ցեղի զավակի նըկատմամբ, բացահայտ արհամարհական վերաբերմունքի, նույնիսկ այդ ժամանակ էլ նա երևույթը բացատրում է զայրություն կուրացած հոր ցասումով միայն»:

Այդպես է ըմբռնել նաև Փափազյանը:

«Նա այնքան վստահ է այդ բանում, — շարունակում է քըննադատը, — որ Շերունի սենատորի հայիշյանքն անգամ չի դիպչում նրա արժանապատվությանը, չի խոռվում նրա՝ եվրոպական ոստայ-

Նում խճճված «կիսավայրենի» աֆրիկացու հոգին: Նա իր զուապ լուությամբ կարծես պերծախոս կերպով ասում է հանդիսատեսին. թող հայիոյի ծերունին, հոգ չէ, նա իր հայրական ցասման մեջ իրավացի է, ներողամիտ եղեք ծերունու հանդեպ, նա հիմա, հենց հիմա կիասկանա ամեն ինչ: Խսկուն կգա Դեզեմնոնան, և նա կիամոզվի, կիասկանա»:

Հետո Օթելլոն Շեքսպիրի ողբերգության մեջ և Փափազյանի խաղում «գգում է իր ցեղային մեկուսացումը»: Եվ այստեղից ել սկիզբ է առնում մավրի հոգեկան դրաման՝ «գուցե սև եմ»: Առաջին անգամ նա իր սև լինելու վրա ուշադրություն է դարձնում:

Փափազյանի ըմբռնումն այս կետի վրա չի մնում: Նա մեկ ել դրան կանդադառնա վերջում, երբ Դեզեմնոնային որպես չարիք պատժելու մտադրությամբ կմտնի ննջարան: Կերադարձը նույն թեմային, նկարի շրջանակի պես, ամբողջացնում է այն, ինչ ամփոփված է ներսում, փլուզումն այն բարձր իդեալների, որ կրում էր իր մեջ մինչև Դեզեմնոնային հանդիպելը և, մանավանդ, նրան սիրելոց հետո, այդ կնոջ մեջ գտած լինելով կատարյալ մարդկայինի մարմնավորումը:

Սա է Փափազյանի ըմբռնումը: Եվ սա սովետական թատրոնում մի աստիճան է Շեքսպիրի բեմական յուրացման ծանապարհին:

Տարբերությունը Փափազյանի և նրանց միջև, որ հանդես գալու 1935-ից ի վեր, մի նոր աստիճան կազմեցին Շեքսպիրյան կերպարն ըմբռնելու պատմական ընթացքի մեջ, այն է, որ նրանք առաջնային համարեցին մարդասիրական բարձր գաղափարների փըլուզման ողբերգությունը: Հետոնորդները բացատրեցին այդ, նոր խորություններ ի հայտ բերին կերպարի մեջ, մավրի տխուր պատմությունը դարձրին մարդկայնության փիլիսոփայական հիմնավորումն ու պաշտպանությունը:

Դա այդպես է: Ամենքն էլ կիամածայնեն դրա հետ: Բայց և անժխտելի է այն, որ Փափազյանի գտածն ու մարմնավորածն այն է, ինչին նրա շնորհիվ հասավ մեր թատրոնը 20-ական թվականներին և հաջորդ տասնամյակի սկզբներին: Եթե եղել է այդ տարիներին ավելի առողջ, ավելի հետաքրքիր, առավել նորարարական մոտեցում, քան Փափազյանի առաջարկածը՝ պետք է մեջ բերել,

պետք է խոսել դրա մասին: Իսկ եթե չկա՝ պետք է խղճմտանք ունենալ ընդունելու այն, ինչ եղել է արտիստի անուրանալի ժառայությունը:

Բարեխիղօ լինելու դեպքում չի կարելի Ժխտել այն, որ Օթելլոյի կերպարի նոր ըմբռնումը Փափազյանից ժառանգել է ինչ-որ կողմեր: Մի կողմ թողնելով այն փոխառումները, որ նոր Օթելլոները (օրինակ՝ Օստուժև, Մորդվինով, Թիսափսաև) կատարել են Փափազյանից, Նկատեմ, որ Նրանից է անցել 1935-ից հետո հանդես եկած գրեթե բոլոր Օթելլոների մեջ սկի ողբերգությունը, այն տարբերությամբ, սակայն, որ ոչ իբրև ողբերգության հիմնական թեմա, ինչպես անցյալ տարիներին եղել է Փափազյանի մոտ, այլ որպես այդ հոգեկան բարդ երևույթի մի կողմ, նրա արտահայտություններից մեկը միայն:

Այդ վերաբերում է և՝ Օստուժևին, և՝ Խորավային, և՝ Մորդվինովին, և՝ Թիսափսաևին, մի խոսքով՝ բոլոր այն Օթելլոներին, որոնց Դուք մենագրական առանձին գլուխներ եք հատկացրել Ձեր գրքում:

Մի կողմ դնելով այդ կապակցությամբ իմ տպավորությունները և տարիների ընթացքում հավաքած փաստերը, ես թույլ կտամ մեջբերումներ կատարել Ձեր իսկ գրքից:

Օստուժև.

«Վեհաժողովի առաջ հաստատվում է Դեզրեմոնային սիրելու Օթելլոյի իրավունքը: Հիմա Նրանք անբաժանելի են: Նրանք հավիտյան միասին են: Նրանց ձեռքերը միանում են: Օստուժևն այստեղ Նրբորեն օգտագործում է արևելյան սովորական ծնը— ձեռքը շոյելը, որպեսզի ընդգծի սկի ու սպիտակի հակադրությունը: Ձեռքերի գովնի տարբերությունը դառնում է խորհրդանշից ողբերգական բոլոր այն բարդությունների, որ խորտակման կհասցնեն նըրան: Օստուժևը հետագալում շարունակ օգտագործում է այդ հնարք» (Էջ 167):

Խորավա.

«Ա. Խորավան առանձին համառությամբ ընդգծում էր սևամորթին արհամարհող հասարակության մեջ մավրի մենակության թեման», Էջ 183):

Մորդվինով.

Օթելլոն «հանկարծ սարսափով նկատում է, որ իր ձեռքը սև

Ե: Ահա թե որտեղ է պատճառների պատճառը» (Եջ 200):
Թխափսան.

«Օթելլո-Թխափսանը ողբերգության հենց սկզբից հաջախ է նայում իր սև ձեռքերին: Հաջորդ տեսարաններում նա արդեն իր սև ձեռքերը համեմատում է Դեզյեմոնայի ձերմակ ձեռքերի հետ, որպեսզի խորտակման պահին հուսահատ ծչա— սև' եմ ես» (Եջ 211):

Այս բոլորը հենց այն է, ինչ ժամանակին արել է Փափազյանը: Այդ մտահղացումը (իսկ մի-երկուսի մոտ նաև բեմական կիրառման որոշ մանրամասներ) անցել է վերոհիշյալ Օթելլոներին, և դա միանգամայն օրինաչափ երևույթ է: Ինչպես օրինաչափ է նաև այն, որ Թխափսանի մեջ, որ հանդես է եկել Օստումկից հետո, Օստումկ կա, ինչպես նաև Փափազյան, որից նույնիսկ տարբեր է նրա խաղը:

Ես չեմ կասկածում, որ Օթելլոն, մարդկային հոգու այդ անհատակ խորությունը նորից ու նորից է բեմ բարձրանալու, և ամեն մի մարմնավորող նրա մեջ գտնելու է կողմեր, որ չի տեսել Փափազյանը, բայց չեն տեսել նաև Օստումկն ու Խորավան, Մորդվինովն ու Թխափսանը: Տիշտ այնպես, ինչպես Փափազյանը ժամանակին գտել ու տեսել է կերպարի մեջ այն, ինչ չեն նշմարել նրա նախորդները: Եվ դա հասկանալի է: Որքան էլ «նոր» լինի արվեստագետը, նա պետք է իր նախորդներից վերցնի նրանց գտածն ու նվաճածը, և ոչ թե վերստին «հայտնաբերի» այն, ինչ հայտնաբերված է արդեն:

Օստումկ 1938-ին գրել է.

«Իր լիրիկական զգացման, ջերմության, համակրության և բռավառ սիրո ամբողջ զորությունը Շեքսպիրը տվել է իր մավրին, որպեսզի ձերմակ սրիկա Յագոյին, ձերմակամորթ պոռնիկ Բիանկային, ձերմակամորթ ապաշնորհություն Ռոդրիգոյին հակադրի սև, խելոք, ազնիվ Օթելլոյին: Այդ հակադրությամբ սպանիչ հարված հասցնելով «բարձր ու ստոր ցեղերի», գունավոր ցեղերի մարդու նկատմամբ ձերմակ մարդու ունեցած «բնական» առավելությանը վերաբերող ազգայնական զառանցանքներին, Շեքսպիրը հրամայաբար պահանջում է, որ Յագոյին ատեն ոչ միայն Յագոյի պատճառով, այլ նաև Օթելլոյի»:

Բերելով ոռա ողբերգակի այս մտքերը, Ռուք, Սոֆյա Մարկովնա, անում եք հետևյալ եզրակացությունը.

«Կերպարի արդիական հնչեղությունը Օստուժել խելամտորեն միացնում էր նրա պատմական ըմբռնման հետ»:

Տիշտ է: Միանգամայն ծիշտ: Բայց ծիշտ է և այն, որ Օստուժելից առաջ կերպարի արդիական հնչողությունը Փափազյանը կարողացել է խելացիորեն միացնել նրա պատմական ըմբռնմանը: Ինչո՞ւ չնշել, ինչո՞ւ չասել այդ: Ինչո՞ւ չառաջնորդվել հենց «Օթելլո» ողբերգության ոգով, որ Ռուք խոսքով դրվատում եք, իսկ... Դա ինձ համար անհասկանալի է. անիրազեկությունն է պատճառը: Թերևս: Բայց դա պատճառ է և ոչ արդարացում:

Մի խնդիր ևս:

1928—1932 թթ., ինչպես ասացի, ես համարում եմ Փափազյանի ստեղծագործական կյանքի ամենահասուն տարիները և այն բարձրակետը, որին երազում էր հասնել արտիստը Երբեկ:

Այս տարիներին է, որ նրա գործունեության շառավիղը լայնանում է, ընդունում այնպիսի չափեր, որ հայ ողբերգակը անցնում է մեր անժայրածիր Երկրի մի ծալրից մյուսը, դուրս է գալիս նրա սահմաններից ու հաղթանակներ նվազում փարիզյան բեմում ևս: Եվ դա հո միայն արտիստի հաջողությունը չէ՞ր: Դա սովետական թատրոնի հաջողությունն էր: Ուր ել նա գնում էր, որ Երկիրն ել ոտք էր դնում, սովետական թատրոնն էր Ներկայացնում:

Այս տարիներին է, որ Փափազյանի արվեստը ձանաչում և ընդունում են մեր Երկրի թատերական աշխարհի շատ մեծ հեղինակություններ: Եվ այս տարիներին է, որ Շեքսպիրին բեմից Ներկայացնելու նրա ըմբռնումն ու արվեստը բանալի են դառնում շատ թատրոնների փակ դռները Շեքսպիրի առաջ բանալու համար:

Ի՞նչ հիմք կա նման պնդման համար:

«Մոլոդոյ լենինեց» թերթը Փափազյանի՝ Մոսկվայում խաղացած Օթելլոյի կապակցությամբ գրում է.

«Մեզանից մի քանի դարով բաժանված շեքսպիրյան ողբերգությունները, որ կարծես գրեթե մեռած էին մեր հանդիսատեսի համար, Փափազյանի վառ և խոր խաղի շնորհիվ հանկարծ կենդանացան»:

«Սովորեմենսի տեատր» հանդեսը 1928-ին անդրադառնալով Փափազյանի Օթելլոյին, գրում է.

«Ճատ լավ կլիներ, եթե Կահրամ Փափազյանի գաստրոլները Մոսկվայի դերասանությանը ստիպեին խորհել այն մասին, թե ինչ-պես և ինչ մոտեցմամբ Շեքսպիրը կարող է սովետական հանդիսատեսին հասնել: Որովհետև Փափազյանի Օթելլոն հասավ սովետական հանդիսատեսին»:

Ուրեմն ի՞նչ: Ուրեմն այն, որ սովետական թատրոնում շեքսպիրյան տրադիցիաների մի այնպիսի շրջան է եղել, երբ Փափազյանի խաղը կողմնորոշող նշանակություն է ծեռք բերել:

Հիշեցնեմ Զեզ Ռոսովի հիացումը Փափազյանի Օթելլոյով: Ովով, համենայն դեպս Ռոսովը գերազանցապես Շեքսպիր էր խաղում, իր երկարամյա կյանքում ինչպես հայրենի, այնպես էլ Եվլուպական Օթելլոներ շատ էր տեսել: Տեղյակ դարձնեմ նրա մի արտահայտությանը, որը հավանաբար Զեզ հայտնի չէ, եթե Ստանիսլավսկու ստացած նամականին չեք ուսումնասիրել: Կոնստանտին Սերգեյին գրած մի նամակում Ռոսովը ասում է. «Սալվինիից հետո Փափազյանից ավելի լավ Օթելլո ես չեմ տեսել»: Խնդրելով նրան անպայման նայել Մոսկվա ժամանած Փափազյանին, գրում է. «... դա շեքսպիրյան Օթելլո է՝ մտահացման խորությամբ, կատարման ազնովությամբ և ուժով»: Ստանիսլավսկին այդ ամիսներին ժանր հիվանդ էր և Փափազյանի խաղը դիտել չի կարողացել: Բայց նայել է նրան թատերական աշխարհի մի այլ հեղինակություն՝ Նեմիրովիչ-Դանչենկոն: Թույլ տվեք, ուրեմն՝ ի լրումն այս ամենի, վերջում մեջ բերել Նեմիրովիչ-Դանչենկոյի կարծիքը:

«Փափազյանը, — գրում է նա, — մեկն է դասական ռեպետորայի այն շատ սակավ լավագույն կատարողներից, որ արժանի են համաշխարհային փառքի: Հմայիչ արտաքին, գեղեցիկ պլաստիկա, վարակող տեմպերամենտի բռնկումներ և ազնիվ ձաշակ — այսպես է ներկայանում ինձ Փափազյանի արտիստական անձնավորությունը»:

Սա գրված է 1928-ին: Գրված է Փափազյանի մոսկովյան գաստրոլների տպավորության տակ:

Միայն այս կարծիքը, եթե Զեզ Ժանոթ է եղել, իհարկե, բավական էր, որ ստիպեր, Սոֆյա Մարկովնա, ավելի ուշադիր լինել

դեպի Փափազյանը: Հուսով եմ, որ Նեմիրովիչ-Ռանչենկոյի ձաշակը Դուք կասկածի տակ չեք առնում: Եվ եթե նա, նայելով Փափազյանի Օթելլոն և մյուս խաղերը, գտնում է, որ դերասանը արժանի է համաշխարհային ողբերգակների շարքը դասվելու, նրանց փառքը բաժանելու, ապա դրա համար նա պետք է որ հիմք ունենար:

Սի խոսքով, Սոֆյա Մարկովնա, իմ միտքն այն է, որ սովետական թատրոնի շեքսայիրիանայի մեջ եղել է նաև Փափազյանի ժամանակը, նրա անվան հետ կապված մի ժամանակաշրջան:

1928—1932 թվականները:

Ես հանձն առա Զեր ուշադրությունը հրավիրել այս փաստերի և նրանցից բխող՝ թվում է, թե մի բավական կարևոր հետևողական վրա:

Ես ուրախ կլինեմ, Սոֆյա Մարկովնա, եթե այն բոլորը, ինչ վերը բերվեց իբրև փաստ, նոր աղիթ՝ տա խորհելու Զեզ՝ իմ առաջ քաշած հարցի շուրջ և, այդպիսով, վերանայելու Փափազյանի Օթելլոյի գնահատությունը: Իսկ եթե այն փաստերը, որ բերված են իմ նամակում, Զեզ ժանոթ են եղել, երբ Դուք գրիչ եք վերցրել Զեր ուսումնասիրության մեջ եղած տասներկու տողը շարադրելու համար, ինձ ոչինչ չի մնում ասելու, բացի այն, որ հակասությունը փաստերի և Զեր եզրակացության միջև՝ աղաղակող է:

POST SCRIPTUM

Ահա, թե ինչպես պատահեց, որ գրեցի այս հոդված-հետգրությունը: 1964-ին լուս տեսավ Սոֆյա Նելսին ուղղված իմ «Բաց նամակը»: Եղան մարդիկ, որ չհամաձայնեցին այն ծևակերպումին, որ ես տվել եի Վահրամ Փափազյանի պատմական նշանակությանը իբրև Օթելլոյի կերպարի մեկնաբանի: Ասում եին, թե Փափազյանի լուսաբանությունը չի հանգում հումանիզմի պաշտպանության գաղափարին, հետևապես սխալ է վերագրել նրան մի դեր, որ պատկանում է ուրիշին:

Անդրադառնալով առարկությանը, ես հասկացա, որ այդ տպավորությունը, իհարկե սխալ, հետևանք է մասամբ այն բանի, որ գրելով Փափազյանի 20-ական թվականների Օթելլոյի մասին, կանգ եի առել նրա մեկնաբանության հիմնական կողմի վրա միայն: Ամբողջական տպավորություն չէր ստացվել, քանի որ չէի հիշել արտիստի մեկնաբանության մեջ եղած ուրիշ կետեր ևս: Ահա դրանց բացակայությունն ել իմ ընդդիմախոսներին այլ կերպ մտածելու առիթ եր տվել:

Post Scriptum-ով, ինչպես հայտնի է, լրացվում է նամակը: Մի խոսքով՝ գրվում է այն, ի՞նչ հիշում ես հետո, երբ նամակն ավարտել ես, նույնիսկ ստորագրել: Եվ քանի որ հոդվածիս տվել եի բաց նամակի բնույթ, մտածեցի, մի հետգրությամբ լրացնել բաց թողածս:

Այժմ ըստ Էության:

Ի՞նչ եին ասում առարկողները:

Եթե Փափազյանի լուսաբանությունը 20-ական թվականներին հանգում էր սևամորթ մարդու ողբերգությանը, նշանակում է արտիստը շեղվել է Շեքսպիրից, որովհետև դրամատուրգի պատկերած Օթելլոն, Վերածնության դարաշրջանի մարդ լինելով, հումանիզմի

արտահայտիչն է: Եվ որովհետև այդ չկա Փափազյանի խաղում, իսկ դա է խորհրդային թատրոնի մեկնաբանության ելակետը, ուրեմն ողբերգակին վերագրված պատմական դերը պատկանում է Հովհաննես Աբելյանին, քանի որ վերջինս մավրին հաղորդում էր հումանիստական նկարագիր:

Այսպես էին մարդիկ մտածում, ու ես հագիվ թե կարիք զգայի անդրադառնալու դրան, մանավանդ որ այդ առարկությունը հրապարակային չէր: Իսկապես, չէի գրի այս հետգրությունը, եթե չիշեի, որ շատ տարիներ առաջ, Փափազյանի Օթելլոյի առիթով նույն ոգով հոդված է գրել Սարգսի Մելիքսեթյանը, մեր հմուտ և վաստակաշատ թատերագետը:

Վերջինս գրում է.

«Նրա (այսինքն՝ Փափազյանի— Ռ. Զ.) ստեղծագործական քանքարի և վարպետության մասին շատ բարձր կարծիք ունենալով, խստովանում եմ, այնքան էլ տարված չէի Օթելլոյի կերպարի գաղափարագեղարվեստական մեկնությամբ: Կերպարին մոտենալով միայն ռասայական ատելության կտրվածքից և նրան անձնական լիրիկական գունավորում տալով, Փափազյանը Օթելլոյի ողջ ներաշխարհը տոգորում էր խանդի և վրեժիննդության զգացումներով»:

Ո՞րն է քննադատի եզրակացությունը:

«Այդ ամենից, իհարկե, շատ էր տուժում Օթելլոյի հումանիստական նկարագիրը»:

Իսկ ի՞նչ է հասկանում հոդվածագիրը այդ ասելով.

«Մարդու նկատմամբ տածած մեծ սերը, այն ներքին ողբերգությունը, որ ապրում է նա, տեսնելով մարդու հանդեպ իր հավատի խորտակումը»:

Սա գրված է 1951-ին:

Փափազյանին թատերագետը հակադրում է Աբելյանի Օթելլոն, ասելով, որ նա մարմնավորեց «կենսական ծշմարտությամբ հագեցած և խոր զգացումներով ու մտքերով համակած մի նորորակ կերպար, Օթելլոյի տրագիզմը զարգացնելով և՝ ծշմարիտ հոգեբանական, և՝ սոցիալական պլաններով»:

Խոսքը վերաբերում է 1925-ին և դրանից հետո խաղացած Օթելլոյին: Եվ սրան անդրադարձել է Փափազյանի Օթելլոյի առիթով:

«Եվ ահա,— գորում է նա,— ծգտելով ներկա լինել Փափազյանի Օթելլոյի ներկայացմանը, ուզում էի պարզել՝ արդյոք նրա կերտած կերպարի եռթյունը մնացել էր նո՞ւնը, թե՛ Երևանից բացակայած տարիների ընթացքում փոխվել է»:

Հետաքրքիր է իմանալ, թե Փափազյանի ներկայացումից թատերագետը ի՞նչ տպավորությամբ է հեռացել: Ահա նրա եզրակացությունը.

- Փոփոխությունը ակնհայտ էր:
- Նրա նախկին բեմական կերպարից շատ քիչ բան էր մնացել:

— Օթելլոյի ներքին բովանդակությունը գաղափարական և հոգեբանական առումով նոր որակ է ստացել:

— Նրա խաղի անկեղծությունն ու անմիջականությունը, չերմաշունչ մարդկայնությունը, կերպարի հոգեբանական զարգացումը, նոր գտած մանրամասների հմուտ կատարումը մեզ՝ հանդիսական-ներիս, գրեթե կախարդում էր:

Իսկ ի՞նչ նոր բովանդակություն է հայտնաբերել թատերագետը, որ առաջ չկար: Նրա ասելով՝ հանդիսականների տեսադաշտում ամբողջ հասակով կանգնեց «անմահ Շեքսպիրի հումկու հանձարով կերտված և հումանիստական բարձր գաղափարով, կենսահաստատ, թովիչ ոգով ներթափանցված վիթխարի կերպարը»:

Հիշեցնում եմ՝ սա գրված է 1951-ին, այսինքն՝ այն ժամանակ-ները, երբ Փափազյանը վաղորոց համաշխարհային համբավի հասած ողբերգակ էր արդեն: Բայց դա չէ եականը: Եականը ուրիշ բան է: Օթելլոն, որով ողբերգակը այդքան մեծ հաջողության էր հասել ժամանակին, այսինքն՝ 20-ական թվականներին, կերպարի մեկնաբանության տեսակետից հայտարարված է կասկածելի:

Տեսնենք, թե այն, ինչ տեսել է հոդվածագիրը Փափազյանի խաղի մեջ, չի՞ եղել արդյոք և չե՞ն նկատել Մելիքսեթյանից առաջ ուրիշներն այդ բանը: Խոսքը հումանիստական նկարագրի, մարդկանց նկատմամբ ունեցած հավատի և այդ հավատի խորտակման մասին է:

Այս կապակցությամբ ընթերցողի ուշադրությանն եմ հանձնում ոչ թե իմ տպավորությունը, թեև Փափազյանի խաղերը տեսել եմ 20-ական թվականներից, և այն էլ բավական հաջախ, այլ տարբեր

մարդկանց կարծիքներն ու տպավորությունները, քաղելով դրանք ժամանակի մամուլից: Թվում է, թե մեկի եզրակացությունից ավելի եական է շատերի, միմյանցից անկախ ստացած տպավորությունն ու դատողությունը: Այս էլ ասեմ, որ մեջբերվող կարծիքները, պատկանելով տարբեր մարդկանց, տարբեր քաղաքներում տրված տարբեր ներկայացումների հիման վրա են կազմվել ու գրվել: Հետևապես, եթե նույնը նկատել ու հաստատել են շատերը, նշանակում է տպավորությունը ստուգ է և անտարակուաելի:

Անդրադառնանք բուն հարցին:

Փափազյանի դերակատարման գլխավոր ելակետը 20-ական թվականներին (մասամբ նաև հետո) եղել է սևամորթի ողբերգությունը սպիտակների միջավայրում: Այս ժիշտ է: Ինչպես նաև ժիշտ է այն, որ այդ ժամանակները նա էր, միայն նա, որ բողոքի շեշտ էր հաղորդում մավրի կերպարին: Սա գլխավորն է: Բայց որ նրա լուսաբանությունն ուրիշ կողմեր էլ ուներ, հենց այն, ինչ նկատել է Մելիքսեթյանը 50-ական թվականների սկզբին, այդ էլ ժիշտ է: Ինչպես նաև ժիշտ է, որ ժամանակի քննադատությունը Փափազյանի կատարման մեջ դիտել ու արձանագրել է դեռ 1951-ից առաջ:

Հետագայում, 1935-ին այս լուսաբանությամբ խաղաց Օստումքը: Եվ դա համարվեց Օթելլոյի կերպարի ըմբռնման նոր դարագլուխ խորհրդային շեքսպիրյան թատրոնում:

Այժմ տեսնենք, թե այդ նույն գժերը Փափազյանի կատարման մեջ եղե՞լ են, թե ոչ:

Ակսենք հայկական մամուլից:

«Ամեն մի դերասան,— գրում է Ամատունին,— իր տեսակետով է հասկանում և տալիս Օթելլոն: Բայց նրանք, շատ քերի բացառությամբ, չգիտենք ինչու, Օթելլոյին դարձնում են գագան, մի վիթխարի վագր:»

Այդպիսին չէ Փափազյանը: Նրա մավրը կոպիտ խանդի արտացոլում չէ, այլ ազնվասիրտ մի մարդ, որ ազնվությունով տարված, հավատում է մարդկանց և «Ճշմարտությանը» և դառնում այդ հավատի զոհը» (ընդգծումն այստեղ, ինչպես նաև մնացած տեղերում, իմն է— Ռ. Զ.):

Սա գրվել է 1928-ին:

Հիմա տեսնենք,թե Շի՞շտ է դիտել հայ թատերագետը: Գուցե այլ քննադատներ ուրիշ տպավորություն են ստացել:

Սիա մոսկովյան մի քննադատի կարծիք, հայտնաժ դարձլալ նույն թվականին:

Կամենալով պատասխանել այն հարցին, թե «ինչպես է Փափազյանը մեկնաբանում իր «Օթելլոն», «Վեցերնիե հզվեստիայի» հոդվածագիրը նկատում է.

«Օթելլոյի ողբերգությունը ոչ միայն խանդից առաջացած տանշանքների ողբերգություն է, այլ նաև մի մարդու տառապանքների, որը խարվել է իր լավագույն զգացմունքների մեջ և այն բանում, ինչ համարում էր իր իդեալը»:

Սիա մի այլ կարծիք.

«Նրա Օթելլոն ոչ այնքան խանդի ողբերգություն է, որքան մեծ և քնքուշ սրտի մեծ դրամա: Նրա խանդը հետևանք է, պատճառը սերն է»:

Այս միտքը հայտնել է 20-ական թվականների թատերական Մոսկվայի հեղինակություններից մեկը՝ Էմանուել Բեսկինը:

Սիա կիևյան քննադատի կարծիքը.

«Խանդ անսահման սիրուց և մեծ վստահությունից, խանդ որպես հետևանք լուսավոր իդեալից ապրած անսպասելի հիասթափության, որպես խորտակում թևավորող հավատի»:

Սա ել նույն թվականների տպավորություններից է:

Սիա մի ուրիշ տպավորություն ևս:

«Փափազյանի խանդը սեփականատիրոց զգացում չէ, ոչ ել կենսաբանական բնազդ: Դա մարտնչող սերն է, հզոր, բայց և արյունահեղ, նաև մանկական վիրավորված զգացման արտահայտություն՝ անարգված իդեալի համար»:

Վերադառնանք նորից Մոսկվա: Այդ ժամանակվա հայտնի քըննադատներից մեկը՝ Ա. Գիդոնին գրում է.

«Ու եթե Օթելլոն (խոսքը Փափազյանի Օթելլոյի մասին է—Ռ. Զ.) խանդում է, ապա դրանով միայն և միայն պաշտպանում է մարդկային արժանապատվությունը»:

Նույն Գիդոնին ամփոփում է.

«Այդ ծևով մեր աչքերի առաջ ծնվում և իրեն հաստատում է Օթելլոն իբրև Ռենեսանսի մարդ»:

Մի կարծիք ևս:

Դրա հեղինակը Նիկոլայ Պետրովիչ Ռոսովըն է: Շեքսափիրյան ողբերգակ, որ գործել է ռուսական քաղաքներում, որ հանդես է եկել թատերական ծաշակի այնպիսի քմահած քաղաքում, ինչպիսին Օդեսան էր անցյալում, խաղացել է նաև Պետերբուրգում և ունեցել բավական հաջողություն: Ու Փափազյանը, նրա իսկ խոստովանությամբ, Օթելլոյի այնպիսի կողմեր է բացել, որոնց մասին ինքը նույնիսկ չի մտածել:

... «Իր մտահղացմամբ, ազնվությամբ և կատարման ուժով շեքսափիրյան Օթելլո է դա», — հայտարարում է նա Ստանիսլավսկուն հասցեագրած նամակում: Եվ հետո ավելացնում է. «Համենայն դեպս, եթե որպես դասական դերասան ես Զեր աշքում մեծություն չեմ, ապա կլասիկների նկատմամբ ունեցածս ըմբռնմանը, կարծեմ, Ռուբ միշտ էլ հավանություն եք տվել»:

Իսկ ինչպես է բացատրում Ռոսովը Փափազյանի Օթելլոյի եռությունը: Ստանիսլավսկուն նամակ գրելուց առաջ, դեռ 1927-ին, նա մի հոդված է հրապարակել մոսկովյան մամուլում «Օազիս» վերնագրով:

Ահա այդ հոդվածում մեզ հետաքրքրող հարցի մասին գտնում ենք հետևյալ մտքերը:

«Արդյոք նման արտիստի միջոցով դյուրությամբ և համոզիչ կերպով չի՝ բացահայտվում Շեքսափիրի ողջ վեհությունը, որն իր մավրի մեջ ցուց է տալիս ոչ թե անմիջական ու կոպիտ մի խանդուտի, այլ ամենաազնիվ մի սիրտ, լի անսահման հավատով դեպի մարդկանց լավագույն արժանիքները, որը, սակայն, իր այդ հավատի գոհն է դառնում»:

Եվ մի փոքր հետո ամենագլխավորը.

... «Ռեգրեմոնայի կործանումով խորտակվում է նրա հավատը ողջ աշխարհի նկատմամբ, և ինքը աշխարհից հեռանում է կամովին»:

Ռոսովը Փափազյանի Օթելլոյի մեջ նկատել է այն, ինչ հետո հայ ողբերգու արտիստը մշակեց ու հիմնականը դարձրեց իր խաղում:

Մամուլից քաղված հատվածները կարելի է կրկնապատկել, բայց, թվում է, դրա կարիքը չկա:

Այս ամենը ինձ հայտնի էր «Բաց նամակը» գրելիս և եթե չեմ հիշատակել, ապա պատճառն այն էր միայն, որ ուրիշ նպատակ էի դրել իմ առջև, ոչ թե բացատրել, թե Փափազյանի Օթելլոն ինչ է ընդհանրապես, այլ պարզաբանել հետևյալ երեք խնդիրը.

1. Որ թատերական մամուլը 20-ական թվականների երկրորդ կեսին, գլխավորապես ռուսական, հետագայում, 30-ական թվականներից նաև օտար, այդ թվում փարիզյան, նրան հոչակեց աշխարհի մեժագույն ողբերգակներից մեկը:

2. Որ ռուսական թատերագիտական միտքը Մոսկվայում և այլուր այն կարծիքն է հայտնել, թե Փափազյանի ինչպես մեկնաբանությունը, այնպես էլ խաղը ժամանակակից է, հետևապես, նրա օրինակը աչքի առաջ ունենալով, պետք է մտածել, թե ինչպես կարելի է այսօր բեմադրել Շեքսայիր խորհրդային թատրոնում:

3. Որ պատմական (հայերի Վիճակը Թուրքիայում) և ժամանակակից կյանքի (հակահրեական հալածանքը Գերմանիայում) պատկերները մղել են նրան շեքսայիրյան հերոսի սևամորթ լինելը Օթելլոյի ողբերգության առանցքը դարձնել:

Այս է եղել իմ նպատակը:

Եվ 20-ական թվականներին, և հետո, մինչև 40-ական թվականների կեսերը, Փափազյանի մեկնության գլխավոր ելակետը դա է եղել: Բայց այդ գլխավորը չի բացառում նաև ուրիշ, շատ եական կետերի և գմերի գույությունը ևս: Ո՞չ տեսական ըմբռնումով, ո՞չ ել իբրև գեղարվեստական իրողություն, որպես այդ ըմբռնման ստեղծագործական կիրառում, գույնի խնդիրը որքան էլ կենտրոնական լինի, իրմով չի սպառում գործի բովանդակությունը: Ճիշտ այդպես էլ, երբ հետագայում Օստումը և ուրիշներ Օթելլոյի կերպարի լուսաբանության շեշտը դրին մարդու հավատի վրա, սևամորթ լինելու խնդիրը օրակարգից դուրս չեկավ, մնաց, բայց իբրև իրենց նախորշած գլխավոր իմաստին ենթակա կետերից մեկը:

Ու եթե այժմ հանձն առա շարադրել այս բոլորը, ապա ոչ որպես վերանայում մի անգամ հայտնված տեսակետի, այլ իբրև լրա-

ցում արդեն գրվածի՝ ոչ այնքան ինձ, որքան մյուսներին հեռու պահելու թյուր ըմբռնումից, և հիշեցնելու, թե հարկ չկա (և վերջապես, դա ի՞նչ սովորություն է) մի արվեստագետի մեծարել ուրիշի հաշվին, երբ նրանցից յուրաքանչյուրն իր տեղն ու նշանակությունն ունի այս հասկացության և՝ պատմական, և՝ գեղարվեստական իմաստով:

1965

Ի ԼՐՈՒՄՆ ԳՐՎԱԾԻ

Անհրաժեշտ եմ համարում անդրադառնալ Մյունխենից ստացված մի նամակի: Սկզբում մտադիր էի դրան մասնավոր բնույթ տալ, բայց հիշելով, որ նամակագրին հուզող հարցը՝ սևամորթ մարդու ողբերգությունը սպիտակների միջավայրում, գրադեցրել է ուրիշներին նույնպես, որոշեցի հանդես գալ հրապարակով: Որոշեցի հարցի շրջանակն ընդլայնել և այդ խնդիրը Փափազյանի կապակցությամբ արժարժել ընդհանրապես: Օթելլոյի մավր լինելը, ընդհանրապես գույնի հանգամանքը դեր կատարո՞ւմ է Շեքսպիրի ողբերգության մեջ, թե դա Չինդիիլի նովելից մեծ դրամատուրգին մնացած մի ժառանգություն է: Խսկապես, Օթելլոն կարո՞ղ էր մավր չլինել, թե դա դրամատուրգիական մտածողության հիմնաքարերից է:

Այս հարցը պարզաբանման կարիք ունի, մանավանդ որ դրա շուրջը հաջախ տարբեր տեսակետներ են հայտնվել և իրարամերժ կարծիքները հանգեցրել են այն մտքին, թե ցեղախտրականության խնդիրն առանցք դարձնելը սահմանափակում է Շեքսպիրի ողբերգության իմաստը:

Բացի Փափազյանից ուրիշները ևս կարծում են, թե Օթելլոյի սև լինելը պատահական մի օղակ չէ ողբերգական դեպքերի շղթայում:

Փափազյանը հանգել է այդ մտքին, ալդպես է ընկալել ու զգացել Օթելլոյի կերպարը, ունենալով դրա համար երկու կովան. նախ այն, որ դրա համար հիմքեր է գտել ողբերգության մեջ և մեկ էլ այն, որ ողբերգակի լայն հայացքը ուղղված լինելով ոչ միայն հայրենի պատմությանը, այլ նաև աշխարհի չորս կողմերը՝ ծգտել է հեռավոր ժամանակներում տեղի ունեցած մի դեպք բերել կապել իր դարի հուզող խնդիրներից մեկի հետ:

Շեքսպիրագետ Ռ. Հելլմանը այդ հարցին մի առանձին ուսումնասիրություն է նվիրել, մանրամասն վերլուծելով պիեսի կառուց-

վաժքը և կերպարները: Այդ աշխատությունն իմ ծեռքի տակ չկա, ես դրա մասին գաղափար եմ կազմել անգիտական շեքսպիրագետներից մեկի՝ Մետյուզի մի ուսումնասիրությունից, որը նույն հարցի հետազոտության է նվիրված (G. M. Maithews, «Othello and The Dignity of Man»):

Իմ նպատակն է ընթերցողին ներկայացնել Մետյուզի մի քանի մտքերը, որ դրան են վերաբերում:

Մետյուզի համոզումով սկի և սպիտակի հակադրությունը պիեսում կենտրոնական տեղ է գրավում, այլապես նա սևամորթ հերոսի վրա կանգ չեր առնի և ընդհանրապես սխալ է կարծել, թե պիեսը գրելիս Շեքսպիրին ամենին չի հուզել ցեղախտրականության հարցը:

Մետյուզի այս համոզմանը անդրադարձել է մեր շեքսպիրագիտությունը՝ ի դեմս Յու. Շվետովի, և բարձր գնահատել նրա հարցադրումը:

Նախ և առաջ այս պատճառով, որ Մետյուզը բոլորովին այլ կերպ է մեկնաբանում հարցը, քան արևմտյան որոշ շեքսպիրագետներ, ինչպես, օրինակ, Քեմբելը, որը գտնում է, թե խանդը, որպես կիրք ամենից լավ կարելի էր ուսումնասիրել Օթելլոյի օրինակի վրա, քանի որ նա պատկանում է մի ցեղի, որի համար խանդը բնական վիճակ է:

Ինչո՞ւ է մեր շեքսպիրագիտական միտքը Մետյուզի հարցադրումը գնահատում:

Հերոսի սկսությունը Շեքսպիրի համար միշոցներից մեկն է եղել, որպեսզի կարողանա ավելի սուր և ամբողջական հակադրել Օթելլոյին վենետիկյան միջավայրին, քննադատության ենթարկել այդ միջավայրը և համոզել հանդիսատեսին, թե Օթելլոյի և Ռեզդեմոնայի հոգեկան մաքրությունը որոշում է նրանց բողոքն իրենց շրջապատող հասարակության դեմ, և նրանց լիակատար անօգնականությունը այդ նույն հասարակության առաջ:

Այնուհետև Յագոյի՝ Օթելլոյին ատելու գլխավոր պատճառը, ըստ Մետյուզի, մավրի սև լինելն է: Եվ այդ կապակցությամբ նա բերում է փաստեր, ցուց տալով, որ Օթելլոյի հանդեպ այդ նույն վերաբերմունքն ունեն մյուս վենետիկցիները նույնպես:

Եվ, վերջապես, հակամարտության մեջ գտնվող ուժերի փոխ-

հարաբերությունը. «Օթելլոն» ոչ թե պատմություն է այս մասին, թե ինչպես քաղաքակրթված բարբարոսը վերադառնում է իր նախկին վիճակին, այլ՝ թե ինչպես ծերմակ բարբարոսը զգտում է քաղաքակրթված սև մարդուն իջեցնել մինչև իր աստիճանին: Եվ հետաքրքիր է, որ այս միտքն առաջադրելիս, Մետյուգը ցուց է տալիս, թե ինչպես Յագոյին վերջիվերջո չի հաջողվում այդ անել և ընդհանրություն է տեսնում ժամանակակից կյանքի, հատկապես վերջին պատերազմում տեղի ունեցած և երկրագնդի ողջ մարդկությունը ցնցած դեպքերի միջև:

Այս ամենի հիման վրա Մետյուգը գովնի հարցը դիտում է իբրև ողբերգության բուն առանցք: Հաձախ նույնն են ասում նաև մեր շեքսպիրագետները, այն տարբերությամբ սակայն, որ դա պիեսի գլխավոր կենտրոնը չեն համարում:

Կարելի է շատ օրինակներ բերել և ցուց տալ, թե ինչպես մեր ժամանակակից շեքսպիրագետները Օթելլոյի և Նրա շրջապատի միջև եղած հակասությունը բացահայտելիս մի քանի կետ են հիշատակում, որոնց թվում նաև սևամորդությունը:

Մի օրինակ բերեմ Ա. Անիկստից.

Օթելլոն գիտեր, որ ինքը Վենետիկում օտար է ոչ միայն այն պատճառով, որ ուրիշ երկրից է, այլև այն, որ ուրիշ ցեղի է պատկանում: Նրան թվում էր, թե Ռեզդեմոնայի սերը ջնշեց իր և Վենետիկցիների միջև եղած բոլոր տարբերությունները: Բայց հիմա, երբ Յագոն համոզեց նրան, թե Ռեզդեմոնան անհավատարիմ է, Նրա առաջ ամբողջ պարզությամբ կանգնեց այն փաստը, որ ինքը երբեք և ոչ մի դեպքում չէր կարող Վենետիկցիների միջավայրում հարազատ մարդ դառնալ, նույնիսկ այդ շրջապատի լավագուն ներկայացուցչի՝ Ռեզդեմոնայի համար: «Սև եմ» — այս խոսքերի մեջ հնչում է սրտի հառաջանքը մի մարդու, որը գիտակցել է, թե իր բոլոր արժանիքները բավական չեղան, որպեսզի կարելի լինի իր և հասարակության միջև եղած անջրաբետը ոչնչացնել, հասարակություն, որի հետ նա կապեց իր ծակատագիրը, տալով նրան իր բոլոր ուժերը և ընդունակությունները»:

Այս կարգի մեջբերումներ կարելի է կատարել հայրենի մյուս շեքսպիրագետներից ևս:

Իմ ձեռքի տակ է Վլադիմիր Ռոգովի հոդվածը, որտեղ հեղի-

Նակը փորձում է բացատրել, թե ինչու է Յագոն Օթելլոյին ատում: Մեկ առ մեկ հիշելով, թե մեր շեքսափիրագետներից որ մեկը ինչ պատասխան է տվել այդ հարցին, և չհամաձայնելով ոչ մեկի հետ, նա նույն կարծիքն է հայտնում, ինչ Մետյուզը: Ըստ Երևույթին նա միևնույն եզրակացության հանգել է անկախաբար, որովհետև նախ չի հիշատակում նրան և ապա՝ հիմնավորումը բոլորովին այլ է, քան անգլիական շեքսափիրագետի ուսումնասիրովթյան մեջ:

Ըստ Ռոգովի՝ Յագոն ատում է Օթելլոյին, որովհետև նա մավր է:

Ինչո՞ւ:

Ռոգովն իր պնդումը հաստատում է Յագո անվան ստուգաբանությամբ: Ասելով, որ դա իսպանական անուն է, նախ՝ նկատում է, որ այդ անունը Զինթիոյի նովելում չկա, որ այդ անունով նրան մկրտել է Շեքսափիրը. Երկրորդ՝ իսպանացի լինելու հանգամանքը իբրև Օթելլոյին ատելու պատճառ ժամանակակից ընթերցողի աչքից կարող է վրիփել, քայլ «Գլոբուս» թատրոնի հանդիսատեսի համար միանգամայն պարզ է եղել: Բոլորին հայտնի է իսպանացիների դեպի մավրերն ունեցած դարավոր ատելությունը, որը ժամանակի ընթացքում վեր էր ածվել բացարձակ ռեֆլեքսի:

Թերևս արժե Մետյուզի և Ռոգովի այս պնդումը, որ հավանական և նույնիսկ համոզիչ է թվում, ամրապնդել նրանով, որ Յագոն առաջին արարի վերջին տեսարանում և Ռոդրիգոյի հետ խոսելիս և մենակ մնացած ժամանակը բացականչում է.

— Ես մավրին ատում եմ:

— Ատո՞ւմ եմ մավրին:

Մետյուզն իր ընթերցողի ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա, որ Յագոն երբեմն է Օթելլո ասում, իսկ ընդհանրապես նըրան մավր է կոչում: Անգլիացի գիտնականն ուզում է ասել, թե Յագոն նրա մեջ ոչ թե այսինչ մարդուն է տեսնում, այլ արհամարհված ցեղի ներկայացուցչին:

Այս կապակցությամբ կուզեի ընթերցողի ուշադրությանը հանձնել մի մանրամասն ևս: Յագոն գանգատվելով Օթելլոյից, ասում է Ռոդրիգոյին, թե իրեն տեղակալ նշանակելու փոխարեն, նա այդ պաշտոնը հանձնել է մի անարժան մարդու՝ Կասիոյին.

Որ երբեք մի վաշտ չի տարել դաշտը,
Եվ պատերազմի բաժանումներից այնքան բան գիտէ
Որքան մի աղջիկ. միայն գրքերից ուսած թերիա:

Շեքսպիրագետներ կան, որոնց կարծիքով Օթելլոյի նկատմամբ
ատելությամբ համակվելու պատճառներից մեկն էլ դա է. Յագոն
Վիրավորված է, դառնացած:

Նա առող փառող տեղակալ դառնա,
Այն ինչ ես — աստված չար աչքից պահե՝ —
Մընամ դրոշակիր Նորին Մավրովյան:

Այստեղ էլ՝ Նորին Մավրովյուն: ՁԵ՞ որ կարող եր ասել՝ «Նորին մեծություն», «Նորին գերազանցություն», բայց ոչ, ասում է՝ «Նորին Մավրովյուն»: Սա, իհարկե, հեգնանք է, որ մեկ է, թե ասի՞ «Նորին Սևամորթություն»: Պրոֆ. Սորոգովը, հիշելով այս փաստը, բացատրում է, որ «աստված չար աչքից պահե» բառերն ասելիս, Յագոները խաչալնքում եին: Իմաստն այն է, թե թող աստված ներե, որ պետք է մի սարսափելի բան ասեն:

Մետյուգի հարցադրման մի արժեքավոր կողմն էլ այն է, որ նա Օթելլոյի հումանիստական ձգտումները չի բացասում, ընդհակառակը՝ դրա վրա է կառուցում իր ամբողջ տրամաբանությունը:

Եվ իսկապես, ինչո՞ւ հակադրել միմյանց այդ երկու խնդիրները, երբ դրանք իրար հետ սերտորեն կապված են: Վերածնության շըրջանում ցեղախտրականության խնդիրը գուցե և այնպես սրված չի եղել, ինչպես իհմա, բայց սիամ է մտածել, թե այն ժամանակվա հասարակական կյանքի ընրոնումներն ընդհանրապես բացառում եին որևէ հակասության հնարավորություն սպիտակի և սևի միջև:

Հարցը ոչ Ռոդրիգոյի մեջ է, ոչ էլ միայն Յագոյի, այլ նաև Բրաբանցիոյի: Օթելլոյի հետ ունեցած նրա փոխհարաբերությունը վերլուծելիս դժվար չէ գտնել այն սահմանաբաժանման կետը, թե մինչև որտեղ սևամորթը կարող էր նրա համար ընդունելի լինել և որից այն կողմ՝ բոլորովին ոչ: Գրականության մեջ մի անգամ չէ, որ դիտվել է, թե ինչպես այդ ազնվականը չի խորշել մավոհ սև լինելուց, նրան ընդունել է իր տանը հածախ, և նույնիսկ սիրել, բայց երբ բանը հասել է այդ նույն Օթելլոյի հետ ազգակցական կապ հաստատելուն, վրդովվել է, ամբողջ Վենետիկը ոտքի կանգնեցրել, Օթելլոյին բանտ ուղարկելու կարգադրություն արել, մի

բարձրատոհմիկի հետ ամուսնանալու սևամորթի ցանկությունը համարելով ոչ միայն դատապարտելի, այլև ապօրինի քայլ:

Մետյուազը մի հետաքրքիր դիտողություն է արել. Դեզդեմոնայի «անհավատարմության» մասին Օթելլոյի հետ խոսելիս Յագոն երկու-երեք անգամ շրջված ձևով արտահայտում է Բրաբանցիոյի մըտքերը.

Բրաբանցիոն գգուշացնում է Օթելլոյին.

Իր հորը խաբեց, քեզ էլ կխաբի

Յագոն հիշեցնում է Օթելլոյին.

Իր հորը խաբեց, քեզ հետ պսակվեց

Սի այլ օրինակ. Բրաբանցիոն գանգատվում է.

Եվ ամուսնության այնքան հակառակ, որ խուս էր տալիս

Մեր ազգի հարուստ, գանգրահեր, սիրված պատանիներից

Յագոն հաստատում է.

Մերժել իր ձեռքը այնքան շատերին՝

Իր երկրի, գովնի և աստիճանի փեսացուներին

Սա ցուց է տալիս, որ Յագոն մտածում էր Բրաբանցիոյի նըման: Որպես այս մտքի ապացուց կարող է ծառայել Բրաբանցիոյի հետ Յագոյի ունեցած առաջին արարի այն տեսարանը, ուր նա աշխատում է գրգռել մեր ազնվականի ավանդական նախապաշտումը՝ ցեղախտրականությունը: Դրա համար էլ իր խոսքում միշտ և շարունակ Օթելլոյին անդրադառնում է որպես սևամորթի, հասկանալով, որ Բրաբանցիոյի տեսակետով նա մի ստոր կարգի արարած է:

Հիմա, հենց հիմա, հենց այս րոպեիս մի սև պառակ խոյ:

Ցատկել է ծերմակ գառնուկիդ վրա:

Կամ.

Թույլ եք տալիս, որ մի արաբական ձի ցատկի ձեր աղջկա վրա. Երևի խրխնջացող սերունդ եք ցանկանում, նժոյգներ և մատակներ եք ուզում իբրև թռո և ծռո:

Ծերսպիրին սվիրված գրականությունը ծով է, և հավանաբար այս օրինակներն ել բերված լինեն: Տվյալ դեպքում դա չէ կարեվորը, այլ հարցը, հարցի լուսաբանությանը նպաստող փաստական կովանը:

Ծերևս արժե դիմել պատմությանը, որի պահպանած վկայու-

թյունները կօգնեն հասկանալու, թե մտքի ինչպիսի ընդվզումներ են եղել դեռ վաղ անցյալներում Օթելլոյի մավր լինելու դեմ:

Հասարակական նախապաշտումներն այնքան են պղտորել մարդկանց մտքերը, որ նրանք նույնիսկ հնարավոր են համարել հրապարակով արտահայտել իրենց վրդովմունքը, վիրավորված՝ բողոք ներկայացնել Շեքսպիրին, բայց քանի որ նա չկար արդեն, ապա դրամատուրգին պաշտպանող և նրա «Օթելլոն» բեմից ներկայացնող դերասաններին:

Մի ցայտուն օրինակ միայն:

Ռայմերը հայտարարել է.

«Այս ողբերգությունը լավ ուսումնասիրեք և դուք կտեսնեք, որ ազնիվ Ռեգդեմոնան գեղքական սպասուիոց բարձր չե... Անգլիայում սևադեմ մավրը կարող է դառնալ գնդի թմբկահար, բայց ոչ ավելի: Շեքսպիրը նրան դարձնում է գեներալ: Սեզ մոտ մավրը կարող է ամուսնանալ թերևս մի ինչ-որ անառակ կնոջ հետ, Շեքսպիրն ամուսնացնում է նրան ազնվազարմի դստեր և ժառանգի հետ. բնության մեջ չկա ավելի գարշելի բան, քան անծշմարտանման սուտը... Չկա ավելի պակաս անծշմարիտ պիես, քան Շեքսպիրի «Օթելլոն» է:

Թվում է, թե այս դատողության հասարակական արմատներն այնքան պարզ են, որ հատուկ մեկնությունների կարիք չեն գգում:

Արդյոց այս և սրա նման ելույթները չե՞ն դարձել պատճառ, որ թատրոնը որոշ գիշումների դիմի և որոնի մավրի ու ազնվական հանդիսատեսի հաշտեցման եզր:

Նորից պատմությանը դիմենք: Հնագույն բալլադներից շեքսպիրագետները պարզել են, որ Շեքսպիրի ժամանակվա Օթելլոները սև եին և ոչ թե թուխ կամ բրոնզագույն: Առաջին դերասանը, որ սևը փոխարինել է բրոնզագույնով, Էդմունդ Քինն է եղել:

Այս փոփոխությունը՝ սևից դեպի բրոնզագույն, արդյոք հասարակական նախապաշտումների ազդեցությամբ չի՝ կատարվել:

Պոլ Ռոբսոնը, որ, ինչպես հայտնի է, նույնպես խաղացել է Օթելլոյի դերն ամերիկան բեմում, գտնում է, որ «Շեքսպիրյան Օթելլոն սովորեց ապրել իրեն օտար հասարակության մեջ, բայց նա այդ հասարակության անդամ չդարձավ»:

Գալով նորից Փափազյանին, նկատելու է, որ նա հենց այդպես

Ել հասկացել ու խաղացել է շեքսպիրյան հերոսին: Եվ այն, ինչ հասկացել ու գեղարվեստական ծևակերպում է տվել դրան, երբեմն որոշ քննադատներ սխալ են ընկալել ու մեկնաբանել, բայց, ինչպես արդեն տեսանք, իր ծիշտ արտացոլումն է գտել 20-ական թվականների, մասամբ նաև 30-ական թվականների սկզբի քննադատական գրականության մեջ: Եվ հետաքրքիրն այն է, որ ինչպես ողբերգակը է դիտել Օթելլոյին որպես հումանիստական գաղափարների տեր մարդու, որին, սակայն, որպես սկամորդի, չի հանդուրժում սպիտակների հասարակությունը, ծիշտ այդպես էլ նրա մեկնաբանության այդ կողմերը շատ քննադատներ դիտել են միասնաբար: Եթե ոչ բոլոր հոդվածներում, ապա շատերի մեջ խոսվում է այն մասին, որ արտիստի ուշադրության կենտրոնում սպիտակների միջավայրից հալածված, դժբախտացած մավրն է, նաև այն մասին, որ իր դարի հումանիստական գաղափարները որդեգրած Օթելլոն տառապում է մարդու նկատմամբ հավատը կորցնելու պատճառով:

Այսպես որ, Օթելլոյի դերում Փափազյանը աչքաթող չի արել ոչ նրա հավատը մարդու նկատմամբ, ոչ էլ այդ հավատի խորտակման ողբերգական տառապանքը, բայց այդ երկու հիմնական կետերը առնչել են հերոսի սկամորթ լինելու հետ, ծիշտ այնպես, ինչպես հետագայում Մետյուոն է մտածել ու շարադրել:

Եթե Օթելլոյի կերպարի ըմբռնման փափազյանական գարգացմանը կամենանք հետևել, ապա նրա մեկնաբանությունը 20-ական թվականներից մինչև 30-ական թվականները մնացել է գրեթե նույնը, այն տարբերությամբ սակայն, որ շեշտադրումներն են փոխվել: Եթե 20-ական և 30-ական թվականների սկզբներին գլխավոր շեշտը դրվում էր այն մտքի վրա, թե սկամորթը (Դեզդեմոնայի հետ միասին) որդեգրել է մարդկային բարձր գաղափարներ և զգացումներ, մի բան, որ հանդուրժելի չեղավ բարձրատոհմիկ Վենետիկի համար, ապա հետագայում առաջին գիծ քաշվեց Օթելլոյի մարդկայնությունը, որի խորտակումը նախապատրաստող միջավայրի համար հարցը սրվում էր նաև այն տեսակետից, թե մարդկային ներդաշնակության կրողն իրենց միջավայրում մավրն է, սկամորթ մի մարդ, որ կարող է իրենց օգտակար լինել, թերևս նույնիսկ շատ, բայց չհանդուրժել նույն հասարակության մեջ հավասարազոր անդամ Շանաչվելու նրա միամիտ ծգտումը, և մանավանդ նրա կատարած հանդուգն բայլը՝ Դեզդեմոնայի հետ ամուսնանալը:

ՎԱՅՍԱՐՅԱՆ ՏԵՏՐԻՑ

ՕԹԵԼԼՈ

Պետրոս Ադամյանից հետո Օթելլոյի կերպարը մարմնավորեցին հայ դերասաններից շատերը՝ Գևորգ Պետրոսյան, Հովհաննես Զարդիքյան, Հովսեփ Ոսկանյան և ուրիշներ: Նշանակալից էր հայ բեմի խոշորագույն վարպետներից մեկի՝ Հովհաննես Աբելյանի խաղարկումը: Մեծ արվեստագետի կողքին պետք է հիշատակել նաև Հրաչյան Ներսիսյանին:

Այս դերասաններից Ադամյանի Օթելլոն տեսել էին միայն Արելյանն ու Պետրոսյանը: Եվ շեքսպիրյան դերի ադամյանական «ընթերցումը» հաջորդ սերունդներին հաղորդվեց այս երկու դերասանների միջոցով: Ինչպես արդեն ասվեց, Օթելլոյի հայ դերակատարների համար ադամյանական կատարումը որոշիչ և կողմնորոշող նշանակություն ուներ:

Միակ ողբերգուն, թերևս Ադամյանից հետո հայ շեքսպիրյան թատրոնի ամենախոնջոր ներկայացուցիչը, որ այդ դերը իր մեծ նախորդից տարբեր կերպ էր խաղում, Վահրամ Փափազյանն էր:

Մի քանի փաստական տվյալներ:

Օթելլոյի դերը Փափազյանը կատարեց 1908-ին: Սա նրա շեքսպիրյան անդրանիկ դերն էր հայ թատրոնում: Այն ժամանակ նա ընդամենը քսան տարեկան էր: Հետո նա շատ երկար խաղաց այդ դերը, կես դարից ավելի, մոտ երեք հազար անգամ՝ հավանաբար աննախադեպ երևույթ թատրոնի պատմության մեջ ընդհանրապես: Նա Օթելլո խաղաց ոչ միայն Սովետական Միությունում, այլև աշխարհի շատ երկրներում: Ըստ ռուս ու ֆրանսիական մամուլի գնահատության, Փափազյանը, որպես Օթելլոյի դերակատար, կանգնում է աշխարհի շեքսպիրյան մեծագույն ողբերգունների շարքում:

Ասեմ նաև, որ նա, բացի Օթելլոյից, խաղացել է Ռոմեո, Համլետ, Մակբեթ, Լիր: Եվ այն, որ նա իր դերերը, հայերենից գատ, խաղացել է ֆրանսերեն, իտալերեն, թուրքերեն և ռուսերեն:

Եկս մի քանի տվյալ:

Փափազյանը, որպես դերասան, ծևավորվել է իտալական թատրոնում, բեմի այնպիսի վարպետների «հովանու» Ներքո, ինչպիսիք են Էրմետե Նովելլին, Էրմետե Ցակկոնին և Էլեոնորա Շուգեն: Հետագայում, հաղորդակցվելով ոռու թատերական կյանքին, նա հարցստացավ նոր տպավորություններով, և այդ վառ անհատականության մեջ «տրամախաչվեցին» բեմական տարբեր հոսանքներ ու ուղղություններ: Իսկ 20-ական թվականներին, եթե արդեն հասուն վարպետ էր, նրա մեջ դասական թատրոնը Ներդաշնակորեն զուգորդվում էր բեմարվեստի ժամանակակից միտումների հետ: Նա ասես միավորում էր հինո՞ւ ու նորը: Միայլ չհասկացվելու համար շտապեմ ասել՝ նա նոր էր ոչ այն պատճառով, որ չէր կարողացել «հաղթահարել» հինը և կամ նորի անվերապահ հետևորդն էր: Մի դերասան էր նա, որի մասին կարելի է ասել, թե ինի և նորի հարաբերակցությունը, ժառանգորդության և պատմագեղագիտական «սերընդափիխության» ֆենոմենն իսկ ընկալում էր որպես հայրերի ու որդիների ժառանգորդություն: «Կոնսերվատորների», պահպանողականների համար նա «մողեռնի» Ներկայացուցիչ էր, կատաղի նորարարների համար՝ «հնադավան», իսկ 20-ական թվականների «գրոհիկ ու փոթորկի» շրջանի ստեղծագործական կենդանի միտքը արժարժող արվեստագետների համար կողմնորոշող ուժ էր նա:

Այս տարիներին թատերական Մոսկվայի վրա իշխում էր Մեյրիոլիի ոգին: Դասական հեղինակները և հատկապես Շեքսպիրը արտաքսված էին բեմից և եթե նրանք, այնուհանդերձ, «արժանանում էին» բեմ ելնելու պատվին, ապա «սոցիոլոգիական» այնպիսի մեկնաբանությամբ, ինչպիսին Մեյրիոլիի թատրոնում բաժին ընկավ Գոգոլին և Օստրովսկուն: Եվ, չնայած այս ամենին, ինչպես նաև այն բանին, որ Փափազյանի անունն ու «ուեկլամը» Մոսկվայում ներկայանում էին Սալվինիի և Շուգենի լուսապատճենով, — մի հանգամանք, որ պետք է հանգեցներ հակառակ Ներգործության և Նեգատիվ կրքերի, — Մոսկվան հիացած էր Փափազյանի արվեստով: Այդ ժամանակներում արդեն եղան մարդիկ, որ մամուլում այն կարծիքը հայտնեցին, թե Փափազյանն իր խաղով հնարավոր դարձրեց Շեքսպիրի վերադարձը սովորական բեմ: Գրեցին նաև, թե Փա-

Քաղաքանից պետք է սովորել՝ ինչպես այսօր խաղալ Շեքսպիր, որ արդիական հնչողություն ունենա:

Եվս մի հանգամանք:

Փափազյանը, ինչպես արդեն ասացի, Օթելլո խաղաց 1908-ին:

Բավական ժամանակ, մինչև 20-ական թվականների սկիզբը, նա նույնպես ընթանում էր Օթելլոյի կերպարի ադամյանական մեկնաբանության հունով, բայց հետո ամեն ինչ փոխվեց և փոխվեց եապես՝ նա այդ կերպարում տեսավ մի բովանդակություն, որը,— սա կարելի է անառարկելիորեն հաստատել,— ժամանակի թելադրանքն էր հայ ողբերգուին:

Բայց մինչ այդ իր մեծ նախորդի «մշակած» թեմային՝ Ներաշխարիի ներդաշնակության հասած «բնական մարդու» իդեալի կործանմանը, նա արդեն ավելի լոկալ լուծում տվեց, — Դեզդեմոնայով հրապուրված և հափշտակված մավրը հիասթափվում է, կորցնում հավատը, խանդում, տառապում, կործանում նրան և, ի վերջո, ինքն էլ կործանվում: Հավանաբար, քանի նույնականական դերասանից դժվար էր սպասել կերպարի ավելի խոր թափանցում: Սակայն տարիներ անցան, և այդ տարիներին մարդկության ու հարազատ ժողովրդի պատմական ձակատագրում այնպիսի իրադարձություններ կատարվեցին, որոնք չեն կարող չանդրադառնալ դերի փափազյանական մեկնաբանության վրա՝ եթե ոչ անմիջական ազդեցության տեսակետից, ապա, համենայն դեպս, միջնորդավորված եղանակով, որը արվեստում շատ հաճախ առավել եական դեր է խաղում (և՝ ինընըստինքյան, և՝ իր հետևանքներով):

Նախ՝ պատերազմը: Հայկական ջարդերը այս ընթացքում: Մեկ և կես միլիոն հայերի ֆիզիկական ոչնչացում՝ ոչ միայն Թուրքիայի այս ժամանակվա կառավարող շրջանների գիտությամբ, այլև, ինչպես պարզվեց, նրանց նախապես կազմած ծրագրի համաձայն:

Այնուհետև՝ Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը, աշխարհում առաջին սոցիալիստական պետության ստեղծումը: Ռուսաստանում: Եվ, վերջապես, Հայաստանում սովետական կարգերի հաղթանակը:

Ողբերգուն, բնականաբար, դերի ընթերցման սահմանները պիտի ընդարձակեր: Ստեղծագործական նման ընթացքն անխուսափելի էր, մանավանդ որ խոսքը ծշմարիտ արվեստագետի մասին է:

Մենք գործ ունենք մի այնպիսի դերասանի հետ, որը կես դար

անց և նույնիսկ հետո էլ, ոչ միայն կերպարը չդարձրեց բեմական քարացած դիմակ, այլև խորացրեց ու կատարելագործեց իր խաղը տառացիորեն ներկայացումից ներկայացում:

Կյանքի երևովթներն ու մարդկային հարաբերությունները, որ առաջ դերասանն ընկալում էր գուտ բարոյական տեսանկյունից, այժմ, հեղափոխության ազդեցությամբ, ընդունում էր իրենց սոցիալական հիմքով: Ըստ արտիստի, Ծեծսպիրի ողբերգության մեջ բախվում են Վերածնության իրարամերժ երկու աշխարհզգացողություններ՝ մարդասիրությունն ու մաքիավելիզմը: Նա Աղամալանից տարբերվում էր այն բանով, որ ծանոթ էր արդեն այդ երևովթների ոչ միայն հոգեբանական, ոչ միայն պատմական և նույնիսկ փիլիսոփայական, այլև սոցիալական պատճառներին:

Սակայն Փափազյանը կանգ չառավ այդ կետի վրա:

Նա համոզված էր, որ հակասություն կա մավրի և Վենետիկի միջև: Եվ, ի տարբերություն իր մեծ նախորդի, նա այստեղ ավելի հեռու գնաց, հակասության մեջ հայտնաբերելով նոր գծեր ու հատկանիշներ:

Ըստ Փափազյանի մեկնաբանության, նրա հերոսի և շրջապատի միջև այդ հակասությունը անվախ է ողբերգության սյուժետային բախումից, ֆաբովային կոլիզիայից: Վերջինիս չափերը շատ ավելի մեծ են, քան կարող է թվալ առաջին հայացքից: Այն առկա է որպես սոցիալական պոտենցիա: Ոչ միայն որպես հետևանք այն բանի, որ Օթելլոն Վերածնության իդեալների արտահայտիչն է, իսկ նրա շրջապատը՝ ոչ, այլև այն, որ նա մավր է, սևամորթ, որ նա վարձած է, ուստի չի կարող լինել այդ հասարակության իրավահավասար անդամը: Ողբերգությունն ինքը բավական հիմք է տալիս նման ընթերցման համար, և վերջին ժամանակներս իրենց դա է գրավել անգիտացի շեծսպիրագետ Մետյուգի ուշադրությունը: Նա այն կարծիքին է, թե Օթելլոյի մաշկի գույնը վծուական դեր է խաղում սյուժեի զարգացման, կոնֆլիկտի առաջացման ու խորացման մեջ:

Փափազյանը դեռ 20-ական թվականներին Օթելլո խաղակիս մեծ նշանակություն էր տալիս իր հերոսի մաշկի գույնին՝ շեշտելով այն, ցանկանալով դրանով իսկ ցույց տալ, որ սև մորթը ողբերգական իրադարձությունների նախապատճառն է: Հայ ողբերգուի

մեկնաբանության այս կողմի վրա ուշադրություն են դարձրել և՝ Մոսկվայում (1928), և՝ Լենինգրադում (1929), և՝ Փարիզում (1932):

Իսկ ի՞նչ էր դա, դերն ընկալելու դոմինանտ: Անջուշտ: Ու նաև ողբերգության մեջ այնպիսի խորքեր հայտնագործելու ծգում, որ չեին նկատել ոչ նրա մեծ նախորդը և ոչ ել ավագ արվեստակիցները, համենայն դեպք՝ հայ բեմում:

Կարծում եմ՝ անկախ այն բանից, թե ինչ գործուն օբյեկտիվ դեր է խաղում մաշկի սև գովով ոչ միայն սյումետրային դարձարձումներում, այլև ողբերգության գաղափարական համակարգում, պետք է ուշադրություն դարձնել դարաշրջանի այն գործոններին և դեպքերին, որոնք չեին կարող ներգործություն չունենալ դերասանի աշխարհազգացողության վրա:

Արտիստի աչքի առաջ կատարվող ողբերգական իրադարձությունները, անշուշտ, ստիպեցին նրան նոր լուսի տակ տեսնել Շեքսպիրի պիեսի ողբերգական բախումները:

Հեղափոխությունը բերեց մեծ և փոքր ժողովուրդների իրավահավասարության գաղափարը: Հենց վերջինիս ազդեցության տակ դերասանը չէր կարող չանդրադառնալ նաև հարազատ ժողովորդի, հատկապես նրա այն կեսի պատմական ծակատագրին, որի զգալի մասը ժամանակ առ ժամանակ զոհ էր դարձել թուրքական յաթաղանին, իսկ մյուս մասը, արլունոտ մղճավանջից հրաշքով փրկված՝ ցրիվ էր եկել աշխարհով մեկ:

Ես բնավ ել չեմ ուզում ասել, թե դերասանը, Օթելլո խաղալիս, աչքի առաջ ուներ թուրքիայում հալածված ու տեղահան արված հայի: Նա այդքան պարզամիտ չէր: Բայց մի՞թե կյանքն ու մարդկանց ընթանելու նրա ծգումն ու մտածողությունը կարող էին լիովին կտրված լինել հարազատ ժողովորդի պատմությունից, մանավանդ ոչ հեռու անցյալից, որ լի էր աշխարհը ցնցող ողբերգական իրադարձություններով, և որից նա «բաժանված էր» ընդամենը մեկ տասնամյակով: Իսկ եթե սրան ավելացնենք նաև այն, որ նման կամ մոտավորապես այդպիսի ծակատագիր էր վիճակված ուրիշ ժողովուրդների ևս, թեև հալածանքի տարբեր ծներով, ապա պարզ կդառնա, որ դերասանը, ի դեպք՝ հենց նույն հայկական կոտորածների ու հալածանքների երկրում ծնված դերասանը, պետք է հա-

տուկ ուշադրություն դարձներ ցեղային խտրականությանը՝ որպես խորապես համամարդկային երևությի:

Այլ կերպ ասած, Փափազյանի խաղում բարդ հենքով միահյուսվում ու բախվում էին մի կողմից Վերածնության հումանիզմի և նրա իսկ ընդերքում առաջ եկած մաքիավելիզմը, մյուս կողմից՝ հարդըն իր պատմական ժակատագրով և, վերջապես, ցեղային խտրականությունը աշխարհի լուսավորյալ երկրներում՝ որպես ժամանակակից կյանքի կարևորագույն պրոբլեմներից մեկը, որն այսօր, լարված ու տենդագին, մարդկության միտքն է զբաղեցնում:

Ուզում եմ անդրադառնալ ևս մի խնդրի, որ կապված է Օթելլոյի կերպարի մեկնաբանության հետ ընդհանրապես և այդ դերի փափազյանական մեկնաբանության հետ մասնավորապես:

Փափազյանի Օթելլոյի կապակցությամբ, հատկապես 30-ական թվականների երկրորդ կեսից, արվել է այն դիտողությունը, թե նա երբեմն կոշտուկոպիտ է, թե նրա հոգեկան պոռթկումները երբեմն հասնում են վայրագության: Այս տպավորությունը ծիշտ զննության արդյունք է, թեև դրանից արված հետևողությունը, կարծում եմ, սրխալ է, կապված այդ կերպարի իդեալականացումը որոշ չափով կանոնացնելու հետ: Այստեղ անհրաժեշտ է հիշել հետևյալը. խոսքը վերաբերում է այնպիսի դերասանի, որի մասին մամուլը ժամանակին գրել է, թե մեր թատրոնները Օթելլոյի նրա դերակատարմանը դիմելիս պետք է մտածեն՝ ինչպես կարելի է այսօր բեմում Շեքսայիր ներկայացնել, որպեսզի այդ հեռավոր պատմությունը արդիական հնչողություն ստանա: Բայց եթե այդպես շատերն էին մտածում դեռ 20—30-ական թվականներին, ապա հետևում է, որ Փափազյանն արդեն այդ շրջանում արտահայտում էր ժամանակի ոգին:

Ես կփորձեմ բացատրել, թե ինչու, այնուհանդերձ, Փափազյանի մեկնաբանության մեջ կոպտություն է Նկատվել: ԶԵ՞ որ նրա Օթելլոն հումանիստ է, Վերածնության մարդ: Ամեն ինչ այստեղ, հավանաբար, հանգում է Օթելլոյի իդեալականացման պրոբլեմին, որի ինքնաբավ ու անվերապահ ընդունումը ստվերել է հերոսի բնավորության ու հոգեբանության մյուս կողմերը, որոնցից երբեմն նույնիսկ կտրականապես հրաժարվում էին:

Փափազյանի խաղում այդ իդեալականացումը չկար: Նա կերպարն ընթերցում էր ավելի լայն ու բազմիմաստ, պահպանելով կեր-

պարի հակասական բնույթը՝ մարդկայնության հետ մեկտեղ անմարդկայնության պարուսիզմներ, բարության կողքին՝ չարության պողովանմներ, քնքշություն և հանկարծ՝ կոպտություն, հասուն միտք և միաժամանակ խենթություն, հիացմունք և հիասթափություն, սեր և ատելություն:

Դերասանը ձգտում էր ստեղծել մի մարդու կերպար, որը կյանքըն ավարտում է գրեթե այնպես, ինչպես սկսել էր: Սակայն այդ սկզբի ու վերջի միջև նա ապրում էր այնպիսի ողբերգական տառապանքներ, որոնք մերժ բարձրացնում էին նրան մինչև երկինք, մերժ ցած նետում, նայած թե Յագոյի դեմ «մենամարտի» որ պահն էր՝ հակառակ Յագոյի հաջողվում էր հավատարիմ մնալ մարդկային իր եռլոյանը, թե, ենթարկվելով նրան և անձնատուր լինելով նրա սադրանքերին, իշնում էր մինչև Յագոյի մակարդակը և նրա հետ մեկտեղ մտմտում Վրիժառության մեկը մլուսից ահավոր ժրագրեր:

Այդպիսին էր Փափազյանի Օթելլոն:

Օթելլոն վենետիկյան քաղաքակիրթ միջավայրն ընկնելով սկըսում է հումանիզմ դավանել: Նրա մեջ հոգեկան վիթխարի տեղաշարժ է կատարվում, և նա դառնում է հումանիզմի բուն գաղափարը կրողներից մեկը: Սակայն Շեքսպիրի հերոսը, որի հոգեկան ներդաշնակությունը խախտվում է Յագոյի շանքերով, ակամա հեռանում է հումանիզմից, ներքուստ քայլայվում, Վերադառնում այն վայրի բնագրներին, որոնցից հեռացել էր նա և նոր աստիճանի բարձրացել: Շեքսպիրի Օթելլոյի համար սա անխոսափելի դարձ է: Փափազյանի Օթելլոն հոգեկան փորձության դժվարին պահին նահանջում է: Եվ սեփական պատիվը փրկելու, իր ծնով հասկացած արդարության համար մղած պայքարում, պայքար, որի ընթացքը ավելի շատ Յագոն է որոշում, քան ինքը, Օթելլոն դիմում է հարձակման և ինքնապաշտպանության այն ծներին, որ մի ժամանակ տեսել ու յուրացրել է անապատում: Նա հավատացել է իր նոր միջավայրի ազնվությանն ու արդարությանը, քաղաքակրթության մաքրությանը, շրջապատղների մարդկայնությանը, և հանկարծ... դավաճանություն, կեղծիք, ստորություն, մի խոսքով, մարդն այն չէ, ինչ թվում է, և Օթելլոյին ուրիշ բան չի մնում, քան հրաժարվելով շրջապատին ծովվելու ձգտումից՝ հետևել նրան, անձնատուր լինել

բուռն ու անկանգ կրքին, սեփական անձը հակադրել այդ շրջապատին, վրեժ առնել նրանից:

Հիմք կա՝ արդյոք Շեքսպիրի «Օթելլոյում» մավրի կերպարի նման ըմբռնողության համար:

Այո՛, կա:

Եվ ահա թե ինչու: Յագոն ծգտում է երջանիկ Օթելլոյին դըժքախտացնել, մղում է ասես նրա համար անհնարին արարքների: Մի խոսքով, Օթելլոն ընդունակ է իշնելու իր հումանիստական բարձունքներից: Եվ այս բանը Յագոյին հաջողվում է ոչ լիովին, այլ մասսամբ: Ողբերգության կառուցվածքը, պատկերավոր մտածողության առումով, այսպիսի հաջորդականություն ունի՝ մարդկային Օթելլոն դառնում է անմարդկային և ապա կրկին վերադառնում մարդկայնության: Այսինքն՝ սկզբնական ներդաշնակությունը տեղի է տալիս քառոսի առաջ և հետո նորից վերահաստատվում: Սկզբնական ներդաշնակությունը լի է անխոռվ երշանկությամբ, հետագա, վերջին ներդաշնակությունը՝ ողբերգական շնչով: Եթե մի դեպքում մարդկային հիացմունքով համակված հավատն է մարդու հանդեպ, ապա մյուս դեպքում՝ նույն հավատը, միայն թե արդեն իմաստնության նրբերանգով:

Իսկ ի՞նչ է պատահում Օթելլոյին պիեսում, եթե վրա է հասնում քառոսը: Սանո՞ւմ է արդյոք նույն մարդասերը, ինչ սկզբում էր: Կարելի՞ է արդյոք պնդել, թե Օթելլոն իր ամբողջ ողբերգական կյանքի ընթացքում մնում է հումանիստական իդեալի կրողը: Կարծում եմ՝ ոչ: Պիեսում Օթելլոն, իրոք, հումանիզմի մարմնացումն է, Յագոն՝ չարիքի անձնավորումը, և այնուհանդերձ հանձին Օթելլոյի չի կարելի տեսնել աներեր հումանիստին: Չե՞ որ մի ինչ-որ պահ նա ինքն է դառնում չարիքի կրողը, թեև «մի ինչ-որ պահ» արտահայտությունը այնքան էլ ծիշտ չէ, քանի որ խոսքը ոչ թե ակնթարթային պոռթկման կամ աֆեկտացիայի մասին է, այլ հերոսի հոգեկան կյանքի բավական երկարատև շրջանի մասին (ծիշտ է, երկարատև ոչ ժամանակի, այլ հոգեկան ժայրահեղ լարվածության առումով):

Օթելլոն՝ այդ ծշմարիտ մարդասերը, հեռանում է իր իսկ դավանած հումանիզմից և գործում հակառակ նրա սկզբունքների:

Մավրի ասածն ու արածը վկայում են հետևյալը. Նրա մեջ «բարձրանում» ու «ծփում է» միջնադարից եկող այն հոգեբանու-

թյունը, որը ժառանգաբար «բաժին է ընկել» Նոր ժամանակներին:

Հումանիզմը Վերածնության մարդու աշխարհայեցողությունն է, բայց նշանակո՞ւմ է սա, արդյոք, թե միջնադարի մարդուն միանգամայն օտար են հումանիզմի գծերը և թե, ընդհակառակը, Վերածնության մարդու մեջ հետք անգամ չի մնացել միջնադարի մտածողությունից և, մանավանդ, հոգեբանությունից:

2Ե՞ որ նման քայլի դիմելու համար, Յագոյին Ենթարկվելու համար,— ինչ գնով էլ լինի,— հոգին մի որևէ ճեղքվածք պիտի ունենար:

Այլ բան է, որ Օթելլոյի այս անկումը չի կատարվում միանգամից: Բացի այդ, նրա անկումը,— և սա շատ ավելի եական է ու կարևոր,— ժամանակավոր երևությունը է: Օթելլոն սկզբում մեզ Ներկայանում է որպես հումանիստ և ալրպես էլ հեռանում է կյանքից: Բայց հենց սա է պիեսի ողբերգականությունը՝ նրա հումանիզմը ծանր ծգնաժամ է ապրում, բայց այս ծգնաժամը, ի վերջո, հաղթահարվում է: Փափազյանի մեկնաբանության արժեքն այն է, որ նա տեսավ ու խաղաց օթելլոյական հումանիզմի այս երկու փուլը:

Փափազյան-Օթելլոն, իմանալով Դեգեմոնայի անմեղության մասին, վերագտնում է կորսված հոգեկան ներդաշնակությունը: Եվ արտիստը խստորոշ տարրերակում է այս երկու ներդաշնակությունները: Ու նաև հեռու լինելով կերպարի իդեալականացումից և վերջինիս մեջ պահիված բոլոր գայթակղություններից, Փափազյանը չի վախենում ցուց տալ հումանիստ Օթելլոյի անկումը ևս:

1964-ին Մոսկվայում Օթելլոյի դերում հանդես եկավ Լոռիենս-Օլիվիեն: Տարբեր կարծիքներ եղան նրա խաղի մասին: Ոմանք պնդում էին, թե դա ընդհանրապես Շեքսպիր չէ: Ոմանք էլ, ընդհակառակը, այն կարծիքին էին, թե հենց դա է ծշմարիտ Շեքսպիրը: Մտադրություն չունենալով խորանալու այդ վեծի մեջ, ոչ էլ, մանավանդ, իմ վրա վերցնելու դատավորի դերը, կասեմ միայն, որ Օլիվիեի խաղի շուրջ ծագած վիճաբանությունները և, մասնավորապես, Ասիկստի և Ուոնովների հոդվածները, լուս են սփոռում շեքսպիրագիտական մտքի այսօրվա վիճակի վրա: Գլխավորն այստեղ Օլիվիեն չէ, այլ, թերևս, Օթելլոյի նրա դերակատարման առիթով արտահայտված մտքերը: Իսկ սրանք այլ բան չեն, քան փորձ ու ծգտում՝ վերանայելու, ընդլանելու շեքսպիրյան կերպարի վերա-

բերյալ այն տեսակետը, որ մեզ ժառանգություն է մնացել 30-ական թվականներից, կերպարը ազատելու ռոմանտիկական շղարշից, բացահայտելու իր ամբողջ բարդ խորքով:

Օլիվիեի ստեղծած կերպարը նման չէ Փափազյանի Օթելլոյին: Եվ, ըստ Էռլեյան, չեր էլ կարող նման լինել: Սակայն Օլիվիեի Օթելլոյն, իր երկրային մեծ ուժով, փափազյանական մեկնաբանության յուրատեսակ հաստատումն է, այն մեկնաբանության, որը ներդաշնակորեն գուգորդվում էին երկրայինն ու բանաստեղծականը:

Ծիշտ է, տարիների ընթացքում Փափազյանը վերանայեց Օթելլոյի կերպարի իր մեկնաբանության որոշ կողմերը, ծշտեց ու փոփոխեց որոշ շեշտադրումներ, ավելի ընդգծեց հոգու և մտքի ողբերգությունը, որ հուսախարության ու հավատի կորստի հետևանք էր, սակայն, ամբողջությամբ առած, նա հավատարիմ մնաց շեքսպիրյան իրապատում պոետիկային: Հայ ողբերգուն հավատարիմ մնաց ինքն իրեն, հետևաբար՝ նաև Շեքսպիրին: Եվ սա ոչ թե դերասանական պատվախնդրության, այլ հոգածունքի հարց էր: Նա խորապես համոզված էր, որ Օթելլոյն չպիտի լինի այնպես, ինչպես մենք ենք ուզում, այլ այնպիսին, ինչպիսին կա իրականում, ընդ որում, ինչ խոսք, ընդունելով կերպարի մեկնաբանության վրա այս կամ այն դարաշրջանի ազդեցության գործոնը:

Կարծում եմ Օթելլոյի նոր դերակատարների հայացքները կուղղվեն Փափազյանին: Ես նկատի ունեմ նրա մեկնաբանության լայնությունն ու բազմիմաստ բնույթը: Իհարկե, ոչ ոք երբեք չի կարող կրկնել Փափազյանին, և իմաստ էլ չունի: Դրա համար հարկավոր է Փափազյան լինել, այսինքն՝ ունենալ նրա անհատականությունը, նրա ողբերգական ոգին, պատկանել այն ժամանակին, որ Փափազյան ծնեց: Այդպիսի բան հնարավոր չէ, որովհետև չկա դերասան ժամանակից դուրս՝ որքան էլ նա մեծ լինի և վերժամանակիա թվացող:

Ասածիս իմաստն այն է, որ Օթելլո խաղացող յուրաքանչյուր նոր դերասան, գուցե նովիսիկ ժանոթ չլինելով Փափազյանի կատարման Էռլեյանը, գուցե նովիսիկ ժանոթ չլինելով նրա անվանը, իր որոնումներում անխուսափելիորեն «կանդրադառնա»՝ այդ խաղին, քանի որ Ներկայի և ապագայի միտումը Օթելլոյի կերպարի ընթերցման մեջ միարժեքության հաղթահարումն է:

ՀՈՒՇԵՐ

1925 թվական: Թիֆլիս: Թատրոնով տարված պատանի էի, որ առաջին անգամ Փափազյանին տեսա բեմում. Օթելլոյի դերն էր կատարում: Այդ տարի Աբելյանն էլ եկավ: Նա էլ Օթելլո խաղաց: Աբելյանի խաղում կար մի բան, որ ընկավ սրտիս խորքերը և մընաց մինչև օրս: Ինչ վերաբերում է Փափազյանին, որ իր արվեստով գերել էր հանդիսատեսին, ինձ համար բեմի գերագույն մակարդակը եղավ, ու եթե մի երկու տարի անց դիմում տվի և ընդունվեցի «Հայաստան» դրամատիկական ստուդիան՝ «մեղքը» Փափազյանին էր:

Փափազյանը մեզ դաս էր տալիս՝ դերասանի վարպետություն: Տևեց դա մի ամբողջ տարի: Զկար Ներկայացում, այն էլ Փափազյանի մասնակցությամբ, որ բաց թողնեի՝ Օթելլո, Համլետ, Արքենին, Ղարա, Ռուն-Ժուան, Ժորժ, Քիլն:

Երկու տարի տևեց իմ հափշտակությունը. թատրոնը թողի, բայց Փափազյանը ինձ համար մնաց Փափազյան: Տեսել եմ նրա բազմաթիվ խաղերը և՝ այն դեպքում, երբ նա «գլուխ է պահել», և՝ այն դեպքում, երբ, թող որ հնաոճ հնչի, աստվածային է եղել...

Իմ բարեկամությունը Փափազյանի հետ սկսվեց Հայրենական պատերազմի տարիներին:

1944-ին Երևանում կազմակերպվեց շեքսպիրյան փառատոն: Փափազյանը չկար: Մի օր մեր անվանի դերասաններից մեկին հարցորդի, թէ ինչո՞ւ Փափազյանը հրավիրված չէր: Եվ այդպես խոսք բացվեց Փափազյանի մասին: Անվանի դերասանը մի արտառոց միտք հայտնեց. բնությունը, — ասաց նա, — Փափազյանին տվել է ամեն ինչ և այնպիսի չափերով, ինչպես ոչ ոքի, բացի մտքից: Նրա խաղերում միտք չկա: Ես վեծի բռնվեցի: Եվ այդ օրը, վեծի տպավորության տակ, մտաժեցի գրել Փափազյանի Օթելլոյի մասին ու ցուց տալ, թէ նրա միտքը ինչպիսի հազվագյուտ խորք ունի: Փափա-

յանին նամակ գրեցի, հարցնելով, թե երբ է մտադիր գալ, որ միտք ունեմ անդրադառնալ նրա Օթելլոյին: Ուղարկեցի նրան «Համետի» մասին գրած իմ հոդվածը: Ստացա ընդարձակ պատասխան:

Ի՞նչ փոթորկալի արկածների միջով ասես, որ չի անցել Փափազյանի կյանքը: Լրջությունը կյանքի անլուրջ հաջուկքներին ներդաշնակելու դժվար կենսածկին տիրացած՝ աշխարհի որ անկյունում ասես, որ չի եղել: Եվ ամենուրեք Փափազյանի անունը շրջապատվել է խոսք ու գրուցով նրա տարածված հոչակից, դասական գեղեցկությունից, նրա շուրջը հյուսված բազում առասպելներից: Երիտասարդությունը շտապել է ծանոթանալ, նրա ինքնագիր մակագրությունը խնդրել գրքի կամ լուսանկարի վրա, կարծես այնքան շոալլությամբ նրան բաժին ընկած անմահությունից մաս «մուրալով»: Արկածախնդիր կյանքի բոլոր վտանգներից նա անցել է անվտանգ. սեր տվել, սեր առել, սեր առել՝ անսեր թողել: Այսպես նա հասել է իր փառքի կատարներին՝ վայելելով կյանքը, ինչպես մի ծշմարիտ արվեստագետ...

Ահա այդ նույն Փափազյանը ինքնահոժար մնաց պաշարված Լենինգրադում: Նա կարող էր ավելի շուտ գալ: Բայց նա չլեց պաշարված քաղաքը պատերազմի նույնիսկ ամենաահեղ օրերին, թեև շատ ուրիշ հոչակավոր դեմքերի հետ՝ նրան ևս առաջարկեցին մեկնել: Թշնամու գնդակների տարափի տակ շրջում էր զորամասից զորամաս, զրուցում ռազմիկների հետ, նրանց համար ոգի և արիություն բերող խոսքեր գտնում Շեքսայիրից և իր սրտից:

Փափազյանը մեզ մոտ եկավ պատերազմից հետո միայն:

Նստած եմ Փափազյանի դիմաց: Զրուցում ենք:

Սա նույն Փափազյանը չէ, որին մենք տեսել ենք տարիներ առաջ: Պատերազմը դրել է իր կնիքը. սիրելի վայրերի ավերում, հոչակավոր կոթողների կործանում, ոմբակոծության ահ, նույնիսկ հարազատի կորուստ... Փոխվել է նա: Առաջ էլ խելոք էր նրա հայացքը, բայց միշտ էլ մի անհոգ, ավելի շուտ՝ չարածի զվարթությամբ քողարկված: Այժմ անհոգությունը տեղի է տվել մի փոքր կարծես հոգնած արտահայտության՝ մտքի և հոգու այն չտեսնված լարումից, որ նա ապրել էր այդ տարիներին:

1945-ին Փափազյանը անցել էր Բաքու, մտադիր էր գնալ Թբիլիսի, իսկ այժմ եկել էր Երևան: Բաքվից հեռագիր էր ուղարկել և խնդրել թատրոնի ղեկավարության համաձայնությունը՝ հանդես գալու մի քանի Ներկայացումով: Մերժել էին: Եվ Փափազյանը Երեվան եկավ որպես կոնցերտանտ: Հայֆիլհարմոնիայի Փոքր դահլիճում հանդես եկավ. Օթելլոյից, Մակբեթից, Համլետից, Լիրից մենախոսություններ էր կարդում, ինչպես նաև բանաստեղծություններ Պեշիկթաշլանից ու Տերյանից:

Լավ հիշում եմ. հագին սև ֆրակ կար: Շատ էր նիհարել: Դեմքը գունատ էր, հայացքը թախիծով լի և գլուխն էլ մի թեթև օրորվում էր:

Կատարում էր, իհարկե, լավ, բայց դա մեր իմացած Փափազյանը չէր: Անտրամադիր էր, և այնպիսի տպավորություն էր ստացվում, թե պարտք է կատարում:

Սուաջին համերգի ընդմիջմանը շտապեցի իր մոտ: Այնտեղ էր և Հրաշյա Ներսիսյանը, որը, ի տարբերություն մեր մյուս աչքի ընկնող դերասանների փայլուն բացակայության, շտապել էր Ներկա լինել:

Տեսնելով, որ կողմնակի մարդ չկա մեր կողքին, Հրաշյան, որ Փափազյանին համարում էր իր ուսուցիչը, հաղթահարելով անհարմարության զգացումը, ասաց.

— Ես ի՞նչ ես անում, վարպե՞տ, մի քեզ ցուց տուր, ինչպես առաջ: Ինչի՞ ես թողնում, որ ժողովուրդը տիրի, ու դահլիճում ցուրտ լինի:

Փափազյանը ժպտաց: Եվ այդ ժպտի մեջ կար մի այնպիսի դառնություն, որ ես երբեք չեի տեսել նրա դեմքին ոչ միայն այդ պահին, այլև դրանից հետո: Սկեռեց հայացքը ընկերոց աչքերին և մի այնպիսի շեշտված, ազդու արտահայտությամբ, որ սա իրեն վատ զգաց, մտաժելով, թե երևի վշտացրեց նրան:

Փափազյանը ծեռքը դրեց Հրաշյաի ուսին:

— Որտե՞ղ ես նստած, երրորդ կարգո՞ւմ: Շատ լավ: Քեզ համար մի կտոր կկարդամ, միայն մի կտոր: Ավելին չպահանջես, այս-

օր չեմ կարող, ուժիցս վեր է: Այդ էլ կկարդամ քեզ համար, հասկանո՞ւմ ես, միայն քեզ համար, որ տեսնես, թե Վահրամդ ինչի է ընդունակ, այն Վահրամը, որի առաջ, սրիկանե՛ր, պինդ փակել եք թատրոնի դռները:

Հրաշյան Վիրավորվեց: Եվ իրավունք ուներ: Իսկ Փափազյանն էլ այդ ասելիս, իհարկե, նկատի չուներ նրան, բայց առիթ էր որոնում իհգու դառնությունն արտահայտելու:

— Գիտեմ, գիտեմ, սիրելի՛ս:

Ու պինդ գրկեց Հրաշյախն, սեղմեց կրծքին, համբուրեց և դարձավ հեռվում կանգնած մի մարդու ու կարգադրեց երրորդ զանգը տալ:

Մտանք դահլիճ: Հրաշյախ կողքին ազատ աթոռ կար. Նստեցի նրա մոտ: Բեմ եկավ Փափազյանը և սկսեց կարդալ այնպես, ինչպես առաջին բաժնում: Հրաշյան շուր եկավ իմ կողմը, նայեց ինձ զարմացած, ուսերը վեր բարձրացնելով: Փափազյանը, որ այդ ժամանակ Լիրից մի հատված էր կարդում, որսաց ընկերոց այդ հայցը և ժպտաց: Այս անգամ նրա ժպիտի մեջ չարաձի գոհունակություն կար, ասես ուրախ էր, որ բարեկամին ջղայնացնում է:

Համերգը մոտենում է վախճանին: Իսկ Փափազյանը շարունակում է նովյան ծնուզ: Հրաշյան նստած է ծնշված: Հայտարարվեց վերջին համարը՝ մենախոսություն Մակրեթից: Նա կարդաց այն կտորը, երբ Մակրեթը...

Երկու խոսք ել չեր ասել, որ ամբողջ դահլիճը լարվեց: Մարդիկ շոնչները պահած հետևում էին Փափազյանին: Նկարագրել հանձն չեմ առնի: Բայց չեմ կարող նրա կատարումից մի պահ չարձանագրել. դեմքի մի այտը՝ աջը, կանգ առավ, քարացավ, իսկ մյուսը ջղային ցնում էր ապրում, մկանները դողում էին, իսկ աչքը ասես ծովել էր, կարծես ցանք էր թափում խոռոչից դուրս գալու: Սահմոկեցուցիչ մի պատկեր էր դա: Նայում էիր ու սարսափում: Տանջահար մի ոճրագործ էր մեր աչքի առաջ: Երկու մարդ կռվում էին նրա մեջ: Ոճրագործը հաղթեց: Եվ երբ նա բարձրացրեց աջ ծեռը՝ երևակայական դաշույնը բռնած՝ մարդիկ տեսան այդ դաշույնը: Այս՛, տեսան: Ու թեև լավ գիտեի, որ նրա ծեռին այդ պահին, լուսի տակ շղացող դաշույն չկար:

Երբ մենախոսությունն ավարտվեց, դահլիճը թնդաց որոտալի

Ժափերից, իսկ ինքը, լուր ու գունատ, գլխահակ կանգնել էր իրենով հիացած հասարակության առջև:

Երբ տուն էինք գալիս, Հրաշյան լուր էր: Երևում էր, որ տեսածի տպավորության տակ էր: Եվ հանկարծ կցկտուր ասաց.

— Հրաշք էր: Չեմ հավատում, թե մի ուրիշ դերասան էլ դրան ընդունակ լինի:

Կարծ լրությունից հետո.

— Եթե աչքովս չտեսնեի, ուրիշները պատմեին՝ չէի հավատա:

* * *

Փափազյանը մի օր ասում էր, թե ինչ կցանկանար խաղալ: Հիշեց Սիրան դր Բերժըրակը, Էդիպը, Թիմոն Աթենացին:

— Իմ ամենամեծ երազը մնում է Թիմոն Աթենացին: Ասում են Ադամյանը շատ է մտածել խաղալու մասին: Դա իմ վաղուցվածքացն է: Ինձ հետ և իմ մեջ մեծանում, հասունանում է այդ պահանջը:

Հարցրի՝ իսկ Արքա Լի՞ր:

— Արքա Լի՞ր, դա արդեն պատրաստ կերպար է, Լենինգրադում խաղացել եմ, մնում է աշխատել հայերեն տեքստի վրա:

Հարցրի, թե ինչպես ընդունվեց Լենինգրադում նրա Լիրը:

Փափազյանը նայեց իմ կողմը, ժպտաց և, խուսափելով հարցի պատախանը տալուց, ասաց.

— Ես Լիրի կերպարի շուրջը շատ էի խորհել, տարիներ անընդհատ գրաղվել, բայց գտածն ըմբռնումը կենդանություն առավ միայն վերջին ժամանակները: Ես մի աղջկէ ունեմ, որին անշափ սիրում եմ: Թատրոնին է նվիրել իրեն և կարծես ոչ-անհուս: Աղջկս աննկատելի մեծացավ, բայց ես կորցրի նրան պատերազմի ժամանակ: Ես այդ զգացի առանձնապես կնոցս մահից հետո, ինչպես երևում է՝ նա էր մեզ իրար բերողն ու կապողը: Մեծացավ, ինքնուրովն սկսեց մտածել: Մի տեսակ իր բախտին հանձնվեց: Կյանքի հանգամանքները դասավորվեցին այնպես, որ ես նրան դեկավարել չկարողացա, հայրական իրավունքերս կորան, ու ես զգա-

ցի, որ աղջիկս ձեռիցս գնում է: Ու ես, մի տեսակ շոշափեցի Լիրին, զգացի նրա հոգեբանությունը: Աղջկաս կապակցությամբ ունեցած ապրումներս օգնեցին Կծիկի միջից գտնելու այն թելը, որը քաշելով՝ կարելի էր զգալ, հասկանալ Լիրին:

* * *

Մի անգամ Ել անդրադարձավ «Սիրանո դը Բերժըրակ» խաղալու մտքին:

«Սիրանոն» զգուշ պետք է խաղալ, Ռոստանը խոր հեղինակ չէ, բայց փայլ ունի, սրամտություն, կենսախնդություն: Շատ կուգեի Սիրանո խաղալ: Սիրանոյի թարգմանությունն ունեմ, որ կատարել եմ վաղուց և խաղացել: Հիմա կշտկեմ, նորից աչքի կանցկացնեմ:

* * *

Վերջապես, Փափազյանին իրավունք տրվեց Սունդուկյանի անվան թատրոնում հանդես գալու: Զորս Ներկայացում էր տալու. Երկու անգամ Օթելլո, նույնքան Էլ Համլետ:

Առաջին Ներկայացումը նշանակված էր 1946-ի հունվարի 19-ին:

Ժողովուրդն անհամբեր էր տեսնելու նրա խաղը: Բոլորն անխըտիր, և' նրանք, որ մի ժամանակ տեսել էին, և' նրանք, որ առաջին անգամն էին տեսնելու: Թատրոն էին շտապում ամենքը: Ովքեր տեսել էին՝ ծշմարիտ արվեստի գերագույն հածովքը մի անգամ Էլ զգալու, իսկ ովքեր չէին տեսել՝ լսածով գալթակղված, սրբտատրոփ սպասում էին վարագույրի բարձրանալուն՝ հազվագյուտ խաղ տեսնելու նախահածովքն ապրելով: Դժվար է նույնիսկ որոշել, թե ով էր ավելի անհամբեր, նա, որ տեսել էր, այն Էլ մի քանի անգամ, թե նա, որ առաջին անգամ էր դիտելու:

Վերջապես՝ վարագույրը բացվեց: Ներս Են մտնում Յագոն և Ռորիկոն: Մի փոքր իրար հետ գրուցելուց հետո, աղմուկով ձայն Են տալիս Բրաբանցիոյին. կեսգիշերին արթնացնելով ծերունուն, հայտնում Են նրա աղջկա՝ Ռեգեմոնայի փախուստը և ամուսնությունը Օթելլոյի հետ: Պատկերը վերջացավ, կանաչ թափիշե վարագույրը Օթելլոյի հետ:

գույրներն իրար եկան: Մի փոքր հետո, վարագույրի մեջտեղի ժալը ետ գնաց, երնաց Յագոն, ծանապարի տալով Օթելլո-Փափազլանին:

Միա և վերջապես Օթելլո-Փափազլանը բեմի վրա իր բոլոր շքեղությամբ՝ փառահեղ գլուխը լայն ուսերին, կանգնած հաստատ ու հպարտ:

Թատրոնը դդրում է ժափերի որոտից: Ժաղկեփնչեր են բեմ թոշում: Փափազլանը բունում է ժաղկեփնչերից մեկը, գոտկատեղից հանում կեռ դաշունը, մի վարժ հարվածով կիսում ու ետ նետում դեպի հասարակությունը: Ցիրկ եկած ժաղիկները դահլիճով մեկ շաղ եկած՝ ընկնում են այս ու այն կողմ: Եվ այս ամենը այնպես հանգիստ, այնքան գեղեցիկ ու ծոխ, որ կարծես դերի մի մասը լիներ: Շիշտ է, ժափերի մի նոր թնդյուն է բարձրանում, բայց և արտիստի մի շարժումը բավական է, որ թատերասրահը նորից ենթարկվի իրեն և այնուհետև մինչև ներկայացման վերջը, բոլորին պահի իր գորեղ հմայքի տակ:

* * *

Իմ այն հարցին, թե պատերազմը դեր խաղացե՞լ է, արդյոք, իր անձնավորած կերպարների ըմբռնման մեջ:

— Արտիստը կյանքից է, հետևաբար, այնպիսի խոշոր իրադարձությունը, ինչպես պատերազմն է, չեր կարող անշշմար անցնել, միայն թե երևի շատ դժվար է ասել, թե ինչի՝ ազդեցության տակ ի՞նչը ինչպես եղավ: Այդ ազդեցությունները կուտակումներ են, հոգեկան կուտակումներ, որոնք քո գիտակցության, թերևս, ավելի ծիշտ լինի ասել, ենթագիտակցության մեջ շերտ առ շերտ հավաքում և մի օր հանկարծ զգալ են տալիս իրենց այնպես, որ դու ինքդ էլ կոժվարանաս ասել, թե սա այսպես եղավ, որովհետև կլանքում ալսինչ ժամանակ վկա եմ եղել այս բանին:

Լոեց:

— Կարող եմ ասել միայն, որ ոչ մի տպավորություն գուր չի անցնում՝ մի տեղ, որևէ կերպ արտահայտվում է:

Մի փոքր հետո.

— Ինչ վերաբերում է պատերազմին, ապա իմ ամենամեծ զգացումը, որը և, անշուշտ, դեռ է խաղացել, մարդու կորուստ է: Մարդկանց կորուստը յուրաքանչյուր աստծո օր, այն էլ այդպիսի չափերով, բարձրացրեց իմ աչքում մարդու արժեքը:

Կանգ առավ:

— Պատմեմ ձեզ մի դեպք, իմ խմբով գնում եմ Կրոնշտադտ՝ զորամասում Ներկայացում տալու: Ես ու երեք դերասանութիւն նստեցինք մարդատար մեքենա, իսկ դերասանները, — ի՞նչ լավ տղաներ էին, եթե միայն տեսած լինեիք դրանց, — բեռնատար մեքենան բարձրացան և տեղավորվեցին դեկորների արանքում: Շանապարհը սառած Նևայի վրայով էր: Մեր մեքենան շուտ հասավ տեղ: Անցավ բավկական ժամանակ, իսկ բեռնատարը չկա ու չկա: Մի ժամ էլ անցավ: Մեքենավարը թե՝ «Գնամ, տեսնեմ ինչ են եղել»: Մի վատ զգացում մեջս խոսեց, ու ես էլ միացա: Մի երեք թե չորս կիլոմետր գնացինք և ի՞նչ տեսնենք՝ սառուցը ձեղքվել է, մեքենան սուզվել է գետը, բոլորին տանելով իր հետ: Կարո՞ղ է մի այդպիսի դեպք ինչ-որ բան չփոխել մարդու ներսում, բայց ե՞րբ և ի՞նչ՝ դըժվար է ասել:

* * *

Խնդրեցի, որ պատմի աշխարհահոչակ ողբերգակ Այրա Օլրիչի դաշուկովի մասին, որ այժմ իր մոտ է:

— Երևի գիտեք, որ Օլրիչը թաղված է Կալուգայում: Օլրիչի մահից հետո տանտիրութիւն, կարծեմ Ֆյորկա Անտոնովնա, նրա դաշուկով ուրիշ իրերի հետ ծախսում է հվանով-Կազելսկուն: Սա գործ է աշում Օթելլո խաղալիս, բայց մի օր էլ թղթախաղի մեջ տարվում է Մամոնտ-Շալսկուն: Երկար ժամանակ մնում է նրա մոտ, մինչև որ սա էլ իր հերթին, դարձյալ թղթախաղի մեջ, տարվում է Արելի հելմին: Մի յոթ-ութ տարի առաջ, ոռուսական քաղաքներից մեկում, տարբեր թատրոններում ես և Արելի հելմը պետք է հանդես գայինք միևնույն դերում: Թե՛ նրա, թե՛ իմ բոլոր տոմսերը սպառված էին: Ներկայացումից մի փոքր առաջ Արելի հելմից նամակ ստացա, որով

հայտնում էր, թե ծեր է ու հիվանդ և խնդրում է իր տեղը խաղալ: Ես նրա խնդիրքը չմերժեցի: Եվ ի պատասխան՝ նա Օլրիշի այս դաշույնը նվիրեց ինձ:

Պատմեց այս բոլորը, հետո շատ հասարակ ավելացրեց.

— Դաշույնի վրա գրված է Օլրիշի անունը. Եթե տեսնեք Օլրիշի լուսանկարն Օթելլոյի դերում՝ այդ դաշույնն է վրան:

Սուրճին փոխարինեց ծխախոտը: Փափազյանը գրպանից հանեց մի արժաթյա պորտսիֆար, որի կենտրոնում առյուծ էր նկառած արևի և նրա ծառագալթների ֆոնին: Խսկ նկարի շուրջը ինչ-որ բան էր գրված:

Տեսնելով իմ հետաքրքրությունը, Փափազյանն ասաց.

— Ստացել եմ Իրան եղած ժամանակս, գնացել եի, ինչպես երևի գիտեք, կազմակերպելու նրանց ազգային թատրոնը: Իրանում գոյություն ունի մեր կարմիր խաչի նման ընկերություն՝ Շիր-խորշիդ: Խնդրեցին, որ ելույթ ունենամ իրենց ակումբում: Խոստացա, բայց հետո նույն օրը կնոցիցս հեռագիր ստացա, որ մայրս ծանր իհվանդ է: Այսպես կոտրվեցի, որ հրաժարվեցի գնալ: Այդ երեկո ինձ մոտ եկան ընկերության ղեկավարները և ասացին, թե իմ հրաժարականը պատիվ է բերում ինձ որպես ծնողասեր որդու: Եվ ինձ պարզեցին այս պորտսիֆարը, որի վրա մակագրված է՝ «Հիշատակ Իրանի մայրերից, որոնք թող քեզ հարազատ մայր լինեն»:

Անկատելի, չեմ իիշում, թե ինչպես, մեշտեղ եկավ Դանթեի «Դժոխքի» ոլուսական շքեղ հրատարակությունը: Փափազյանը սիրով ծեռքն առավ, թերթեց մի քանի եց, ապա աշը մնաց բացված

գրքի վրա, աչքերը փակեց, գլուխը մի փոքր ետ գցեց և խտալերեն հատվածներ կարդաց... Հետո հանկարծ կանգ առավ.

— Լենինգրադում բավական հարուստ գրադարան ունեմ մի շարք լեզուներով, կան հազվագյուտ գրքեր: Պատերազմի ժամանակ շատ թանկագին գրքեր եմ ծեռք բերել. ծյունի վրա ընկած շքեղ հրատարակված գրքեր եմ հավաքել, տարել տուն: Շատ ուրիշ հազվագյուտ իրեր ել կան մոտս... Հավաքել եմ տարիների ընթացքում՝ կնոջ հետ:

Այս խոսքի վրա հանեց Շոցատետրը, որի մեջ չորացած ժաղկի թերթ էր դրված... Կարոտով նայեց...

— Սա իմ ժաղկանցից է: Պարտեզից զատ մի փոքրիկ ավագան ունեմ, ինչ հավեր ունեմ, ինչ աքլորներ... ինչ արի, որ մի հնդկահավ ապրեցնեմ՝ չեղավ, չդիմացավ, մի լավ կով ունեմ... Ինձ հյուր եկեք, դժգոհ չեք մնա...

* * *

Մի հավաքույթի ժամանակ Փափազյանին հարց տվին, թե ինչպես է իր դերը պատրաստում:

— Ինչպե՞ս եմ ուսումնասիրում պիեսը և կերպարը: Կարդում եմ մեկ անգամ, խորհում, ապա կարդում նորից՝ ստուգում տպավորություններս, մեծ ուշադրություն դարձնում խաղացվելիք կերպարի վիճակներին ու խոսքերին: Կերպարն ուսումնասիրում եմ և պատկերացնում նրան ամենատարբեր վիճակներով. օրինակ՝ Օթելլոն. ինչ կլիներ Օթելլոյի հետ, եթե նա չհանդիպեր Դեզրեմոնային, ինչ կլիներ, եթե նա ամուսնանար իր ցեղակից կնոջ հետ, ինչո՞ւ նա սիրեց և սիրվեց Դեզրեմոնայից, ի՞նչ կլիներ Օթելլոն, եթե ապրեր մեզ հետ, հագնվեր, դիցուք, ինձ նման: Դրանք բոլորը ծշուում և հղուում են կերպարի մասին ունեցած մտապատկերը, բացում նրա բոլոր, ամենափոքր անկյուններն անգամ: Արտիստը պետք է ուսումնասիրի անգամ կենցաղային ամենափոքր մանրութները: Ես այդպես եմ վարվել իմ Օթելլոյի հետ: Երբ խաղում եմ Օթելլոն կամ որևէ այլ կերպար, ամբողջ Ներկայացման ընթացքում, այդ թվում և ընդմի-

շումների ժամանակ, կերպարն իմ մեջ ապրում է, պահում եմ նրան իր զարգացման վիճակում: Զգում եմ նրա ածի պրոցեսը: Մի քանի հազար անգամ խաղացել եմ Օթելլոն և ամեն անգամ իմ մեջ առավել կամ պակաս ծշտությամբ Շնվել և վախճանվել է Օթելլոն, քանի որ Ներկայացումն սկսվելիս ամեն անգամ հղանում եմ այդ կերպարը:

Արտիստը պետք է իր մտապատկերում ունենա խաղացվելիք կերպարի բարձրագույն և կատարելագույն պատկերը, որին պետք է շարունակ ծգտի, բայց չկարողանա հասնել: Եթե նա կարողացավ հասնել և նույնանալ նրա հետ՝ ստեղծագործությունը դադարում է: Եթե ես համոզվեմ, որ հասել եմ իմ Օթելլոյին, նշանակում է Փափազյան չկա, չկա ստեղծագործող, բայց միշտ, իմ ամբողջ կյանքում, նպատակ եմ դրել հասնել նրան, ամբողջ կյանքում ընկել եմ այդ շանորդու հետևից և չեմ հասել: Երբեմն ինձ թվացել է, թե ահա հասնում եմ, անգամ բռնել եմ նրա փեշերից, բայց նա հեռացել է, փախել է հեռու և եղել ավելի բարձր, ավելի կատարյալ, քան իմ անձնավորումն է:

* * *

Փափազյանի հանդիպումն էր Երևանի թատերական ինստիտուտի ուսանողության հետ:

— Իմ փոքրիկ բարեկամներս, գիտցեք, որ բնությունը ամենամեծ դպրոցն է մարդու համար: Չեզ հարկավոր է հաջախ քաղաքից դուրս գալ շրջելու դաշտերում կամ լեռներում: Բնության մեջ ապրել՝ այդ նշանակում է նրբացնել, բարձրացնել ծաշակը, հոգու թափը, ֆիզիկապես թարմանալ: Ակիսոս այստեղ չունենք գագանանց (Ճայներ՝ «ունենք, ունենք»), ունե՞ք, շատ լավ: Ասյունքը ծեզ օրինակ: Գնացեք գազանանց, այստեղ, համոզված եմ, որ կա առյուծ: Եթե այդ առյուծը նոր են բերել՝ ապա մի քանի օրից կտեսնեք, որ խեղճ առյունքը «կատու» է դարձել: Իհարկե, եթե նրան ամսական մի քանի անգամ դուրս չըերեն դաշտ կամ անտառ, բաց շթողնեն ազատության մեջ, որ շրջի, ցատկի, մի հատ էլ եղցերու

որսա, ել ի՞նչ առյուծ է: Օգտվեցեք կյանքից: Այն, ինչ որ չի տա ձեզ ոչ մի ուսուցիչ և ոչ մի ինստիտուտ՝ կտա կյանքը, կյանքի դպրոցը: Խսկական արվեստագետը պետք է ուսումնասիրի մարդուն, նրա բնավորությունը, իսկ որքան մարդ կա աշխարհում, այնքան ել բնավորություն:

Թատերական երիտասարդությանն իր խոսքն ասելիս, շեշտեց:

— Կարդացեք շատ և, գլխավորն է, ծանապարհորդեցեք, գունե ամառային երկամսյա արձակուրդներին դուրս եկեք քաղաքից: Զեր վարած նույնանման կյանքը առավոտը վեր կենալ, նույն տեղը նստել, թելել, նույն փողոցով գնալ թատրոն, հետո նորից տուն, և այսպես շարունակ,— այս միօրինակ ձևով վարած կյանքը առաջ կբերի ձեր ստեղծագործական թափի մակարդում, թմրածություն:

* * *

Փափազյանը երիտասարդներին խորհուրդ տվեց.

— Սիրեք ձեր գործը, եթե չեք սիրում՝ թողեք: Միայն սիրով, աշխատասիրությամբ ու նվիրվածությամբ է, որ աշխատանքի արդյունքը՝ սերմը, լավ պտուղ է տալիս:

* * *

1951-ի փետրվարին եր: Օրը չեմ հիշում: Այդ օրվա գրառումը չեմ կատարել և մնում է դիմել հիշողության օգնության:

Այն ժամանակ արվեստի ինստիտուտը դեռ չեր ստեղծված, կար արվեստի պատմության և տեսության սեկտոր, որի ղեկավառ էր Սարտիրոս Սարյանը:

Փափազյանը հրավիրված էր Սունդուկյանի թատրոն՝ հյուրախաղերի: Աշխատակիցները ցանկություն էին հայտնել կազմակերպել մի հանդիպում արտիստի հետ: Փափազյանը չմերժեց ու եկավ:

Հավաքույթը բացեց Սարտիրոս Սերգեևիչը: Հավաքվածների անոնից ողջունեցի ես: Նախ՝ մի երկու խոսք ասացի, թե ինչքան

Ենք սիրում իր արվեստը և հածախ կարուի մի խոր զգացում ենք ապրում, որովհետև մեզ հետ չէ, Երևանում չէ: Եվ լավ ու ձիշտ չի լինի”, եթե մշտապես ապրի Երևանում: Հետո ասացի, որ Սունդուկյանի թատրոնում հիմա Ներկայացվում է «Դիմակահանդես» ու Երեվանի մտավորականությունը շատ մեծ ցանկություն ունի տեսնելու նրան այդ դերում, մանավանդ որ բոլորը լսել են, թե այդ դերը ժամանակին խաղացել է Թբիլիսիում և այլն, և այլն:

Իմ խոսքից հետո Փափազյանը հարցրեց, թե հավաքվածներին ի՞նչ հարցեր են հետաքրքրություն: Չեմ իհջում, թե ով, բայց Ներկաների անունից մեկը խնդրեց պատմել Օթելլոյի մասին:

Եվ նա պատմեց: Բավական երկար ու հետաքրքիր, մանավանդ նրանց համար, ովքեր չեին կարդացել կամ կարդացել ու մոռացել եին արտիստի «Պո տեատրամ միրա» գրքի համապատասխան Էջերը: Այդ ամբողջ պատմությունը մագնիտաֆոնային ժապավենի վրա գրի առնվեց ու, եթե պահպանվել է, արժե թերևս հրատարակել:

Այնուհետև նա պատասխանեց Երևանում չմնալու կշտամբանքին: Ասաց, որ չորս կողմից դրա մասին է լսում: Այդ կապակցությամբ այն միտքը հայտնեց, թե անցյալի համեմատությամբ փոխվել են մարդկային, ուրեմն և ժողովուրդների հարաբերությունները, մեր երկրում մի նոր իմաստ է ստացել այդ հարաբերությունների ըմբռնումը, և դրա համար ել ինքը գտնում է, որ մեկ է, թե ինքը որտեղ է ապրում, բայց մեկ չէ, թե ի՞նչ է անում: Որտեղ ել որ լինի՝ ինքը մարդկային մեծ գաղափարներին ծառայում է, որպես հայ ժողովորի Ներկայացուցիչ: Հիշեց, որ ինքը վերջերս եղել է Ուկան-Բատորում և այնտեղ ասել են, թե շատ ժամանակներ առաջ մեր նախնիները գնացել ու կոտորել են հայ ժողովորին, իսկ հիմա նրանց տաղանդավոր զավակը Շեքսպիրի լույսն է բերել մեզ: Եվ ձիշտ է այն, ինչ հիմա է տեղի ունենում և ոչ թե այն, ինչ մեր հեռավոր պապերն են արել:

Այնուհետև ասաց, թե Երևանում ինքը հանդիպել է կանանց ալնափակի գեղեցիկ աչքերով, ինչպես ոչ մի տեղ: Եվ միշտ ինքը, որտեղ ել եղել է, կարուտել է այդ աչքերը, իսկ հիմա տեսնում է, որ տղաների աչքերն ել գեղեցիկ են, որ գեղատես մի սերունդ է ածում Հայաստանում: Ի վերջո գալու է, իհարկե, անպայման գալու է:

Վերջում անդրադարձավ Արքենին խաղալու առաջարկին և խոստացավ հաջորդ գալուն պես, երևի ապրիլին կամ մայիսին, իրականացնել անպայման: Միաժամանակ ասաց, թե ինքն էլ է այդ մասին մտածել, ուրիշներն էլ են ասել և հիմա ինքը ժանոթանում է պիեսի նոր թարգմանությանը:

Մարտիրոս Սարյանը խնդրեց արտիստին իր մենախոսություններից մեկն ու մեկն ասել, որը կամենում է, մանավանդ որ գրի է առնվելու, որպեսզի մնա և իր բացակա ժամանակը գոնե ժապավենի միջոցով լսենք ու իրենից մեր կարուն առնենք:

Փափազյանն ասաց, թե ինքը սիրով կրավարարի ներկա գտնորդողների խնդրանքը, բայց քանի որ իր խոսքը «մնալու» մասին է, ապա իր ձայնը հոգնած է և չեր կամենա, որ ինքը «մնա» այդ հոգնած ձայնով: Ինքը սիրով կգա վաղը, մյուս օրը, երբ ուզեն և կգրանցվի թարմ վիճակում:

Բոլորը գտան, որ ծիշտ է ասում, ոչ ոք չեր կասկածում, որ կգա անպայման, դրա համար էլ համածայնեցին, բայց այդ էլ եղավ մեր սխալը: Փափազյանը խոստացավ ու չեկավ:

Սակայն մի ուրիշ խոստում, որ նա այդ օրը տվեց և, իհարկե, ավելի կարևոր, կատարեց: Հովհաննեսի 6-ին նա բեմ բարձրացավ Արքենինի դերով:

Հավաքութի վերջում լուսանկարվեցինք: Աչքիս առջևն է այդ լուսանկարը: Ինքը Փափազյանը չկա արդեն, չկան նրա հետ նկարվածներից Ռուբեն Աղաբաբյանը, Եղվարդ Խոօժիկը և Կարդան Սամվելյանը: Նաև ուրիշներ: Նայում եմ լուսանկարին ու տեսնում ընկերներիս բոլորովին երիտասարդ: Քսան տարի է անցել այդ օրից:

* * *

1948-ին մի կարգադրություն ստացվեց, որը տևեց մի քանի տարի, ապա վերանայվեց կառավարության կողմից: Թատրոնները ինքնապահ քաղաքականության պետք է անցնեին. Եթե լավ թատրոն է՝ պետք է կարողանա ինքն իրեն պահել: Այս եր սկզբունքը: Շատ թատրոններ պարտքերի տակ ընկան. դերասանները փորձեր

Եին անում, Ներկայացումներ տալիս, իսկ աշխատավարձ չէին ստանում: Սունդուկյանի թատրոնը իր աշխատակիցներին մի քանի ամսվա աշխատավարձ էր պարտք: Բանը հասավ այնտեղ, որ թատրոնը ստիպված էր մեծ հայելիներն ու գորգերը ծախտել: Դերասաններ կրծատվեցին: Բայց դա էլ չօգնեց: Այսպես շարունակվել չէր կարող. թատրոնն «այրվում» էր: Հեռագրեցին Փափազյանին և խնդրեցին, որ օգնության հասնի: Արտիստը, որ այդ ժամանակները գլխավորում էր ոռուսական շրջիկ մի թատերախումբ, ամեն ինչ թողեց ու եկավ: Երկու անգամ եկավ. մեկ՝ ձմռանը և մնաց շուրջ 15 օր և մեկ էլ՝ գարնան վերջին և այս անգամ մնաց մի ամսի չափ... Մի օր Համլետ, մյուս օրը՝ Օթելլո: Երկրորդ գալուն խաղաց նաև Արքենին: Բոլոր Ներկայացումներին դահլիճը միշտ լեփ-լեցուն էր: Երկու անգամն էլ ցանկություն ունեցողների թիվը ավելի մեծ էր, քան դահլիճը կարող էր տեղափորել: Եվ շատերն եին, որ տոմս ձեռք չբերելով, վերադառնում էին տուն մի թանկագին բան կորցրածի գգացումով:

Ասում են նրա Ներկայացումները մեկ միլիոնից ավելի ոռություն եկամուտ են բերել: Թատրոնը ոչ միայն մարեց իր պարտքերը, այլև դերասաններին առաջիկա երեք ամսվա աշխատավարձով ապահովեց:

Փափազյանն այդ ժամանակ 60 տարեկան էր:

* * *

Մի քանի հոգով մոտն էինք: Այսպես խոսեց.

— Հորս շատ եմ սիրել, մորս նոյնպես: Թե ինչքան եմ նըրանց պարտական՝ հասկանալի է ծեզ առանց իմ բացատրելու, բայց հավատացնում եմ, սիրելի բարեկամներ, երբ իմ հասցեին գովեստի խոսքեր եմ լսում՝ ես նրանց չեմ հիշում, այլ ուսուցիչների՝ Պոլսում և Վենետիկում: Նրանք սովորեցրին ինձ սիրել մեր լեզուն, մեր պատմությունը: Ու եթե երիտասարդական տարիներիս փառքի ծըգտերով վազել եմ դուրս, հեռուները, դեպի աշխարհի չորս կողմը, ապա հետո, երբ հասուն գիտակցությունն է իշել վրաս, որոնել եմ

հայրենիքս, որոնել իմ տունը, իմ ծրագը, դրա համար նույնպես պարտական եմ ուսուցիչներիս, ուսուցիչներիս՝ որոնց պատկերը, ահա, հիմա ել պահում եմ մտքիս առջև:

* * *

Խոսեց Աղամյանի մասին:

— Խորիկոփուլո, հովոյ կոմպոզիտոր, Աղամյանի հետ նույն օրը հրավիրված է եղել Պոլսոն Վարժարաններից մեկը: Աղամյանը այդ երեկո կտորներ է կարդացել «Համլետից» և «Դարբինների գործադրությունը» մենախոսությունը:

Կոմպոզիտորին խնդրել են, որ մի երկու խոսքով իր տպավորությունը հայտնի Աղամյանից, որը, իրեն վատ զգալով, ներողություն էր խնդրել ու մեկնել տուն: Կոմպոզիտորը մի միտք է հայտնել, որը գրեթե նույնությամբ հետագայում լսել եմ Նեմիրովիչ-Դանչենկոյից:

— Աշխարհում չեմ տեսել մի ուրիշ դերասան,— ասել է հովոյ կոմպոզիտորը,— որ կարողանա իր ներքինը, ուրախություն լինի, թե տխրություն, իր ներքին աշխարհը, մի խոսքով, պատկերացնել կարենա հասկանալի կերպով, առանց լեզվի օգնության: Աղամյանի արածը լեզու էր առանց լեզու լինելու:

Նոյնանման բան ինձ ասել է նաև Սիրանուշը, որին շատ եմ հարցուփորձ արել Աղամյանից:

— Կարելի էր նրա խոսքերը չհասկանալ,— ասում էր Սիրանոյշը,— որովհետև կյանքի վերջին ժամանակները նրա ձայնը խոպոտ էր, բայց նա ինչ կարիք ուներ ձայնի, երբ դեմքը, շարժումը արտահայտում էին ներքին ապրումը: Քանի ձայնը մարում էր, այնքան ավելի ուժեղանում էր նրա անխոս արվեստի ուժը:

* * *

1949-ին Սունդուկյանի թատրոնը բեմադրեց «Դիմակահանդես»: Արբենինի դերը դատարում էր Վաղարշյանը: Փափազյանը դեռ չէր

փոխադրվել Երևան, բայց տարին մեկ անգամ, անպայման գալիս էր: 1951-ին Երկու անգամ Եկավ, մեկ տարվա սկզբին, մեկ էլ վերջում: Երկրորդ այցին ցանկություն հայտնեց Արքենին խաղալու: Այդ դերը նա մարմավորել էր անցյալում, 1917-ին Թիֆլիսում, հետո Պոլսում, վերջապես՝ նորից Թիֆլիսում 1927-ին: Այս վերջին կատարումը տեսել էի ես, այն էլ մի քանի անգամ: Ըստ որում խաղում էր իր թարգմանությամբ: Գուլակյանը, որ այդ ժամանակ թատրոնի միանձնյա ղեկավարն էր, համաձայնեց:

Վաղարշյանի Արքենինը թեև ինձ թվում էր վիճելի, բայց մամուլի Եջերում գնահատվեց բարձր: Հանդիսատեսների մեծ մասը նույն կարծիքի էր: Եվ շատերն էին կասկածում՝ Փափազյանը հաջողություն կունենա՞ց, մանավանդ որ մեկ և կես թատերաշրջան Ներկայացվել էր այդ բեմադրությունը, և հանդիսատես հասարակայնության հիմնական գանգվածը այդ դերում նայել էր Վաղարշյանին:

Արքենինի դերով Փափազյանը բեմ բարձրացավ հովիսի 6-ին: Նա հանդիսատեսին առաջարկեց իր մեկնաբանությունը, շատ ավելի բարդ, քան Վաղարշյանի պատկերած Արքենինն էր, հակասական մի կերպար: Եվ հանդիսատեսն ընդունեց, հիացավ ու խանդավառվեց: Դրվատող հոդվածներ լույս տեսան մամուլում:

Վաղարշյանը որոշեց նայել Փափազյանի խաղը, մանավանդ, որ այդ դերում չեր տեսել երբեք: Ես այդ օրը թատրոնում էի: Ըստ միջումներին ինքը ոչինչ չեր ասում, ես էլ չեի հարցնում: Եթե խոսում էր, ապա մի այլ նյութի շուրջը: Երբ Ներկայացումը վերջացավ, հարցրի, թե ինչ տպավորության է:

— Փայլուն է խաղում և այդպես էլ պետք էր սպասել, բայց ինչ է խաղում, լավ չեմ հասկանում: Ա՛յ, նրա Օթելլոն ուրիշ բան է:

Գուլակյանը, դառնալով ինձ, բայց ըստ եռթյան կամենալով պատասխանել Վաղարշյանին, ասաց.

— Զե՞ս կարծում, որ Արքենինը գերազանցում է Օթելլոյին:

Վաղարշյանը ոչ մի ծան չհանեց:

Հանդիսատեսների մեջ կային այնպիսիները, որ Փափազյանին տեսնելուց հետո էլ, գերադասությունը տալիս էին Վաղարշյանին, բայց մեծ մասը, մանավանդ երիտասարդությունը, հիացած էր Փափազյանով:

Առաջին Ներկայացման օրը Երիտասարդների մի ստվար խումբ

հավաքվել էր Փափազյանի ապրած հյուրանոցի առաջ (այժմյան «Երևան», այն ժամանակ «Ինտուրիստ») և ծափերով ու գոչուն-ներով դուրս էր կանչում արտիստին, որին ուղեկցել էր թատրոնից մինչև հյուրանոց, և չեր կամենում հեռանալ: Երիտասարդությունը շիանգստացավ մինչև նա չերևաց:

Իսկ վերջին Ներկայացման օրը երիտասարդությունը «Կոմունարների այգում» ծաղիկ չէր թողել, պոկել ու բերել էր թատրոն և վերջին արարից հետո Նետում էին բեմ, ոգևորված կանչեր արձակում և շիեռացան թատրոնի շեմից, մինչև Փափազյանը դուրս չեկավ, և առաջին օրվա պես ծափահարություններով ուղեկցեցին մինչև հյուրանոց:

* * *

1951—1952 թատերաշրջանի սկզբներին բեմադրվեց Տոլստոյի «Կենդանի դիմակը»: Որպես Պրոտասովներ հանդես եկան նախ՝ Վաղարշյանը, հետո՝ Զանիբեկյանը: Հրաչյա Ներսիսյանը մարմնավորում էր իշխան Աբրեգկովի կերպարը: Շատերս էինք զարմացած, թե ինչո՞ւ Պրոտասովի դերը նրան չի տրված: Միառժամանակ անց Ներսիսյանը, առաջին անգամ իր կյանքում, թատրոնի ղեկավարությանը դիմեց, խնդրելով իրեն ևս Պրոտասով խաղալու հնարավորություն տալ: Գուլակյանը համաձայնեց: Թատերաշրջանի վերջում հյուրախաղերի եկած Փափազյանը ցանկություն հայտնեց նոյն դերը խաղալ: Գուլակյանն ընդհանուր գնաց:

Հանձն չեմ առնում գնահատելու Փափազյանի խաղն ընդհանրապես, բայց բեմական մի մանրամասն մեխվեց հիշողությանս մեջ:

Գնչուների տեսարանն է: Կարենինը նամակ է բերել Պրոտասովին Լիզայից այն պահին, երբ նա, շրջապատված գնչուներով, զվարծանում է:

Դավիթ Մալլանը, որ Կարենինի դերը կատարում էր կերպարի բուն թափանցումով, տվեց նամակը և մի կողմ քաշվեց: Եվ այն ժամանակ, երբ Պրոտասովի դերակատարներից մեկը կարդացած նամակը ծալում և դնում էր գրանը, մյուսը՝ ձմլում և գետին նե-

տում, Փափազյանը կարդալուց հետո նամակի թերթերը պարզեց դեպի մոմակալի բոցը և այրեց, առանց նայելու: Այսինքն՝ հետադարձ Շանապարհ չկա, այրված են բոլոր կամուրջները:

* * *

Փափազյանը նոր էր վերադարձել Թբիլիսիում տված հյուրախաղին Ներկայացումներից, վերադարձել էր լավ տրամադրությամբ: Երկար ժամանակ ալստեղ չեր եղել և գտել էր լավ ընդունելություն: Մի քանի օր անց եղա Թբիլիսիում, որ մնացի մի շաբաթի չափ: Պատմում էին, որ տասներկու օր իրար ետևից, առանց հոգնելու և իր տարիքի համար զարմանալի թափով և ավլունով խաղացել է Օթելլոյի դերը: Իրեն նվիրված երեկոյին կտորներ է կարդացել Կորրադոյից, Ուրիշելից, Համետից, Լիրից, Մակբեթից, Արքենինից: Եվ իբր այն մի հատվածը, որ խաղացել է Կորրադոյից, այնքան լավ է եղել, ինչպես երբեք:

Ահա այդ օրերին էր, որ մի կանուխ առավոտ Փափազյանը Երևանից զանգահարեց Մարտին Քարամյանին, բանաստեղծ ընկերոջս, որի տանը իջևանել էի ես: Արտիստը սիրով էր պատմում այն աջակցության մասին, որ ընկերու Թբիլիսիում ցուց էր տվել իրեն:

Այստեղ եղած վերջին օրերին Փափազյանը հեռուստատեսությամբ հատվածներ է կատարել Օթելլոյից, որպես Դեզրեմոնա՝ խաղընկեր ունենալով դերասանուի Թոփետին: Եվ որովհետև չեր հասցրել իր հոնորարն ստանալ, մի հանձնարարական էր թողել ընկերոջս, որ նեղություն քաշի, ստանա և ուղարկի իրեն:

Զանգահարելով ընկերոջս, սովորական սիրալիր հարցուփորձից հետո, թե ինչպես են տանեցիք և այլն, ինչդրեց, որ իր հոնորարից կոշիկներ գնի Հայկազի համար: Հայկազը թատրոնի հուշարարն է, երկար տարիներ Փափազյանի խաղերին հուշարարություն է արել, և արտիստը, իր հուշերի երկրորդ գրքում, սիրով հիշում է նրան:

Այդ երեկո ընկերոջս հետ գնացինք թատրոն: Փափազյանը

81

պատվիրել էր ոչինչ չասել Հայկագին և իր անունից նվիրել այդ կողիկներն անակնկալ մի պահի: Դրա համար պետք էր Հայկագին տեսնել և որևէ պատրվակի տակ իմանալ նրա ոտքի համարը:

Ընկերս, ինչպես հատուկ է բարի մարդկանց, իհարկե, ջդիմացվ և Հայկագին ասաց, թե վարպետն իրեն ինչ է պատվիրել հեռախոսով:

Հայկագի, ինչպես և ներկա եղող դերասաների ուրախությանը չափ չկար:

Երբ աչքս ընկավ Հայկագի հնամաշ կողիկներին, հասկացա, որ Փափազյանը այդ վժիոր կայացրել է ալստեղ, բայց դրա մասին հիշել է Երևան հասնելուց հետո:

* * *

1952 թվական: Սիրանույշի մահվան 30-ամյակին նվիրված Երեկոն է: Զեկուուցումից հետո ելույթ ունեցան Շերենիկ Ղեմիրջյանը, Վաղարշ Վաղարշյանը: Խոսեց նաև Փափազյանը: Բեմի վրա դրված էր Սուրեն Ստեփանյանի «Սիրանույշ» կիսանդրին: Փափազյանը խոսելիս շրջվել էր դեպի նա:

— Մեժ էր որպես աշխարհ և պարզ էր որպես ծշմարտությունը: Դա էր պատճառը, որ նրա շուրջը շատ քիչ էին վեծեր լինում: Համենայն դեպս, ներկայացման ժամանակ նա այնքան համոզիչ էր, որ ոչ ոք այլ կերպ չէր մտածում, քան նա:

Պոլսից որ եկա՞ ընկա նրա ազդեցության տակ: Նա չէր խաղում, չէր ներկայացնում, նա դառնում էր Մեդեա, Համլետ՝ թե՝ արտաքին, թե՝ ներքին կերպով: Ես չեմ տեսել մի ուրիշ դերասան, որը կարողանար այդպես երջանիկ ծնով միավորել միտքը, հուզզը և տեխնիկան: Նա ոչ միայն ինքն էր խաղում, այլև իր խաղող լուսավորում, գեղեցկացնում էր իր խաղընկերներին: Նրա ամենամեծ հատկությունը ներքին ուժն էր, ոգին: Դրա համար էլ դժվար է ասել, թե ինչն էր նրա մեջ ուժեղ՝ ծա՞յնը, որ խսկապես հազվագյուտ էր, դիմախաղը, որ այլևս ոչ ոքի մեջ չեմ տեսել, թե մի ուրիշ բան, երևի, ավելի ծիշտ, այդ բոլորը միասին:

Ասում են նման էր Սառա Բեռնարին. ոչ ոքի նման չեր նա և չեր էլ կարելի նրան ընդօրինակել: Այդպիսի փորձեր եղան, բայց անհաջող. Մերեան մի օր մի կերպ էր խաղում, մի ուրիշ անգամ՝ այլ կերպ: Ամեն անգամ նրա խաղը նոր ծնունդ էր, կրկնություն չկար:

* * *

Մի օր նորից խոսեց Սիրանուշի մասին:

— Եթե Սիրանուշը իր լավ ժամանակը ֆրանսիա գնար՝ ոչինչ կլինեին նրա առաջ փարիզյան բեմի աստղերը, դերասանուիհիները: Թիֆլիսը պատրաստ էր օգնելու, որ գնա, բայց չգնաց: Չուներ այդ ճգոտումը. տարօրինակ բան էր՝ Ալեքսանդրապոլ կգնար, Փարիզ չեր գնա:

* * *

Իմ տպավորությամբ, Փափազյանն ապրում էր կյանքի և մարդկային փոխհարաբերությունների բոլորովին այլ չափանիշներով, քան ընդունված պայմանավորվածությունն է այսօրվա հասարակության մեջ վաղ ժամանակներից ի վեր:

Այսպես, օրինակ, նրա բազմաթիվ երկրպագուներից մեկը ներկայանում է արտիստին և հալտնում իր բարձր հրձվանքը նրա խաղի նկատմամբ:

Ուտել-խմելու սեր չունեցող Փափազյանը հանկարծ կարող էր ծեռքը դնել իր երկրպագուի ուսին և ամենայն լրջությամբ և ամենայն անկեղծությամբ հարցնել, թե ինչու իրեն բոլորը հրավիրում են իրենց տուն, իսկ ինքը՝ ոչ:

Երկրպագուն, որի մտքով անգամ չեր անցնի, թե Փափազյանը կարող է իրենց տանը լինել, ուրախությունից գլուխը կորցրած,

տեղն ու տեղը հրավիրում է արտիստին, պայմանավորվելով, որ կիրակի օրը, ժամը 4-ին մեքենայով կգա նրա հետևից:

Երկրպագուն պատրաստություն է տեսնում, հրավիրում է մոտ մարդկանց, խնդրում, որ այդ օրն անպայման իր տանը լինեն:

Եվ ահա վրա է հասնում կիրակի օրը, ժամը չորսին երկրպագուն տաքսիով ծանապարհվում է Կիւյան փողոց, որտեղ ապրում էր ողբերգակը, և Փափազյանը... սառը ջուր է լցնում իրմով ոգեվորվածի գլխին. հայնտում է, որ ինքը իրեն լավ չի զգում և չի կարող գալ: Ու երկրպագուն տուն է դառնում կոտրված սրտով և հիասթափ անում Փափազյանին սպասող հյուրերին:

Ես չեի կամենա, որ Փափազյանի մասին սրա և այլ նման դեպքերի կապակցությամբ հեշտ մի վծիո կայացվեր: Ինձ թվում է, որ սա այնքան էլ պարզ բան չէ: Որ Փափազյանն անկեղծ տրամադրված էր ծաշի գնալու, ծիշտ է, և ենթակա չէ ոչ մի կասկածի, գոնե ինձ համար, որպես նրան քիչ թե շատ լավ ծանաչողի: Բայց որ նա չի գնացել ոչ այնքան իսկապես տկար լինելու, որքան այն պատճառով, որ հյուրընկալվելու ցանկությունը չկար այլս իր մեջ, սա ել ծիշտ է:

Մի խոսքով՝ մտաժելու բան է սա, և խորանալու դեպքում գուցե հանգենք այն մտքին, որ Փափազյանը ապրում էր հոգեկան անկախ մի կյանքով, ստեղծելով փոխհարաբերությունների մի չափանիշ, ընբռնելի և ընդունելի իր, բայց ոչ շրջապատի՝ մեզ համար:

* * *

Փափազյանը միառժամանակ հյուրանոցում ապրելուց հետո երկսենյականոց բնակարան ստացավ Կիւյան փողոցում և Անահիտ Շատյանի հետ տեղափոխվեց: Նրա բնակարանը գտնվում էր Կիւյան փողոցի ծախ մայթին և մի սենյակի լուսամուտը բացվում էր փողոցի վրա: Պատուհանի ուղիղ դեմ-դիմացում բնակելի նոր շենքի կառույց էր սկսված:

Զարմանալի սեր ուներ պատուհանի մոտ կանգնելու և նայելու նոր շենքի բարձրացող պատին: Այդ անհանգիստ մարդը երբեմն

մի ժամից ավելի մեխվում էր տեղում և հիացած հետևում, թե ինչ-պես է քարը քարի վրա դրվում:

Մի օր ասաց.

— Երևանը ինչ էր՝ ինչ դարձավ:

Մի ուրիշ անգամ.

— Ուր հասավ Երևանը:

Գնացի՝ տանը չեր: Հարցրի Անահիտին, թե ուր է, տարավ ինձ դեպի լուսամուտը, տեսնեմ Փափազյանը կառուցվող շենքի վրա է: Մոտիկից հետևում է որմնադիր բանվորների աշխատանքին, գրուցում հետները: Մի փոքր հետո վերադարձավ:

— Դու ի՞ո գիտես, որ մեր երկրի որ ծայրն ասես, հասել եմ, քաղաք չկա, որ ոտք դրած չինեմ, և ոչ մի տեղ շինարարությունը այսպիսի ծավալ չունի: Նայում եմ ու հոգիս փառավորվում է: Հաւկանում եմ, որ դա իր պատճառներն ունի. գավառական Երևանը մայրաքաղաք դարձավ: Եթե իր ապրած կյանքով մայրաքաղաք էր, իր արտաքին տեսքով էլ պետք է այլպիսին դառնար և դրա համար ժամանակ էր պետք: Բայց կա մի ուրիշ և ավելի կարևոր բան՝ մեր ժողովրդի կառուցող ոգին:

Մի օր էլ ասաց, թե գնալու է և քաղաքային իշխանություններից խնդրելու, որ իրեն մի երկու սենյակ տրամադրեն դիմացի կառուցվող շենքում:

— Այնքան նայեցի՝ որ կապվեցի այդ տան հետ, հարազատացավ, իմ դարձավ:

Եվ իսկապես, միառժամանակ հետո տեղափոխվեց դիմացի շենքը, թեև նոր բնակարանը հնի համեմատությամբ առանձնապես ոչ մի առավելություն չուներ:

Տարիներ հետո մեր կառավարությունը որոշեց Փափազյանին բնակարանային ավելի լավ պայմանների մեջ պահել՝ Կիւյանցի տեղափոխել Մոսկվայա (Թումանյանի Տուն-թանգարանի կողքին կառուցվող բնակելի շենքը) և տրամադրել երեք սենյակ:

Ստացավ բնակարանի օրդերը, պարզ էր արդեն, թե որ հարկում էր ապրելու և որ բնակարանում, բայց մահն ավելի վաղ հասավ, քան կավարտվեր շենքի կառուցումը:

Փափազյանը խնդրեց, որ իր հուշերի խմբագրությունն ինձ հանձնարարվի: Մի օր հարցրեց.

— Շա՞տ ժամանակ պետք կլինի խմբագրելու համար:

— Մի կես տարի:

Զարմացավ. մի՞թե խմբագրելու համար ավելի ժամանակ է պետք, քան գրելու:

— Գիրքը ես մի տարում գրեցի:

Բացատրեցի, որ, զբաղված լինելով, չեմ կարող միայն դրա վրա աշխատել:

Կարծես հասկացավ:

Հինգ օր էր անցել, որ զանգահարեց ու հարցրեց՝ վերջացրե՞լ եմ, թե ոչ:

Մի շաբաթ էլ չէր անցել, որ գիշերվա կեսին, ժամը երեքը կլիներ, զանգահարեց, թե ո՞ր էջին եմ հասել:

Ու այսպես անվերջ:

Երբ «Հետադարձի» առաջին գիրքը լուս տեսավ, Փափազյանը խիստ շոյված էր զգում իրեն, մանավանդ որ ընթերցողները նամակներով ու հեռախոսային զանգերով հայտնում էին իրենց անվերջ հիացմունքը: Փափազյանը չափազանցելով իմ, որպես խմբագրի, կատարած աշխատանքն իր ծեռագրի վրա, մի օր հարցրեց.

— Ի՞նչ նվեր անեմ քեզ:

— Ոչ մի նվեր: Վերջապես՝ հոնորար եմ ստացել դրա համար:

Նվերի միտքը մտել էր գլուխը և դորս չէր գալիս: Երբ մի անգամ էլ անդրադարձավ, խնդրեցի, որ իբրև հիշատակ տա ինձ Նեմիրովիչ-Դանչենկոյի կարծ բնութագրականը:

Խորամանկ նայեց աչքերիս, ժպտաց: Ինձ թվաց, թե ներքին մի տատանում ապրեց, բայց ոչինչ չասաց:

Նեմիրովիչ-Դանչենկոյի գրությունը ինձ մոտ է, սրբությամբ

պահվում է իմ թղթերի մեջ և, ձիշտն ասած, ստիպված եղա ավելի վաղ մեջտեղ բերել, քան մտադիր էի:

Աշուտ Արգումանյանի «Բարեկամություն» գրքի առաջին հրատարակության մեջ Փափազյանը ներկայացված էր ոչ իր արժանիքի համապատասխան: Վրդովված խոսակցություն ունեցա հեղինակի հետ, մեղադրելով նրան սրա-նրա ազդեցությամբ գործելու հավար: Արդարացավ, ասաց, թե նյութ չի ունեցել իր ծեռքի տակ: Խմանալով, որ պատրաստվում է գրքի երկրորդ հրատարակությունը, տրամադրեցի բոլորովին անհայտ այդ փաստաթուղթը, մտածելով, թե գուցե դրանով կարելի կլինի Փափազյանի գնահատությունը գործում մոտեցնել իրականությանը:

* * *

1956-ին «Հետադարձ հայացքի» առաջին գիրքը լուս տեսավ: Ոչ Փափազյանը որպես հեղինակ, ոչ էլ ես, որպես գրքի խմբագիր, չեինք կասկածում, որ գիրքը հաջողություն է ունենալու: Բայց այն, ինչ տեղի ունեցավ, անսպասելի էր երկուսիս համար էլ: Ոչ միայն ընթերցող լայն հասարակայնությունը, այլև գրական-գեղարվեստական շրջանները Փափազյանի գիրքը դիտեցին որպես գրական մեծ երևույթ: Ստեփան Զորյանը, Գուրգեն Մահարին, Սկրտիչ Արմենը, Հրաչյա Հովհաննիսյանը և ուրիշներ ոգևորված էին գրքով: Սակայն գիրքն ուներ նաև հակառակորդներ ինչպես գրողների, այնպես էլ մանավանդ, թատրոնի մարդկանց մեց:

Մեկը զարմանում էր, որ բոլորը հիացած էին գրքի լեզվով ու ոճով: Նա ասում էր, թե բավական է թերթել «Պոլսոն մամուլը՝ համոզվելու համար, որ տասական թվականների ամեն մի լրագրող այդպես էր գրում:

Մի հին դերասան գիրքը կարդալուց հետո հայտարարել էր, թե գրքում եղած մտքերը իրենն են, որ ինքն է ժամանակին արտահայտել դրանք երիտասարդ Փափազյանի հետ ունեցած գրույցների ժամանակ:

Մեկ ուրիշը այն միտքն էր հայտնել, թե դա Փափազյանի գրածը չէ, որ իբր մի ուրիշն է գրում, բայց լուս է տեսնում նրա անու-

Նով: Սկսեցին նույնիսկ այդ ուրիշին որոնել: Ասում էին, թե լենինականցի մի կին կա, նա է գրում Փափազյանի համար, ոմանք էլ ասում էին, թե այդ կինը դերասանուի Անահիտ Շատրւանն է, որի հետ Փափազյանը հետագայում ամուսնացավ: Կային մարդիկ, որ կասկած էին հայտնել, թե գուցե խմբագիրն է գրել, այսինքն ես, մասնավանդ շատերին եր հայտնի իմ և դերասանի բարեկամությունը: Անհեթեթ մի բան: Գիրքը խմբագրելիս բավական կրծատումներ եմ արել ու երբ հարկը պահանջել է կրծատված երկու հատվածները միավորել մի կամ երկու նախադասությամբ, անհնար դժվարության առջև եմ կանգնել միշտ, որպեսզի կարողանամ հարազատ մնալ նրա ոճական մտածողությանը և, խոստովանություն լինի, մեծ մասամբ չի հաջողվել ինձ դա, իսկ եթե հաջողվել է, ապա նվազ չափով միայն:

Փափազյանին հասնում էին այդ լուրերը, բայց նա չեր վրդովվում, ու եթե վիրավորվում էլ եր, ապա ցույց չեր տալիս, հանգիստ մի ժայտով, ներողամիտ կամ մեծահոգի արտահայտությամբ փակում էր գրուցը.

— Բան է, ասում են, ինչ եք այդքան նշանակություն տալիս, — և խոսակցության նյութը փոխում էր, մի ուրիշ բանի մասին խոսում:

Մի անգամ ասացին նրան, թե այսինչը մի քանի փաստագրական հակասություն է գուել Փափազյանի գրքում, Ուալդի, մեկ էլ մի ուրիշի մահը հետաձգել է մի քանի տարով... և չար ժայտով նկատել է, թե ուրեմն շատ էլ չի կարելի վստահել նրա պատմածի հսկությանը: Դուր չեկավ նրան այդ: Մոայլ ու ծանր լուրություն գամեց օդում: Կախեց գլուխը, մի պահ տարութերեց:

— Զար են մարդիկ...

Ասաց, իսկ մյուս օրը մի երկու եջ տվեց ինձ ու խնդրեց տեղադրել երկրորդ գրքում, որ այդ ժամանակ խմբագրում էի:

— Այս էլ իմ պատասխանը գրական հաշվապահներին:

Թեև անուն չեր տվել, բայց հասկացող կիասկանար:

Ու երբ տարիներ անց խնդրեցին նրան նոյն մարդու մասին հոդված գրել, ոչ միայն չիրածարվեց, այլև շուալ եղավ գովեստների մեջ:

Երբ զարմանքս հայտնեցի, ասաց.

— Դա էլ պատճելու մի ծև է:

Փափազյանի հանդիպումն էր միլիցիայի աշխատողների հետ: Արտիստին ողջունեցին սրտալի խոսքերով: Եվ բոլորն ել, հավաքութի նախագահից սկսած, շնորհակալություն էին հայտնում, որ իրենց խնդիրքը չի մերժել ու եկել է:

Իր ելույթում Փափազյանը բողոքեց: Եվ դա սեթևեթանք չէր, այլ անկեղծ մի պոռթեկում:

— Ինչի՞ եք շնորհակալություն հայտնում: Հայտնի չէ թե այս հանդիպման համար ով ում պետք է շնորհակալություն հայտնի: Դերասանը, ինչպես նաև գրողը, կոմպոզիտորը ժողովրդի ձայնն է: Եթե դուք չինեք՝ ես ել չեմ լինի: Ես ձեզ եմ արտահայտում: Ես ձեզնով կամ: Որտեղ ել լինեմ՝ ձեզնով եմ հպարտ, ձեզնով եմ հարուստ, ձեզնով եմ կյանքին կապված: Իմ խաղի մեջ ձեր զգացմունքն է ապրում, ձեր միտքն է ծառագայթում: Ինչի՞ է նման զինվորն առանց զրավարի: Արտիստներս, այդ ես լինեմ, թե իմ արվեստակից ընկերները՝ զինվորներ ենք: Զրավարը դուք եք, ժողովուրդը: Ինչ հրամայեք՝ այն ել անելու ենք: Դուք եք մեզ ուղղություն տվողը, դուք եք ծշտում մեր քայլը, դեկավարում մեր շարժումը: Ինչ խոսք կարող է լինել խնդրանքի մասին, կարգադրել եք՝ եկել եմ:

Մի պահ լրեց, հետո շարունակեց.

— Մի նուրբ կողմ էլ ունի մեր այս հանդիպումը, որի մասին չեմ կարող թեկութ մի խոսքով չիհշատակել: Փոքր ժամանակս ենիշերի եմ տեսել, երիտասարդ տարիներս՝ ժանդարմ: Երկուսն ել սարսափելի հիշողություններ են թողել մեջս: Եվ հիմա, եկեք-տեսեք, թե ինչքան են փոխվել ժամանակները, կյանքի պայմանները, որ միլիցիան կանչել է արտիստին իր մոտ, թե արի մի քիչ զրուցենք: Եվ ինչի՞ մասին՝ արվեստի: Լսված կամ տեսնված քա՞ն է սա մի ուրիշ երկրում:

Հավաքվածները ժափ տվին:

— Ես այստեղից երջանկացած եմ գնում, որ եկել-հասել ենք մի այսպիսի օրվա:

Նորից ժափահարություն:

— Մի՞թե պարզ չէ, որ եթե շնորհակալության խոսք պիտի ասվի՝ ուրեմն ես եմ ասելու, և ոչ թե դուք:

Ժափահարությամբ կրկին ընդհատվեց արտիստի խոսքը:

— Հա՞յ, մեկ էլ մի ցանկություն: Ես գիտեմ, որ ձեր աշխատանքը շատ է ու ժանր: Ես փափագում եմ այն օրը, երբ դուք աշխատավարձ կստանաք ոչինչ շանելու համար: Ա՛յ, դա կլինի օր: Ես հավատում եմ դրան ու սպասում:

* * *

Մի օր հարցրի, թե իր տեսած հայ դերասաններից ո՞րն է իր վրա ամենաուժեղ տպավորությունը գործել:

— Սիրանույշը:

— Այդ հայտնի է,— ասացի ես,— և' գրել ես, և' շատ անգամ ասել. խոսքս դերասանների մասին է և ոչ դերասանուինների:

— Զարիֆյանը:

Պատասխանեց անմիջապես, նայեց ինձ և ապա վրա բերեց.

— Եթե հանդիպեիր կյանքում, երբեք չէիր մտածի, թե մի բան արժե, բայց բավական է բեմ բարձրանար, որ դառնար հրաշագործություն: Աստված էր մատը դրել Նրա ծակատին և ասել՝ թատրոնի համար եմ լուս աշխարհ բերել քեզ, գնա ու գործիր: Նրա հետ երկի ոչ համեմատվել չէր կարող: Բայց նա չդարձավ այն, ինչ աստված էր նախատեսել Նրա համար: Խանգարեցին, շեղեցին: Կինը լավ դեր չխաղաց: Օ՛հ, կանայք, կանայք: Բայց ով աչք ուներ, մի քիչ էլ խղճմիտ սիրտ, չէր կարող ըընդունել, որ մեր ընկերը ավելի լայն հորիզոնների համար էր ծնված, քան հայ բեմը միայն:

* * *

Նոր էի վերադարձել Մոսկվայից, ուր տեսել էի Պոլ Ակոֆիլիդին՝ Համլետի դերում: Հետաքրքրվեց, թե ինչպես էր: Ասացի, նույնիսկ

Մի քանի մանրամասնություններ պատմեցի: Ոչ մի ձայն չհանեց, լուեց և չգիտեմ թե ինչու մտահոգ: Աչքիս նովնիսկ տխուր երևաց:

Տիրող լուությունը խախտելու համար ասացի, թե շատ Համլետներ եմ տեսել, բայց ամենալավերի խաղը նայելուց հետո էլ, նույնիսկ միշտ մի ինչ-որ չգոհացված զգացումով եմ վերադարձել թատրոնից:

Նայեց ու ասաց.

— Զի եղել ու չի էլ լինի այդպիսի Համլետ, որի խաղից մարդ, եթե, իհարկե, «Համլետը» խորապես ժանոթ է նրան, լիակատար բավարարում ստանա:

Մի փոքր հետո բացատրեց իր միտքը.

— Համլետ շատ լավ խաղալու համար դերասանը պետք է երեսնամյա երիտասարդի արտաքին ունենա, բայց յոթանասուն տարեկանի խելք: Եվ քանի որ այդ երկուսի ներկայությունը միաժամանակ անկարելի է, երբ մեկը կա, մյուսը չկա, և ծիշտ հակառակը, ապա հնարավոր չէ խաղալ ինչպես պետք է: Բոլորն էլ, ամենահանձարեղ ողբերգակներն ել խաղացել են մոտավորապես:

* * *

Մի անգամ էլ նույն մտքին անդրադարձավ:

— Աշխարհում ոչ մի դերասան չի խաղացել Համլետն այնպես, որ դահլիճում բոլորը գոհ մնան, ասեն, որ «ա՛յ՝ սա է իսկական շեքսպիրյան Համլետը»: Ինչքան էլ հավանել են, այնուամենայնիվ, միշտ էլ թատրոնից հեռացել են ինչ-որ վերապահությամբ: Համլետը երիտասարդ է, ուրեմն նրա դերակատարը նույնպես պետք է երիտասարդ լինի, լավ կառուցված, գեղեցիկ: Բայց որա հետ միասին՝ Համլետը հասկանալու համար մարդ պետք է շատ ապրած լինի, շատ էլ տեսած ու լսած, ուրեմն տարիք առած պետք է լինի: Բայց եթե վաթսուն-լոթանասուն տարեկանը բարձրանա բեմ, ինչքան էլ տաղանդավոր, ո՞վ կհատա, թե դա Համլետ է:

Մի պահ լրելուց հետո.

— Ուրեմն երիտասարդը չի կարող խաղալ, որովհետև մեծի

խելք չունի. մեծն էլ թեև խելք ունի՝ չի կարող խաղալ, որովհետև երիտասարդ չէ: Ահա և քեզ հավիտենապես անլուժելի խնդիր:

* * *

«Համլետի» մեջ մի այսպիսի տեսարան կա. Պոլոնիուսը, երբ Առաջին դերասանը Հեկուրի մենախոսությունն է ասում, ընդհատում է նրան՝ «մեկ տեսեք, ինչպես գոյնը թուել է, աչքերը լցվել են», — Փափազլան-Համլետը այստեղ մի խաղ ուներ, որ շատ անգամ եմ տեսել և միշտ էլ հիացած մնացել:

Փափազլան-Համլետը, որ բազկաթոռի մեջ ընկդմված լսում էր Առաջին դերասանի մենախոսությունը, Պոլոնիուսի խոսքերից հետո ելնում էր ոտքի ու դանդաղ, իրեն հատուկ արքայական քայլերով մոտենում պապանձված դերասանին, մեկնում աջ ծեռքը դեպի նրա արտասվալի աչքերը, մատով արցունքի մի կաթիլ վերցնում, փոխադրում ծախս ծեռքի ափն ու երկա՛ր-երկա՛ր նայում, և երկի այդտեղ, այդ պահին էլ նրա մտքով անցնում էր. «— Հեկուրը նրա ի՞նչն է կամ նա՝ Հեկուրի»: Ուզեցի իմանալ, իրավացի՝ եմ, թե ոչ:

— Ես էլ եմ սիրում այդ տեսարանը, դու Շիշտ ես հասկացել. Ես՝ Համլետս, իսկապես այդ ժամանակ եմ մտածում, թե «Հեկուրը նրա ի՞նչն է», և ապա, դերասանների գնալուց հետո, անդրադառնում այդ մտքին:

Հետաքրքրվեցի, թե ինչպե՞ս և ե՞րբ է մտահղացել ծնուվ գեղեցիկ և իմաստով խոր այդ մանրամասնը:

— Դա երկար պատմություն է:

Խնդրեցի պատմել:

— Առաջին դերասանի դերը կատարողներից ոչ մեկն ինձ չի գոհացրել մինչև իհմա: Չեմ հանդիպել մեկին, որ իսկական լինի, հոգով խաղա և արտաքսապես էլ համապատասխան լինի: Մեծ մասսամբ դրանք եղել են միշին շնորհիքի, գորշ անհատականությամբ դերասաններ, որոնք կարողացել են ծնակերպել երկի խոսքերը, և միայն:

Խոտալիայում, երբ դեռ սովորում էի, մի ամառ մասնակից եղա՛ Սաձծինիի գլխավորած շրջիկ թատերախմբի Ներկայացումներին: Բոլոնիա քաղաքում, որպես ուսանող, փոքրիկ, հաջախ էլ անխոս դերեր էի կատարում: Համլետի դերակատարության ժամանակ խաղում էի այն պատանուն, որ Համլետի պահանջով ֆլեյտա է բերում:

Մի այսպիսի դեպք պատահեց:

Բազետոտի անունով մի դերասան, որ խաղում էր Առաջին դերասանի դերը, ամեն անգամ իր մենախոսությունն ասելիս լաց եր լինում խսկական արցունքով: Խաղընկերները միժաղում էին, մանավանդ որ ինքը՝ դերասանը, վտիտ արտաքինով մի խեղճ մարդ էր, և լավ դերասանների պակասի պատճառով էր միայն, որ նըրան էր հանձնարարվում այդ դերը: Այնպես որ, խսկական արցունքն անհամապատասխան էր այդ մարդու արտաքինին: Մի օր հարցրի նրան, թե ի՞նչն է պատճառը, որ այդպես լաց է լինում:

Պատասխանն ինձ ապշեցրեց:

Տեսնելով իմ հետաքրքրությունը, — նա տարիքով ինձնից մեծ էր, — սիրտը բացեց.

— Իմ կյանքի միակ երազը Համլետ խաղալն է եղել, բայց արտաքինիս պատճառով չեմ խաղում: Լավ եմ հասկանում եռլթյունը, բայց բեմականորեն ձևակերպել չեմ կարող:

Շատ անկեղծանալով՝ ասաց, թե մեր մաեստրոն, որ խաղում է, իրեն չի գոհացնում: Եվ վրա բերեց.

— Ես լաց եմ լինում նրա համար, որ չեմ խաղում, այս մեկ. որ վարպետու՝ Մածծինին, վատ է խաղում. այս էլ երկու. և, վերջապես, որ ես, բնության տված արտաքին խղճուկ տվյալներովս անկարող եմ խաղալ, թեև հոգով զգում եմ դերը:

Ես հասկացա այդ թշվառ մարդու վիճակը: Այդ հասկացել էր նաև մեր մաեստրոն: Եվ երբ մյուս ընկերները ծաղրում էին նրան, Մածծինին մի օր սաստեց՝ ասելով.

— Մեծագույն դժբախտություն է դերը հոգեպես ըմբռնել, բայց չկարենալ անձնավորել տվյալների պակասության պատճառով: Փոխանակ ծաղրելու՝ օգտվեցեք նրա սեփական տրագեդիալից:

Այդ խոսքը մնաց իմ մեջ:

Տարիներ անցան, և ես շատ անգամ խաղացի Համլետի դերը: Ահա այդ բազում երեկոներից մի օր՝ Հյուսիսային Կովկասում, Ար-

մավիր քաղաքում, Բաղդասարյան ազգանունով մի դերասան, որ հետո խելագարվեց, նույնպես ցանկություն ուներ Համլետ խաղալու: Իհարկե, չէր կարող: Եվ նույն պատճառով, ինչ իտալացի Բազետտին: Բայց մի երեկո, Առաջին դերասանի դերը կատարելիս, նա բոլորիս շշկեցրեց իսկական արցունքներով: Եվ Համլետի դերը խաղալիս, տեսնելով նրան, իիշեցի Մածծինի ասածը: Զկարողանալով նրան զատել մյուս դերակատարների քմժիժաղից, բայց և կամենալով արդարացնել նրան ամենքի առաջ, ձեռու երկարեցի ու վերցրի նրա աչքից արցունքի մի կաթիլ: Լուս խաղալով՝ անդրադարձա այդ արցունքի խոր նշանակությանը, մունչ կերպով տալով թացատրությունը՝ դերասանի ներքին հոգեկան հուզմունքը և այդ հուզմունքը արտաքնապես արտահայտել չկարենալու դրաման: Ինձ շրջապատող սիրող-դերասանները հասկացան այդ: Եվ զգացվեցին: Հասկացավ և ինքը՝ դերասանը: Հասկացավ նաև հանդիսաւեսը և դահլիճում խոսեց մի խորազգաց լուսաթյուն:

Բայց, ի տարբերություն Բազետտիի, Բաղդասարյանը հրաժարվեց այդ դերից: Եվ հետագա ներկայացումներին, կովկասներում նստած, սովահար մարդու պես, նայում էր, թե ինչպես եմ անում այն, ինչ ինքը կկամենար, շատ կկամենար անել, բայց չէր կարող, և խոր հառաջանքով արցունք էր թափում, մինչև որ խելագարվեց:

Դրանից հետո այստեղ և որիշ տեղեր, երբ դերասանները խաղում էին այդ դերը, նրանց մեջ վինտրում էի այդ իսկական արցունքը: Եվ գտնելով՝ չէի կարողանում նույն անել: Եթե կրկնում էի, զգում էի, որ կեղծ է ստացվում, որ հանդիսատեսին չի հասնում, չի ապրեցնում նրան: Եթե հանկարծ, Լենինականում, մի տասնինք տարի սրանից առաջ, թե ավելի վաղ, միտս չէ, — դե դու գիտես, որ թվերը ես լավ չեմ իիշում, — Վարդան Թերզիբաշյանը, որ կատարում էր Առաջին դերասանի դերը, մի գիշեր այնպես զգացված արտասանեց Հեկութի պատմությունը, որ արցունքներ երևացին աչքերին, ծիծաղի առիթ տալով իր խաղընկերներին, ծիշտ այնպես, ինչպես Բոլոնիայում՝ Բազետտին, Բաղդասարյանը՝ Արմավիրում: Ես, կորցրածը գտնողի երջանկությամբ, կրկնեցի այն, ինչ անում էի միշտ իսկական արցունքի ժամանակ: Անսպասելիորեն ինձ համար կրկնվեց նույն բանը թե՝ ինձ շրջապատող դերասանների, թե՝ հանդիսատեսի, թե՝ դերակատարի մոտ:

Հետագալում եկա այն եզրակացության, որ Առաջին դերասանն արտասվի թե չէ, միևնույն է, պիտի ստիպեմ ինձ հավատալ, որ նա արտասվում է, պիտի ստիպեմ ինձ նրա աչքերին արցունքներ տեսնել:

Հոգեկան երկվության շնորհիվ՝ որ ես, բեմի վրա կերպար լինելով, մնում եմ այդ կերպարի կառավարողը, կարողացա օգտվել այդ դրությունից՝ հօգուտ դերի հարստացման և նրա բարդացման:

* * *

Զարմանալի մի սովորություն:

Ներկայացումից հետո Փափազյանը երկար ժամանակ չէր կարողանում քնել: Եվ, ըստ երևույթին, լիցքաթափվելու համար, գիշերվա ուշ պահին մի չարածքի խաղ էր խաղում մոտ ընկերների գլխին:

Սի օր, ուշ գիշեր էր, երկի ժամը երկուսն արդեն անց կլիներ, լսվեց հեռախոսի զանգ: Ով կարող է լինել այդպես անժամանակ: Վերցրի լսափողը: Կանացի անժանոթ մի ծայն, ներկայանալով որպես բուժքուր, խուժապահար հայտնեց, թե Արտաշատից, ներկայացումից հետո, մեքենան, որով Փափազյանը վերադառնում էր քաղաք, վթարի է ենթարկվել: Վարպետի վիճակը ժանր է և խնդրում է տեսնել իրեն, շատ կարևոր բան ունի ասելու: Ես ու տիկինս՝ Նելլին, շտապ նետվում ենք փողոց և մեր դռների մոտ հանդիպում Արփենիկ Խաչանյանին, որին նույն ծայնը հաղորդել էր նույն լուրը:

Շանապարհին հանդիպում ենք Վավիկ Վարդանյանին և Դավիթ Մալլանին, իրենց կանանց հետ վերադառնում եին ինչ-որ կերուխումից: Հայտնում եմ լուրը. Վավիկը միացավ մեզ, իսկ Դավիթը Պերճանույշի և Կիրայի հետ շտապեց տուն, առողջապահության մինիստրի հետ հեռախոսով կապվելու համար:

Գնացինք երրորդ հիվանդանոց: Զկա: Անցանք երկրորդ հիվանդանոցը, դարձյալ չկա: Շարունակեցինք ծանապարհը. առաջին հիվանդանոցում էլ չկա: Եվ այսպես, քաղաքի բոլոր հիվանդանոցները շրջելուց հետո հուսահատ ու ջարդված վերադարձանք տուն:

Ժամը չորսից անց է: Նորից զանգ, նորից կանացի նույն ծալնը հալտնում է, որ Փափազյանին է հանձնում լսափողը:

— Բարեկա՞մս, ներիր ինձ, բայց հավատացի, որ սիրում ես ինձ:

Ու բարձր ժիշաղ: Հաջորդում են միմյանց նույնատիպ զանգեր բոլոր նրանց, որոնց ուշ ժամին ոտքի էր հանել արտիստը: Իսկ առավոտյան պարզվեց, որ ներկայացումից հետո մի քանի հոգով վերադարձել են Երևան և տուն գնալու փոխարեն «խուժել» են Ասիկ Սկրտումյանի բնակարանը, իսկ տանտիրուիհին ինձ և ուրիշներին ներկայացել է որպես բուժքուր:

* * *

Մի օր ասաց.

— Շատ բանի եմ հասել, բայց մի փափագ մնացել է մեջս: Հիսուն տարի ծառայել եմ Շեքսպիրին, ուր գնացել՝ տարել եմ հետո ու ներկայացրել Նրան մեր հայ լեզվով, մեր հին լեզվով, որ խստաշունչ է, ինչպես մեր Երկինքը կայժակի զարկի պահին, քննուց է ու շերմ, ինչպես մեր Երկինքը Երևանյան աշնան օրերին: Ուր ասես, որ չեմ եղել, ո՞ւր ասես ուր չեմ դրել: Ու հավատա, ամեն տեղ ել մեր ժողովրդի պատիվը բարձր եմ պահել: Բայց մի տեղ, որ պատանի հասակիս եմ եղել՝ Շեքսպիրի հայրենիքն է: Ուզում եմ հիմի գնալ, երբ ուժ եմ զգում մկանութիւն մեջ: Ուզում եմ հիմի գնալ, երբ մեջքիս պետականացած ժողովուրդ է կանգնած: Ասում եմ զընամ, լոնդոնցիների շնորհց բռնեմ, դնեմ տակս ու դառնամ տուն, ել ետ չնայեմ:

* * *

Մտա հյուրանց Փափազյանին տեսնելու: Գործ ունեի, հիմա չեմ հիշում, թե ինչ: Հուզված էր, կարծես նույնիսկ վրդովզած: Ետ ու առաջ էր անում: Հետաքրքրվեցի, թե ինչ է պատահել: Ասաց,

որ եղել է գերեզմանատանը և շատ վշտացել է, տեսնելով իր սիրելի ընկերոջ՝ Արուս Ռուկանյանի շիրիմն այդպես անշութ վիճակում: ՎՃռելով իր ժախքով զարդարել նրա շիրիմը, զանգահարել է Արուսի մորը, հայտնել իր ցանկությունը և խնդրել տեսակցություն՝ դրա շուրջը խորհրդակցելու համար:

— Երբ վերահասու եղա, որ արժանավայել Արաքսի-հանմը մտադիր է թաղվել իմ Արուսակի կողքին և որ ինչ-ինչ պաշտոնական թույլտվություն էլ ունի ձեռքին, իր այդ ցանկությունն ապահովող՝ ես բարվոք համարեցի հրաժարվել իմ ծրագրից և Արուսյակիս շիրիմը կանգնեցնել իմ սրտում, ուր ո՞չ ոքի հնարավոր չինի մտածել իսկ հանգչելու նրա կողքին:

Մի օր հարցուփորձ էի անում թաշկինակի տեսարանի վերջին լուսաբանությունից: Ուզում էի իմանալ, թե որտե՛ղ և ինչպե՞ս է հղացել այդ միտքը: Այդ առթիվ պատմեց Տուգանովի ոգևորությունը այդ տեսարանով՝ Բաքվում, 1945-ին: Ես ակամա անդրադարձա այն իրողությանը, որ ահա քանի՛ ժամանակ է, երկի մի քանի տասնամյակ, որ դերասանի խաղի մեծարման ու գնահատության այդ կարգի դրսւորումներ չեն լինում: Եվ մտածում էի ափսոսանքով՝ չինի՞ թե Փափազյանն այն վերջին ողբերգակն է, որ իր հետ տանում է ոռմանտիկ հանդիսատեսին, որպիսին, Փափազյանի պատմածով, եղել է Տուգանովը, Բաքվի ոռուսական թատրոնի նշանավոր ռեժիսորը:

Նայեց աչքերիս և չկուհելով, թե ինչի մասին եմ մտածում, կարծեց, թե չեմ հավատում ասածին, ժպտաց, որի մեջ վիրավորված մարդու դառնությունն կար:

— Բոլորդ էլ ալդպես եք, չեք հավատում, նույնիսկ դու, որ բարեկամս ես:

Մի փոքր հետո.

— Ոչ ոքի չեի պատմել, առաջին անգամ քեզ ասացի, և չհավատացիր: Կարող ես Ժասմենին հարցնել, իրեն՝ Տուգանովին:

Ես, իհարկե, ոչ ժամենին հարցրի, ոչ ել Տուգանովին հարմար գտա հարցում անել նամակով։ Անցավ բավական ժամանակ, երևի մի երկու թե երեք տարի և հանկարծ մի օր, նոյնը, ինչ պատմել եր Փափազյանը, պատմեց ռեժիսոր Արտաշես Հովսեփյանը, որ այն տարիներին, աշխատելով Բաքվի հայկական թատրոնում, ներկա է եղել այդ դեպքին։

Գանցել էի Լենինական՝ թատրոնում գեկուցում տալու։ Արտաշես Հովսեփյանը, որ այդ թատրոնի դիրեկտորն էր և գլխավոր ռեժիսորը, մի քանի դերասանների ներկայությամբ գանգատվեց Փափազյանից. խոստացել է ներկայացումների գալ, սա ել հայտարարություններ է փակցրել, տոմսեր վաճառել ոչ միայն քաղաքում, այլև գյուղերում, իսկ Փափազյանը, Լենինական գալու փոխարեն, Ժանապարհվել է Ստեփանակերտ։

Գանգատն իրավացի էր, և ես Փափազյանին արդարացնող ոչ մի պատճառաբանություն չկարողանալով գտնել՝ ասացի, թե Զիշտե, լավ չի արել, բայց նրան պետք է ընդունել այնպես, ինչպես որ կա։

Հովսեփյանը, Ենթադրելով, թե ես այն տպավորության եմ, թե ինքը դրա հիման վրա կասկածի է Ենթարկում Փափազյանի մեծությունը, հարցրեց, թե ես գաղափար ունե՞մ, թե ով է Տուգանովը և, դրական պատասխան ստանալով, ասաց։

— Դե որ ալդպես Ե՛ լսեցեք, ես ծեզ մի դեպք պատմեմ Փափազյանի կյանքից, որ դժվար թե լսած լինեք։

Տեսնելով, պատրաստվում Ենք լսելու՝ նա անշտապ մի շարժումով թարմացրեց ծխախոտի կրակը և պատմեց հետևյալը, որ նոյնը եր, ինչ-որ հայտնի էր ինձ Փափազյանի պատմաժից։

— 1945 թվականն էր։ Փափազյանը Երևան այցելելու Ժանապարհին կանգ էր առել Բաքվում՝ ներկայացումներ տալու համար։ Բաքվի հասարակությունը կարուտել էր Փափազյանին։ Ես շատ եմ տեսել Փափազյանի Օթելլոն, բայց ինչպես նա խաղաց այդ օրը՝ Երևակայությունից դուրս բան էր։ Երեք նրան ալդպես չէի տեսել, ոչ ել կարող էր մտքովս անցնել այն բոլորը, ինչ որ նա արեց։ Առանձնապես տպավորիչ էր թաշկինակի տեսարանը։ Սուաջին ներկայացումից հետո լուրջ տարածվեց քաղաքում, և բոլորն ուզում էին տեսնել նրա խաղը։ Ե՛վ որուներ, և' աղբբեշանցիներ, և' իրեաներ։

Եթե ասեմ, որ պատրաստ էին թատրոնի դռները ջարդել, միայն թե դահլիճ ընկնեն, հավատացեք, որ չեմ չափազանցնում:

Հովսեփիյանը մի պահ կանգ առավ:

— Լուրջ հասել էր Տուգանովին, և նա էլ, բոլորի նման, որ շել էր նայել Փափազյանի խաղը, մանավանդ երկար տարիներ նրա Օթելլոն տեսնելու առիթ չեր ունեցել: Չեմ հիշում թե Փափազյանի որերորդ Ներկայացումն էր, որ Տուգանովը եկավ թատրոն: Թե ի՞նչ է Տուգանովը՝ ինքներդ լավ գիտեք, ի՞նչ ասեմ: Ներկայացումից առաջ չգնաց կուլիսները՝ Փափազյանին տեսնելու:

Երրորդ զանգը տրվեց: Նա դահլիճ մտավ բոլորի հետ: Առաջին և երկրորդ արարներից հետո, ընդմիջումներին Տուգանովը եկավ իմ առանձնասենյակը, խոսեց զանազան հարցերից, բայց ոչ մի խոսք Փափազյանի ու նրա խաղի մասին: Ինքը ոչինչ չեր ասում, մենք էլ, թեև շատ էինք հետաքրքրվում, սիրտ չեինք անում հարցնել: Երրորդ արարից հետո չերևաց մեր սենյակում: Ենթադրելով, որ գնացել է Փափազյանի մոտ՝ շտապեցի կուլիսներ: Շատ մարդ կար այնտեղ, ով ասես, բացի Տուգանովից: Մտա դահլիճ. այստեղ էլ չեր: Կասկած ընկավ սիրտս, չինի՞ թե չի հավանել ու թողել-հեռացել է: Ծտապեցի հանդերձապահի մոտ. ասաց, որ այդ, հենց որ վարագույթ փակվել է, եկել է վերարկուն վերցրել ու գնացել: Ասես սառը ջուր լցրին գլխիս: Տարակուսած ետ դարձա և միակ բանը, որ կարողացա մտածել՝ այն էր, թե ինչ լավ եղավ, որ Փափազյանին չի ասել, թե Տուգանովը եկել է ու նայում է Ներկայացումը: Երբ Ներկայացումը վերջացավ, անցա կուլիսները, և հիմա չեմ հիշում, թե քանի անգամ, համենայն դեպս շատ-շատ էր դա, դահլիճն իր ժափով ու կանչերով Փափազյանին բեմ էր վերադարձրել: Այժմ, ինչպես միշտ, մարդիկ, որոնց մատչելի էին կուլիսները, մարդիկ, որ երբեք չեին եղել կուսիլներում, մի մեծ բազմությամբ շրջապատել էին Փափազյան-Օթելլոյին, որն իր փառահեղ ու հաղթ հասակով կենտրոնում կանգնած, ժպտում էր մեկ սրան, մեկ մյուսին, կարծ պատասխաններ էր տալիս իրեն ուղղված հարցերին, ստորագրություն ոնում իրեն պարզված լուսանկարների ու ժրագրերի վրա: Ահա այդ ժամանակ էր, որ կուլիս մտավ Տուգանովը, երջանիկ մի ժպիտ դեմքին՝ կանգնեց դռների մոտ:

— Տուգանովը...

Ասացին նրան ծանաչող մարդիկ ու իրենց պաշարումից ազատեցին Փափազյանին: Մրանց օրինակին հետևեցին և նրանք, որ չգիտեին, թե ով է ներս մտած Շերունին: Փափազյանը, տեսնելով Տուգանովին, բացականչեց.

— Ալեքսանդր Ալեքսանդրովի՛չ, — ու ձեռքերը պարզած՝ քայլեց դեպի նա:

Տուգանովը ձեռքի հրամայական շարժումով կանգնեցրեց նըրան: Փափազյանը քարացավ տեղում: Տուգանովը, թատերական այդ մեծ հեղինակությունը, որ տարիքով էլ մեծ էր նրանից, ծունկի եկավ և այն մի քանի քայլը, որ իրեն բաժանում էր Փափազյանից, ծնկաչոք անցավ, մոտեցավ արտիստին, վերցրեց Օթելլոյի գգեստի քղանցքը, մոտեցրեց շորթերին և ապա գլուխը բարձրացնելով ի լուր բոլոր ներկաների՝ ասաց.

— Այս գիշեր ես համոզվեցի, որ դու աշխարհի ամենամեծ արտիստն ես:

Փափազյանը բարձրացրեց նրան, և երկար ժամանակ ողջագուրված մնացին՝ ներկա գտնվողների խանդավառված ծափերի ու կանչերի աղմուկի տակ:

Երբ շրջապատը հանդարտվեց, և Օթելլոն իր սկ բազուկներից ազատեց Տուգանովին, նա ձեռքը տարավ ժողագրպանը և այնտեղից հանեց Փափազյանի լուսանկարը, 1913 թե 1914 թվականի մի նըկար, որի վրա Պոլսից Թիֆլիս եկած Փափազյանի մակագրությունը կար: Ահա թե ինչու էր երրորդ արարից հետո Տուգանովը տուն շտապել: Եվ խնդրեց, որ Փափազյանը նույն նկարի վրա, երեսուն և ավելի տարիներ հետո, նոր մակագրության արժանացնի ջահել օրերի այս հազվագյուտ հիշատակը:

* * *

Փափազյանը չէր սիրում սեղան նստել, քեֆ անել: Նա ուներ օրվա իր կարգն ու կանոնը, որին հետևելը տասնամյակների ընթացքում նրան հեռու է պահել հիվանդանալու վտանգներից: Երկու բան միայն կարող էին խախտել այդ կարգն ու կանոնը՝ թատրոնը

և կանայք: Խմել չեր սիրում. կոնյակը և գինին շատ շուտ եին ազդում վրան:

Մի անգամ հարցրի, թէ մի՞թէ ինքը չի մասնակցել այն սեղան-ներին, որ բացվել են Ներկայացումներից հետո, երբ ինքը ոռուսական շրջիկ խմբի գլուխն անցած մի քաղաքից մյուսն է գնացել:

— Մեծ մասամբ խուսափել եմ: Եթէ հնարավոր չի եղել, մի կես ժամ նստել եմ պատշաճը պահելու համար, հետո, երբ խաղընկերներս արդեն գինովցած եին լինում, աննկատ հեռացել եմ, մտել անկողին: Նրանք նստում եին մինչև ուշ գիշեր: Դե՛, նրանց, ինչ, դժվարն իմն էր, վաղը ներկայացման ժանրություն պետք է վրաս առնեի:

— Իսկ կանա՞լք...

Ծիծաղեց:

— Անունս է դուրս եկել և շատ էլ մի հավատա:

Ժպտաց:

— Գիտես ինչ, բարեկամս, կինն այնպիսի արարած է, որին անկարելի է չսիրել:

* * *

Աբովյան փողոցումն էր: Հյուրանոցի մուտքի մոտ: Փափագյանն էր, նկարիչ Խաչատուր Եսայանը և ես: Այն օրերին էր, երբ Փափազյանը պատրաստում էր «Ուրիել Ակոստայի» նոր բեմադրությունը՝ իր մասնակցությամբ: Բոլորս էլ այն համոզմանն էինք, որ նա եթե կամենում է՝ պետք է բեմադրի և ոչ թե խաղա: Իրեն դըժվարանում էինք ասել, բայց ակնարկում էինք, երբեմն մութ, երբեմն բավական թափանցիկ: Փափազյանը կամ չեր հասկանում, կամ էլ չհասկանալու էր տալիս: Իսկ եթե հասկանում էր՝ դիմադրում էր ինչքան ուժ ուներ, նեղ դրությունից դուրս գալու մի սրամիտ ելք գտնելով:

Եսայանը հարցրեց.

— Քանի՞ տարեկան է Ուրիելը:

Նկարիչն այդ լավ գիտեր, բայց նրա նպատակն այլ էր: Փափազյանը հասկացավ.

— Ուրիշը տարիք չունի. նա փիլիսոփա է:

* * *

Լենինականի թատրոնի շքամուտքի առաջ, ծառաստվերում կանգնած զրուցում էր երիտասարդ և ավագ դերասանների մի ոչ մեծ խումբ: Փափազյանն էլ էր նրանց հետ:

Մի մուրացիկ մոտեցավ և հերթով ձեռքը պարզեց բոլորին: Մի տարեց դերասան բացեց փողաքսակը ու երբ տեսավ, որ մի ոությանց է ձեռքին, թղթադրամը նորից տեղը դրեց, և երկար որոնելոց հետո, գտավ մի քսան կոպեկանոց: Մուրացիկը մոտեցավ Փափազյանին. նա ձեռքը տարավ գրպանը, շարունակելով խոսքը, և ավելի, որպես նախատինք տարեց ընկերոջ, քան օգնություն, արտիստիկ անփութությամբ մուրացիկի բռան մեջ դրեց մի տասը ոությանոց:

* * *

Խոստացա երեկոյան լինել իր մոտ: *Տեսնեմ՝ գահավորակին* նստած է մի ժեր հոգևորական, Փափազյանն էլ արտակարգ ուրախ է. ծանոթացրեց: Պարզվեց, որ դա Հայր-Բողոքուրյանն է, միակը, որ դերասանի ուսուցիչներից և դաստիարակներից ողջ է մասցել: Բոդրուրյանին Փափազյանը հանդիպել էր Կենտտիկում ուսանելիս: Պատմության դասաստուն է եղել: Հիսուննեկ տարվա անշատումից հետո կրկին հանդիպել են: Բոդրուրյանը, որ ութսունը լրացրել ու վաղուց առաջ է անցել, խարխլած մի ժերուկ է, այնքան դալկադեմ, որ թըվում է, թե արյունը սառել է մեջը: Ծպտում է մանկական մի արտահայտությամբ: Բայց հիշողությունը լավ է, և ուսուցիչ ու աշակերտ մեկիկ-մեկիկ հիշում են Վարժարանցիներին, թե ով ուր է և ինչ ձակատագիր ունեցավ:

Երբ ներկայացրին ինձ՝ ասաց.

— Ինձի համար մեծ ուրախություն է ձեզի հետ ծանոթանա-

լը. ամեն մեկ նոր անձ իմ կյանքում հույս է, որ տակավին կշարունակվի կյանքս:

Հիշեցին հայր-Ղազիկյանին:

— Աս ալ Պարտիզակից եր, ինչպես ես,— դարձավ ինձ,— մեր գյուղը տասներկու հազար բնակիչ ուներ, երբ թուրքերը վրա կուտան, հայր-Ղազիկյանը իր ծեռագրերը կթաղե հողին մեջ ու նոր կլք գյուղը:

* * *

1956-ին պետք է տեղի ունենար հայ արվեստի և գրականության տասնօրյակը Մոսկվայում: Փափազյանը մեծ ցանկություն ուներ մասնակցելու, հույսեր կապելով, թե վերջապես, կստանա դերասանի համար բարձրագույն տիտղոսը մեր երկրում՝ «Սովետական Միության ժողովրդական արտիստ»:

Թատրոնում կային մարդիկ, այն ել բավական ազդեցիկ դեմքեր, որոնք դեմ եին Մունդուկյանի անվան թատրոնի կազմի մեջ Փափազյանին տեղ տալուն:

Այդ հարցը մի քանի անգամ քննության առարկա դարձավ թատրոնի գեղարվեստական խորհրդում: Լինելով այդ խորհրդի անդամ, ես ու մի քանի ուրիշ ընկերներ պաշտպանում եինք Փափազյանի շահերը: Հակառակորդները ասում եին, թե Փափազյանի արվեստը իր բնույթով ոչ մի ընդհանուր բան չունի սունդուկյանցիների դերասանական արվեստի հետ: Պաշտպաններս առարկում եինք, ասելով թե Մունդուկյանի թատրոնի դերասանները մի միանական ոճի դերասաններ չեն, հետևապես եղած առարկությունը արիեւտական է, որով կամենում են կասեցնել մասնակցությունը մի դերասանի, որով, թվում եր, պետք է հպարտ լինի թատրոնը:

Փափազյանը գեղարվեստական խորհրդի անդամ չեր և չեր մասնակցում նիստերին: Վեծերը բավական կրքուտ եին, երբեմս ել ընդունում եին անձնական վիրավորանքի բնույթ:

Հարցը որոշվեց հօգուտ Փափազյանի:

Մոսկվա տարվող խաղացանկում կար «Օթելլո», բեմադրելու եր Լևոն Քալանթարը, որի կարծիքով գիշավոր դերը պետք է կատարեր Գեղամ Հարությունյանը: Դերը տրվեց Փափազյանին:

Տեղի ունեցավ Ներկայացման հանձնումը: Փափազյանն այն չէր: Ոչ այնքան այն պատճառով, որ տարիք էր առել, որքան այն, որ Ենթարկվել էր բեմադրող ռեժիսորի մեկնաբանությանը, կորցրել իրենը և ռեժիսորի առաջարկած նորն էլ, որ գոնե ինձ խիստ վիճելի էր թվում, չէր բյուրեղացել:

Ներկայացման գիշերը քնել չկարողացա և հասկացա, որ չեմ հանգստանա, մինչև մի նամակ չգրեմ իրեն՝ Փափազյանին և ըհայտնեմ իմ հուսահատ տպավորությունը: Նամակը Երկար ստացվեց: Փափազյանը ոչինչ չասաց նամակը ստանալու մասին, բայց հանդիպելիս խոսափեց ինձանից: Ներկայացման քննարկմանը ելույթ ունեցա գրածս նամակի ոգով: Ինքը Ներկա չէր, բայց նրան հայտնել էին, թե ով ինչ է ասել: Սառնություն մտավ մեր հարաբերությունների մեջ: Նա չէր ուզում հասկանալ, որ ես չէի կամենում, որ նա այդպես ներկայանա իրենով մի ժամանակ հիացած Մոսկվային, այդ պարտությունը համարելով շատ թանկ հատուցում՝ բարձրագույն տիտղոս ստանալու պատվի դիմաց:

Փափազյանը հիշաչար չէր: Եվ այդ սառնությունը հագիվ մի ամիս տևեց: Մի Երեկո զանգ տվեց, խնդրեց անպայման անցնել իր մոտ մի կարևոր գործով: Ինչպես այդ, ալնպես ել մեր մյուս հանդիպումներին դրա մասին խոսք չէինք բացում: Երբ մեկնում եր Մոսկվա, ծանապարհելիս բարեմաղթեցի հաջողություն: Մոսկովյան մամուլը նրան գովել էր, և նա, իհարկե, գիտեր այդ, մասնագետների նեղ շրջանը դժգոհ էր մնացել, որից, բարեբախտաբար, նա տեղյակ չէր: Ու երբ Վերադարձավ, միայն մի խոսք ասաց.

— Իզուր էիր անհանգստանում. ամեն ինչ կարգին էր:

Ասաց և գրկեց ինձ ու համբուրեց: Բայց ես գիտեի, որ բնակ Էլ ամեն ինչ կարգին չէ:

* * *

Մոսկովյան տասնօրյակից մեր արվեստագետները վերադարձան: Ոչ ոքի հայտնի չէր, թե ով ինչ կոչում է ստանալու, ինչ շքանշան կամ մեդալ: Բոլորն ել անհամբեր էին: Վերջապես հրապարակվեց տեղական որոշումը կոչումների մասին: Միասնակ

հետո հայտնի դարձավ նաև, թե Միութենական Գերագույն սովետը ում ինչ շքանշան է շնորհել: Անցնում էին օրեր և այդպես էլ հայտնի չէր, թե Սովետական Միության ժողովրդական արտիստի կոչման քանի՞ հոգի են արժանանալու և ովքե՞ր են լինելու դրանք: Պարզ էր, որ չորսից կամ հինգից չէր անցնելու քանակը, իսկ թե ովքեր էին լինելու՝ առատ Ենթադրությունների տեղիք էր տալիս և հավակնորդների ցանկը տասից անցնում էր:

Ամեն օր սպասվում էր, ու ես խմբագրությունում աշխատող ընկերոջս՝ Ժիրայր Հակոբյանին, խնդրեցի, որ իմանալուն պես հեռախոսով հայտնի ինձ: Բոլորը սպասում էին: Սպասում էր նաև Փափազյանը: Երեկոյան ժամը 9-ը կլիներ, որ ընկերս զանգահարեց: Ստացողների հնգյակում կար նաև Փափազյանի անունը: Զանգահարեցի թատրոն, արդեն գիտեին: Հարցրի, թե Փափազյանին հայտնե՞լ են: Պարզվեց, որ ոչ, որովհետև այդ ժամանակ նոր էր ստացել բնակարանը և հեռախոս չուներ: Իմ տանն էին այդ պահին արվեստի մի խումբ մարդիկ, որոնց մեջ՝ Բաբկեն Ներսիսյանը: Սուածարկեցի գնալ Կիկյան փողոց և շնորհավորել արտիստին:

Անահիտը դուռը բացեց և զարմացած մնաց, որ այդքան շատ մարդ, առանց իմաց տալու, եկել են իրենց տուն, իսկ Փափազյանը սեղանի մոտ նստած պասյանս էր բացում:

— Շնորհավորում ենք...

Գոչեցինք ու բոլորս վրա ընկանք ողջագուրվելու:

— Իսկ ի՞նչ է եղել որ:

— Դու այսօրվանից ու այս ժամից Սովետական Միության ժողովրդական արտիստ ես:

— Զի կարող պատահել:

Զեր հավատում: Ակսեցինք հավատացնել, ասացինք նաև, թե ել ով է ստացել: Կարծես սկսեց հավատալ, բայց մի տարակուսանք կար մեջք: Սեկ էլ դուն զանգ ու սենյակ մտավ բեմի հնագույն բանվոր Կոստանը՝ շնորհավորանքը շուրջերին:

Հավատաց:

Նոր միայն փաթաթվեց ամեն մեկիս, շնորհակալություն հայտնեց բարի լուրով գալու համար ու խնդրեց Անահիտին սեղան պատրաստել:

Հետզիետե բնակարանը լցվեց ծանոթ և անժանոթ մարդկան-

ցով։ Երբ զվարթ մթնոլորտ էր տիրում և Փափազյանի ուրախությանը չկար, իմ մտքով մի բան անցավ։

Այս արտիստը, որ իր տեսակի մեջ եզակի էր, ոչ միայն իր հզոր արվեստով, այլև այն ժողովրդականությամբ, թվում է, թե կարող էր այդ կոչումը ստանալ Կաչալովի և Մոսկվինի հետ միաժամանակ, մի խոսքով՝ ոչ թե հիմա, այլ սրանից մի քան տարի առօք։

Եվ մի՞թե, մտաժում էի ես, այսքան ուշացումով ստանալու դեպքում էլ, այդ մեծ արտիստը պետք է ապրումներ, կասկածներ ունենար՝ կստանա՝, թե ոչ։

Մի ուրախ պահի հարցրի։

— Կահրամ Գամերովիչ, մենք որ եկանք, թուղթ էիր բացում. ձիշտն ասա, մտաժո՞ւմ էիր՝ «Եթե բացվեց՝ կստանամ, եթե ոչ՝ ոչ»։

— Ինչ թաքցնեմ, մտքինս դա էր։

* * *

1958-ի հունվարի 6-ին լրացավ Փափազյանի 70 տարին։ Նա, որ այդ օրը որպես կանոն անպայման բեմ էր բարձրանում, ցանկություն հայտնեց այս անգամ Արբենին խաղալու։ Արտիստի երկրպագուները, տեսնելով, որ նրա հոբելյանի շուրջը ոչ մի խոսք չկա, ոչ մի պատրաստություն չի տեսնվում, խոսքերը մեկ արած, շնորհավորական հեռագրեր ուղարկեցին տան ու թատրոնի հասցեով։ Հեռագրերը բավական շատ էին ստացվել և դա խիստ հուզել էր Փափազյանին։ Իսկ անվանի դերասաններից մեկը, սրտնեղելով, ասաց։

— Եթե այսպես պետք է լիներ, զգուշացնեիք՝ մեզանից մեկն ու մեկը բեմ կբարձրանար և կողջուներ նրան Շննդյան օրվա առթիվ։

— Շատ լավ կլիներ. իսկ ինչո՞ւ չեք մտածել, — հարցրեց Ներկա գտնվող դերասաններից մեկը։

— Օրը չգիտեինք։

— Այդ ինչպես է, որ այսքան մարդ գիտեր, իսկ դուք չեք իմացել։

Այս «վեջը» շարունակվում էր, իսկ Փափազյանը անտեղյակ դրանից, սիրո խելացնոր խոստովանության դառը պահեր էր ապրում բեմում, և հանդիսատեսն իր ծափերով ու կանչերով շնորհակալություն էր հայտնում ոչ միայն այսօրվա խաղի, այլև դերասանին ընդհանրապես՝ տարիներ շարունակ գեղեցկի զգացողությունն իր մեջ հաստատ պահելու և խորացնելու համար:

* * *

1959-ին, մի տարվա ուշացումով՝ Փափազյանի ծննդյան 70-ամյակը նշվեց: Իր վերջին խոսքում, ի միջի այլոց, ասաց.

— Շնորհակալ եմ ամենքից՝ իրենց լավ խոսքերի համար: Մի բան լավ չէին անում միայն, որ ասում էին, թե յոթանասուն տարեկան եմ դարձել: Ինչի՞ եք այդպիսի անհարմար բաներով հետաքրքրում: Ես ծեզ, սիրելի հանդիսատեսնե՞ր, որ եկել եք այս գիշեր ինձ պատվելու, հարցնո՞ւմ եմ, թե դուք ինչքա՞ն եք դարձել: Ես այնպիսի տպավորություն ստացա, թե այդ բոլորն ասում են նրա համար, որ տանը նստեմ ու այլևս գործ չանեմ: Չեղած բան է, չեմ կարող: Կնի՞կ եմ, ինչ է, որ ծեռքերս ծալեմ ու նստեմ: Չեմ զգում տարիքս, ուրեմն՝ այլքան չեմ: Ես դեռ շատ բան ունեմ անելու, իսկ թե որտե՞ղ ու ինչպե՞ս կանեմ՝ չգիտեմ, գիտեմ միայն, որ որ էլ լինի՝ կլինի միայն այս տախտակամաժի վրա՝ բեմում:

Եվ այնուհետև.

— Ես մի նետ եմ, որի աղեղը քո ծեռքին է, իմ ժողովուրդ: Եվ դու ես արծակել ինձ միջոցի մեջ: Ես հիմա ել սլացքի մեջ եմ, թռչում եմ, գնում եմ: Թե քո արծակած նետը ե՞րբ և որտե՞ղ է ժայրի հանդիպելու ու խորտակվելու՝ այդ իմ իմանալու բանը չէ:

* * *

Հորելլանին անդրադարձավ Անգլիա գնալու փափագին: Դարձավ դեպի կառավարության ներկայացուցիչները, դեպի ժողովուրդը և խնդրեց օգնել, ուղարկել իրեն Լոնդոն՝ այնտեղ խաղալու համար:

— Կգնամ՝ տարիքիս հիսունը այստեղ թղղած, ու կվերադառնամ, հավատացեք ինձ, ինչպես մի քսան տարեկան:

Հետո.

— Իմ միակ ցանկությունն է հիմա այդ. մինչև չկատարվի՝ շեմ մեռնի:

* * *

Սունդուկյանի թատրոնը բեմադրեց Ուիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսը: Մեք-Գրեգորի դերը կատարում էր Հրաչյա Ներսիսյանը: Մի քանի ներկայացումից հետո Փափազյանը ցանկություն հայտնեց խաղալու նույն դերը: Փոխնիփոխ էին խաղում: Փափազյանի առաջին ներկայացման օրը թատրոնումն էի: Այդ օրը տեղի ունեցավ մի բան, որ հետո կրկնվում էր բոլոր ներկայացումներին:

Մեք-Գրեգոր-Փափազյանի վերջին տեսարանն էր: Մեկ հիշողության թելը կորցնելով, մեկ վերագտնելով մտքի պայմանությունը, բայց միշտ հոգեկան մեժ հովզումով նա մի խառը մենախոսություն էր կարդում Լիրից և Համետից: Փափազյանը մի-փոքր շեղվելով հեղինակից՝ հավելում էր շեքսափիրյան ուրիշ հատվածներ էլ: Այսինքն՝ մտնում էր իր խկական տարերքի մեջ:

Այդ մենախոսությունից հետո Մեք-Գրեգորը վախճանվում է:
Բես-Ալեքսանդրն ասում է.

— Այս մարդը մեր ժամանակի շեքսափիրյան ամենամեծ դերասանն էր:

Բես-Ալեքսանդրի այս խոսքերը խլացան ծափահարությունների տարափում:

Հրաչյախն, որ թվում է, թե Փափազյանից ավելի հաջող էր այդ դերում, չեին ծափահարում այստեղ:

Փափազյան-Մեք-Գրեգորին տեսել եմ մի քանի անգամ և միշտ նույն տեղում դահլիճը ծափերով էր լցվում:

* * *

Միլիցիայի ակումբում Փափազյանի հանդիպումն էր: Զեկուցումից հետո միլիցիոներները ողջունեցին նրան: Վերջում ինքը

շնորհակալության խոսք ասաց: Ի միջի այլոց նկատեց նաև հետևյալը.

— Ինչ լավ հայերենով եին խոսում այս ամբիոնից ինձ ողջունողները: Այս ընկերը, որ առանց թղթի կտորի խոսեց ալնքան գեղեցիկ, նույնպես միլիցիայի աշխատող է:

Դահլիճում նստածներն ասացին, թե այդ, խոսողը միլիցիոներ է:

— Անցյալ օրը,— շարունակեց իր խոսքը Փափազյանը,— գնացել էի փոստ՝ մի ծրար արտասահման ուղարկելու: Կողքիս կանգնած էր մի կին, երիտասարդ, հայ տիկին՝ մանջուկի ձեռքից բռնած: Եվ պատկերացնո՞ւմ եք, այդ գեղեցիկ, հրապուրով լի կինը իր մանջուկի հետ խոսում էր մի այնպիսի անձոռնի հայերենով, որ զարհուրեցի: Քանի որ ձեր մեջ այդքան լավ հայերեն իմացողներ կան, ապա աղերսագին խնդրում եմ ձեզ, չե՞ք կարող, արդյոք, մեր լեզուն այդպես անխնա աղավաղողներին, անձոռնի հայերենով խոսուներին կալանքի տակ առնել:

Դահլիճում ուրախ ժիժաղ բարձրացավ:

— Մի՛ ժիժաղեք, լուրջ եմ ասում: Մի՛թե կարծում եք, որ դքանց հասցրած վնասը նվազ է գրանահատի հանցանքից:

«Ուրիշել Ակոստա» ներկայացումից հետո մի անժանոթ ժերունի մոտեցավ Փափազյանին, ներողություն խնդրեց ուշ ժամին անհանգուացնելու համար և հարցրեց՝ թե ինչո՞ւ չի թողնում բեմը, չե՞ որ հենց ինքը իր գրքում ասում է, թե դերասանը պետք է թողնի բեմը ավելի վաղ, քան բեմը կթողնի նրան:

Անմիջապես չպատասխանեց: Զննական հայացքով նայեց ժերուկի աչքերին և ուզեց հասկանալ, թե իր հոգնած պահին ուզում է իր հոգու հետ խաղա՞լ, թե պարզասիրտ հետաքրքրության արդյունք է այդ հարցումը: Իսկ ժերունին նայում էր նրան այն անկեղծ սրտաբացությամբ, որ մարդուն կաշառում է անմիջապես:

— Քանի տարեկա՞ն ես:

Հարցրեց Փափազյանը:

— 67:

— Կին ունի՞ս:

— Այո:

— Առաջվա պես սիրո՞ւն է, երիտասարդ, հրապուրի՞չ:

Շերուկը շվարած նայում էր Փափազյանին և չէր հասկանում, թե այդ բոլորն ինչ կապ ունի իր հարցի հետ:

— Դե՛, թող էլի, ինչի՞ չես թողնում: Չես կարողանում, այնպես չէ՞:

Լոեց:

— Ալդպես էլ ես, սիրելի՞ս: Տեսնում եմ, հասկանում եմ, ուզում եմ, բայց չեմ կարողանում:

Լևոն Քալանթարը, հետո նաև ուրիշները, նախատեց ինձ «Հետադարձի» այն էջի համար, որ Արշավիր Շահիսաթունուն է նվիրված:

Մի օր Փափազյանին ասացի, թե այդ մի էջը դժգոհությունների շատ առիթ է տվել:

— Դու ես մեղավոր:

Զարմացա:

— Ինչպե՞ս թե:

— Շատ էլ գրել էի՛ շնչեիր: Հենց սկզբից քեզ քարթելանժ տվի, ասացի՝ ինչ ուզում ես արա: Դու էլ արիր, շատ էջեր ու տողեր կրծատել ես, մի ճայն հանե՞լ եմ, չէ՞: Չեմ հասկանում՝ ինչպես եղավ, որ այդ էջը թողիր:

Ես պատմեցի լսածս. Լու Անշելոսի օրիորդաց վարժարանը երեկո է կազմակրպում և դիմում է Շահիսաթունուն, խնդրում մասնակցել: Դերասանը, որ գամկած էր անկողնուն, ուղարկում է մի նամակ, որ գրել էր թատրոնի մասին:

Փափազյանը լսում էր ուշադիր, կարեկցանքով լի:

Ասացի նաև, որ իր նամակում խոսել է այն մասին, թե հայ թատրոնը անկում է ապրում, թեև նա շատ մեծ դեր ունի ազգահաստատման գործում լեզվապահպանման տեսակետից: Բայց վերջում ասել է, թե անկարելի է անկումը մի թատրոնի, որ աշխարհին տվել է երեք ալնպիսի հսկա, ինչպես Աղամյանը, Սիրանույշը և Փափազյանը:

— Ճի՞շտ...

Հազիվ բացականչեց Փափազլանը և այլս չկարողացավ շարունակել խոսքը, ծայնը խեղդվեց կոկորդում:

— 1932-ին, որ Փարիզում էի, առաջին ներկայացման՝ Օթել-լ, ֆրանսերեն, ֆրանսիացի դերասանների հետ, «Օդեոն» թատրոնում ինքը հետևեց հագնվելուս, իր ձեռքով դիմահարդարեց ինձ, կողքիս մնաց կովիսներում մինչև առաջին մուտքս ու ասաց. «Քեզ տեսնեմ, Հայաստանը թող աչքիդ առաջ լինի»:

* * *

Մի երեկո զանգահարեց.

— Ձե՞ս կարող գալ ինձ մոտ:

— Ի՞նչ կա:

— Անհետածգելի գործ:

— Խսկ եթե վաղը երեկոյան գամ:

— Անկարելի է:

— Վաղը ցերեկով գամ:

— Անկարելի է:

— Վահրամ Գամերովիչ, հոդված եմ գրում, վաղը առավոտյան պետք է հանձնեմ:

— Գիշերը կգրես, արի անպայման, իմ գործն անհետածգելի է. ուզում եմ խորհրդակցել հետդ:

Գնացի:

Սկզբում բարե-աստծու բարին, հետո քեֆ ու հալ, վերջապես հազար ու մի հարց, բայց ոչ մի խոսք այն գործից, որի համար կանչել է:

Արդեն ժամը ուշ է, շուտով գիշերվա 12-ը կլինի: Կեր եմ կենում, բայց ելի չի ասում, թե ինչու է ինձ կանչել: Ստիպում է նըստել:

— Հա՛, գիտես ինչի՞ մասին էի ուզում հետդ խոսել: Ասա խնդրեմ. ի՞նչ պիտի լինի մեր թատրոնի վիճակը:

Ու սկսվեց մի զրոյց, որ կարող էր և՛ վաղը տեղի ռնենալ, և՛ մյուս օրը, և՛ մի ամիս հետդ:

Նստեցինք մինչև գիշերվա ժամը երեքը:

Երեկոյան դեմ ծանապարհվեցի Փափազյանի մոտ: Հայելու առաջ կանգնած փողկապն էր կապում: Այստեղ էր նաև Արման Կոթիկյանը:

Հետաքրքրվեցի, թե ուր են պատրաստվում գնալու:

— Կոնսերվատորիա, հանդիպման: Չե՞ս գա մեզ հետ:

Գնացի: Կոթիկյանը Ներկայացրեց դերասանին այնպես, ինչպես այդ արվում է սովորաբար, բայց մի մանրամասնություն կար նրա խոսքի մեջ, ըստ իս այնքան կարևոր, որ անհրաժեշտ է պահպանել, ու ես տուն գալուց հետո գրի առա:

Կոթիկյանը, կամենալով Փափազյանին Ներկայացնել առավելապես օտարների գնահատությամբ, պատմեց 1932-ին փարիզյան հյուրախաղներից մի դրվագ:

Փափազյանը պետք է բեմ բարձրանար Օթելլոյի դերում ֆրանսերեն՝ «Ատելլե» թատրոնի դերասանների ընկերակցությամբ:

Փափազյանը, ինչպես պատմեց Կոթիկյանը, խնդրում է վերջինիս իր հետ թատրոն գալ փորձերի:

— Սուազին օրը ուժինորը (անունը չեմ հիշում) Ներկայացնում է Փափազյանին «Օթելլո» Ներկայացման մեջ զբաղված դերասաններին: Փափազյանը Նեղվում էր և իմ տպավորությամբ մի փոքր էլ վախեցածի նման էր: Ուժինորը իր բեմադրության գլխավոր սկզբունքները բացատրելուց հետո անցավ միզանսցեններին: Ու թեև նա հայ ողբերգակին առաջարկեց սրբագրել, փոփոխել, եթե ուզում է, որ իրեն հարմար լինի խաղալ, բայց հայ դերասանը լուր լսում էր: Մյուս փորձին սկսեցին հարցեր տալ, իսկ երրորդ օրը բոլորը նստած էին, բացի Փափազյանից: Զկար առաջին օրվա կաշկանդվածությունը, արտիստն իրեն ազատ էր զգում և բացատրում էր, թե ինչ է ուզում ինքը: Զորրորդ օրը վիճակները բոլորովին փոխվել էին. դրության տերը արդեն Փափազյանն էր: Ուշադիր լսում էին նրան, հետաքրքրված և, ծիշտն ասած՝ ինձ համար Էլ Նորություն էր ընկերոջս պաշարի այդպիսի մեծ չափը և մանավանդ ինքնատիպ մեկնությունները կերպարների ու նրանց միջևներած փոխհարաբերությունների: Այլևս ոչ մի կասկած չունեին ֆրան-

սիացի արվեստակից ընկերները, որ Փափազյանի խաղը գրավելու է Փարիզի դժվարահած հանդիսատեսին:

Դրանից հետո Կոթիկյանը պատմեց առաջին ներկայացման թողած տպավորությունը, մեջբերեց ֆրանսիական մամուլի բարձր գնահատությունը և այլն:

* * *

Լուր հասավ ինձ, որ Փափազյանը սրտի ուժեղ նոպա է ունեցել ու պառկել է: Դա 1965-ի հունվարի 16-ին էր:

Շտապեցի մոտք:

— Զեմ հասկանում ինչ է պատահել, որ այսօր այնքան մարդեկավ ու գնաց, ինչպես ոչ մի օր:

Դադար:

— Զի՞նի լուրջ հիվանդ եմ ու ես ոչինչ չգիտեմ:

Առանձնացա Ասահիտի հետ, իմանալու, թե բժիշկներն ինչ են ասել:

— Ասացին, որ ինֆարկտ է— շշնչաց Ասահիտը:— Եվ զգուշացրին ինձ, որ հիվանդը պառկած է մնալու բավական երկար, մի տարի, գուցե նույնիսկ ավելի, պառկած ժամանակն էլ չպետք է շարժվի:

Մի փոքր հետո.

— Եվ պատկերացնում ես, բժիշկների գնալուց մի ժամ էլ չեր անցել, որ Վահրամն սրտներեց պառկելուց, վերմակը թափով նետեց մի կողմ և ընդուստ քայլերով մոտեցավ պատուհանին ու երկար դիտում էր փողոցի շարժումը:

Փափազյանը երկար պառկեց, երկի մի տարի, նույնիսկ ավելի:

1966-ի մարտի 5-ին տեղի պիտի ունենար թատրոնի բացումը:

Թատերասրահը լեփլեցուն էր: Շատ մարդ կար նաև բեմում, իսկ թատրոնի դերասանները գրեթե բոլորն էլ եկել էին: Դեռ վարագույրը չեր բացվել, որ հայտնվեց Փափազյանը՝ լավ հագնված, գեղեցիկ ինչպես միշտ: Բոլորը մասցին զարմացած, մանավանդ որ ամենքին հալտնի էր, որ բժիշկներն արգելել էին նրան տանից դուրս գալ:

113

— Ինչպե՞ս կարող էի տանը մնալ այսպիսի երանելի մի օր:
Ժպտաց:

— Վերջապե՞ս, վերջապե՞ս:

Չհասկացանք, թե ինչի մասին է խոսքը:

— Հայ դերասանի երազանքը կատարված է: Հայ դերասանը
միշտ էլ երազել է իր թատրոնն ունենալ և չի ունեցել: Սա առաջին
անգամն է:

— Ինչպես թե առաջին անգամը,— զարմացավ ներկա գտնը-
վող դերասաններից մեկը:

— Ակգրում դաշնակցականների պառլամենտի շենքը տրամա-
դրվեց թատրոնին: Հետո՝ իին բոլշևիկների ակումբը: Տի՞շտ է: Այդ
շենքերից ոչ մեկը չի կառուցվել որպես թատերական շենք, որպես
մեր մայր թատրոնի շենք, սա առաջինն է: Եվ լավն է:

Ասաց ու նայեց շուրջը:

Բոլորին իրավիրեցին գրավելու իրենց տեղերը: Մարտիրոս
Շարյանը և Վահրամ Փափազյանը Օլգա Գոլազյանին առան ի-
րենց մեջտեղն ու նստեցին նախագահությունում:

Վարագույրը բացվեց:

Եվ ամեն անգամ, երբ ճառախոսներից որևէ մեկը տալիս էր
Փափազյանի անունը, դահլիճը թնդում էր ժափերից:

Երբ հանդիսավոր մասը վերջացավ, և վարագույրը փակվէց,
բեմում եղած մարդիկ ցրվեցին, Փափազյանը մնացել էր իր տեղում
նստած: Տիսուր էր: Մոտեցա իրեն:

— Տեսնես խաղալո՞ւ եմ այս բեմում: Այդ բախտին էլ կար-
ժանանա՞մ, թե...

* * *

Գնացել էի Լենինգրադ, Օլգինո՛ Փափազյանին այցելության:
Թեև հունիսի վերջերու էին, բայց գիշեր-ցերեկ անձրւ էր գալիս:

— Զե՞ս նյարդախանում այս անվերջանալի անձրնից, այս խո-
նավությունից:

— Երևակայիր, որ ոչ սիրում եմ անձրւը, մտաբերում եմ Տեր-

յանին, միալարությունը հանգստացնում է ինձ, խաղաղություն է բերում հոգուս:

Մի փոքր հետո.

— Թիֆլիսի հայ դերասանները Ռոստով են եկել Ներկայացումներ տալու և «այրվել» են: Երեկ հեռախոսով կապվեցին, թե արի, մեզ հանի ես նեղ վիճակից:

— Գնալո՞ւ ես:

— Երևի ոչ, բժիշկների հետ խորհուրդ արի: Ասին, թե վիճակս այնպես է, որ կարող եմ գնալ ու խաղալ, բայց հայտնի չէ, թե հետո ինչ կլինի: Ասում են՝ հազիվ ենք ոտքի կանգնեցրել:

— Բժիշկները ծիշտ են ասում:

— Ես ել գիտեմ, որ ծիշտ են ասում, բայց տղաները մեղք են, ես ել որ օգնության չհասնեմ, ով է նրանց ձեռք բռնելու:

Երրորդ օրն է, որ Լենինգրադում եմ: Անձրևները շարունակվում են: Առավոտ է: Փափազյանն ու ես սեղանի շուրջ նստած գրուցում ենք: Սենյակում երևում է ժաննան:

— Սալրդ ո՞ւր է:

— Փայտ են բերել ձմեռվա համար:

— Եղ լավ է, բայց մեղք ենք, մի ժամ է նստած սպասում ենք, թե նախածաշ կտաք: Կանչիր մորդ:

Եկավ Մարիան:

— Փայտ են բերել, պա՛պ, մի ամբողջ բեռնատար մեքենա: Զմեռը վառելիքով ապահովված ենք:

— Որտեղի՞ց են բերել:

— Թատրոնից:

— Որտեղի՞ց:

— Թատրոնից:

— Չեմ հասկանում, — զարմացավ Փափազյանը:

— Դեկորներ են:

— Դեկորնե՞ր:

Ապշեց Փափազյանը:

— Եվ դու մտադիր ես ձմեռք դրանք վառարան գցել ու այրել:

— Այո, ի՞նչ կա որ:

— Խիղջդ էլ հանգիստ կլինի:

— Իսկ ինչո՞ւ չէ:

— Լսիր, դու դերասանուիի ես, հասկանո՞ւմ ես, դերասանուիի, որ խաղացել է այդ դեկորներով շրջապատված, ծիժաղել ու լացել և հանկարծ, դեկորներն այդ, որ քեզ կյանք են տվել բեմում, պետք է քո իսկ ծեռքով այրվեն:

— Հայրի՛կ, դրանք իին դեկորներ են, այլևս անգործածելի: Ես չվառեմ, մի ուրիշն է վառելու, ի՞նչ տարբերություն:

— Թող ուրիշը վառի, բայց ոչ Փափազյանի աղջիկը, ոչ դերասանուիին:

— Չեմ հասկանում:

Զարմանում էր Մարիան:

— Այո՛, չես ել հասկանա, որովհետև դուք դերասաններ չեք, այլ թատրոնում ծառայողներ:

Մի պահ լուելուց հետո.

— Եթե ուզում ես, որ ես տանը մնամ, ապա անմիջապես մարդ կանչիր և հետ բեռնիր փալտը, թող տանեն նրան, ով կարգադրել է վառելիք դարձնել դեկորը: Արա այդ, եթե չես ուզում, հիվանդ տեղովս վեր կենամ ու շահնամվեմ ալստեղից:

Մարիան մի հոգոց հանեց, բայց խոստացավ հոր ասածի պես վարվել ու դուրս գնաց:

Փափազյանը կարծես հանգստացավ: Բայց մեկ-մեկ նորից էր հուզվում:

— Ինչ չեի տեսել, այն էլ տեսա:

Կամ՝

— Պատկերացնո՞ւմ ես, Փափազյանի տանը դեկորներ են վառում, երսակայելու բա՞ն է, դու ասա:

* * *

Հետաքրքրվեցի նոր գրքով, որը դեռ չգիտեր, թե ինչպես է կոչելու, մի-երկու վերնագիր առաջարկեցի՝ «Իմ Օթելլոն», «Օթել-

լոն և ես», «Օթելլոն, ես և ուրիշները»: Ասաց, թե կմտածի: Շատ չի մնացել, երևի հազիվ մի ամսվա աշխատանք, և գիրքը պատրաստ կլինի:

— Այդ գիրքն էլ որ լուս աշխարհ տեսնի, կարող եմ հանգիստ աչբերս գոցել:

Ու կարծես պատկերացրեց իրեն այդ վիճակում, գլուխը ետ գըցեց, աչբերը փակեց: Գունատ-գունատ էր: Մի պահ, հազիվ միերկու վայրկյան, ալդպես մնաց, հետո իր ասածից սոսկահար, բացեց աչբերը, շուրջը նայեց, տեղից պոկվեց և, ասես, իրական դրությունը ստուգած լինելու համար, քայլեց սենյակում ետ ու առաջ: Եվ արագ, կարծես վանելով մահվան միտքը, որպեսզի թույլ չտա ժամանակ անցնելու, խոսեց այն մասին, թե այդ գիրքն ավարտելուց հետո ինչ է ծրագրում անել՝ նովելների մի ամբողջ շարք, մեծ վեպ:

* * *

Ամեն անգամ հանդիպելիս խոսք է բացվում այն գրքի մասին, որ նվիրված է լինելու Օթելլոյին: Կամ ես եի հետաքրքրվում ընթացքով, կամ ինքն էր անդրադառնում դրան, պատմում, ասում, թե ուր է հասել:

Մի օր պատմեց, թե ինչպես է մտադիր ավարտել:

Երբ գիրքը լուս տեսնելուց հետո ծանոթացա՞ տեսա, որ հեղինակի միտքը մի այլ վերջվածքի վրա է կանգ առել: Շատ ցավեցի և որոշեցի, գոնե հիշողությամբ, վերականգնել նրա պատմածը:

Կարդուցին, իտալական բանաստեղծ, մի օր այցելում է Թոմազո Սալվինիին: Այն ժամանակ պետք է որ ութսունը անց լիներ: Ժեր էր արդեն և վաղուց այլևս բեմ չէր բարձրանում: Գարնան առաջին օրերն էին: Բանաստեղծը ողբերգակին գտնում է իր տան պատշգամբում, բազկաթոռում ընկղմված, մի գիրք ձեռին:

— Այդ ի՞նչ եք կարդում մաեստրո:

— «Օթելլո»:

— Շեքսպիրի՞ն:

— Հապա էլ ո՞ւմ:

Բանաստեղծը տարակուսած նայում է դերասանին:

— Երկար տարիներ Օթելլո խաղալուց, այս դերով աշխարհով մեկ փառավորվելուց հետո, ամբողջ պիեսը համարյա անգիր իմանալուց հետո մի՞թե դուք կարող եք պահանջ զգալ նորից անդրադառնալու ողբերգությանը:

— Այո՛, իհարկե: Կարդում եմ և տեսնում, որ նոր, միայն հիմա եմ հասկանում, թե ինչպես պետք է Օթելլոյի դերը խաղալ:

Փափազյանի եղրակացությունը.

— Գրեցի գիրքս, գրեցի հիսուն տարի Օթելլո խաղալուց հետո, երեք հազարից ավելի անգամ այդ դերով բեմ բարձրանալուց հետո և, ծիշտ ու ծիշտ Սալվինիի նման, միա՛յն հիմա, հիմա՛ հասկացա, թե ինչպես կարելի է խաղալ:

* * *

Մի անգամ ել անդրադարձավ Անգլիա գնալու իր ցանկությանը:

— Թող պետությունը զինվորագրի ինձ և մեջքիս սուր կապած ուղարկի Անգլիա՝ մեծ բանաստեղծի հայրենիքը:

* * *

Խոսք բացեցի դերասանական ներկա ուժերի մասին. Կամենում էի իմանալ, թե ում մասին ինչ կարծիքի է:

— Երիտասարդներից ամենաշնորհալին Ֆրունզիկն է: Եթե գլխին մարդ լինի՝ շատ առաջ կգնա: Բնությունը նրան տվել է ավելի, քան մեկ ուրիշի: Ստացականը քիչ է: Բացի այդ, միօրինակության վտանգի առաջ է կանգնած, մեկ էլ չգիտի, թե որտեղ կանգանի: Խոկ ընդհանրապես առատորեն օժտված է:

Մի փոքր հետո.

— Լավն են Վարդուհին և Սետաքսյան: Շատ հեռուները գնալ չեն կարող, բայց համակրելի են իրենց տարբերությամբ: Սետաքսյան փայլով է վերցնում, Վարդուհին ներքինով, առաջինը տեխնիկապես ավելի վարժ է, քան երկրորդը, բայց սա ել գերազանցում

Ե նրան գեղարվեստական հոտառությամբ: Մետաքսյալի սահմանը Նինան է, Վարդուհունը՝ Զոսին: Երկուսին էլ սիրում եմ, միայն թե և՛ մեկը, և՛ մյուսը պետք է ավելի մոտենան խոսքի բնական հընչմունքին:

Հարցորի Բաքկեն ՚Ներսիսյանի մասին:

— Ամենաարտիստիկն է մյուս բոլոր դերասաններից, և՛ արտաքին տվյալներն են լավ, և՛ ներքինը, բայց ցավալի է, որ, չնայած հաջողությանը, չհասավ այն բարձրության, որի վրա պետք է լիներ հիմա:

Ես ասացի, թե դեռ ժամանակ կա, գուցե կհասնի:

— Չե՛, սիրելի՞ս, կյանքը ցուց է տվել, որ տաղանդավոր դերասանը իր գլուխագործոցները ստեղծում է մինչև քառասուն տարեկանը, իսկ նա, կարծեմ, բավական անց է այդ տարիքից:

Մի օր անդրադարձավ Ռոն-Ժուանի իր կատարմանը:

Հայտնեցի իմ տպավորությունը:

Լեց ու ապա նկատեց.

— Հավատա խոսքիս, որ եթե չիներ Արմենյանը, հազիվ թե իմ Ռոն-Ժուանը լիներ այն, ինչ եղավ: Շատ եմ պարտական նրան: Գիտե՞ս, ընդհանրապես այդ գործին չկարողացանք գնահատել: Եվ չեմ հասկանում, թե ինչո՞ւ. թերևս պատճառը բնավորությունն է, բայց մի՞թե մենք մի այնպիսի անլուսավոր ժամանակներում ենք ապրում, որ չկարողացանք գործի վաստակը տարբերել մարդու բընավորության գործից:

Խոսք բացվեց Հայկական թատերական ընկերության կից բացվող դրամատիկական ստուդիայի մասին:

— Ստուդիան իր կյանքը պետք է Մոլիերով սկսի. առանց Մոլիերի նոր թատրոնի հիմք դնել չի կարելի. Երիտասարդ դերասանը շատ բան կարող է սովորել Մոլիերից: «Ազահը» հոյակապ գործ է:

Հակոբ Սիրունին եկել էր Երևան: Փափագ ուներ տեսնել իր վաղեմի ընկերներին ու Շանոթներին: Դրանցից մեկը Փափազյան էր, որի հետ սովորել էր Մուրադ-Շաֆալելյան վարժարանում:

Ես հանձն առաջ Սիրունուն ուղեկցել Փափազյանի տուն. Ճանապարհին հարցրի՝ ծի՞շտ է, որ Փափազյանը ինչպես ինքն է հավատացնում, մի երկու տարով ավելի մեծ պիտի լինի, քան իր հայտնի դառած տարիքը:

— Ոչ:— Ասաց նա, — շփոթում է: Ինձնից երկու տարով է մեծ, ես 1890-ին եմ ծնվել, նա երկու տարի առաջ:

Հանդիպելիս գրկախառնվեցին: Մի պահ կարծես միմյանց բան չունեին ասելու, բայց այդպես էր թվում առաջին հայացքից: Ակսվեց գրուցք: Նրանց միտքը թռավ գնաց հեռուները: Նկատի ունենալով Ներկայությունս, անցան այնպիսի խոսակցության, որ ինձ էլ հետաքրքիր լիներ: Տեսնելով, որ դա հարկադրական մի բան է երկուսի համար, ես Ներողություն խնդրեցի, թե շտապ գործ ունեմ ու հետացա, որ իրենց մայրամուտին մոտեցող երկու հին ընկերներ միտք մտքի տան, հիշեն անցածն ու գնացածը, մի պահ վերադառնան դեպի իրենց մտերմությունն ու միատեղ արկածները, որոնց ոչ վկա չի եղել այն ժամանակ ու չպիտի ել լինի հիմա, երբ դրանց վրայից տարիներ են գլորվել ու անցել:

Երբ հրաժեշտ տվի, երկուսի աչքերի մեջ շնորհակալ մի հայցք էր նստած.

Սունդուկյանի անվան թատրոնում բեմադրվեց Կրոնինի վեպի փոխադրությունը՝ «Բրոուդիի ամրոցը»: Բրոուդիի դերը հանձնվեց Գուրգեն Զանիբեկյանին:

Փափազյանը դիմում է թատրոնի դիրեկտոր Ժիրայր Հակոբյանին ու ցանկություն հայտնում Բրոուդիի դեր խաղալու: Դիրեկտորը չի կարողանում միանգամից մերժել, բայց մտածում է, որ Փափազյանն այլևս Փափազյան չէ, որ նորա համար դժվար կլինի

Նոր դեր սովորել, այն էլ ալդքան մեծ, և մանավանդ որ Զանիբեկ-յանն էլ հաջողություն ուներ, արժե՞ր, որ նրա համբավի վրա ստվեր ընկներ:

Մի քանի օր հետո Փափազյանը նորից է դիմում: Նույն անորոշ պատասխանը: Եվ այսպես մի-երկու անգամ էլ: Մի օր Փափազյանը պահանջում է իրեն կտրուկ պատասխան տալ՝ այո կամ ոչ: Թատրոնի դիրեկտորը պարզաբանում է իր միտքը:

— Լսիր, յավոր' մ,— ասում է արտիստը, հազիվ զսպելով Վըրդովմունքը,— ես Փափազյանն եմ: Հասկանո՞ւմ ես՝ Փափազյանը: Ու եթե դիմում եմ քեզ, ապա նրա համար միայն, որ ընդունված կարգը պահպանեմ: Իսկ թե խաղա՞մ պիտի, թե չե, արածս սիսա՞լ ե, թե ձիշտ, իմ որոշելու բանն է: Կան մարդիկ, որ իրենց արածի պատասխանատուն իրենք են, միայն իրենք: Ես այդ մարդկանցից եմ:

Ասում է, ու, չսպասելով պատասխանի, թողնում-գնում է:

Մյուս օրը թատրոնում հայտարարվում է, որ Փափազյանը պետք է մուտք գործի «Բրոուիի ամրոցը» ներկայացման մեջ, որպես Բրոուիի դերակատար:

Մի օր հարցրի.

— Բոլորը խոսում են քո գեղեցկությունից: Ես ել նրանց հետ: Ուզում եմ իմանալ քո կարծիքը. քո ժամանակվա դերասանների մեջ կա՞ր մի ուրիշը, որին քեզնից գեղեցիկ համարեիր:

— Կար, Շահիսաթունին. սրա գեղեցկության մեջ մի կրակ կար, որ ես երբեք չեմ ունեցել:

* * *

1965-ին սկսեց թելադրել «Համետը՝ ինչպես տեսա» գիրքը: Սկզբում թելադրում էր Կնոջը՝ Անահիտին: Երբ սա անկողին ընկավ, ասպարեզ եկավ մի ուրիշ Անահիտ, Մանվելյան ազգանունով, և շարունակեց գրել վարպետի թելադրաժը:

Այդ տարվա հոկտեմբերին էր, որ մի օր Փափազյանն ասաց, թե ինքը դրամի կարիք ունի և չի՝ կարող, արդյոք, արվեստի ինստիտուտը օգնել իրեն, ինքը պատրաստ է որևէ բան գրել:

— Ինչո՞ւ չե, իսկ ի՞նչ կգրես:

— «Դոն-Շուան»:

— Կարելի է, անշուշտ, բայց ինչպե՞ս ծևակերպենք: Եթե դեմ չե՞ս՝ գրի «Արքա Լիր»: Նախ դա ինձ հիմք կտա ծևակերպել քեզ շեքսպիրագիտական կենտրոնի աշխատակից: Հետո քեզ համար էլ լավ կլինի՝ «Օթելլոն» լուս է տեսել, հիմա գրում ես «Համլետը»: «Լիրն» էլ որ գրես՝ կստացվի շեքսպիրյան տրիլոգիա:

Փափազյանը ոգևորվեց:

— Լավ ես ասում, երբվանի՞ց փող կտաս:

— Հենց այս ամսից: Համլետը վերջացնելուն շա՞տ է մնացել:

— Կեսի վրա եմ. բայց դա ի՞նչ կապ ունի:

— Մեկը վերջացրու, որ մյուսը սկսես:

— Զարմանալի մարդ ես. ես քեզ ասում եմ, որ մեկը մյուս-սին չի խանգարի: Դու կարո՞ղ ես ինձ մի խելքը գլխին աղջիկ տալ՝ գրագետ ու պատրաստված. կարո՞ղ ես, ուրեմն՝ շատ լավ: Երեկոյան կրելադրեմ «Համլետը», ցերեկով՝ «Լիրը»:

Ուղարկեցի ինստիտուտի աշխատակիցներից մեկին: Մի քանի օր թելադրեց և ասաց, թե հարմար չե: Ուղարկեցի ուրիշին, սրան էլ չհավանեց: Ուղարկեցի, վերջապես, իմ ասպիրանտին՝ Անելկա Գրիգորյանին: Գոհ մնաց և սրան թելադրեց մինչև վերը:

Փափազյանը մի օր ասաց.

— Ես չեմ ուզում մեռնել, երկի ոչ ոք էլ չի ուզում մեռնել:

Բոլոր ասողները, թե իրենց համար մեկ է, վաղը կմեռնեն, թե մի քանի տարի հետո՝ անկեղծ չեն: Ոչ ոք չի ուզում այս աշխարհից հոժարակամ գնալ: Նկատված է, որ իրենց վրա ծեռք բարձրացնող-ները վերջին պահին զղում են, խնդրում են փրկել...

Եվ միտքը շարունակեց այսպես.

— Բայց եթե մեռնել, ապա միայն այնպես, ինչպես այդ պատահեց Համբարձումի հետ:

Խոսքը Խաչանյանի մասին է, որին շատ էր սիրում և որը մահացել է «Երկիր հայրենի» Ներկայացման ժամանակ, բեմագետության մեջ, դիմահարդարված բեմ մտնելուց մի քանի րոպե առաջ:

Հիշում էր նաև Ռուզան Վարդանյանի մահը, բայց ամենից ավելի «տպավորություն» էր թողել նրա վրա Միքայել Թավրիզյանի մահը, մահ Նվազախումբը դեկավարելիս, պուլտի մոտ, բուռն շարժման պահին, երբ աջ ձեռքը մեկնվել էր դեպի վեր՝ հնչյունի հետեւից...

— Մարդ պետք է այդպես մեռնի: Ես շատ բան կտայի բեմում՝ խաղի ժամանակ մեռնելու համար:

Ես նրան ասացի, որ Մարի Նվարդը մահացել է բեմում Մարգարիտ Գոթեի դերը կատարելիս: Եվ հետաքրքիրն այն է, որ հերոսուհու մահը զուգադիպել է դերասանուհու մահվան:

— Ինչ ես ասում. զգիտեի:

Եվ տարբեր օրեր նա ինձ պատմել էր տալիս նույնը որիշների Ներկայությամբ, նաև այն պահին, երբ միայն ես ու ինքն էինք միայն:

* * *

Եվ մի օր՝ Փափազյանի խաղի ժամանակ հիշեցի մեր այս զըրուցը:

1967-ի դեկտեմբերի 14-ին էր: «Իմ սիրությ լեռներում է» Ներկայացումն էր: Խաղում էր Մեք-Գրեգոր, որը, ինչպես հայտնի է, մեռնում է: Երբ նա մահացավ, Վարդերեսյան-Զոնին մոտեցավ և մի փոքր բարձրացրեց ձեռքը, որն ընկավ այնպես անկյանք, որ շատերը թատերասրահում, այդ թվում նաև ես, կարծեցինք, թե Փափազյանն իսկապես մահացել է: Իսկ Ներկայացումը շարունակվում էր: Երբ Բեն-Ալեքսանդր-Բարկեն Ներսիսյանն ասաց. «Այս մարդը մեր ժամանակի շեքսպիրյան ամենամեծ դերասանն էր», բարձրացավ այնպիսի ժափահարություն, ինչպես երբեք չէր եղել: Մեք-Գրեգորին շալակեցին ու տարան: Կյանքի ոչ մի նշույլ չկար: Այդպես միայն դիակն է լինում:

Վարդերեսյանի խաղում վախեցած շփոթ կար: Ու եթե դա համընկնում և համապատասխանում էր այդ պահի բեմական ապրումին ըստ պիեսի, ապա Արուս Ասրյանը հետագալում ասում էր, որ ինքը հավատացել է, թե տեղի է ունեցել ամենասարսափելին: և խաղում էր, հազիվ զայելով արցունքները և զարմացած էր, թե ինչու վարագուրը չեն փակում:

Երբ ներկայացումը վերջացամ, և ժափահարությունների վրա Փափազյանը բեմ եկավ, հանդիսատեսը «ազատ շունչ» քաշեց և ապա ուրախացած, որ դերասանին հաջողվել է իրեն խաբկանքի մեջ պահել, որոտընդուստ ժափահարությանը միացան ցնժագին կանչերը՝ «բռավո՛»:

Դա Փափազյանի վերջին ներկայացումն էր Սունդուկյանի անվան թատրոնում...

* * *

Սունդուկյանի անվան թատրոնի հետ Փափազյանը մեկնել էր Բեյրութ: Նրա կնոց՝ Անահիտի, առողջական վիճակը ծանրացավ և նրան հարկավոր եղավ տեղավորել հիվանդանոցում: Բժջկական միջամտություններն անզոր եղան, և նա մահացավ դեկտեմբերի 30-ին, ժամը 4-ին, ծիշտ այն օրը, երբ մի ժամ հետո, ալսինքն՝ ժամը 5-ին, սունդուկյանցիններով լի սավանակը վարեցք կատարեց Երևան օդանավակայանում: Դիմավորողները ծանապարհին, մինչև տուն հասնելը, նախապատրաստել էին Փափազյանին, ասելով, թե Անահիտի վիճակը ծանր է: Փափազյանը տնից զանգահարում է հիվանդանոց՝ Անահիտի առողջական դրությունն իմանալու և այնտեղից անզգուշաբար հայտնում են իսկությունը:

Զանգահարեց Խաչատոր Եսայանը և, մոտավորապես ժամը 10-ին գնացինք Փափազյանի տուն: Մենակ էր, նրա մոտ միայն Հարությունն էր, մի երիտասարդ, որի խնամքին էր թողել Փափազյանը հիվանդ Անահիտին և որը ոչինչ չէր խնայել Անահիտին ոտքի կանգնեցնելու համար: Մի փոքր հետո եկավ նաև Բոստանջյանը, որ Փափազյանների տանու բժիշկն էր:

Թաղումը նշանակվեց հունվարի 3-ին: Նկատի ունենալով, որ

Փափազյանը մի տարվա չափ տառապել էր սրտի հիվանդությունից, և բժիշկները ակամա էին համաձայնել, որ նա արտասահման ծանապարհիվ, ընկերների մի խումբ հարմար գտավ արգելել դերասանին մասնակցելու թաղմանը: Մտաժում էինք, թե մի բան էլ նրան կարող է պատահել, մանավանդ բոլորին լավ հայտնի էր, թե նա ինչպես ժանր է տանում նոյնիսկ օտար մարդու, ել ուր մընաց հարազատի թաղումը: Որոշվեց, որ կմնա տանը և մի երկու հոգի էլ նրա հետ, իսկ հուղարկավորությունը տեղի կունենա ժամը 3-ին, անատոմիկումից:

Փափազյանի հետ մնացել էր Անահիտի բարեկամներից մեկը, որի անունը չեմ հիշում, դերասան Աշոտ Ներսիսյանն ու եւ:

Շրջապատել էինք ծաշարանի կլոր սեղանը: Փափազյանը նըստած էր մեջքով դեպի պահարանը, որի վրա ժամացույց էր դրված:

Խոսափում էինք հանգուցյալի մասին խոսելուց: Ինքն էլ չէր խոսում: Տարբեր հարցեր, զանազան խնդիրներ. տպավորությունն այնպես էր, որ ոչինչ չի պատահել:

Հանկարծ Փափազյանը երկու ծեռքով գլուխը բռնեց ու հառաչեց.

— Տարա՞ն, տարա՞ն...

Չհասկացանք:

Ի՞նչ տարան, ո՞ւր տարան:

— Անահիտին, գերեզմանատուն, հողին պահ տալու:

Աչքս ընկավ ժամացույցին: Ժամը երեքն էր: Ոչ իմ թեկին, ոչ էլ մյուս Ներկաների, ժամացույց չկար: Բայց նա զգաց. թեև խոսում էր մեզ հետ, իսկ հոգով այնտեղ էր, հուղարկավոր բազմության մեջ: Ու երբ գլուխը բարձրացրեց, նրա աչքերը խոնավ-խոնավ էին:

* * *

1965-ի գարնանն էր: «Լիրը» ավարտելու վրա էր, երբ մի երեկո անախորժ խոսակցություն տեղի ունեցավ իմ և նրա միջև Անահիտ Մանվելյանի ներկայությամբ:

Հետաքրքրվեցի, թե «Լիրը» երբ է հանձնելու ինստիտուտին, զարմացավ, թե ինստիտուտն ի՞նչ կապ ունի «Լիրի» հետ: Հիշեցրի մեր պայմանավորվածությունը:

Պարզվեց, որ նա այդ գիրքը խոստացել է «Հայաստան» հրատարակչությանը, նույնիսկ պայմանագիր է կնքել և կանխավծար ստացել:

Իհարկե, վերջիվերջո ինձ համար պետք է միևնույն լիներ, թե ո՞վ է հրատարակելո՞ւ՝ Ակադեմիա՞ն, թե «Հայաստան»։ Կարևորն այն էր, որ նա գրեր ու գիրքն ել լուս տեսներ: Այդպես եմ մտածում իհմա, բայց այն ժամանակ, ծիշտն ասած, ոչ միայն զարմացած էի, այլև վրովված: Եվ ինձ,— թող խոստովանություն լինի, — թույլ տվի մի երկու կոպիտ արտահայտություն: Նա ել չհամբերեց և վիրավորեց ինձ: Ու մենք գժտվեցինք: Մի ամիս, նույնիսկ ավելի, ո՛չ նա էր զանգ տալիս, ո՛չ ես: Բայց հետո, երբ հաշտվեցինք, խնդրեց դրան այլևս չանդրադառնալ:

1968-ի հունվարի 6-ին, այսինքն իր ծննդյան օրը, Փափազյանը բեմ էր բարձրանալու Մեք-Գրեգորի դերով: Թեև ներկայացումը հայտարարվեց, բայց տեղի չունեցավ. Փափազյանն իրեն վատ էր զգացել ու հրաժարվել էր խաղալուց:

Այդ օրը, երեկոյան ժամին Փափազյանին նվիրված ռադիոհաղորդում էր կազմակերպված: Թատերագետ Լևոն Խալաթյանի բնութագրական խոսքին հաջորդեց Փափազյանի ելույթը, որի համար օգտագործել էին վաղուցվա գրառումներից. Համլետից մի հատված, Օթելլոյից, Լիրից և հետո՝ Սիհամանթոյի «Թաղումը»:

Անելիա Գրիգորյանը, որ այդ ժամին մոտն էր եղել, ասում էր, թե Փափազյանը նստած գահավորակի ծայրին, լսում էր իր ծայն ու լաց լինում...

* * *

Իր պարտքը մարելու նպատակով՝ հանձնեց «Լիր արքայի» իր թարգմանության սկզբում մեքենագիր, հետո նաև ծեռագիր օրինակը: Երևի մի օր կիրապարակվի դա և հետաքրքիր նյութ կտա արտիստի կյանքի և գործի ուսումնասիրությամբ զբաղվողներին:

Թարգմանությունը մեծ մասամբ արել է ռուսական խմբերի հետ կատարած իր թատերական շրջապտույտների ժամանակ:

Սեկ-մեկ ծեռագիրը թերթում եմ ես: Բաց էջերից մեկում կա մի այսպիսի խոստովանություն.

«Ժամը առավոտյան չորսն է,— գրում է Փափազյանը:— Արխանգելսկում եմ: Գիշերը խաղացի 219-րդ ներկայացումը՝ «Լիր արքա»՝ վերջին տասն ամսվա ընթացքում: Քունը չոքել է կոպերիս. լուսը բացվում է, իսկ սիրտս խավար է: Արվեստը գնում է անել Շանապարհով դեպի անդունդ: Մի քանի տարուց մի մարդ չի մնա, որ կարողանա այս տիտանային գործը մարմնավորել, անձնավորել: Այսօր քառասունչորս տարի է, որ մաքառում եմ հանուն մեծ արվեստի, հոգնել եմ, բայց ինձ այրող հրդեհը չի ուզում հանգչել, չնայած որ ո՞չ քաղաք, ո՞չ երկիր, ո՞չ ցեղ և ո՞չ ազգ չմնաց երկրի երեսին, որ այդ կրակից տաքացրած չլինեին իրենց սրտերը: Իմ բարի, անուշ, համեստ ժողովուրդ, ուր էլ որ աչքերս փակեմ, վերցրու ինձ ու ծոցումդ պահիր»:

Այս գրել է նա 1951-ի օգոստոսի 15-ին ու հետո էլ ավելացրել՝ «փոքր բան է մարդը, և նրա աշխարհը՝ ոչինչ»:

Տեսնես ով է դառնացրել նրան այդ օրը և ինչի համար, որ արտիստը մտատանց գիշեր է անցկացրել, ընկնելով մոայլ հուսահատության մեջ:

* * *

Հիվանդության օրերն եին: Այցի գնացի: Այնտեղ էր Արփենիկ Խաչանլանը: Մի փոքր գրուցից հետո հարցրի, թե իիշո՞ւմ է, արդյոք, Նինային:

— Որտեղից գիտես այդ անունը:

Զարմացավ Փափազյանը:

Ու պատմեց հետևյալը.

— Վրացուիի էր, մի չքնաղ աղջիկ, ավելի գեղեցիկ արարած երևի չեմ տեսել: Ասես Նկար լիներ՝ աչքերը, շրթունքները, ժապավենակապ հոնքերը. իիմա էլ հայացքիս առջևն է: Նոր էի եկել Թիֆլիսի, երիտասարդ տղա էի, ինչպես ասում էին՝ բավական հետա-

քըրքիր: Շանոթացա այդ աղջկա հետ, մի քիչ ֆրանսերեն գիտեր, խոսեցինք մինչև ուշ գիշեր: Ինչի՞ մասին, հիմա չեմ հիշում, իսկ ինչի՞ մասին չեն խոսում սիրահարվածները:

Անցան օրեր:

Մի օր ինձ կանչեցին նրա հայրը և մայրը: Մի գեշ նախազգացումով մտա նրանց տուն: Նինան չկար, նրա ծնողները տխուր եին ու մտահոգ: Զբաղեցրի ինձ առաջարկված աթոռը և անհամբեր էի լսելու, թե ինչու են կանչել:

Հայրը նստած էր թթվադեմ, իսկ մոր աչքերին արցունք կար:

— Նինային բա՞ն է պատահել:— Չհամբերեցի ես:

— Երիտասարդ, — ասաց հայրը, — այստեղ օտար մարդ չկա, մենք Նինայի ծնողներն ենք, սա ել նրա մորեղբայրն է: Բոլորս ել հարազատ մարդիկ ենք, կարող ենք անկեղծ բացատրվել:

Մի վայրկյան լուսվոյուն:

— Մեզ հայտնի է քո և Նինայի մտերմությունը: Ես ու մայրը կամենում եինք իմանալ, թե քո մտադրությունը լո՞ւրջ է:

— Սիանգամայն:

Բավական կտրուկ եղավ պատասխանս:

— Մի նեղանա, որդի՞, — մեղմ վրա բերեց հայրը:— Դերասան մարդ ես, ի՞նչ իմանանք: Գուցե ենպես ժամանակ ես անցկացնում: Դու ել լավ գիտես, որ դերասանները մի քիչ ուրիշ տեսակ ժողովուրդ են:

Ասացի, որ իմ մտադրությունները լուրջ են, և կարող են միանգամայն հանգիստ լինել: Պետք է ամուսնանամ և շատ շուտով:

— Դա մեզ հայտնի է: Նինան ասել է, և դրա համար ել քեզ խնդրեցինք նեղություն քաշել ու գալ:

Նորից լուսվոյուն:

— Իսկ դուք դե՞մ եք:— Ասիամբեր հարցրի ես:

— Զե, դեմ չենք, որդիս: Բայց մի բան կա, որ դու պետք է իմանաս և նոր միայն որոշես՝ ամուսնանա՞ս, թե ոչ:

Լարվեցի:

— Քեզ հայտնի՞ է, որ Նինան հիվանդ է: Շատ ժանր ու վտանգավոր թոշախտ ունի:

Ես ապշահար եղա:

— Գիտեի՞ր:

— Ոչ:

— Նինան չի՝ ասել քեզ.

— Չի ասել:

— Իսկ հիմի՝ ինչ ես ասում, հիմի, երբ գիտես, որ հիվանդ է, այն էլ, ինչպես բժիշկներն են ասում՝ անհույս: Հիմի՝ էլ որոշմանդ վրա ես մնում:

— Իմ վծիոր վծիոր է: Ես Նինային սիրում եմ այնպես, ինչպես որ կա:

Ես անկեղծ եի, միանգամայն անկեղծ. բայց հուզված եի մինչև հոգու խորը:

— Կեցե՞ս, որդի, հալալ լինի մեր աղջիկը քեզ: Բայց ես չեմ ուզի, որ դու միանգամից որոշում ընդունեիր. լավ կլիներ մտածեիր, երկար մտածեիր: Ամուսնություն, ընտանիք, երեխաներ. կատակ բան չեմ:

— Մտածելու ոչինչ չունեմ, որոշումս որոշում է,— պոռթեկացի ես:

— Լսիր ինձ, երիտասարդ:

Միջամտեց մորեղբայրը, որ մինչ այդ լուր նստած լսում էր: Դա կիրթ արտաքինով մի մարդ էր:

— Որ դու ուզում ես ամուսնանալ հիվանդ աղջկա հետ, քեզ պատիվ է բերում, բայց մտածիր, օֆ�շտ ես վարդում: Դու դերասան ես: Ես չեմ տեսել քեզ, բայց ասում են, որ քո ապագայի հետ մեծ հույսեր են կապում: Եթե ալդպես է, դու մենակդ իրավունք ունի՞ս, արդյոք, տնօրինելու այդ հարցը: Կարծում եմ, որ ոչ: Դու այլս քեզ չես պատկանում, այլ բեմին, թատրոնին, ուստի հասարակությունս է քո տերը: Հասարակության շահերը պահանջում են, որ դու առողջ լինես, երկար ապրես: Իսկ այնպես, ինչպես դու ես որոշել, կյանքդ Վտանգի տակ ես դնում:

Ես չեմ հաշտվում Նինայից հրաժարվելու մտքի հետ, չեմ պատկերացնում ոչ իմ կյանքը առանց իրեն, ոչ էլ նրանք՝ առանց ինձ: Ես գիտեի, թե Նինայից հրաժարվելը ինչ հարված կլինի նրա համար: Ու մերժելով-մերժում էի ինձ տրվող խորհուրդը: Բայց խոսկցությանը խառնվեցին նախ հայրը, ապա նաև մայրը:

Ես համառում էի:

Դուների մեջ երևաց Նինան: Գունատ էր, աչքերը վառվում էին:

Ես ընդառաջ ելա նրան, և նա հազիվ շշնչաց, թե մեծերը Շիշտ են ասում, ու ինքն ել նրանց նման է մտածում:

Ամբողջ գիշերը չընեցի:

Մյուս օրը ժամադրություն նշանակեցի Նինային: Եկավ: Աչքիս ավելի նիհարած երևաց, ավելի գունատ:

— Սենք, — ասաց նա, — այլսս չպետք է հանդիպենք: Հանդիպումները բորբոքում են զգացմունքները: Ավելի լավ է միմյանցից հեռու լինենք: Ալդաս ավելի շուտ կմոռանանք իրար:

Ասաց շշուկով, ու զգացի, որ ինքն ել չի հավատում իր ասածին, թե ես մոռանալու եմ իրեն կամ ինքը՝ ինձ:

— Ոու պետք է ներես ինձ, — շարունակեց նա, — ներե՞ս, որ ես քեզ ոչինչ չեի ասել հիվանդությանս մասին: Վախենում էի, շա'տ էի վախենում:

Շշնչաց ու մթան մեջ անեացավ: Ասես կար ու չկար:

Ինձ համար դժվար էր առանց Նինայի, բայց այլսս նրան չըտեսա: Անցա խանութի մոտով, հաճախ իբր պատահմամբ հայտնը-վում էի նրանց տառ առաջ, չկար ու չկար: Հետո իմացա, որ անկողին էր ընկեր, տարել էին Աբասթուման:

Վեց ամիս հետո նա այլսս չկար: Երբ իմացա՝ մազերս էի փետում: Ոչինչ աչքիս չեր երևում, ո՛չ բեմ, ո՛չ մարդիկ, ո՛չ հասարակություն, ո՛չ հաջողություն: Ինձ զգում էի հանցավոր, մի գեղեցիկ եակի խորտակման պատճառ:

Գտա քրոջը, խնդրեցի՝ տարավ ինձ գերեզմանատուն: Երկար կանգնեցի հողաթմբի առաջ:

Ու դրանից հետո աշխարհ անցա, շատ գերեզմանատներ ոտք դրի, ու ամեն անգամ երբ հանդիպում էի տասնութ-տասնինը տարեկան մի աղջկա գերեզմանի՝ ծաղիկ էի դնում, մի հատիկ ծաղիկ, ծերմակ վարդ, ծերմակ մեխակ, շուշան, ի նշան այն մաքրության, որի պատկերն ինձ համար Նինան էր:

Տարիներ անցան, ու երբ ես խաղացի Արբենին, Նինային գըրկելիս հիշում էի իմ Նինային, իմ լա՛վ, իմ ամենագեղեցիկ ու անմոռանալի՝ Նինային:

Ես այդպիսի գեղեցիկ աղջկա չեմ տեսել: Հիմա ել աչքիս առցն են նրա վառվող աչքերը, գունատ այտերը, կիսաբաց շրթունքները, երջանկության ու բախտի, սպասումի թրթիոը վրան...

Ահա և ամբողջը, սիրելի՞ս:

Լոեց: Գլուխը կախ գցեց: Եվ մի փոքր հետո.

— Ինչո՞ւ քքքեցիր սիրոս: Ո՞վ է տվել քեզ իրավունք մտնելու հոգու խորքերը, բացելու գաղտնարանների դռները և տեսնելու թե ո՞վ կա այնտեղ կամ ի՞նչ կա այնտեղ:

Նորից լուրջուն:

— Նիսայի հիշողությունը մի հոգեկան հայտնություն էր ինձ համար, միայն ինձ հայտնի, մանավանդ, որ այլևս չկա մեր սիրո վկաներից գելք մեկը:

Լոեց, հետո ավելացրեց.

— Պատմեցի ո՛ աղքատաց...

* * *

Սի օր Փափազլանը հայտնվում է Գրականության և արվեստի թանգարանի թատերական բաժնում: Աշխատակիցներն անմիջապես շրջապատում են նրան: Մի փոքր հետո Փափազլանն ասում է, թե եկել է խնդրելու, որ մի կարծ ժամանակով Օթելլոյի իր խալաթը տան իրեն:

— Թանգարանից ոչինչ դուրս չի տրվում:

— Ընդամենը մի շաբաթով,— խնդրում է Փափազլանը:

— Ընկեր Սելիխսեթյանին ասե՞լ եք:

— Խե՞նթ եմ, ինչ է, ես նրան լավ գիտեմ: Մի բան, որ ընկապ ձեռը, ել ետ կտա՞: Դե՛, դուք ավելի գթասիրտ եք, քան նա:

— Առանց նրա թույլտվության չենք կարող տալ:

— Այդ ժիշտ է: Բայց եթե նրա թույլտվությունը լինի, ել ինչո՞ւ էի ծեզ այսքան խնդրելու:

Փափազլանի ասածը տրամաբանական է թվում, և այն, որ մեծ ողբերգակը դիմում է անմիջապես իրենց՝ շոյում է նրանց ինքնասիրությունը: Փափազլանը նկատում է այդ:

— Նա չի ել իմանա: Արտաշատում պետք է Օթելլո խաղամ: Մի շաբաթից կրերեմ, տեղը կը նեք:

Աշխատակիցները մի փոքր էլ դիմադրում են, բայց, ի վերջո, տալիս են խալաթը, չանդրադառնալով այն բանին, որ Փափազլանը վաղուց է, ինչ Օթելլոյի դերով այլևս բեմ չի բարձրանում:

Մի ամիս է անցնում: Փափազլանը չի բերում խալաթը: Ամիսներ են անցնում, բայց Փափազլանը ո՞չ գալիս է, ո՞չ էլ մի որիշի հետ ուղարկում: Թանգարանի աշխատակիցներն անհանգստանում են: Զանգահարում են արտիստին և խնդրում խալաթը բերել: Խոստանում է, բայց չի բերում: Նորից են զանգահարում, նորից է խոստանում: Եվ այս անգամ էլ խոստումք մնում է խոստում: Եվ հաւականալով, որ սխալ են կատարել, խալաթը երբեք ետ չեն ստանա, աշխատակիցները Մելիքսեթյանին հայտնում են այդ մասին, սպասելով, թե հիմա դիրեկտորը կպայթի իրենց մեղավոր գլխին: Մելիքսեթյանը, ի զարմանս աշխատակիցների, հանգիստ լսում է, մի-երկու հարց տալիս, կշտամբող ոչ մի խոսք չի ասում և լուր հեռանում է: Աշխատակիցների համար անսպասելի էր իրենց դիրեկտորի պահվածքը:

Սյուս օրը Մելիքսեթյանը նորից է հայտնվում թատերական բաժնում, հավաքում է իր շուրջը «մեղավոր» աշխատակիցներին:

— Այլևս չզանգահարեք Փափազլանին խալաթի համար:

Բոլորը զարմացած նայում են դիրեկտորին:

— Կարիք չկա:

Նկատում են, որ Մելիքսեթյանի աշքերը թախծոտ են:

— Փափազլանը, ինչպես գիտեք, վաղուց արդեն չի խաղում: Ու եթե խալաթը վերցրել է, ապա նրա համար, որ վերիիշի, վերապրի իր երբեմնի փառքը: Մի րոպե անգամ չեմ կասկածում, որ նա տանը այդ խալաթով է միշտ: Դա ոչ միայն պատրանք է, որ նա ստեղծում է իր համար, այլ հոգեբանական մի ջանք՝ չբաժանվելու Օթելլոյից, որի դերը, հազարավոր անգամներ խաղալով, դարձել է նրա երկրորդ եսը: Մի մեղադրեք և հասկացեք արտիստին: Հարգենք նրա այդ «թուլությունը»:

Երբ Փափազլանին թաղում էին, նրա դագաղի վրա անփութ նետված էր այդ խալաթը:

* * *

Մի գրույցի ժամանակ մի միտք հայտնեց, հիմա չեմ հիշում, թե ինչ:

— Հետաքրքի՞ր է:

Խոստովանություն լինի՝ միտքն այդ մի առանձին տպավորություն չեր գործել, բայց հաստատեցի, որ հետաքրքիր է: Նրա հետո ունեցած իմ խստ անկեղծ փոխարարերության հակառակ, ինքս ել չհասկացա, թե ինչու ալրաբս՝ ասացի: Երևի նրա համար, որ չվշտացնեմ:

— Արժե՞ գրի առնել:

Նահանջելու տեղ չկար:

— Իհարկե, արժե:

Ասացի, թեև համոզված չեի:

Մի ժամ եր անցել, թե մի փոքր ավելի, եկավ Անահիտ Մանվելյանը, և նա նորից դարձավ ինձ.

— Ուրեմն՝ ասում ես՝ արժե:

Չսպասելով խոսքիս՝ քարտուղարություն առաջարկեց թուղթ և գրիչ վերցնել:

Ու թելադրեց...

Եվ ինչ. այն միտքը, որ ինձ մի բան չեր թվում, թելադրելու պահին ընդարձակվեց, խորացավ և առկայթելով, մի այնպիսի կենդանություն և փայլ ստացավ, որ մտածում էի, թե ինչպիսի սխալ գործած կլինեի, եթե, անկեղծ գտնվելով, արգելք հանդիսանայի մի փայլուն մտքի աշխարհ գալուն:

Հածախ եմ անդրադարձել այդ դեպքին, պատմել ուրիշներին: Գտել են, որ պատմածն դեպքը հետաքրքիր է անպայման: Ու եթե գրի առա ու թղթին հանձնեցի, ապա այն պատճառով, որ հոգեբանների ուշադրությունը հրավիրեմ այն բանի վրա, թե ամեն մարդ երևի ունի իր ստեղծագործական տարեքը, որի մթնոլորտում նրա միտքը լարվածության գերագույն չափերի է հասնում:

Ուրեմն՝ Փափազյանի համար խոսքն ու գրուցը մի վիճակ երև և բոլորովին այլ՝ թելադրելու պահը:

* * *

Մտադիր էի մեկնել Լենինգրադ՝ Օլգինո, Փափազյանի ամառանոցը: Նայելու էի, թե արտիստի գրադարանում Շեքսպիրի հետ կապված ինչ գրքեր կան, որ նա խոստացել էր նվիրել Երևանի շեքսպիրյան գրադարանին:

— Զեռագիր նյութե՞ր էլ ես հավաքում, — հարցրեց նա.
— Ինչպես չե՞
— Ուրեմն, լսիր, բարեկա՞մս. գրքերը ներքնումն են, առաջին հարկում, պահարաններում, գրակալների վրա, իսկ երկրորդ հարկի միջանցքում դրված մի սնդուկ, որը շատ բան կա՝ աֆիշներ, ժրագրեր, պիեսներ: Ուշադիր եղիր և կգտնես մի տետր՝ «Թիմոն Աթենացու» թարգմանությունը: Ես եմ թարգմանել երիտասարդ տարիներիս: Կարծում եմ, որ քեզ կզբաղեցնի:

— Ե՞րբ ես թարգմանել:

— Թվականը չեմ հիշում: Պետք է որ տասական թվականներին արած լինեմ, մինչև հեղափոխությունը:

Լոեց:

— Գուցե վրան գրված լինի: Նայիր:

Մեկնեցի Լենինգրադ, բավական թվով գրքեր գտա՝ ֆրանսերեն, ռուսերեն և իտալերեն: Գտա նաև Շեքսպիրին նվիրված մի ձեռագիր, ընդամենը մի քանի եջ, սկսված, բայց չափարտված, իսկ «Թիմոն Աթենացու» ձեռագիրը չգտա:

Երբ վերադարձա՝ շատ ցավեց չգտնելուս համար:

— Անահի՞տ, — դարձավ կնոջը, — դու տեսել ես այդ ձեռագիրը, այնպես չե՞:

— Տեսել եմ, — արձագանքեց անկողնում հիվանդ պառկած Անահիտը: — Տետրի շապիկի վրա կարմիր թանաքով գրված է՝ «Թիմոն Աթենացի»:

Մինչև հիմա ել այդ ձեռագիրը չի գտնվել:

* * *

Կիրակի օր էր: Ցերեկվա ժամերից մեկը: Ջրուցում էինք: Դուան զանգ լսվեց, և մի փոքր անց եկավ տիկին Ֆրանսուազը, որը Անահիտի մահից հետո մի-երկու ամսի չափ խնամեց հիվանդ Փափազյանին:

— Երկու միլիցիոներ են եկել:

Չայնի մեջ տագնապ կար:

— Ներս հրավիրիր:

Միլիցիոներները սենյակ մտան:

- Ո՞վ է տանտերը:
- Ես:
- Քայլովետի որոշումը խախտված է...
- Փափազյանը չթողեց խոսք վերջացնել:
- Նստե՛ք, նստե՛ք: Գործի մասին հետո: Ֆրանսուա՛զ, դահվե մը պատրաստե ընկեր միլիցիոներների համար:
- Աշխատանքի ժամանակ չի թույլատրվում, ընկե՛ր:
- Գիտեմ, սիրելիս, բայց որ ասում եմ՝ նստեք, ուրեմն՝ նստեք:
- Փափազյանն այդ բոլորն ասաց առարկություն չվերցնող ձայնով: Միլիցիոներները ենթարկվեցին:
- Ե՞հ, ինչպե՞ս եք, ամուսնացա՞ծ եք, ամուրի՞:

Մի փոքր անհարմար զգալով պաշտոնական պարտականությունների կատարման պահին մասնավոր գեղում ունենալու համար՝ միլիցիոները ասացին, որ ամուսնացած են:

Ֆրանսուազը սուրճ բերեց: Միլիցիոներները ըմպում էին սուրճը և պատասխանում Փափազյանի հարցերին, թե քանի՛ երեխա ունեն, որտե՛ղ են ծնվել, ծնողները կա՞ն, թե չե՞:

Միլիցիոներները սուրճի դատարկ գավաթներն իրենցից մի փոքր հեռացրին: Փափազյանը դա ընդունեց որպես նշան այն բանի, որ ժամանակն է մտերմական գրուցից անցնելու իրենց այցի պաշտոնական կողմին: Եվ նա ժայխոր դեմքին խնդրեց բացատրել, թե քաղխորհրդի այդ ինչ որոշում է խախտվել և ինչ կապ ունի դա իր հետ:

Բացատրությունն անմիջապես տրվեց: Փողոցին նայող պատըշգամբում լվացք է կախված:

- Եհ, չի՞ կարելի:
- Ոչ: Դրա մասին քաղաքովետը հասուկ որոշում է կալացրել:
- Մեղավորը Ֆրանսուազն է: Ֆրանսուա՛զ,— կանչեց նա:
- Դուների մեջ երևաց Ֆրանսուազը՝ մեղավոր արտահայտությամբ: Միլիցիոներների դեմքերը նորից խստացան:

- Մենք չենք եկել պարզելու, թե ով է մեղավորը,— ասաց մեկը:
- Եկել ենք տուգանելու, — վրա բերեց մյուսը:
- Տուգանելո՞ւ:
- Զարմացավ Փափազյանը:

Կողքս նստած միլիցիոների ականջին շշնչացի, թե ով է իրենց դիմաց նստածը, բայց ոչ մի ազրեցություն չունեցավ դա, մանավանդ որ առանձնապես տրամադիր չէին լսելու, թե ինչ եմ ասում:

— Օրենքի առաջ պատասխանառու են բոլորը:

— Տիշտ է: — Հաստատեց Փափազյանը և անմիջապես հարցրեց.

— Տուգանքի չափը:

— Երեք ռուբլի:

— Միայն այդքա՞ն:

— Այո, երեք ռուբլի:

Փափազյանը մի երեքանոց դրեց սեղանին:

— Այդպես չի կարելի, — ասաց միլիցիոները:

— Էլ ի՞նչ կա:

— Պետք է ակտ կազմենք:

Միլիցիոները սեղանին դրեց մի հարցաթերթիկ, գրիչը ծեռքն առավ ու հարցրեց.

— Ազգանո՞ւնը:

Փափազյանի հոնքերը վեր թռան:

— Փափազյան:

— Անո՞ւնը:

Փափազյանը զարմանքից սառեց. մի՞թե իրեն չեն ծանաչում: Հետո նա համարեց, որ դա ընդունված ծևական մի արարողություն է, ոչ մի կապ չունի ծանաչել-չանաչելու հետ, և, իրեն զսպելով ասաց՝ «Վահրամ», բայց երբ պատասխանին հետևեց միլիցիոների նոր հարցը՝ «ինչո՞վ եք գրավվում», համբերությունը հատավ:

— Բավակա՞ն է, — գոռաց սաստիկ գունատված և ծեռքն այնպիսի ուժով զարկեց սեղանին, որ միլիցիոներները նստած տեղից վեր թռան:

— Ռո՛լս, անմիջապե՞ս դուրս: Վերցրեք ծեր երեք ռուբլին և չբվեք:

Միլիցիոներները շտապեցին դեպի դուրս: Ես ուղեկցում էի և բացատրում, թե ով է Փափազյանը: Փափազյանը իմ ետևից գոռաց.

— Ասա նրանց, որ ես Գերագույն սովետի դեպուտատ եմ:

Այս որ լսեցին միլիցիոներները, շրջվեցին, ներողություն խընդ-

ոեցին և այն է՝ ուզում էին երեք ոուբլիանոցը սեղանին դնել, բայց
Վիրավորված Փափազյանը նորից գոռաց.

— Ուուք չէի՞ք ասում, որ օրենքի առաջ բոլորը պատասխանա-
տու են:

Միլիցիոներները շվարած կանգ առան:

Երեկոյան մոտն էի, և նա զղում էր, որ միլիցիոների հետ
ալդպես պահեց իրեն:

* * *

Սովոր մեծարանքի ու հիացումի, սովոր, որ մարդիկ պիտի գո-
հանան բեմից տվածով և կյանքում իրենից ոչինչ չպահանջեն, վեր-
ջին ամիսներին ապրեց մեսակության դրաման: Այլև չէր խաղում
ու եթե խաղում էր, այլև այն չէր, ինչ մի ժամանակ: Փափազյանը
զգում էր ինչ է կատարվում, բայց չհասկանալու էր տալիս: Ու չէր
դիմանում: Նրան տեսնում էինք տիսուր ու թախժոտ, հուսահատ,
երբեմն՝ ժառա եղած՝ պատրաստ՝ թողնելու և փախչելու: Բայց ո՞ւր,
երևի Լենինգրադ, այնտեղ էին աղջիկն ու թոռը: Եվ գնում էր: Գը-
նում էր երբեմն երկու ամսով, երբեմն, իր հայտարարությամբ՝ հա-
վիտյան, այլև երբեք Երևան չդառնալու հաստատ որոշմամբ: Անց-
նում էր մեկ, ամենաշատը երկու ամիս. չէր դիմանում, հայրենի հո-
ղը ձգում էր, Երևանի կարուտը մաշում էր, ու վերադառնում էր: Վե-
րադառնում էր ու ասում, թե ինքն էլ չի հասկանում, թե ի՞նչ է կա-
տարվում իր հետ:

* * *

Երբ մի անգամ էլ տրտնջաց, որ իրեն հիվանդատես չեն գալիս,
ես, իմ կարծիքով բավական նուրբ, հասկացրի, թե այդպիսի այցերը
փոխադարձ են լինում, ինքը ուշադիր չի եղել ուրիշների նկատ-
մամբ, իհմա էլ այդ ուրիշներն են անուշադիր:

— Նախ՝ սխալվում ես, ո՞ւմ նկատմամբ ուշադիր չեմ եղել:
Այո, քեֆի, ուրախության սեր չեմ ունեցել, խուսափել եմ: Այդ ծիշտ
է, բայց այդ ով է հիվանդ եղել, որ չեմ անհանգստացել: Ինչքան

հիվանդացել ես՝ եկել եմ, ժիրայրը հիվանդ է՝ ամեն օր զանգ եմ տալիս, հետաքրքրվում ու խորհուրդներ տալիս: Արմանը անկողին ընկափ, գնացի տեսության, դու հո լավ գիտես, որ ես նրանից վըշտանալու, վիրավորվելու պատճառներ բավական ունեմ:

Լոեց: Ես ել ոչ մի ձայն չիանեցի:

— Երկրորդը, սիրելիս, դու մոռանում ես իմ պրոֆեսիան. Ես հիսուն, վաթսուն տարի մարդկանց հետ եմ եղել: Իմ գործը նրանց ժառայելն է. ինձ հետ լաց են եղել, ինձ հետ ժիժաղել: Ներիր այս հավակնոտ մտքիս համար, բայց այդպես է. ի՞նչ նշանակություն ունի, թե ես մարդկանց տանը նրանց ուրախ կամ տիսուր պահին եղել եմ, թե ոչ. Կարևորն այն է, որ մարդկանց երբեք առանց ինձ չեմ թողել և միշտ աշխատել եմ բարձրացնել նրանց հոգին: Դա ել իրավունք է տալիս ինձ պահանջողի դերում լինել:

Մի օր, երբ հիվանդ էր ու մենակ, հեկեկաց, լաց եղավ երեխայի պես: Աչքերից արցունքները վազում էին:

— Այս ի՞նչ փուչ բան է եղել աշխարհ ասվածը:

Հիվանդության օրերին նրան միշտ տեսնում էի Օթելլոյի խալաթի մեջ փաթաթված և ծեռքին ել մեծ, երկարուկ թագբեին էր, որ գործածում էր ներկայացման ժամանակ, երրորդ արարում:

Զանգահարեց Գևորգ Էմինը և լսափողը հանձնեց բժշկուիի Գալստյանին: Բժշկուիին ասաց, թե Փափազյանի առողջական վիշտակը վատ է, և որովհետև ինքը ծիշտ պատկերացում չունի իր ոքրության մասին, որոշել է մեկնել Լենինգրադ: Բժշկուիին խնդրում էր, որ գնամ Փափազյանի մոտ, համոզեմ, որ չգնա: Ասում էր, թե դա պեսը է անել անհապաղ, որովհետև կարող է նույնիսկ ծանապարհին, ինքնաթիրում տեղի ունենալ աղետը:

Սիրտ չարի մենակ գնալ: Հեռախոսով կապվեցի Խաչատոր Եսայանի հետ, որ միասին գնանք:

Խաչիկը Փափազյանին չեր տեսել մի քանի ամիս:

Խաչիկը և Փափազյանը նստեցին թախտին, միմյանց մոտ, իսկ ես նրանց դիմացը: Նկարիչը Փափազյանին գտավ չափազանց փոխված: Խիստ ազդված՝ գլուխը ետ գցել, աչքերից արցունքներ էին վազում:

Համոզել չկարողացանք: Նույնիսկ բարկացավ, թե ի՞նչպես մենք, իրեն մոտիկից ձանաչող երկու մարդ, չենք հասկանում, որ ինքը չի կարող մնալ այստեղ, որ պետք է անպայման, գոնե մեկ ամսով մեկնի, տեսնի աղջկան, տեսնի թռուանը, քայլի իր ամառանոցի պարտեզում, գոնե մի-երկու րոպե կանգնի Թինայի հողաթմբի առջև, իիշի անցածը... իսկ ինչքան շատ բան է կապված Ենինգրադի հետ: Կերպարես, այցի կգան իրեն Ենինգրադի ընկերները, նրանք մենակ չեն թողնի իրեն:

Ասաց ու գլուխը դրեց Խաչիկի ուսին և լաց եղավ:

Հասկացանք, որ անկարելի է համոզել: Իմանալով, որ նա վաղը չե մյուս օրվա համար արդեն տոմս է վերցրել, ասացինք, թե կգանք ծանապարհելու:

— Այդ լավ է, իհարկե, բայց որ վաղը երեկոյան գաք, մի-երկու ժամ դեսից-դենից գրուցենք՝ ավելի լավ կլինի:

Ու հետո ավելացրեց.

— Бого знает, что ждёт меня.

— Ну, Ваграмчик, скажешь? — аսаց Խաչիկը մտերմաբար և միաժամանակ նորից գլուխը ետ գցեց՝ հուզմունքը չմատնելու համար:

* * *

Ինչպես խոստացել էինք Խաչիկն ու ես, գնացինք: Ծանապարհին նկարիչն ասաց, թե ինքը մի կես ժամ ունի, ոչ ավելի, և խընդրեց այնպես անել, որ Փափազյանի մոտից շուտ դուրս գանք: Խոստացա: Գնացինք կես ժամով, բայց մնացինք երեք ժամից ավելի:

Ընդունեց անտրամադիր, մոայլադեմ, նույնիսկ մի չար բան կար հայացքի մեջ:

— Ի՞նչ եք աշխարհը խառնել իրար, ի՞նչ եք մարդկանց ուսի

հանել իմ դեմ: Ի՞նչ է պատահել, ո՞վ ասաց, թե ես հիվանդ եմ, հասկացեք, ես հիվանդ չեմ և շատ լավ եմ զգում ինձ:

Պարզվեց, որ այդ օրը նրա մոտ, բացի բժիշկների մի խմբից, եղել են կուլտուրայի մինիստր Կամո Ուդումյանը և Սունդուկյանի անվան թատրոնի դիրեկտոր Մխիթար Դավթյանը, և բոլորն էլ խոսք-ները մեկ են արել՝ համոզել, որ չմեկնի:

— Ի՞նչ է, վախենում եք, որ մեռնե՞մ: Մեռնում եմ, մեռնեմ: Իսկ թե որտե՞ղ կմեռնեմ, դա իմ որոշելու բանն է, և ոչ ծեր: Հա-կացա՞ք: Հասկացա՞ք, թե չե՞:

Երբ խաղաղվեց, անցանք հազար ու մի հարցի, գլխավորա-պես թատրոնի շուրջ: Եվ այդպես այլևս չանդրադանք ոչ իր հիվանդությանը, ոչ էլ մեկնելուն: Ինչի մասին էլ խոսում էինք՝ միշտ վերադառնում էինք «Լիր արքային», իր այն դերերին, որ խաղա-ցել է Լենինգրադում, հետո՝ իր ոռուսական շրջիկ խմբի հետ:

Աստիճանաբար տրամադրությունը փոխվեց, և հիմա մի քընք-շուրջուն էր իշել վրան, որ առաջ երեք չեի նկատել:

Ինձնից խոսք առավ, որ անպայման այցի գնամ իրեն Լենին-գրադ:

— Քեզ համար էլ լավ կինի, մի փոքր կիանգստանաս, կցըր-վես, կզրուցենք:

Խաչիկն ասաց.

— Վահրա՞մ, ես քեզ լավ գիտեմ, հիմա փախչում ես Երևա-նից, Երևի իսկապես այստեղ մնալ չես կարող: Կիանցնես Լենին-գրադ, կանցնի մի օր, մի շաբաթ, ամենաշատը տասն օր, և չես դիմանա, կվերադառնաս, կուգենաս գալ: Դու այլևս չես կարող ապ-րել առանց Երևանի:

Քթի տակ ծիծաղեց:

— Ծիշտ է: Հենց դրա համար էլ ուզում եմ, որ Ռուբենը գա, Երևանի կարուտը նրանից առնեմ, մինչև կարուտ քաշի ինձ դեպի Երևան:

— Կգաս, չե՞:

Ասաց ու նայեց իմ կողմը, ուղիղ աչքերիս մեջ: Ու թող զար-մանալի չերևա, եթե ասեմ, որ ինձ թվաց, թե տեսնում եմ մահվան ստվերը նրա հայացքի մեջ, ծակատին դրոշմված:

— Ես քեզ նամակ կգրեմ:

Ալդպես էլ չհաջողվեց Փափազյանին համոզել, որ Լենինգրադ չգնա: «Դաք» մտել էր մեջը և առաջվա պես նորից տեղահան էր անում, մղում դեպի հեռուները:

Շանապարհեցինք մարտի 28-ին:

Օդանավակայանում քիչ մարդ կար: Խաշատուր Եսայանն էր, Սխիթար Դավթյանը, Արքենիկ Խաչանյանը իր քրոց՝ Գոհարիկի հետ, Փափազյանի քարտուղարուիին՝ Անահիտ Մանվելյանը, դերասաններից Մամիկոն Մանուկյանը և Անատոլի Թորգոմյանը:

Փափազյանին ուղեկցում էր մի երիտասարդ բժշկուիի՝ Նորա Ալվազյան, որը ծանապարհին օգնություն էր ցուց տալու, եթե պահանջվեր և, բացի այդ, Լենինգրադի բժշկական շրջաններին ներկայացնելու էր հիվանդի վիճակը:

Թվում էր, թե վերջին անգամն ենք տեսնում...

Ինքնաթիռն ող բարձրացավ, ինչպես միշտ: Եվ ինչպես չի լինում ամեն անգամ, տուն դարձանք կոտրված սրտով:

Երևան վերադառնալով՝ բժշկուիին բերեց Փափազյանի երկտողը, որով հիշեցնում էր իր իրավերը՝ մի տասն օրով հյուր լինել իր ամառանցում, Օլգինոյում:

Լենինգրադից հասնող լուրերը մխիթարական չեին: Հեռախոսով կապվեցի դստեր՝ Մարիայի հետ: Ասաց՝ անհույս է, միտքը երբեմն մթագնում, անկապ բաներ է ասում:

Ժտապեցի մեկնել և ապրիլի 21-ին Լենինգրադում էի:

Չորս ժամ քսան րոպե տևեց թոյիքը: Զշտապեցի Օլգինո, վախ կար մեջս, արդյոք ինչ վիճակի մեջ կգտնեմ իրեն: Երկու ժամից ավելի թափառեցի քաղաքում, բայց հետո մտածեցի, որ արածս երեխայություն է, մեկ է՝ գնալու եմ, ել ինչո՞ւ հետաձգել, գուցե օրհասական պահ է և տեղ հասնելս ավելի ծիշտ կլինի:

Իմ դիմաց նստած էր Փափազյանը, ոչ այն Փափազյանը, որին տեսել էի Լենինգրադ մեկնելու նախօրյակին՝ անտրամադիր ու մըռուայլ, հուսահատված, դառնացած, ընդունակ ամեն պահ պարունակուի, ոչ ել օդանավակայանի Փափազյանը՝ թեև ժպտերես, նույնիսկ հակված՝ կատակներ անելու, բայց մահվան ստվերը դեմքին: Իմ դիմաց հիմա նստած էր Փափազյանը, որը եթե չասեին՝ չեիր իմա-

նա, թե իիվանդ է: Շիշտ է, ծեր եր ու խարխլած, աչքերի փայլը խսմրած, բայց նախկինի հետ համեմատած բավական կազդուրված էր, դեմքի արտահայտությունն էլ խաղադ: Դատում էր հանգիստ, հիշողությունը տեղը: Դեպքը եր պատմում, խորհրդաժում և մի անգամ չեղավ, որ մտքի թելը կորցներ:

Մարիամին հարցրի, թե սա ի՞նչ է նշանակում:

— Զեզանից ոչ ոք հորս չի ծանաչում: Նա այնպիսի կամք ունի, որ ուզածը կանի: Եթե վծուց հնարավոր չէ կանգնեցնել նըրան: Իմացավ ծեր գալը և ներքուստ հավաքեց իրեն: Դուք կգնաք՝ եկի նույնը կլինի: Հարազատների մոտ իրեն բարձիթողի է անում: Գալիս են բժիշկները՝ դառնում է ուրիշ մարդ: Եթե կամենա՝ այսօր բեմ էլ դուրս կգա: Թե ինչ կլինի ներկայացումը՝ այլ հարց է, բայց այնքան ուժ, ինչքան պետք է ներկայացումը սկսելու և ավարտելու համար՝ կգտնի իր մեջ:

Լոեց մի պահ, հետո շարունակեց.

— Հավատացե՞ք ինձ, որ եթե նա մինչև իմա ողջ է, ապա իր կամքի շնորհիվ: Նա կարողանում է մահը վանել իրենից, շթողնել, որ մոտ գա: Շիշտ եմ ասում, մի ուրիշ իիվանդ նրա այժմյան վիճակում վաղուց չեր լինի:

Հարցրի, թե ի՞նչ է անում:

— Ոչինչ, բարեկամս, երևակայիր՝ ոչինչ: Ես՝ ու ոչինչ չանեմ, պատկերացնո՞ւմ ես: Մի ժամանակ կարդում էի և բավական շատ, իմա թմրություն է իշնում վրաս, հազիվ եմ հասցնում աչքի անցկացնել «Յումանիտեն», «Ունիտան»: Շատ, շատ բան կա մտքիս մեջ, պետք է մեկը, որին թելադրեմ, իսկ այստեղ ոչ ոք չկա: Այ եթե Անսահիտը այստեղ լիներ, շատ լավ կլիներ, կթելադրեի նովելներս: Սեծածավալ գիրք կլինի, երկի քսանիինգ մամուլ, գուցե նույնիսկ ավելի: Մի-երկու նովել կպատմեմ քեզ, պատահած դեպքեր են բոլորը: Մի մասը մտքիս մեջ է, մի մասն էլ ժամանակին, երիտասարդ տարիներին եմ գրել, շտապ, մշտական վազքիս կարծ դադարներին, վերախմբագրել է պետք, ինչ-որ բան էլ փոխել: Կան և այնպիսիք, որոնց միայն ուրվագիծն եմ քաշել, աչքի զարնող դեպ-

քերը, Նրանց միջև ընկած գործողությունը, իիմա պետք է նովել դարձնել, բնավորություններ մշակել, հոգեբանական անցումներն ապահովել, փոխիարաբերություններ ստեղծել ու պատճառաբանել։ Մի խոսքով՝ մի քանի ամիս է պետք, և գիրքը պատրաստ կլինի։

Կանգ առավ, ծեռքը տարավ դեպի «Ունիտայի» նոր համարը, բայց չբացեց և առաջ տարավ խոսքը։

— Այդ գրքից առաջ շատ կուգենայի Դանթեին անդրադառնալ։ Գևորգին, — Աբաջյանի մասին է խոսքը, — խոստացել եմ գըրել Դանթեի մասին, բացատրել, թե ինչպես եմ հասկանում իտալիո այդ մեժագովուն բանաստեղծին։ Նա ուզում է, որ հանդես գամ հեռուստատեսությամբ։ Շատ երկար բառ է, չե՞ն, կարծում եմ, որ հարկավոր է կրծատել. թերևս հեռացնո՞ւց կամ հեռատեսի՞լ, լավ, դրա մասին թող ուրիշները մտածեն։ Հա՛, Գևորգը կամենում է, որ իտալերեն կարդամ և հետո մեկնաբանեմ։ Կարևո՞ր է։ Ուրեմն դու Ե՞լ ես կարծում, թե պետք է անել։ Ես կարևոր եմ համարում և անպայման կանեմ։ Դանթեին շատ եմ սիրում։ Մի ժամանակ օր չկար, որ ծեռքս չառնեի և մի քանի էջ նորից չկարդայի։

Մի պահ հետո.

— Չե՞ն, պետք է թելադրել, պետք է աշխատել, պետք է, վերջապես, թղթին հանձնել մոտքերս, խոհերս։ Ինչքան ժամանակ է չեմ գրել, չեմ թելադրել։ Շատ բան է շարչրկում միտքս, շատ գրելիքներ կան, բայց ամենից առաջ՝ Դանթեն։ Ա՛յ. Եթե կարողանայիր կարգադրել Անահիտի գալը՝ մեժ բան արած կլինեիր։

* * *

Հարցրի, թե Ե՞րբ է զգացել, որ ինքը գրել գիտե։

— Վաղուց, դեռևս Փարիզում։ Մի օր հիուր էի Կավորչի տանը։ Բավական մարդ կար, այնտեղ էր նաև Արշակ Չոպանյանը։ Մի դեպք պատմեցի, սիրո պատմություն, բոլորը զգացվեցին, իսկ Անահիտը լաց եղավ։ Չոպանյանն ասաց. «Պարոն Փափազյան, դուք պետք է գրեք, պետք է անպայման գրեք, դուք գրող եք»։

— Շատ անհականալի է, թե ինչպես դրանից հետո մարդը կարող է չգրել կամ գրել քսան տարի անց միայն։

Ժպտաց։

— Գիտե՞ս ինչ, դա էլ իր պատճառն ունի:
— Ժամանակ չե՞ս ունեցել, — շտապեցի ես:
— Այո, իհարկե, ժամանակ չեմ ունեցել: Գրելու համար հանգիստ, նստակյաց կյանք է հարկավոր, իսկ ես միշտ վազքի մեջ եմ եղել, թատրոնով կյանքած, թատրոնին անձնատուր և ամեն անգամ, երբ մտքովս անցել է գրիչ առնել ու մի բան գրել, զգացել եմ ինձ դավաճանի դերում: Ինձ թվացել է, թե դավաճանում եմ բեմին, իսկ թատրոնը ինձ համար ամեն ինչ է, թատրոնն այն է, որին երբեք չեմ դավաճանել ոչ մեկ պարագային:

— Իսկ ինչպե՞ս եղավ, որ դա 1954-ին չխանգարեց գրելու «Հետադարձը»:

— Եթե ոչ գիտակցությունս, ապա բնագդս երևի ասում էր, որ մայրամուտիս եմ մոտենում և, դժբախտաբար, այլս այն չեմ թատրոնի համար, ինչ էի:

Մի քանի անգամ անդրադարձավ հոբելյանին: Ես նրան հականում էի: Փափազլանին հոբելյանը, որպես ալդախին՝ պետք չէր: Նա պարզապես երազում էր հանդիսատեսի հետ մի նոր հանդիպում ունենալ: Թեկուզ այլ կերպ, այլ ծևով, թեկուզ վերջին անգամ, բայց այդ հանդիպումը պետք է լիներ: Հոբելյանը մի առիթ էր՝ վերադարձնելու իր հաղթական երիտասարդության օրերից մեկը՝ տեսնել իրեն նորից հասարակության կենտրոնում՝ որոտընդոստ ժափահարություն, խանդավառ բացականչություններ, բեմ նետվող ժաղիկներ... Դերասան էր նա և սիրում էր այդ բոլորը: Շատ էր տեսել, շատ էր վայելել, ավելի, քան որևէ հայ դերասան վերջին կես դարում, բայց դարձյալ ժարավի էր այդ ամենին, որ արտիստի հաջողության անբաժան մասն է կազմում մշտապես, դառնում անհրաժեշտություն, կենսական պահանջ: Դժվար է ասել՝ ում վիճակն է ավելի ժանր, նրանը, ով տեսել է ու վայելել այդ ամենը, և դրանից մասցել է լոկ մի հուշ, թե նրանը, որ երբեք չի հասել փառքի կատարին և չգիտե, թե ինչ բան է դա, բայց երազում է դրա մասին:

Ասաց, թե ինքը երևան կգա երեք օրով միայն, և չի կամենում իշխանել իր տանը, խնդրում է սենյակ վերցնել հյուրանոցում:

— Զսիրեցի բնակարանս: Երբեք լավ չեմ զգացել ինձ այդ տանը, արդյոք, նոր բնակարանս մինչև տարվա վերջը պատրա՞ստ կլինի...»

Նա խոսում էր, իսկ ես մտածում էի, որ թափառումների սովոր արտիստը նորից գլուխ է բարձրացրել և, ըստ երևութին, հոբելյանս էլ դիտում է որպես հերթական մի հյուրախաղ:

— Չեի համաձայնի, որ հոբելյանս արվի, բայց եթե համաձայնությունս տվի և հիմա էլ ուզում եմ ու սրտանց եմ ուզում, ապա նրա համար, որ իմ հոբելյանը չի լինելու, դա կլինի հայ թատրոնի հոբելյանը:

Մի պահ կանգ առավ, զննող հայացքով նայեց ինձ ու ավելացրեց.

— Օ՛, եթե ողջ լինեին Սիրանուշն ու Աբելյանը, իմ թանկագին խաղընկերները՝ Արուսն ու Հասմիկը, Մանվելյանը, Զանանը, Հրաչը Վերջապես, այո, իմ հոբելյանը կլիներ ի՞մ հոբելյանը, սակայն, քանի որ նրանք չկան, մնացել եմ ես և, բնականաբար, ես կընկալվեմ ոչ միայն որպես Փափազյան, այլ որպես մեկը դերասանական հին փաղանգից: Իմ մեջ կտեսնեն նաև նրանց, իմ մեջ կփնտրեն նրանց: Ինձ կմեժարեն, բայց նկատի կունենան նաև նըրանց, իսկ նրանց անդրադառալ, թեկուզ մտքով՝ նշանակում է անդրադառնալ հայ թատրոնին: Եթե Սիրանուշը հայ թատրոնի անուշիկ մաման էր, ապա Աբելյանն էլ հայր էր գալիս ամենքիս: Եկ դիմենք աշակերտական թվանշանների օգնությանը. հոբելյանական մեժարանը տարբեր չափեր ունի ամեն պարագային: Եթե մեժարանքիս չափը պետք է լիներ թվանշաններով, ասենք, թե գերագույնը՝ հինգ, ապա հիմա կլինի հինգ ու խաչ: Զկասկածես մի պահ և իմացիր, որ հինգին գումարված խաչը թեև հասցեագրված ինձ՝ բայց կլինի անցած-գնացած ընկերներիս արդար բաժինը: Դա կլինի մի հավելում, որ կառաջանա նրանց պայծառ հիշատակին տուրք տալու բնական պահանջից:

* * *

Մի օր հարցրեց.

— Ի՞նչ ես կարծում՝ հոբելյանից հետո դժվա՞ր է լինելու վիճակս:

— Ուրիշինը՝ գուցե, բայց քոնը՝ հազիվ թե. դու թատրոնից բացի, մի ասպարեզ ել ունես, գրում ես:

— Ճիշտ է, իրավացի ես, բայց դերասան եմ նախ և առաջ, — խոլ արձագանքեց խոսքերիս: Պատկերացրու մի վայրկյան՝ մարդու ութառուն տարեկան է դարձել, հոբելյանն են անում, մեծարում, հիշեցնում փառքող, փայլող, ամպագողոցող խոսքեր ասում և հետո մնում ես տանը, ծեռքերդ իրար բերած: Ի՞նչ անել. օրվա լրագի՞րն աչքի անցկացնել, թո՞ւղթ բանալ ու եթե մեկը հիշեց ու դուռդ բացեց՝ լավ, իսկ եթե չէ՝ գնա ու ապրիր մեն-մենակ: Տարիների բուռն ու աղմկալի կյանք, հորիզոնից հորիզոն, իսկ հիմա՝ հուշ և ուրիշ ոչինչ: Սոսկալի՛ է...

Լոեց:

— Չե, իսկապես լավ է, որ ես գրել գիտեմ և մի բան կարող եմ անել, հակառակ պարագային սարսափելի կլիներ: Ես չեմ դիմանա, կխենթանալի. ես սովոր չեմ պարապ մնալու:

— Գրելոց բավականություն չե՞ս ստանում:

— Օ՛, մեծ հածուք:

— Մանավանդ որ ընթերցողն անհամբեր է քո նոր գրքերին:

— Հասկանում եմ, հասկանում, բայց դու ել հասկացիր. այնուամենայիվ, նույնը չէ, համենայն դեպս թատրոնի մարդու համար: Թատրոնն ուրիշ է, հասկանո՞ւմ ես, թատրոնը՝ այդ էս եմ: Գիրքն ապրում է գրողից անկախ, ինչպես ծնողի համար նրա զավակը: Եթրասանը թատրոնը կրում է իր մեջ: Ես ամեն ինչ պատկերացնում եմ, բայց թատրոն չլինի՝ այդ մեկը անկարելի է պատկերացնել: Սիրելիս, քեզ լավ հայտնի է, թե ինչպես է միտքս հիմա չարչոկում՝ ի՞նչ պիտի լինի թատրոնի հետ, վաղը, մյուս օր ի՞նչ է սպասում նրան: Գրել թե նկարել նույնն է, բայց բեմում խաղալը նույնը չէ, ոչ, նույնը չէ. ի՞նչ անձարելի հածուք է՝ զգալ քո դիմաց հազարաշքանի մի հրեշ՝ պահանջկոտ, հավակնոտ և կարենալ նրա, այդ հրեշի շլինքից բռնել ու տանել քո հետևից՝ ուր ուզում ես. ի՞նչ երջանկություն է, և ո՞ր արվեստը կարող է դրա հետ համեմատվնել, ի՞նչը կարող է տալ այդ արբեցնող ուրախությունը:

Մի պահ լրելոց հետո, գլուխն օրորելով.

— Մի՛ զարմանա, մի՛ զարմանա բոլորովին, բարեկա՛մս, եթե

վերջերս աշխարհն ինձ երբեմն փուչ է թվում, կյանքը՝ անարժեք մի բան:

— Ով՛ ով,— բողոքեցի ես,— դու իրավունք չունես գանգատվելու: Փառահեղ կյանք ունեցար և գանգատվելու մեղքի պես բան է: Վշտով լի հայացքն ուղղեց ինձ:

— Վերջերս դու դադարել ես ինձ հասկանալ: Ա՛յ հենց դրա համար, որ շա՞տ բանի հասա, դրա շնորհիվ էլ հիմա, երբ այդ բոլորը արդեն չկա, և կա միայն որպես անցյալ, որպես հիշողություն, ա՛յ դրա համար էլ դատարկություն եմ զգում շորւջ և ինձ մնում է միշտարվել, որ կյանքիս այս օրերին մի երկու լավ բարեկամ ունեցա:

* * *

Մի երեկո հարցրի, թե ինչո՞վ բացատրել, որ երբ թելադրում է, շատ ավելի լավ է ստացվում, քան երբ գրիչը ծեռքն է առնում: Արդյոք, ստեղծագործական խառնվածքի հարց է: Այդպես է եղել, օրինակ, նաև Սունդուկյանը:

— Դուք ինձ գրող եք համարում: Ես, ձիշտն ասած, մտցումս ծիծաղում եմ, բայց մտածում եմ, եթե ուզում են՝ թող համարեն: Դերասան եմ, միշտ դերասան եմ, գրելիս էլ դերասան եմ, գրելիս էլ շարունակում եմ խաղալ: Ես կերպար եմ ստեղծում ինձ համար, մտնում նրա եռլթան մեջ ու թելադրելիս ես չեմ, այլ նա է, որ խոսում է: Եվ եթե մեկ-մեկ էլ պատմածիս մեջ անցած-գնացած դեպքն այնպես չեմ ներկայացնում, ինչպես եղել է, ոչ թե նրա համար, որ չեմ հիշում, — թեև այդ էլ է պատահում, — այլ նրա համար, որ կերպարը, որ ես եմ այդ պահին, այլ կերպ է մտածում, այլ բան է զգում, երևակայությունը թելադրում է և տանում նրան մի ուրիշ ուղղությամբ: Գրածս, սիրելիս, նոյն դերասանությունն է, բայց գրական ծների մեջ դրված:

* * *

Հարցրեց մի օր, թե Արևելյան Եվրոպայի ո՞ր երկրներում եմ եղել:

— Միայն Ռումինիայում:

Հետաքրքրվեց, թե ի՞նչ տպավորության եմ: Ասացի, որ համարյա թե չի գիշում Արևմտյան Եվրոպայի մլուս երկրներին:

— Ծիշտ ես:

Մի փոքր հետո:

— Շա'տ ծիշտ ես:

Հեռացրեց մի պահ հայացքը, ապա նորից դառնալով ինձ՝ հարցրեց:

— Իսկ գիտե՞ս, թե ինչու:

Եվ չսպասելով, թե ինչ կասեմ, պատասխան տվեց իր հարցին.

— Հոգու Ռումինիան Հոգոմի գաղութն էր: Եղե՞լ ես Կոստանցա: Տեսե՞լ ես հնագիտական պեղումների ժամանակ գտնված նըմուշները: Հին հոռվմեական մշակույթ է, որ եկել ու թափանցել է Պոնտական ծովի այդ ափերը:

Զարաձծի ժպտաց:

— Մի բանաստեղծ է եղել, անունն ի՞նչ էր, չեմ հիշում, ա'յ, դրան Կեսարը աքսորել է Կոստանցա: Նկատելով բանաստեղծի սիրազեղ հայացքն իր կնոջ վրա՝ քոնել ու քշել է խեղծին:

Հայացքը լարվեց:

— Չե, չեմ հիշում, չեմ կարողանում հիշել անունը: Դու Ե՞լ չես հիշում:

— Գիտեմ, բայց միտս չի գալիս: Արծանն ել դրված է Կոստանցայում, ծովի ափին:

— Լեզվիս ծայրին է անունն ու չեմ կարողանում հիշել:

— Վարպետ, հիշողությունը չի սիրում բռնություն, միտքդ հանգիստ թող ու կիշե՞ս:

— Ծիշտ ես: Չեմ հասկանում, թե դո՞ւ ինչու չես հիշում, երիտասարդ մարդ ես:

— Նախ՝ երիտասարդ չեմ արդեն, հետո, վերջապես, ես ել կարող եմ մոռանալ:

— Հա՛, իհարկե:

Գիշերվա կեսին, մի արթուն պահի, հիշեցի՝ Օվիդիոս: Առավոտյան նախաձաշին ասացի:

— Օ՛, իհարկե, Օվիդիո՞ս,— ուրախ բացականչեց,— Ե՞րբ հիշեցիր:

- Գիշերը, ժամը երեքը կլիներ:
- Ամո՞թ քեզ: Ի՞նչպես էլ համբերել ես, գայիր արթնացնեիր:
- Կարծ դադարից հետո:
- Օվիդիոս, իհարկե՛, Օվիդիոս,— Նորից բացականչեց մի բան գտած մարդու ուրախությամբ, որին հաջորդեց լատիներեն մի երկու քառատող՝ բանաստեղծի գրածներից:

* * *

- Ի՞նչ ես կարծում, հոբելյանից հետո կառավարությանը չխնդրե՞մ ուղարկի ինձ արտասահման: Շատ չե, մի ամսով.

Ասաց ու որսաց իմ զարմացած հայացքը:

- Կարծում ես խաղալո՞ւ համար: Չե, այլևս խաղալ չեմ կարող: Կկամենայի հտալիա գնալ և ուսուցիչներիս հետքերը գտնել: Կկամենայի Ֆրանսիա գնալ, Մարսելում քույրեր ունեմ, կարոտս առնեմ նրանցից: Փարիզում ել Անահիտի եղբայրներն են:

— Իսկ առողջական վիճակի թույլ կտա՞:

- Ի՞նչ է եղել որ, ես շատ լավ եմ զգում ինձ: Բժիշկներին ել մի հավատա, հաճախ չափազանցնում են: Դա նրանց սովորությունն է և ինչ-որ չափով՝ պարտքը: Հետո, վերջապես, դու ել արի հետո, միասին կլինենք: Ինձ համար ել լավ կլինի, քեզ համար ել:

- Իսկ Պոլիս չե՞ս ուզում գնալ, չե՞ս ուզում մի անգամ ել վերիիշել մանկությունդ:

- Որ ձիշտն ասեմ՝ ուզում եմ ու երևի՝ չափազանց, բայց չեմ գնալ:

— Ինչո՞ւ:

- Ստամբուլի թուրքերը միշտ ել իմ մասին մեծարանքով են խոսում: Վերջերս ել,— դեռ Երևանումն էի,— ուադիոյով թատրոնի մասին եին խոսում: Հիշեցին Վարդովյանին, Մնակյանին: Իմ անունն ել տվին՝ «Վահրամ բեյ»: Բայց չեմ գնա, ժողովրդին աղաղակը ականջիս մեջ ե, չի մոռացվում:

* * *

Այս խոսակցության հաջորդ օրը, Երեկոյան դեմ, ասաց.

— Երեկվա ասածիս շատ չհավատաս: Ուսուցիչներ, քույրեր, այնպես էի ասում: Գնալուս պատճառն ուրիշ է:

Լուց:

— Ճիշտն ես ուզում իմանալ: Կամենում եմ վերջապես արտասահմանը տեսնել:

— Ինչե՞ր ես ասում, վարպետ, չեմ հասկանում, ինչպե՞ս թե արտասահմանը տեսնես, երկրագնդի վրա տեղ չի մնացել, որ չլինես:

— Ա՞խ, դու էլ չես հասկանում ինձ: Վա՛ ինձ, ի՞նչ մեղք եմ ու ի՞նչ մենակ:

Գլուխը բռնեց և հուսահատ օրորեց:

— Ես եղել եմ արտասահմանում, շատ տեղեր եմ եղել, շատ տեղեր ել, երևակայիր, չեմ եղել: Բայց դրա մասին չե խոսքը հիմա: Ամբողջ կյանքս վազք է եղել, ինչպես գիտես: Քաղաքից քաղաք եմ անցել, երկրից երկիր՝ առանց շոնչ քաշելու: Իմ բոլոր շրջագայությունները գործ են եղել, աշխատանք, պարտականություն: Երբ Փարիզ եմ հասել ու մի հայտնի սրջարանում նստել, նախաձաշել, ծխել, ըմպել՝ դարձյալ լարված վիճակի մեջ: Մտածել եմ, թե ինչպես նստեմ, ինչպես պահեմ ինձ, որ գավառացու տեղ չընեն: Երիտասարդ տարիներս հտալիայում կամ նոյն Փարիզում չեի մտածում այդ մասին: Իսկ հետո, արդեն ուրիշ էր: Ցերեկը խաղ, երեկոյան խաղ: Միշտ մտածել եմ, թե մի ժողովուրդ եմ ներկայացնում, մի ազգ: Եվ այդ պարտականության մեջ՝ հանգիստ չեմ ունեցել: Հանգիստ պահիս ել՝ օտարության մեջ լարված եմ եղել: Հիմա ուզում եմ գնալ, գնալ անցած կյանքիս հետքերով, բայց արդեն հանգիստ: Ուզում եմ հտալիո փոքր քաղաքներն անցնել, մի-երկու օրով սենյակ վարձել, վայելել տանտիրուիու ծառայելու պատրաստակամությունը, իսկ ամուսնուն խոսեցնել, իմանալ, թե միտքն ինչով է ապրում: Ուզում եմ գնալ սուրբ Մարկոսի հրապարակը, այնտեղ իին, շատ իին սրջարաններ կան: Կա մի սրջարան, ուր Գարիբալդին է եղել, նստեմ ժամերով, նստեմ անվրդով հոգով, չձանաչված, փառքից և աղմուկից հեռու: Հասկացիր, ուզում եմ այնտեղ ինձ զգալ այնպես, ինչպես այստեղ եմ զգում, առանց այն լարումի, որի մեջ էի, միտս էի դրել աշխարհի փառքից մի բեռ մեջքիս տուն դառնալ: Փարիզում ել շատ իին սրջարաններ կան, և ինչ մեծ բավականու-

Թյուն կլինի ինձ համար նստել ու դիտել շուրջս, ինչպես մի պարզ այցելու, մի գավաթ սուրծի առջև, նստել ու խորհել, թե մարդն ի՞նչով է մարդ: Ես գիտեմ, որ իմ այս պահանջի մեջ ինչ-որ հիվանդագին բան կա, բայց ի՞նչ անենք եթե մի այլպիսի անմեղ, թեկուզ առաջին հայացքից փոքր-ինչ արտառոց ցանկություն մտել է ուղեղս և հանգիստ չի տալիս ինձ: Մի՞թե չեմ վաստակել այդ իրավունքը:

Ասաց ու նայեց ինձ:

— Հիմա հասկացա՞ր:

* * *

Ապրիլի 27-ին ծանապարհվեցի Երևան: Բաժանվելիս ասաց.

— Ասում ես հորելլանը նշանակված է 10-ին: Լավ, շատ լավ: Ուրեմն հունիսի ութին կամ իննին կհանդիպենք Երևանում: Զեկուցումդ պատրաստ է, թե նոր ես գրելու: Մի հետաձգիր, խընդրում եմ, մի թողնիր վերջին օրվան: Բո այդ սովորությունը բոլորովին չսիրեցի:

— Վարպետ, ես կգամ քո ետևից, այստեղից միասին կգնանք: Բժշկուհուն ել հետո կբերեմ:

— Բժշկուհուն: Ինչի՞ համար: Ես այն վիճակում չեմ, որ բժըշկուիու կարիքը լինի: Իսկ ինքու արի, այն ժամանակ ոչ թե ինքնաթիռով, այլ մեքենայով կշանապարհվենք: Օ՛, սիրում եմ մեքենայով ժամփորդել: Կդիտենք մեր շրջակա բնությունը, և գիտե՞ս քանի՞ բնություն կփոխվի մինչև տեղ հասնենք:

* * *

... Հունիսի 5-ին Արփենիկ Խաչանյանին թելադրում էի Փափազյանի հորելլանական երեկոյին կարդացվելիք զեկուցումը, երբ զանգահարեցին իսստիտուտից ու ասացին, թե Սարիան հեռախոսով հայտնել է հոր մահը: Ինչքան ել լավատեղյակ էի Փափազյանի վիճակից, բայց բոթը մուրճի հարվածի նման իջավ գլխիս:

Հենց նույն օրը, երեկոյան, կուլտուրայի մինիստրության հանձ-

Նարարությամբ Մոսկվա թուավ մի պատվիրակություն՝ Գուրգեն Բորյան, Մխիթար Դավթյան, Ալբերտ Ասլամազյան, Գևորգ Աբաջյան և ես: Մոսկվայից գնացքով մեկնեցինք Լենինգրադ և ապա մեքենայով Փափազյանի ամառանցք՝ Օլգին:

Դոների մոտ հանդիպեցինք Մարիալին, նրա դստերը՝ Ժաննային, սպասուիուն՝ Վալյալին, որ այդ տանն է տասներկու տարեկան հասակից: Ուրիշ մարդիկ էլ կային: Մտանք այս սենյակը, որտեղ մի ամիս առաջ, սեղանի մոտ նստած զրուցել ենք, կատակել, ծրագրեր կազմել... Սեղանը չկա: Սեղանի փոխարեն՝ դագաղ: Դա Փափազյանը չէ, ուրիշ մարդ է, բոլորովին այլ մարդ: Փափազյանը նա է, որ մեր մտքի ու հիշողության մեջ մնացել է որպես հավերժ կենդանի մի գեղեցկություն: Այդ Փափազյանը պատին փակցված մեծ լուսանկարից ժպտադեմ նայում էր դագաղի մեջ պառկածին: Մեկը կյանքն է, մյուսը՝ մահը: Սահն ու կյանքն իրար կողքի եին, ինչպես կյանքում՝ համարյա ամեն ժամ, ամեն վայրկյան:

* * *

Ես այստեղ պետք է վերջակետ դնեի, եթե ժաննայի պատմաժներից մի երկուսը կարևոր չհամարեի թղթին հանձնել:

— Զեր գնալուց հետո հայրիկի (նա պապին հայրիկ էր կոչում) վիճակը ծանրացավ: Օր-օրի վատանում էր: Թմրություն էր իշնում վրան և անվերջ քնելու պահանջ էր զգում, բայց անկողին չէր մտնում: Վատ էր զգում, բայց բժիշկներից, ինչպես միշտ, թաքցընում էր: Նա կարծում էր, որ եթե ասի լավ եմ՝ իսկապես լավ կլինի: Զեր խոսում մահից ոչ այդ ժամանակ, ոչ էլ դրանից առաջ: Երկու ամսից ավելի այստեղ էր, ու երբեք մահվան մասին չխոսեց: Երբեք չասաց, թե վատ է, երբեք չգանգատվեց վիճակի ժանրությունից, չսասաց, թե ցավ է զգում: Երբ, վերջապես, հասկացավ վիճակի լրջությունը, այլևս չպառկեց, գիշերն անց էր կացնում նստած: Անկողինը նրան վախ էր ներշնչում: Մտաժում էր՝ եթե պառկի, կենթարկվի մահվան, իսկ այսպես թվում էր նրան, թե ինքն է տնօրինում իր կյանքի ընթացքը:

Մի օր այսպիսի բան պատահեց:

Բազկաթոռին նստած, լուր ու մունց, նայում էր լուսամուտից:

դուրս, այգուն, հասակ գցած սոճիներին, որ ինքն էր տնկել մի ժամանակ, եթե ես նոր էի աշխարհ եկել: Հանկարծ թափով ոտքի ելավ, նայեց շուրջը ինչ-որ բան որոնողի հայացքով և իրեն նետեց սենյակից պատշգամբ, այստեղից էլ այգի ու վազեց դեպի տատիկիս հողաթումբը: Շտապեցինք ետևից: Դիմադրում էր, չեր ուզում տուն դառնալ:

— Որտե՞ղ է իմ տունը: Ես տուն ունեի, բնակարան, ամառանց, որտե՞ղ է, ասացեք խնդրեմ, որտե՞ղ է, ես իմ տունն եմ ուզում, իմ տունը: Ես իմ անկյունն եմ որոնում այս աշխարհում:

Ուժ էր պետք գործ դնել՝ նրան տուն բերելու և խաղաղեցնելու համար:

Սի ուրիշ օր, մտամոլոր, դանդաղ քայլերով եկավ խոհանց, որտեղ ծաշի պատրաստություն էինք տեսնում, և շատ հանգստ, կարծես ոչինչ չեր եղել՝ հարցրեց.

— Որտե՞ղ է իմ զարդասենյակը:

— Դու թատրոնում չես, հայրիկ, — ասացինք, — տանն ես:

— Տանը չեմ, ես լավ գիտեմ, որ թատրոնումն եմ, բայց չեմ հասկանում, թե ինչո՞ւ չեմ կարողանում զարդասենյակս գտնել: Որտե՞ղ է, ո՞ր կողմով գնամ, չե՞ք ասի:

Մտածեցինք, որ հակառակվելու կարիք չկա և տարանք նրան իմ սենյակը, որտեղ դուք էիք քնում, ինչպես գիտեք, այնտեղ մի մեծ հայելի կա:

Նստեց հայելու առաջ: Նայեց իրեն ուշադիր, գննական հայացքով, իսկ հետո շրջվեց դեպի մեզ՝ մեղմ, ներող մի ժպիտ անփայլ աչքերի մեջ, կարծես ասելիս լիներ՝ «Հ» որ ասում էի...»:

Նորից նայեց հայելուն, հետո ծեղքը տարավ դեպի երեսը, և, իր կարծիքով, ծակատին մի գիծ քաշեց, հետո մատները տարավ դեպի այտերը... Գրիմավորվում էր, պատրաստվում ներկայացման: Թե իր ոերերից ո՞րն էր խաղում՝ հնարավոր չեղավ հասկանալ: Գուցե Օթելլո՞ն:

Իրեն մենակ թողինք:

Եղը մի կես ժամ հետո եկանք, տեսանք՝ գլուխը թեքված ծախ կողմի վրա՝ հանգստ ննջում է:

Ժաննան շարունակեց:

— Հունիսի երեքին ոչ մի խոսք չասաց: Լուս էր ամբողջ ժա-

մանակ: Հարց տալինք՝ գլխով կպատասխաներ կամ Էլ անորոշ, չտեսնող հայացքով կնայեր մեր կողմը, որպես դատարկ մի տարածության: Տպավորությունն այնպես էր, որ նայում է, բայց չի տեսնում: Հունիսի չորսին հրաժարվեց ոտելուց: Այդ գիշեր չքննեց, չխռուց, բոլորին նայում էր մարած աչքերով: Լուս իինքի առավոտյան այլևս չկարողացավ հաղթահարել վրա հասնող թմրությունը: Բունը հաղթեց: Եվ այլևս աչքերը չքացեց: Սիրտը դավաճանել էր նրան քննպահին, և այդպես Էլ չիմացավ, որ տեղի ունեցավ անխուսափելին...

Փափազյանի թաղումից երկու շաբաթ հազիվ էր անցել: Շուապում էի Սունդուկյանի անվան թատրոն՝ գեղարվեստական խորհրդի նիստի: Տերեկվա ժամը 12-ը կլիներ: Կանգնեցրի մի տաքսի: Ասացի, թե ուր եմ շտապում: Վարորդը մոռյադեմ մի երիտասարդ էր, երկի մի 35 տարեկան և տրամադրված չէր գրուցի: Իմ երկու հարցերի պատասխանն էլ տվեց հեռագրական ոճի այսպիսի կտրուկությամբ, որ չհամարձակվեցի երրորդ հարցը տալ:

Մեքենան կանգնեց «Կոմունարների այգու» մուտքի մոտ: Խընդրեցի տանել ինձ թատրոնի «հետևի» դռան կողմը, որտեղ դերասանները ելումուտ ունեն:

— Դերասան ես,— հարցրեց վարորդը:

— Ոչ:

— Իսկ թատրոնի հետ կա՞պ ունես:

— Այո:

— Ուրեմն թատրոնի հետ կապնված մարդ ես:

Ես ուղղեցի նրան, ասացի, չի կարելի ասել՝ կապնվել, ջիշտ ձեզ կապվելն է:

Զարմացած նայեց ինձ:

— Ուրեմն՝ ասում ես կապվել: Զգիտեի, լավ, շատ լավ: Միտս կպահեմ:

Սի պահ լուռ մնաց, ապա դարձավ իմ կողմը հետաքրքրված հայացքով:

— Փափազյանին ծանաչո՞ւմ եիր:

- Այս:
- Ժանո՞թ էիր հետք:
- Այս:
- Անծա՞մբ:
- Այս:
- Մեծ դերասան Եր, չէ՞:

Լավ շիասկացա՞ հարցրեց, թե ասաց: Հենց այդ ժամանակ Էլ տեղ հասանք:

- Սպասե՞մ:
- Միտք չունի, նիստի եմ գնում:

Մտա թատրոն, բարձրացա վերև և պարզվեց, որ դիրեկտորին շտապ գործով կուլտուրայի մինհստրուլյուն են կանչել, և նիստը հետաձգված է: Ցավեցի, որ մեքենան բաց էի թողել: Որուս եկա փողոց, տեսնեմ մեքենան կանգնած է, վարորդն էլ դուռն մոտ է:

- Զեզ էի սպասում:

Զարմացա. Վարորդը ժպտաց:

— Ներս մտա՞ ինձ ասացին, որ նիստը չի լինելու: Որոշեցի սպասել. մտածեցի՝ ուր որ է կգա: Հարցրի, թե դուք ով եք: Հիմի ես ծեր ազգանուն ել գիտեմ. Զարյան, Ռուբեն Զարյան, այնպես չէ՞: Ներող կլինեք, մինչև եսօրվա օրը չեի լսել: Դե՛, ես թերթ, գիրք չեմ կարդում, բայց գրագետ եմ: Գլուխ չեմ դնում, ժամանակ էլ չի լինում: Սի խոսքով՝ ասացին, թե թատերագետ եք, դերասան ների մասին եք գրում: Ե՛հ, Փափազյանի մասին էլ եք գրել:

- Ինչպես չե՞:

Սի պահ լուր մնաց: Իսկ ես մտքով անդրադարձա այն բանին, որ նա դու-ից անցել էր դուք-ի:

— Գիտեք ինչ կա, ընկեր... հա՛, Զարյան. սրտիս վրա մի բան է ժանրացած: Ուզում եմ ասել. դե՞մ չեք: Ծնորհակալ եմ, որ դեմ չեք, խնդրում եմ չմերժեք,— ասաց ու մեքենան կանգնեցրեց մի խորտկարանի առջև:

Նա այնպես նայեց, որ մերժել չկարողացա և, լոր հպատակ-վելով, հետևեցի նրան:

- Ընդամենը մի ոյումկա: Ես ծեզ պատվել եմ ովում:

Սի փոքր հետո օդին բերին: Նախ՝ ինձ համար լցրեց, հետո՝ իրեն: Բաժակ բաժակի տվինք. ես խմեցի, ինքը՝ չե՞:

— Անուշ Եղա՞վ:

— Բա դո՞ւք:

— Կիսմեհի, բայց իրավունք չունեմ, ոուիի վրա եմ:

Մի խորտիկ թերանս գցեցի և ոտքի կանգնեցինք:

— Ախապոս ասեմ,— սկսեց նա մեքենայի շարժվելուն պես:—

Մի օր մի մարդ կանգնեցրեց մեքենաս, նստեց ու ասաց՝ «Կիկալան»:

Երբ տեղ հասանք, ասաց՝ «Չնորհակալություն» ու գնաց: Մնացի զարմացած:

— Ընկե՛ր, ընկե՛ր,— գոռացի ես,— բա փո՛ղը:

Կանգ առավ, շուր եկավ իմ կողմն ու ասաց.

— Ես Փափազյանն եմ:

Ասաց ու գնաց:

— Ե՛հ, ինչ անեմ, որ Փափազյանն ես,— գոռացի նրա հետեւից, իսկ նա իսկի շուր ել չեկավ ու մտավ դալանը:

Մի պահ լրու մնաց: Երևում եր, որ հորգված է: Մի փոքր հետո շարունակեց.

— Ժամանակ անցավ, մի տարու չափ կլիներ: Ու մի օր ել հաճախորդներից ով նստեց կողքիս, լրագիր եր կարդում, մեջն ել են մարդու նկարը սև շրջանակի մեջ: Հայերեն թերթի մեջ ել, ոուսականի ել: Ու մեծ-մեծ տառերով գրված եր՝ «Փափազյան»: Ու հարց-րի.

— Դերասա՞ն եր:

Սա թե՝

— Հա՛, դերասան եր:

Հարցորի.

— Մե՛ծ:

— Համաշխարհային:

Ես, որ ասաց, սիրոս կանգ առավ, քրտինքը վրա տվեց:

— Ե՞րբ է թաղումը:

— Այսօր, ժամը 3-ին:

Մեքենան տարա մի տեղ կանգնեցրի, ինքս վագեցի թատրոն: Շատ մարդ կար. Ես մի տասը հազար ասեմ, դուք քսանն ասեք, ամբողջ քաղաքը լցվել եր «Կոմունարների ալգին»: Մի կերպ, ուժի գոռով ինձ գցեցի թատրոն: Դագաղը բեմի վրա եր դրված, գլխավերն ել կրակ եր վառվում: Զահել ժամանակվա նկարն եր կախ-

ված, ինչ սիրուն տղամարդ է եղել: Բոլորը լաց էին լինում, ասեա
իրենց հարազատին կորցրած լինեին: Ինձ բեմի հետև զցեցի, ուզեցի
սգո պահակ կանգնել, մեղքս քավել, չթողեցին, քշեցին: Ու ես
խառնվեցի քաղաքին, որ ոտք առած գնում էր դագաղի հետևից:

Լուռ մսաց մի պահ:

— Մրտիս վրա ոնց որ քար ծանրացած լիսի: Դե՛, ասենք, Են
ժամանակ չէի ծանաչում, թե ով է: Չեի ծանաչում, փող ուզեցի,
եր ոչինչ, եդ մեղք չէ, բայց եդ ոնց պատահեց, որ լեզուս չչորացավ
երբ ասի՝ «Ե՛հ, ինչ անեմ, որ Փափազլանն ես». Եդ մեկը չպիտի
ասեի, չէ՛, չպիտի ասեի:

Տեղ հասանք:

— Ես ել իմ խոստովանությունը վերջացրի:

Ասաց ու ազատ շունչ քաշեց:

Ես ծեղքս դրի նրա ուսին:

— Պետք չի տանջվել, կյանքում ամեն բան էլ պատահում է:
Իհարկե, լավ կլիներ չպատահեր, բայց որ եղել-եղել է. մեր մեծերին
պետք է ամենքն իմանան:

Ուզեցի փող տալ, չվերցրեց:

— Խոստովանահայրը փող չի տալիս, այլ առնում է: Մեկին
պիտի պատմեի, ծեզ պատմեցի ու հանգստացա:

Ասաց ու Ժպտաց:

Ես այլևս այդ վարորդին չտեսա, եթե նկատի չառնվի մի «հան-
դիպում» հեռակա կարգով:

Գնացել էի Մահարուն տեսնելու:

— Այ տղա, — ասաց նա, — մի բան պատմեմ, քեզ կիետա-
քըքրի: Երկու օր առաջ մի տաքսի բռնեցի, որ տուն գամ: Ասի՝
«տար Կասլան փողոց՝ գրողների բնակելի տուն»:

— Գրո՞՞ն եք:

Հարցրեց վարորդը:

— Այո:

— Կարելի՞ է իմանալ ծեր ազգանունը:

— Ինչու չէ. Գուրգեն Մահարի:

Ու այլևս ոչ մի խոսք:

Տեղ հասանք, փող եմ տալիս, չի առնում:

— Փափազյանին ձանաչո՞ւմ էիք, մեծ, համաշխարհային դերասան Փափազյանին:

— Իհարկե:

— Դե որ՝ իհարկե, ել ոչ մի խոսք: Եթե ուզում եք եղ մեծ մարդու հիշատակը վիրավորել, վժարեք:

Ասաց ու մեքենան քշեց:

Սահարին ավարտեց խոսքը:

— Հետաքրքիր է, չէ՞. դու մի բան հասկանո՞ւմ ես:

Ու ես նրան արի վարորդի հետ կապված ամբողջ պատմությունը:

— Այ տղա, եղ իո գրելու բան է. իսկական նովել:

* * *

Վարորդի պատմածը վերջին գրառումս է: Մաքրագրեցի ու տարբեր ժամանակներ գրված մյուս թերթիկների հետ այս ել ամփոփվեց թղթապանակում:

Օրվա այս ուշ պահին Փափազյանի շուրջն են մտքերս: Գրապահարանից հանում եմ «Հետադարձ հայացքը» ու թերթում: Անցնում են ժամեր, ու ես նոյն բավականությունն եմ ստանում, ինչպես առաջին անգամ, երբ որպես խմբագիր ծեռու առա գրքի ծեռագիրը: Թերթում եմ ու գրքի էջերից նայում է ինձ կյանքով լի, Ժպտադեմ Փափազյանը՝ մեկ կյանքի խորքերը մտնող, մեկ թերև արկածների սիրահար, մեկ վերլուծող լուրջ միտք, մեկ անհոգ կատակող, հաճախ չարաձի, բայց ոչ երբեք չար, մի տեղ իմաստուն, մի տեղ հրձվող երեխա, բայց միշտ սիրութ լայն ու գրեթե ամենքի համար մի լավ, մի բարի խոսք գտնելու հազվագյուտ ձիրքով հարուստ:

Թերթում եմ առաջին գիրքը, թերթում եմ երկրորդը, հասնում վերջին էջի վերջին տողերին:

Դերասանն ասում է, թե ինքը ընթերցողին բերեց հասցրեց իր կյանքի այն կետին, որից դենք մի նեղ արահետ է բացվում ծամփին, ուր տեղ չի լինի երկուսի համար: Եվ վերջացնում է այսպես. «Մսա՛ երջանիկ և զավակներիդ, որոնց օրինեցի, երբեմն պատմիր, թե՛ այսպիսի մի մարդ եղավ մեզանում... եկա՛վ ու անցա՛վ»:

Գրվել է այս 1956-ին:

Այս ժամանակ ոչ միայն մենք էինք հեռու իրաժեշտի այս խոսքին լուրջ նշանակություն տալուց, այլ նաև ինքը՝ Փափազյանը, որը մահվան անդրադարձել է իրեն հատուկ թեթև սրտով, որի համար կյանքի պարտամուրհակում վերջին ժամկետի տակ ստորագրելը նույն էր, ինչ որ պատառու համար հավիտենական սիրո երդում տալը:

Փափազյանն այն ժամանակ խաղում էր «մահ» հասկացողության հետ, ծիշտ այնպես, ինչպես սարսափում էր անդրադառնալու այդ նույն մտքին իր կյանքի վերջին երկու-երեք ամիսը, երբ մահը չոբել էր արտիստի դրանք:



Մնում էր, որ ողբերգակը իր խոսքերին հավելի բեմում հազար անգամ կրկնածը՝ «մնացյալը լուրջուն»: Լուրջան տեղ սակայն բարձրագոչ տարիներ եկան՝ նոր դերեր, նոր տիտղոս, երեք ժամանակուն հատոր...

Հիմա, երբ չկա Փափազյանը՝ ականջիս լսում եմ նրա շշուկը. «Պատմիր, թե այսպիսի մի մարդ եղավ մեզանում... եկա՛վ ու անցա՛վ»:

Պատմությունն այդ գրվելու է, անշուշտ, ե՞րբ և ո՞ւմ ծեռքով՝ հայտնի չէ, գուցե և ես գրեմ, չգիտեմ, եթե ուժս պատի միայն: Բայց այն, ինչ արձանագրել եմ նրա գլխով անցածից՝ ականատես բարեկամ լինելով, թեկուզ հատուկենտ դեպքեր, թող նկատվի իբր նյութ այդ մեծ կյանքի պատմությունը գրելու համար:


ՆԿԱՐՆԵՐ

W. H. D. Greenleaf, Boston, Mass., has kindly supplied the following information concerning the authorship of the manuscript:





१५



440563-887



2 m d 1 b m



Համեմատ



Խաչատրյան, Արմեն






Թամա («Թամա և Զովիթ»)





O p b l l n






Օրելլո՝ Վ. Փափազյան, Դեղինմոնա՝ Ս. Ռոկանյան



Ուրիել Ակոստա





Կարրաղն



Պրոտասով («Խենդանի դիակ»)


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԱՀԿԱԾՈՎԱՅՐԵՐԻ
ՀԱՐԱՄԱԳՐԱՑՈՒՑ ԳՐԱԴԱՐԱՆ




lhr wsfw



Արքենին («Թիմականանդես»)





ՄԵՐ ԳԵԼՎԱՐ («ԵԽ սիրաբ լեռներում է»)

ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

ՆՈՐԾԻ ԶՐՈՒՅՑՆԵՐԻՑ

Մի քանի տարի, ամուսն ամենաշոգ օրերը, մի ամբողջ ամիս, ապրել եմ Նորքում՝ դերասանների ստեղծագործական տանը: Դա ավելի շուտ հանգստյան տուն էր: Չեմ իշխում, որ գոնե մի դերասան պարապեր այնտեղ, դեր պատրաստեր կամ ամուսն աղմուկից առանձնացած որևէ թատերագիր՝ պիես գրեր: Ով հովիս և օգոստոս ամիսներին չուներ քաղաքից դուրս գալու հնարավորություն կամ ում բժիշկներն արգելել էին կտրուկ օդափոխության ենթարկվել, ապաստան էր գտնում Երևանցիների պապենական ամառանոցավայրում:

Մի քանի տարի ես իմ հովիսն անցկացրի Նորքում, ընկերակցությամբ թատրոնի մարդկանց՝ դերասաններ, բեմադրիչներ, թատերագիրներ ու թատերագետներ: Մեկ-մեկ էլ հեռավոր Ռուսաստանից էին գալիս և համարում իրենց խորապես խարված՝ նրանց ասել էին, թե Սևանը Երևանի քթի տակ է և շոգ պահերին ամեն րոպե կարող են ջուրը նետվել:

Ցերեկով բոլորը քաշվում էին իրենց սենյակները. մի մասը քնում էր, մյուսները թերթ էին կարդում: Կային և այնպիսիները, որ այգում մի ծառի տակ շվաք էին գտնում և հանձնվում հետաքրքիր վեպի ընթերցանության: Ընթրիքից հետո, եթե հեռոստացուցի ծրագրում հետաքրքիր հաղորդում չէր լինում, մեծ մասամբ հավաքվում էին բակում զրոյց անելու: Ու հենց որ հովը շնկանում էր և, մանավանդ, երբ մեկն ու մեկը հևիին գալիս էր քաղաքից ու գանգատվում, թե ինչ տոթ է Երևանում, նորքեցիք Երախտագիտությամբ ոգեկոչում էին Վաղարշ Վաղարշյանի հիշատակը, որ հըղացավ այս տունը կառուցելու գաղափարը ու ինքն էլ հիմքը դրեց:

Քաղաքի շոգերից փախչում գալիս էին Ժասմենը, Վարդան Աճեմյանը, Գուրգեն Զանիբեկյանը, Սարգիս Մելիքսեթյանը, Արշա-

լուս Բաբայանը, Դավիթ Գուլազյանը, Խաչիկ Եսայանը, Միհրաբ Դավթյանը, Արշավիր Ղազարյանը, Ներսես Կագրամանովը ու շատ ուրիշներ: Գալիս էին մեկ-մեկ, գալիս էին և իրենց ընտանիքներով: Պատահում էր՝ լոր էինք նստում, բայց ավելի հաճախ մտցեր էինք փոխանակում թատրոնի շորջ՝ ինչ վիճակում է բեմը հիմա և վաղն ինչ է սպասում նրան: Դիտողություններ էին արվում թեր ու դեմ, հուսահատ ու լավատես: Տպավորություններ էին հայտնվում դերասաններից, դեպքեր էին հիշում, հիշում էին անցած-գնացած օրերը:

Թատրոնի մարդիկ էին բոլորը և բոլորն ել պատմելու նյութ ունեին: Սիրում էին պատմել իրենց կյանքը, պատմել հետաքրքիր անցքեր ուրիշների կյանքից և նույն սիրով ել ունկնդրում էին ուրիշի պատմությունները:

Այդ պատմություններից մի քանիսը, որ ինձ հետաքրքիր են թվացել անկախ այն բանից՝ ով է եղել պատմողը, — գրի եմ առել:

Խոսք բացվեց Փափազյանի մասին: Արտիստի թե՛ անձնական կյանքը, թե՛ թատերական գործունեությունը լի են հետաքրքրագույն դիպվածներով: Ամեն մեկը պատմում էր այն, ինչ գիտեր նրա մասին: Զեմ կարող ասել, թե լսածներս բոլորը արժանի եմ համարում հանձնել ընթերցողի ուշադրությանը: Լսելիս դրանք հետաքրքիր էին թվում, բայց երբ փորձեցի թղթին հանձնել, կորցրին իրենց գույնն ու սրությունը՝ գուցե իմ մեղքով:

ՓԱՓԱՋԱՅԱԾ ՄՆՈՒՄ Է ՓԱՓԱՋԱՅԱԾ

— Աբովյան փողոցով իջնում էի Երևան եկած մի վրաց դերասանի հետ: — Այսպես սկսեց իր խոսքը ասմունքող Ամատոնի Բարսեղյանը: — Դիմացից գալիս էր Փափազյանը: Վրաց բարեկամս տեսավ նրան, բայց չձանաչեց:

- Ո՞վ է այդ գեղեցիկ տղամարդը:
- Փափազյանը:
- Վահրամ Փափազյանը:
- Այո:

— Ժանոթացրեք, խնդրում եմ, բեմում տեսել եմ, կյանքում՝ ոչ: Երբ Փափազյանը մոտեցավ՝ ներկայացրի վրաց բարեկամիս: Վերջինս շփոթված նայում էր հոչակավոր ողբերգուին:

— Ինչպես էի ուզում տեսնել ծեզ կյանքում, — ասաց հյուրս, չթաքցնելով իր հիացումը:

— Դուք ուզում էիք տեսնել ինձ կյանքում: Այդ դեպում եկեք թատրոն: Երկու օրից «Համլետ» է, մի օրից՝ «Օթելլո» և ապա «Ռիմակահանդես»:

Հյուրս պապանձվել-մնացել էր:

Փափազլանը ծեռքը մեկնեց հրաժեշտ տալու:

— Ես շատ եմ սիրում Թբիլիսին, իմ կյանքի բազում հիշողություններ կապված են այդ քաղաքի հետ:

Գլուխ տվեց ու հեռացավ: Հազիվ երկու-երեք քայլ արած՝ շըրջվեց մեր կողմը:

— Իմ նոր բարեկամ, — դարձավ նա վրաց դերասանին, — շատ եմ խնդրում ծեզ, քաղաք հասնելուն պես մի ալ կարմիր վարդ գնեցեք և Մուխրանյան կամրջից նետեք թուռը:

ԵՐԵԲ ՕԹԵԼԼՈ

1972-ին Մոսկվայում գումարվեց Թատրոնի միջազգային ինստիտուտի 15-րդ կոնգրեսը: — Սկսեցի ես իմ պատմությունը: — Շատ ժանոթ մարդիկ կային թե արտասահմանից և թե մեր երկրի տարբեր ժայրերից: Կային այնպիսիք, որոնց անունը լսել էի, բայց իրենց չեի տեսել: Կային և դերասաններ, ինչպես Ժան Լուի Բարրոն և Ասպասիա Պապատանասիոն, որոնց տեսել էի բեմում, բայց անձնական ժանոթություն չունեի հետները: Եվ գուցե այս կոնգրեսի լավ կողմերից մեկն էլ այն էր, որ մարդիկ ժանոթանում էին իրար, մտքեր փոխանակում, կապեր հաստատում:

Հանդիպեցի այստեղ իմ լավ ժանոթներին՝ Վերիկո Անջափարիձեին, Նատալյա Ուժվիին և շատ ուրիշների: Հանդիպեցի նաև Հայաստանում ապրած և նրա հետ բարեկամական կապերը պահպանած աղքբեշանցի հայտնի դերասան Խսմայիլ Շաղստանլիի հետ:

Կոնգրեսի ցերեկվա նիստերին հաջորդում էին երեկոյան ներկայացումները՝ «Համլետ» Տագանկայի թատրոնում, «Շոն Ժուան» Էֆրոսի բեմադրությամբ, Փոքր թատրոնում՝ «Թագավոր Ֆեոդոր Դոհաննովիչի մահը» (գլխավոր դերում Սմոկտունովսկի): Ես հի-

շեցի այն ներկայացումները, որոնց շուրջ կրքեր էին բորբռվում՝ մերժվում էին, կամ ոգևորություն առաջ բերում:

Դաղստանին հարցրեց.

— «Ռուս-Ժուանը» տեսա՞ր:

Պատասխանս լսելուց հետո նորից հարցրեց.

— Հետո՞:

— Ոչինչ:

— Ինչ ոչինչ: Հիշո՞ւմ ես Փափազյանին: Այ Ռուս-Ժուան:

Եվ Փափազյանի շուրջը խոսակցություն ծայր առավ, որի ընթացքում դերասան բարեկամս արեց մի պատմություն, որ նույն օրն իսկ գրի առաջ:

1934 թվականին Բաքվի երեք թատրոնում՝ ադրբեջանական, հայկական և ռուսական, ներկայացվում է «Օթելլո»: Օթելլոյի երեք դերակատար՝ Ռաջար Ռուզի, Վահրամ Փափազյան և Նաում Սոկոլովսկի: Ռուսական թատրոնի ծեմարահում կազմակերպվում է ասուլիս: Զեկուումով հանդես է գալիս Միքայել Ռաֆիլյան: Այս Օթելլոյի երեք դերակատարները հերթով մոտենում են ամբիոնին կարծ խոսք ասելու այն մասին, թե ինչպես են իրենք պատրաստել դերը: Ավգուստ խոսում է Սոկոլովսկին: Նա ասում է, որ ինքը կարդացել է Ստանիսլավսկուն և նրա ըմբռնմամբ էլ խաղում է: Հետոն էլ մեջբերումներ է անում բերած գրքերից: Հետո Փափազյան է խոսում: Ասում է, թե ինքը ծանոթ չէ Օթելլոյի վերաբերյալ Ստանիսլավսկու մտքերին, բայց երիտասարդ տարիներին եղել է մավրերի երկրում, ուսումնասիրել է նրանց պլաստիկան և ըստ դրա էլ կառուցել է իր կատարումը:

Խոսքը տրվում է Ռուզիին:

— Ես ո՞չ Ստանիսլավսկի եմ կարդացել, ո՞չ էլ եղել եմ մավրերի երկրում: Ես տեսել եմ Փափազյանի Օթելլոն, հիացել եմ նրա արվեստով և խաղում եմ նրա մեկնաբանությամբ:

ԴԵՐԱՍԱՍԻ ԴՈՒՏՈՐԸ

Վահրամ Փափազյանի դուստրը՝ Մարիան, համաձայն չէր, — դարձա ես ներկաներին, — որ իր հոր աջլունը Երևան տեղափոխվի: Փորձ արեցինք համոզել նրան: Չեր համաձայնում, բայց հետո գի-

չեց՝ «Տարեք»: Մի պահ լուր մնալուց հետո, բացատրեց իր դիմադրելու պատճառը:

— Ես հասկանում եմ, որ նա միայն ինձ չի պատկանում, — ասում էր դուստրը: — Ես հասկանում եմ, որ նա ավելի իր ժողովրդին է պատկանում, քան ինձ: Բայց ես ուզում եմ, որ դուք ինձ հասկանաք որպես Փափազլանի դստեր, մեկին, որ մորք կորցրել է վաղուց: Դուք գիտե՞ք, որ ես չեմ զգացել, թե հայր ունեմ: Այո՛, այո՛, ես հայր ունեի և չունեի՝ միաժամանակ: Նա տանը չեր լինում, անվերջ թատերական շրջապտույտների էր մեկնում: Պատահում էր՝ առավոտյան արթնանում էի և մորից իմանում, որ հայրս գիշերը եկել ու առավոտը կանուխ նորից մեկնել է: Գուցե և մոտեցել է մահճակալիս, համբուրել ձակատս, նայել ինձ, բայց ես չեմ իմացել, չեմ զգացել: Ես հպարտ էի նրանով: Իմ դասընկերներից ո՞վ ուներ այդպիսի հոչակավոր հայր, բայց և նախանձով էի լրցվում բոլոր այն աղջիկների հանդեպ, որոնց հայրերը միշտ իրենց կողքին են: Ինձ չեր միխթարում և այն, որ հորս հոչակը ակնածանքի նման մի բան էր ներշնչում ընկերուիհներիս իմ հանդեպ:

Վերջին տարիները մի ամիս, երբեմն՝ երկու, այստեղ էր անցկացնում: Եվ տանն էր հաճախ: Բայց իմա ել ես տանը չեի լինում: Շրջիկ թատրոնի դերասանուիի լինելով, անընդհատ ձամփորդությունների մեջ էի: Եվ, բացի այդ, նա այնպես էր կլանված Անահիտով, այնպես էր սիրահարված նրան, որ ինձ՝ սեփական դըստերը, քիչ բաժին էր հասնում: Երբ նա վերջին անգամ իիվանդ ու ծանր վիճակում Լենինգրադ եկավ՝ ուրախացա: Վերջապես գտա հորս: Մեր թատրոնում հասկացան վիճակս և ընդառաջ գնացին, թույլ տվին երբեմն գործի զգնալ: Եվ ես տանն էի լինում: Հայրս գիշերները մեծ մասամբ չեր քնում: Ու թեև ինձ դժվար էր անքուն գիշերներ անցկացնել, այն ել գրեթե անընդմեջ, բայց ես ուրախ էի, որ այդ երկու ամիսը մենք՝ հայր ու աղջիկ, գտանք իրար: Նա պատմում էր իր երիտասարդությունից, պատմում էր Սիրանույշից, Աբելյանից, Զարիֆյանից, պատմում էր հայոց անցյալից, կարդում մենախոսություններ իր դերերից, կարդում հանգիստ, անվրդով, երբեմն փակում էր աչքերը, ու ես հասկանում էի, որ սկիզբ է առնում մի անժայր ապրում:

Ես բավական մեծ էի, որպեսզի գուրգուրեր ինձ, ինչպես սի-

բող հայրը կարող է գուրգուրել իր աղջկան, բայց նրա հայացքի մեջ այնքան սեր կար ու շերմություն, որ ինձ լավ էի զգում, շատ լավ էի զգում, նույնիսկ՝ երջանիկ: Կարծես անցած-գնացած բոլոր տարիները, իմ կրած բոլոր վշտերն ու դառնությունները՝ մորս կորուստից մինչև երեխայիս Շակատագրական հիվանդությունը, փոխհատուցվեցին: Ու ես առաջին անգամ զգացի, թե ինչ է հայրը, այն ել՝ այդպիսի հայրը, որի գիտելիքները ծով էին, որը կարող էր հազար ու մի գիշեր զբաղեցնել ու չսպառվել: Ինչքան ել դժվար լինեին այդ անքուն գիշերները, ես այնքա՞ն էի բախտավոր, որ հոգնածություն չի զգում... Եվ, ահա, դուք եկել եք տանելու Փափագյանին, որին որպես հոր՝ նոր եմ գտել: Տարե՛ք, թերևս ծեր իրավունքն ավելին է, քան իմը, բայց հասկացեք նաև դժբախտ աղջկա հոգին, նրա ցանկությունը՝ ունենալ հորն իր կողքին, այստեղ, այս ամառանոցում, այս այգում, մորս կողքին, որպեսզի կյանքիս տըխուր պահերին նրանք մոտ լինեն ու սփոփէն ինձ: Տարեք, որքան ել կեղեցվի սիրտս. ինչ է դստեր սիրտը մի ամբողջ ժողովրդի ապրած վշտի համեմատությամբ...

Շատ հետո, օրեր անց, արդեն Երևանում, Մարիան տեսավ, թե ինչպես է սգում ժողովուրդը իր մեծ զավակի մահը: Թաղումից հետո նա ասաց.

— Դուք, իհարկե, իրավացի էիք: Նա այստեղ, իր հայրենի հողում պիտի ամփոփվեր:

ԺԱՂԱՎԱՑԱՌԸ

Մի ուրիշ պատմություն էլ արի այդ երեկո:

1973-ի հունվարի 6-ն էր: Վահրամ Փափազյանի ծննդյան օրը:

Երեկոյան ժամը 6-ին էր: Ես և կինս քայլում էինք Աբովյան փողոցով: «Ֆլորա» պուրակի մոտով անցնելիս, որ ժաղիկներ են վաճառվում, հանկարծ հիշեցինք, որ Փափազյանի ծննդյան օրն է: Մտածեցինք գնալ գերեզմանատուն և ժաղիկ դնել նրա շիրիմին: Բոլորել էր նրա ութսունիինք ամյակը:

Մոտեցանք մի ժաղկավաճառի, և կինս խնդրեց չորս մեխակ:

— Տիկին,— մեզ դիմեց ժաղկավաճառը, որ այդ պահին գնորդ

չուներ,— զույգ ժառիկ չի կարելի տանել ո՞չ տուն, ո՞չ էլ ուրիշի:
Կենտ պետք է գնել՝ հինգ կամ յոթ հատ:

Կինս բացատրեց, որ գերեզմանատուն ենք գնում:

— Դա արդեն ուրիշ բան: Բայց այսօր մեռելոց չե:

Կինս ասաց ում համար ենք գնում գերեզմանատուն, չմոռա-
նալով ավելացնել, որ խոսքը վերաբերում է մեր ամենամեծ դերա-
սանին:

Շաղկավաճառը չորս վառ կարմիր մեխակ տվեց մեզ, վերցրեց
վարձը և փոքր-ինչ անվստահ հարցրեց.

— Եթե խնդրեմ, այս մեխակն էլ իմ կողմից չե՞ք դնի ար-
տիստի շիրմին:

— Սիրով:

Նա մեզ մեկնեց վարդագույն մի մեխակ:

Նստեցինք մեքենա: Ճանապարհին մտքով Շաղկավաճառի հետ
էի: Ինչո՞ւ հենց միայն մեկ մեխակ տվեց: Թեև եթե չուզեր, կարող
էր բոլորովին չտալ, ոչ ոք նրան չէր ստիպում: Ու ես գտա Շաղ-
կավաճառի վարմունքի հոգեբանական հիմնավորումը: Եթե նա շատ
տար, ասենք այնքան, ինչքան մենք վերցրինք, կամ ավելի, կարող
էր մեր մտքով անցնել, թե վիրավորում է մեզ: Նա չուզեց մեզ գե-
րազանցել, քանի որ ինքն էր մեզ միացել: Նկատեցի նաև, որ նրա
տված ժաղիկը գույնով էլ մերի կրկնությունը չէր:

Գնացինք գերեզմանատուն: Մնացինք երևի մի կես ժամ ու
վերադառնք: Երբ մեքենան մտավ Աբովյան փողոց, կինս թե՝

— Եթե Շաղկավաճառը չի գնացել, մոտենանք ու ասենք, որ
իր խնդրանքը կատարել ենք:

Չէր գնացել:

Մոտեցանք, ասացինք ինչ որ պետք էր և հազիվ մի-երկու քայլ
էինք արել, երբ լսեցինք նրա ձայնը.

— Մի բոպե:

Մոտեցավ մեզ՝ ձեռքին տարբեր գույնի մեխակների մի մեծ
փունջ:

— Խնդրում եմ վերցրեք այս ժաղիկները իմ կողմից:

Ծնորհակալություն հայտնեցինք:

— Ես Աշտարակից եմ, Կոշ գլուղից: Անոնս Եսայի Ե Եսայի
Բարսեղյան: Եթե ձեզ ժաղիկ պետք լինի, համեցեք մեր գլուղը, ես

լավը կտամ և եժան: Եթե հանկարծ անունս մոռանաք, հարցրեք գաղթական Աշոտի տունը:

ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մեր թատրոնը մեկնեց Բաքու հյուրախաղերի: Մեկնողների մեջ էր և Փափազյանը: Ներկայացումներից մեկի ժամանակ Հովհաննես Ավագյանի պատճառով ինչ-որ մի բան այնպես չեղավ, ինչպես սովորաբար լինում էր: Փափազյանը սաստիկ զարյացավ և գտնելով, որ այդ պատճառով իր խաղը տուժել է, ընդմիջմանը գտավ խաղընկերոջը և ուրիշների ներկայությամբ բարկացավ ու, երևակայեց՝ ի հայիոյց...

Ավագյանն աչքերը կկոցեց, լսեց Փափազյանին և ծնկի եկավ նրա առաջ.

— Տեսնո՞ւմ ես, գլուխ եմ խոնարհում մեծ արտիստի առաջ:

Հետո ոտքի կանգնեց, մի կես քայլ ետ գնաց, մազախորիվ գլուխը թեքեց մի կողմի վրա և բարձր ու վիրավորված ծալնով հարցրեց.

— Ո՞վ է իրավունք տվել քեզ՝ ինձ վիրավորելու: Դու մարդ ես: Ես ել եմ մարդ: Դու արժանապատվություն ունես, ես՝ նույնպես: Եվ հայտնի չեմ, թե մեզանից որի արժանապատվություն է ավելի բարձր՝ ի՞մը թե քոնք:

Լուսթյուն:

— Հարցնում եմ՝ ո՞վ և ի՞նչն է քեզ իրավունք տվել ինձ վիրավորելու:

Նորից լուսթյուն:

— Ասա՛:

Ի՞նչ բացատրություն էր տալու Փափազյանը, — ներկաներից ոչ ոք չէր կարող կռահել: Լուսթյունը ծնշող էր: Ոչ մեկը չէր ուզում միջամտել: Ոմանք, կարծես, ուրախ էին, որ գտնվեց Փափազյանին հակահարված տվող մեկը: Ոմանք էլ ցավում էին գժտության համար:

Հայտնի չեմ ինչով կվերջանար այս ընդհարումը, եթե չհայտնվեր բեմադրիչի օգնականը և չհայտարարեր, որ վարագույրը բացված է և հիմա Փափազյանի մուտքն է: Չեմ հիշում որքան ժամանակ ան-

ցավ. Փափազյանը բեմից վերադարձավ և հայացքը որոնեց Ավագ-լանին:

— Շուն-շանորդի, քո պատճառով մի ամբողջ տեսարան փչացավ: Մտքում դու Եիր: Մտածում Եի, թե որքա՞ն իրավացի է անիրավը:

Ասաց արտաքուստ կշտամբող, բայց՝ բարեկամաբար: Ասաց ու փաթաթվեց Ավագյանին:

— Ներիր ինձ, բարեկա՞մս, բորբոքվեցի ու հաշիվ չտվի, թե ինչ եմ ասում: Լեզվիս մի նայիր, դու լավ գիտես, որ սիրտս բարի է, և քեզ էլ սիրում եմ:

Բեմադրիչի օգնականը նորից մոտեցավ Փափազյանին.

— Զեր մուտքն է, շտապեցե՞ք:

Փափազյանը տեղից չշարժվեց:

— Զեմ գնա, մինչև չասես, որ ներում ես:

Ավագյանը լուր կանգնած էր:

— Կատակ չեմ անում, — շարունակեց Փափազյանը, — թող ներկայացումը տապալվի, մի քայլ անգամ չեմ անի, մինչև չիմանամ, որ սիրտդ հաշտ է ինձ հետ:

Ավագյանը գլուխը բարձրացրեց և միայն իրեն հատուկ անքեն ժպիտով նայեց ընկերոջը:

Փափազյանը շտապեց բեմ:

«ԱՅՍՈՐ ԵՐԶԱՆԻԿ ՕՐ ՈՒՆԵՑԱ»

— Մաշտոցի 1500-ամյակի օրերն եին,— այսպէս սկսեց իր պատմությունը Մարիամ Սաղաթելյանը:

Հեռուստահետությունը մրագրել էր նաև մի հաղորդում, «Ասք» վերնագրով, որտեղ կար մի տեսարան՝ Մաշտոցի և Սահակ Պարթևի կերպարներով: Երբ պետք է որոշեի, թե ո՞վ է խաղալու Մաշտոցի դերը, մտքովս անցավ Վահրամ Փափազյանը: Գնալով ավելի ու ավելի համոզվեցի, որ նրանից լավ Մաշտոց ոչ ոք չի կարող լինել: Եվ սիրտ արի ու այցի գնացի Փափազյանին: Նայեց ինձ խոժոռ հայացքով, բայց երբ լսեց առաջարկս՝ դեմքը լուսավորվեց:

— Կարո՞ղ եմ Շանոթանալ սցենարին:

— Անջուշտ:

— Վերջնական խոսքս կասեմ տեքստին Շանոթանալուց հետո: Հետո վրա բերեց.

— Վարձս՝ հարյուր ռուբլի:

Հաջորդ օրը տվեց համաձայնությունը և հարցրեց՝

— Ո՞վ է լինելու Սահակ Պարթևը:

Ասացի, թե Խաժակյանը: Գոհ մնաց:

Հարցրի՝

— Մտածեմ հագո՞ւստի մասին:

— Դա թող ինձ, սիրելիս:

— Գրի՞մը:

— Դա ել:

Հասավ նկարահանման օրը: Տանապարհվեցինք Գեղարդ: Վարպետը խնդրեց, որ մինչև նկարահանում իրեն մի կես ժամ թողնենք մենակության մեջ:

Մի 40 րոպե պետք եղավ, մինչև որ ես ու օպերատոր Լաերտ Պողոսյանը դեկորները դասավորեցինք: Սպասում ենք Փափազյանի գալուն: Երբ շատ ուշացավ, սկսեցի անհանգստանալ: Ասի՞՝ գնամ

Փափազյանի հետևից: Խաժակյանը ծեռքս բռնեց, ասաց, թե ինքը կգնա: Ելի բավական ժամանակ անցավ և խաժակյանն էլ հետ չեկավ: Որոշեցի ինքս գնալ: Տաճարի դուանը Խաժակյանը կանգնեցրեց ինձ՝

— Պետք է սպասել:

Ասաց ու ծեռքս բռնեց ու մի քայլ առաջացավ տաճարից Ներս. Ինչ որ տեսա՝ ցնցվեցի և իմ ամբողջ կյանքում չեմ մոռանա:

Փափազյանը վառած մոմը ծեռին աղոթում էր, իսկ աչքերից արցունքները թափվում էին:

Դուրս եկանք տաճարից, որ մեզ չտեսնի: Մի փոքր հետո Փափազյանը տաճարից դուրս եկավ: Դեմքը գունատ էր, աչքերի փայլն անժանոր: Մի քանի անգամ տաճարի առջև հետ ու առաջ գնաց: Տեսավ ինձ՝

— Ալշի՛կս, որտե՞ղ ենք հագնվելու:

Ասաց հանգստ, բայց երևում էր, որ հուզմունքը չի անցել: Մատնացուց արի: Ես շտապեցի նկարահանման վայրը վերջին պատրաստությունները տեսնելու:

Սեկ էլ տեսնենք դիմացի բարձունքից մի խումբ մարդիկ, տղամարդ ու կին, տարբեր տարիքի, իշնում էին ցած՝ դեպի մեզ: Զեի նկատել, որ Փափազյանն արդեն դուրս է եկել՝ ամբողջապես սպիտակազգեստ, երկարամորուս, վեհատեսիլ: Ուխտի եկած այդ մարդիկ, տեսնելով նրան, տեսիլքի տեղ էին դրել, կարծել էին, թե երկնքից իջած սուրբ է...

Ես որ տեսա Փափազյանին, ինձ հետ ինչ-որ բան կատարվեց, ինձ թվաց, որ իմ տեսամբ իրաշք է, որ իմ դիմաց Փափազյանը չէ, այլ ինքը Մաշտոցն է՝ վեհացած, վեհաշուր... մեկ էլ ինձ հասավ Փափազյանի խոպոտ ծայնը.

— Ակսե՞նք:

— Ալո՛, Վարպետ:

Աստիճաններով իշնում էր ցած: Հանդիսավոր և ազդեցիկ: Բոլորս շփոթված, հիացած նայում էինք և մտածում, թե մարդ ինչ-պես կարող է այսպես վերամարմնավորվել: Այդ տեսարանը մենք պետք է նկարահանած լինենք անպայման, որ, ցավոք, չարինք:

Հա՛, մոռացա ասել, որ ուխտավորներն ուզում էին, որ սուրբ օրինի իրենց մատաղը: Զգիտեինք ինչ անել: Վախենում էինք, որ

բարկանա, իրաժարվի Նկարահանվելուց: Ստիպված հայտնեցինք
ուխտավորների փափազը: Համաձայնեց: Ուխտավորները ծունկի ե-
կան: Վարդետն Աստվածաշնչից ինչ-որ հատված կարդաց: Շշուկով,
բայց հանդիսավոր ու ներհուն: Ապա բազկատարած դիմեց ժնկաչոք
բազմությանը՝

— Ընդունելի՞ լինի:

Նկարահանումները վերջացրինք:

Զարմանալի բան. և՝ ձերմակազգեստ էր, ինչպես առաջ, և՝
երկարամորուս, բայց այլևս Մաշտոցը չէր, Փափազլանն էր արդեն:
Աչքերից երևում էր, որ գոհ է: Լիքն էր ինչ-որ տրամադրությամբ,
որը հաղորդելու համար եւ խոսքեր չունեմ:

Մեքենաները շարժվեցին դեպի Երևան: Իր խնդրանքով կանգ
առանք Զարենցի կամարի առաջ: Բարձրացավ աստիճաններով ու
երկար նայեց Արարատին:

Երբ մեքենան կանգ առավ իր տան առաջ, դարձավ ինձ՝

— Աղջիկս, տնօրենիդ ասա, որ չեմ ուզում վարձատրություն:
Այսօր Երջանիկ օր ունեցա...

Ասաց և հեռացավ: Ես ու ընկերներս նայում էինք իր հետևից,
յավ չհասկանալով, թե ինչ բախտ էր վիճակվել մեզ...

ԻՆՉ ԷՒՆ ԿԱՐԺՈՒՄ, ԻՍԿ ԻՆՉ ԵՂԱՎ

«Դիմակահանդես» ներկայացման վերջին արարվածն սկսվելուց առաջ, Փափազյանը, որ Արբենինի դերն էր կատարում, դարձավ իր հետ զրուցող դերասաններին, որ մի ութ-ինը հոգի կլինեին.

— Ի՞նչ եք ասում, տղայք, այսօր, ներկայացումից հետո չգընանք ռեստորան՝ միասին ընթրելու:

Բոլորը զարմացած իրար երեսի նայեցին: Ամենքին հայտնի էր, որ Փափազյանը սեղան նստելու մեր չունի: Զեին հասկանում, թե ինչ է պատահել, որ հանկարծ ալդպիսի ցանկություն ունի: Բացի դա էլ, ասում էին, թե ձեռքից պինդ է:

— Իմ հաշվին:

Ավելացրեց Փափազյանը:

Հետո վրա բերեց.

— Եթե ուրիշ ուզողներ ել կան՝ թող գան:

Դերասանները շարունակում էին զարմացած նայել ողբերգակին:

— Զեր մուտքն է, Վարպետ,— լսվեց ռեժիսորի օգնականի ձայնը:

— Սի քսան, քսանիինգ մարդ,— նորից լսվեց Փափազյանի ձայնը բեմ մտնելուց առաջ:

— ԶԵ, այստեղ մի խաղ կա,— քթի տակ մրթմիթաց Մուրադ Կոստանյանը:

Ներկայացումը վերջացավ: Սի երեսուն հոգով Շանապարի ընկանք դեպի ռեստորան:

— Տղանե՛ր, գրպաններումդ դրա՞մ կա,— հարցրեց Գեղամ Աֆրիկյանը:

— Այդ հարցը Փափազյանին տուր:

— Սի բան գիտեմ, որ ձեզ եմ դիմում:

Տեղ հասան: Տեղավորվեցին: Փափազյանը առատ-առատ պատ-

վերներ տվեց: Ակսվեց մի գվարթ զրույց, մինչև ընթրիքն ու խորտկեղենը կբերեին:

— Հա,— դարձավ կողքի դերասանը Գեղամին,— ասում էիր, թե մի բան գիտես: Ասա, իմացածդ ինչ է, տեսնեմ:

— Ասեմ՝ կտխրես:

— Չեմ տխրի:

— Չե, դու ասա, փո՞ղ ունես:

— Ի՞նչ կապ ունի:

— Կապ ունի:

— Ասենք, թե ունեմ:

Հանեց դրամապանակը, որտեղ մի հիսուն ռուբլի կար:

— Եհ, դրա կեսի չափ էլ ինձ մոտ կա: Երևի մյուաներն ել կունենան:

— Դու ասելիքդ ասա, թե չէ, ում մոտ ինչքան փող կա, կապ չունի ասելիքիդ հետ:

— Կապ ունի: Այս էլ սերտ,— խորհրդավոր ժպտաց Աֆրիկյանը,— կնատենք, կուտենք, կիմենք, մեկ էլ Փափազյանս կվերկենա, ես նրան լավ եմ ծանաչում և կասի. «Դե, տղայք, իմ գնալու ժամն է, դուք շարունակեք ուրախանալ առանց ինձ»: Մեզանից տարիքով , վերջապես, Փափազյանն է, կատակ չէ, իո չես ասի, թե՝ «Բա դրամն ո՞վ է տալու»: Ա՛յ, դրա համար էլ հարցնում էի, թե մոտդ փող կա:

Դժվար է ասել, թե որքան էր անցել, մի ժամ, թե ժամ ու կես, Փափազյանը, որ իսկապես խնջույքների սիրահար չեր, ծանծրանալու նշաններ սկսեց ցուց տալ, համբերությունը հատավ, ոտքի կանգնեց, բարձրացնելով կոնյակի ըմպանակը.

— Իմ լավ ընկերներ, շատ ազնիվ եք ու բարի, որ չմերժեցիք խնդրանքս ու եկաք ինձ հետ ընթրելու: Ես խմում եմ Չեր կենացը, բոլորիդ ցանկանում ծեր փափագած երջանկությունը և խնդրում մեծահոգի լինել և ներել ինձ, եթե հիմա լրեմ ծեզ ու գնամ: Ժամը տասներկուսն է, ես արդեն անկողնում էի լինելու, վաղը խաղալու եմ Համլետ, որն ինձանից հոգեկան մեծ լարում է պահանջում, ինչպես ոչ մի դեր: Գիշեր բարի:

Ասելն ու գնալը մեկ եղավ:

Բոլորը քար կտրեցին:

— Տեսա՞ր:

Դարձավ Գեղամ Աֆրիկյանը կողքի դերասանին, բայց բոլորի համար լսելի ծայնով:

— Չասի՞:

Ինչպիսի՞ն է լինում մարդ, եթե հանկարծ պարզվում է, որ խարբած է, այն ել չարաշար: Իսկ և իսկ թշչված հավ:

— Ես այդպես ել սպասում եի, — ջղայնացած արձագանքեց Ավետ Ավետիսյանը:

— Ով ինչ եր սպասում, իիմա նշանակություն չունի, ավելի լավ է ասեք, թե ում մոտ ինչքան դրամ կա, — նյարդային վիճակը զբաց-ված ժայիտի տակ թաքցնելով, վրա բերեց Գուրգեն Զանիբեկյանը:

— Ահագին գումար է հարկավոր, սա մեծածախ սեղան է, առատ-առատ պատվիրեց ու գնաց: Հեշտ է ուրիշի հաշվին՝ շռալ լինել:

Պարզյալ խոսեց Ավետիսյանը:

— Իսկապես:

Մի երկուսն ել, որ անհոգ մարդիկ եին և ներողամիտ Փափազ-յանի ամեն մի խենթության նկատմամբ, ասելով, թե՝ «Հանձարնե-րին ներվում է ամեն ինչ», ուզեցին ուրախությունը շարունակել, բայց ոչինչ չստացվեց: Հավաքեցին ում մոտ ինչքան կար, տվին Զանիբեկյանին, որ նա, որպես մեջների ավագը, վօրի:

Զանիբեկյանը ծայն տվեց մատուցողին և հարցրեց, թե որքան է իրենց տալիք գումարը:

— Վճարված է:

Եղավ պատասխանը: Բոլորն իրար նայեցին՝ ինչ եին կարծում, իսկ ինչ եղավ:

ԽՈՍՔ ՓԱՓԱՋՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Փառահեղ ուղի է անցել Վահրամ Փափազյանը:

Նա ծնվել է Բոսֆորի ափերին, այս քաղաքում, որ հայ թատրոնին տվել է Պետրոս Արամյան և Սիրանովը: Մինչև հիմա էլ արտիստը հակասական զգացումներով է հիշում Պոլիսը. մի կողմից բուռն սեր և հիացում, որով յուրաքանչյուր մարդ սովորաբար կապված է լինում իր ծննդավայրին, այս քաղաքին, որտեղ աչք է բացել ու անց է կացրել իր մանկությունը, մյուս կողմից՝ զայրույթ, խորակսկիծ ցավ, որ այրում է նրա միտքն ու հոգին ամեն անգամ, երբ հիշում է հայրենակիցների գլխին կախված լաթաղանը, հայկական արյունահեղ ջարդերը:

Փափազյանը վաղ է հափշտակվել բեմով, դեռևս Պոլսում՝ աշակերտ եղած ժամանակ, երբ նրա կյանքը թատրոնի հետ առմիշտ կապվեց Խոալիայում: Վեսետիկում նա խորացավ պատմության մեջ՝ ինչպես իին աշխարհի, այնպես էլ նոր, հափշտակվեց գրականությամբ՝ ոչ միայն հայ, այլև եվրոպական, սովորեց գրաբար, խոալերեն, կրոնի պատմություն և փիլիսոփայություն, իսկ հետո, տեղափոխվելով Սիլան, նրա Գեղարվեստից Ակադեմիայում սովորեց բեմական արվեստի գաղտնիքները: Այստեղ՝ Խոալիայում, նրա շողշողուն, բայց տակավին վարժանքի կարոտ տաղանդը մարզվեց բեմական այնպիսի վարպետների ձեռքի տակ, ինչպես երմետե Նովելին, երմետե Ցակկոնին, վերշապես՝ Ելենորա Ռուզեն: Բեմական այս աստղերի հետ նա շրջեց ամբողջ Խոալիան՝ մի ծայրից մյուսը:

Ընդամենը քսանամյա մի երիտասարդ էր Փափազյանը, երբ վերադարձավ հայրենի թատրոն: Ու երբ նա Պոլսուն երիտասարդության գլուխն անցած բեմ բարձրացավ, իր կյանքում առաջին անգամ Մավրի դժվարին դեր կատարելու, թատերասրահը որոտագին ծափահարությամբ ընդունեց նրան: Դրա պատճառներից մեկն էլ

այն էր, որ, տեսնելով Փափազյանին, հանդիսատեսը հիշեց տասնչորսամյա այն մանչուկին, որը դպրոցական մի հանդեսում հիացրեց բոլորին և հայ թատրոնի պարժանքը դառնալու լուրջ հոգսեր Ներշնչեց: Ավելի տարեց հանդիսատեսները հիշեցին Աղամյանին, նրա Օթելլոն և, ինչպես թերթերից մեկը գրեց, ամենքը «հածութեն ունեցան հաստատելու, թե հայ Երիտասարդ ողբերգակ դերասանը արձանավոր հաջորդն է Աղամյանի», իսկ մի այլ թերթի ասելով, եթե Փափազյանը կատարելագործի իր արվեստը՝ «պիտի ըլլա ոչ միայն հայ բեմի, այլ նույնիսկ Եվրոպական բեմին գնահատելի արվեստագետներն են մին»: Այդ աղմկալի հաջորդությունը, սակայն, ուներ մեկ այլ պատճառ ևս՝ գուցե ավելի կարևոր, քան վերոհիշյալը: Փափազյանի խաղացած «Օթելլոն» անդրանիկ այն ներկայացումն էր, որով վերացվում էր 30-ամյա արգելքը Պոլսի հայկական թատրոնի վրայից: Սա էր, որ Փափազյանի ներկայացմանը հաղորդեց բոլորովին ուրիշ մի հմայք: Բեմական նոր աստղի առաջ բերած ոգևորությանը միախառնվեց այն կարոտը, որ Պոլսի ժողովուրդն ուներ դեպի հայրենի թատրոնը և նրա բեմից լսվող հայ խոսքը: Եվ նա՝ Փափազյանով խանդավառված պոլսահայությունը, այդ ներկայացման մեջ դրեց շատ ավելի մեծ բովանդակություն, քան այն ժամանակ ի վիճակի էր անել նոր միայն ասպարեզ հշած, դեռևս չթրծված տաղանդը: Նա Օթելլոյի ողբերգության մեջ տեսավ ծակատագրի այն դառնությունը, որ զգացել ու ապրել էր ինքը իբրև ծնշված ազգության ներկայացուցիչ:

Հայրենասիրական այս մթնոլորտը 20-ամյա Փափազյանին դարձրեց «օրվա հերոս»: Այսուհետև նրա անունը, մի քանի տարի շարունակ, Պոլսում բոլորի շրթունքներին էր, մինչև որ հրավեր ստացավ ու տեղափոխվեց Կովկաս:

Այստեղ ևս, թեև միշավայրը տարբեր էր, հասարակական կյանքը՝ ուրիշ, և նրա կողքին էին բեմի այնպիսի երևելի վարպետներ, ինչպես Սիրանույշը, Արելյանը, Զարիֆյանը, հանդիսատեսը գըտավ և ծանաչեց նրա արտիստական խոշոր անհատականությունը: Հազիվ սիրված ու գնահատված՝ նա թողեց Կովկասը, կրկին անցավ Եվրոպա, այնտեղից ել՝ Պոլիս:

Հայաստան վերադարձավ այն ժամանակ, երբ այստեղ երկրի իշխանությունն արդեն ժողովրդին էր պատկանում, և հայ իրակա-

Նության մեջ առաջին անգամ պետական թատրոն էր ստեղծված: Ոգևորությամբ կպավ գործի, բայց Երկար չմնաց: 'Նվիրվելով ագգային թատրոնին՝ Փափազյանը չսահմանափակվեց միայն այն թատրոնով: Ու կրկին արտիստի առջև բացվեցին նոր հորիզոններ, նոր ծանապարհներ՝ ինչպես դեպի Արևելք, այնպես էլ դեպի Արևմուտք: Անցավ Վրաստան և Աղբբեշան, ոտք դրեց միջինասիական հողը, եղավ Հյուսիսային Կովկասում, հետո՝ Ռուսաստան, Ուկրաինա և այլևս, ինչպես հանգիստ չունեցող մի թափառաշրջիկ, երբեմն հայկական թատերախմբերի հետ, երբեմն էլ ոռու դերասանների խաղընկերակցությամբ, նա կտրեց մեր լայնածավալ երկիրը մի ժարից մյուսը. մեկ նրան տեսնում ենք հեռավոր Մորմանսկում, մեկ՝ հայկական լեռնային գյուղերում, մեկ էլ՝ մառախչապատ Լենինգրադում: Եվ եթե անցյալում նա լոկ որպես հայ էր մասնակցում իտալական թատերախմբերի շրջագայություններին, ապա այժմ, մասնավանդ սովորական կարգեր հաստատվելուց հետո, որպես հայ դերասան է մուտք գործում ոռոսական թատրոն: Եթե անցյալում աշխարհի բեմերով նա անցել էր իրու աշակերտ, թատրոնով հափշտակված խանդավառ մի պատանի, ապա այժմ նա հասուն վարպետ է, որի հաջողության աստիճանը որոշում էր նաև հայրենի թատրոնի մակարդակը:

Սի օր սև թիկնոցն ուսերին էլսինորի մոայլ սրահներում տըրտմաթախիծ շրջող Համետ է նա, որ խորհում է աշխարհի բախտի վրա, մեկ ուրիշ օր՝ աքսորից վերադարձած Կորրադո, Երբեմն՝ Ձին, մերթ կենսասեր Շոն-Շուան, մերթ էլ ազնվական շրջապատից վեր բարձրացած, բայց նրանից չազատագրված, դառնացած Արբենին, մեկ գահավեծ կործանման դատապարտված Պրոտասով է նա, բայց ամենից ավելի հաճախ Օթելլո՝ խարված ու դժբախտ Մավրը: Եվ եթե ամենուր սիրվել է, ապա նրա համար, որ անկախ այն բանից, թե ինչ դեր էր կատարում, շեքսպիրյան որ կերպարը՝ Օթելլո՝, Մակբեթ, թե Լիր արքա, միևնույն է, նրա խաղը հագեցած էր լինում բարձր մարդկայնությամբ:

Ուր ասեք, որ չի եղել նա, որտեղ ասեք, որ բեմ չի բարձրացել:

Եթե ուզեր, կմսար Մոսկվայում կամ Լենինգրադում: Մեր Երկրի այլ ո՞ր թատրոնն էր, որ փափագ հայտներ, և հաջորդ օրն իսկ նրա կազմում չհայտնվեր Փափազյանը: Այդպես էր ծրագրում Լու-

Նաշարսկին, նրան համագործակցության առաջարկ է արել ինքը՝ Ստանիսլավսկին: Նույնը նաև լենինգրադիները: Բայց նա մի տեղ մնալուն, մի թատրոնում խաղաղորեն հաստատվելուն գերադասել է թափառական դերասանի անհարմար, անհանգիստ կյանքը և գնացել հասել է երկրի խորքերը, մտել ժողովրդի մեջ ու եթե մի օր խաղացել է եղջերու որսացող տոննագուսի համար, ապա մի քանի օր անց նրա հանդիսատեսը եղել է Բալթիկ Շովի նավաստին:

Նա իր բեմական տեխնիկան մշակեց ու հարստացրեց այն աստիճան, որ աշխարհահոչակ դերասաններ տեսած մարդիկ անգամ, նրա արվեստը ընդունում էին որպես կատարելության այնպիսի մի չափ, որ կարող էր համեմատվել «հրաշքի» հետ: Իսկ եթե սրան ավելացնենք զարմանալի հարուստ նրա դիմախաղը, ապա միանգամայն պարզ կդառնա, թե ինչու Փափազյանի հայերեն կատարումը այդ լեզվին անծանոթ, հաճախ Շեքսպիրին ել անտեղյակ հանդիսատեսին անգամ մատչելի էր առանց թարգմանչի միջամտության: Գոյւների առատություն, երևակայության հանդուգն թոհիչք, հոգեբանական ծշմարտություններ հաստատող մանրամասների վարպետ:

Այն ել պետք է ասել, որ նորոգ կյանքը, մարդկային հարաբերությունների նոր որակը, որ տեսակ արվեստագետը հեղափոխությամբ նվազված երկրում, եղավ նրա տաղանդի ամրապնդման ու բարգավաճման այն նպաստավոր հողը, որ ընդլանեց, խոր և հիմնավոր հայացք մշակեց կյանքում մարդու ունեցած դերի նկատմամբ:

Այդպիսով, ուրեմն, տեղի էր ունենում, փոխազդեցություն՝ արտիստը դաստիարակում էր ժողովրդին, ժողովուրդն ել՝ արտիստին: Եվ բարերար այդ փոխազդեցությամբ պետք է բացատրել հայրենասերի այն կյանքը, որ նշանավոր արվեստագետն ապրեց պաշտպանք Լենինգրադում: Այդ ահեղ օրերին էլ Փափազյանը հավատարիմ մնաց Շեքսպիրին և նրա օգնությամբ շատ լքված սրտեր կյանքի կոչեց:

* * *

Այդ շրջագայությունները Փափազյանին համաժողովրդական համբավ ու փառք բերին: Մեկ առ մեկ այստեղ արձանագրել նրա շահած բոլոր հաղթանակները՝ որքան ել մեկը մյուսից առավել,

իհարկ չկա, բայց շրջագալությունների այդ ամբողջ պատմությունից անհրաժեշտ է երկու կետ առանձնացնել:

Մեկը բեմական անդրանիկ այցելությունն է Մոսկվա, երկրորդը՝ Փարիզյան հյուրախաղերը:

1928-ին Մոսկվայի Մեծ թատրոնի բեմում, Փոքր թատրոնի դերասանների խաղընկերակցությամբ, Փափազյանը հանդես եկավ Օթելլոյի դերում: Ինքը հայերեն, մյուսները ռուսերեն: Այդ օրերից շատ տարիներ են անցել, ուղիղ երեք տասնամյակ: Սակայն, թերթելով ռուսական մամուլը, դժվար չէ պատկերացում կազմել Մոսկվայում Փափազյանի ունեցած բացառիկ հաջողությունների մասին: Դա իսկական հաղթանակ էր: Շատերը, ինչպես իրենք են խոսովանել, թատրոն են գնացել թերահավատությամբ, մտածելով, թե տեսնելու են հնաբույր մի ներկայացում: Մինչդեռ, նրանց սպասում էր գեղարվեստական անակնկալ. նրանք տեսան ժամանակակից Շեքսպիր: Ոչ միայն տեսան, այլև գրեցին այն մասին, թե Փափազյանն այն վարպետն է, որ օրինակ է տալիս, թե ինչպես պետք է սովետական թատրոնում Շեքսպիր խաղալ, որ հնչի նոր, թարմ ու արդիական: Գրվեց նաև այն մասին, որ Փափազյանի խաղընկերները նշանակալի չափով գիշում էին նրան: Թատերախոսականների պսակը, սակայն, կազմեց թատերական մեծահամբավ գործիչ Նեմիրովիչ-Դանչենկոյի կարծիքն այն մասին, թե «Փափազյանը մեկն է կլասիկ խաղացանկի այն սակավաթիվ ու սքանչելի կատարողներից, որ արժանի են համաշխարհային փառքի»:

Եվ այդ փառքը չուշացավ:

Փափազյանի բեմական կյանքի ծանապարհը, զարմանալիորեն, շատ կողմերով իիշեցնում է Ադամյանի անցած ուղուն: Նա նման էր Ադամյանին ոչ միայն արտասովոր օժտվածությամբ, այլև դեռոք: Եվ ոչ միայն դրանով. նա եղավ այն քաղաքներում, որտեղ եղել էր Ադամյանը: Եվ ամենուրեք՝ նույն հաջողությունը, նույն աղմուկը նրա անվան շուրջը: Ադամյանի նման, Փափազյանը և անցավ Ռուսաստանի մի ծայրից մյուսը: Սակայն Ադամյանի փայփայած երազը՝ գնալ Եվրոպա, Լոնդոնում ու Փարիզում հանդես գալ շեքսպիրյան դերերով, այդպես էլ մնաց անկատար: Դա հաջողվեց իրականացնել Փափազյանին:

1932-ին սովետական կառավարությունը Փափազյանին ուղար-

Կեց Փարիզ՝ ֆրանսիական բեմում Օթելլո Ներկայացնելու: Փարիզում Փափազյանը բարձր պահեց սովետական թատրոնի պատիվը, թեև նրա խաղընկերներն էին ֆրանսիական բեմի նշանավոր վարպետները: Այստեղ ևս մամուլն արծանագրեց այն շահեկան տարբերությունը, որ գոյություն ուներ Փափազյանի և նրա հետ խաղացող ֆրանսիացի դերասանների միջև: Ֆրանսիական մամուլի էջերը լի են ոգևորված ժահատականներով, հիացմունքով, ինչպես և անկեղծ խոստովանությամբ, որ ալդքան նոր, այդքան խոր, պատմականորեն հարազատ և սոցիալական ըմբռնումով այդշափ սուր մեկնաբանություն կարող էր տալ միայն սովետական երկրի արվեստագետը:

Պայքարում շահած հաղթական դափնեջյուղով զարդարեց Փափազյանը հայրենի թատրոնի ծակատը: Եվ մեր երկրում, որտեղ դերասանը դասվում է ժողովրդի հոգևոր ուսուցիչների շարքը, կառավարությունն ու կուսակցությունը անհատուց չթողին Փափազյանի նման արտիստին: 'Սախ' Վրաստանը, ապա նաև Հայաստանն ու Ալբերժանը առանձին-առանձին ժողովրդական դերասանի կոչում շնորհեցին Փարիզից նոր վերադարձած հայ դերասանին: Եզակի և այլևս չկրկնված դեպք: 1956-ին Փափազյանը, որպես անդրկովկայան երեք հանրապետությունների ժողովրդական դերասան մեկեց Մոսկվա՝ մասնակցելու Հայ արվեստի և գրականության տասնօրյակին: Այստեղից վերադարձավ Սովետական Միության ժողովրդական արտիստի բարձրագույն տիտղոսով:

* * *

Յուրօրինակ մի կապով էր կապված Փափազյանը իր ժողովրդի հետ և վերջինս էլ՝ նրա: Հպարտ իր զավակով՝ ժողովուրդը դժգոհ էր նրա անվերջ բացակայումներից, ուզում էր իր մեջ ունենալ մեծագույն արտիստին: Ուզում էր, որ նա ոչ թե այցի գա իրեն, թեկուզ և հաջախ, այլ լինի այստեղ, իր կողքին, դառնա երևանցի: Փափազյանը, որի ականցին հասնում էին իր ընկերների ու հանդիսատեսի տրտունջները, խոստանում էր «չլինել անառակ որդի», մնալ Երևանում. մնում էր, բայց ժամանակ անց, կրկին թողնում էր Երեվանը և, իրեն ուսու դերասաններով շրջապատելով, թափառում էր քաղաքից-քաղաք: Բայց ուր էլ գնացել է նա, գնացել է որպես հայ՝

արվեստագետ, գնացել է որպես իր ժողովորդի զավակ, որպես մեր արվեստի պատգամախոս: Նա ամեն տեղ տարել է հայրենի թատրոնի դրոշը, որ մի ժամանակ եղել է Աղամյանի, Սիրանույշի ու Աբելյանի հզոր ծեռքերում: Ուր ոտք է դրել նա, այնտեղ հնչեցրել է հայոց լեզուն: Տարել է իր հետ Շեքսպիրին ու Նրա կրակով շերմացրել, բոցավառել է հազարավոր սրտեր:

Փափազյանը դասական խաղացանկի արտիստ է: Նա փորձեց հանդես գալ ազգային խաղացանկում, բայց դա նրա տարերքը չդարձավ: Սակայն այդ պարագան, ինչպես և հաջախ հայրենի բեմից հեռանալը, տարիներով ոուսական թատրոններում գործելը բնավ Փափազյանին չզրկեցին այն շաղախից, որ ազգային է դարձնում նրա արվեստը: Դաստիարակվեց իտալացի վարպետների հսկողության տակ, հիացավ ոուսներով ու ֆրանսիացիներով, բայց մնաց հայ: Ոչ միայն այն իմաստով, որ իր հերոսների կրած տառապանքները պատկերելիս նա ինչ-որ չափով պատմում էր և այն հալածանքների ու դարնությունների մասին, որ դարեր շարունակ ապրել է իր ժողովորդը անցյալում, նա հայ մնաց իր արվեստի եռությամբ և խառնվածքով, լեզվով և բեմական մտածողությամբ՝ նույնպես: Ոչ ոք չէր կարող տարակուսել, թե նրա Օթելլոն մավր չէ: Նույնը կարելի է ասել Արքենինի ազգային պատկանելության մասին: Նա գերազանց ուժով էր հաղորդում կերպարի ազգային պատկանելությունը, նրա միջավայրը, նրա հոգեբանությունը: Եվ, այդուամենալիք, մնում էր հայ արտիստ: Ոչ մի ֆրանսիացի կամ իսպանացի կասկածի չեն ենթարկի նրա Ռոն-Ժուանի կոլորիտի հարազատությունը: Նա ծշմարիտ վարպետ է այդ բնագավառում: Եվ այդ հայրազատությամբ հանդերձ, նա խաղում է այնպես, ինչպես մի դերասան, որ, ծնված ու մեծացած լինելով հեռավոր ափերում և կրելով իր մեջ հայրենի ժողովրդին, իր խոսքն ասում է այնքան ինքնատիպ, այնքան նուրբ ու խորաթափանց, որ շարժում է շատերի հետաքրքրությունը և ստիպում խոստովանել այդ: Եվրոպական և ոուսական մշակույթների լուրօրինակ խաչաձևում էր Փափազյանի արվեստը՝ ազգային ատաղծի վրա: Նա հայ արտիստ է և' խառնվածքով, և' եռությամբ: Ու, անկախ այն բանից՝ որտեղ է եղել, ինչ բեմ է բարձրացել, ում հետ է խաղացել, միևնույն է, ամեն պարագայում մնացել է հայ թատրոնի ներկայացուցիչ:

Եվ ամեն անգամ, իր շրջագալությունների ժամանակ՝ լինի դա մոսկովյան առաջին հյուրախաղերին, թե փարիզյան ելույթներին, երբ ներկայացել է արքեստի քննության դժվարին պահը, երբ պետք է եղել ուժերի գերագուս լարում, նա բեմ է բարձրացել այն գիտակցությամբ, որ իր հետ է ու իր մեջ իր ժողովուրդը: Այս միտքը, որ ինքը ներկայացնում է մի ամբողջ ժողովուրդ, զորացրել է նրա տաղանդը, անպարտելիության ուժ պարզել նրան: Եվ դա եղել է փոխադարձաբար: Փափազյանի հաջողությունը ժողովուրդը իր հաջողությունն է համարել, և նրա ամենավճռական խաղերին, որտեղ էլ այդ ուզում է եղած լինի, ժողովուրդն իր մեծ սրտով կանգնած է եղել նրա թիկունքին:

Եվ որտեղից էլ որ Փափազյանը վերադարձել է հայրենի երկիր՝ լինի դա Փարիզը, Լենինգրադը թե Թիֆլիսը, լինի դա Երևանը, նա բեմ է ելել Օթելլոյի հաղթական դերով: Եվ բոլոր ներկայացումներին տասից ավելի անգամ, հանդիսատեսի աղմկալի կանչերի ուղեկցությամբ բարձրացել է վարագույրը, և ամեն անգամ նա վաստակած խոնարհվել է իրմով հիացած ժողովուրդի առաջ: Այդ բուռնու չվերջացող ծափերն արտահայտում են հանդիսատեսի ոչ միայն հիացմունքն ու ոգևորությունը, այլև հպարտության այն զգացումը, որ իրենց հետ է, իրենց մեջ է Օթելլոյի դերի լավագույն կատարողներից մեկը աշխարհում:

Այսպիսով, ուրեմն, 20-ական թվականներին Մոսկվան, իսկ մի քանի տարի անց նաև Փարիզը, Փափազյանի Օթելլոն Շանաչեցին ու ընկալեցին այնպես, ինչպես դրանից հիսուն տարի առաջ, անցյալ դարի 80-ական թվականներին Աղամյանի Համետը, որ Ռուսաստանում առավել համարվեց եվրոպական շատ ողբերգակների խաղից: Եվ մի՞թե այս բոլորից հետո կարելի է տարակուսել, որ հայ բեմն իր կարևոր ներդրումն է արել շեքսպիրյան թատրոնում և որ նրա շքեղ պատմության մեջ, աշխարհահոչակ անունների կողքին, Աղամյանի հետ միասին, իր արժանի տեղն ունի և Փափազյանը:

* * *

Փափազյանի Օթելլոն քանդակ է, մի հոյակապ կերտվածք:

Փափազյանը երբեք չի կրկնում իրեն: Նրա ամեն խաղը դի-

տելիս թվում է, թե առաջին անգամն ես նայում: Նրա խաղը միշտ թարմ է ու նորոգ: Նա ի հայտ է բերում մեկը մյուսից հաջող և անակնկալ մանրամասներ, որ Փափազյանի անսպառ երևակայության արդյունքն են: Նա գիտե գտնել ոչ միայն մեկը մյուսին չկըրկնող, գեղեցիկ ծների մեջ դրված, այլև չափազանց խիզախ, տեխնիկապես համարյա անիրագործելի, հոգեբանական ծշմարտությամբ հագեցած և մշտապես ժանրակշիռ որևէ խոհով իմաստավորված մանրամասն: Դրանք զարդարում են նրա խաղը, հարստացնում գրական կերպարը նոր իմաստներով: Տասնամյակների ընթացքում նրա խաղը մշակվել է այն հաշվով, որ առանձին մասերը, ընդհանուր ոգուն ենթակա, կազմեն մի ձուլ և ավարտուն ամբողջություն:

Օթելլոյի տիսուր պատմությունը Փափազյանի համար բարձր սիրո և մարդու նկատմամբ ունեցած խոր հավատի, ընդհանրապես արդարության համար տառապած ու խորտակված մարդու ողբերգությունն է: Դա հոգու խորքից եկած բողոքի ծայնն է, երբեմն ծիչ, երբեմն շշուկ, բայց միշտ կրքոտ, միշտ սիրով լի դեպի կյանքը, մեծ հավատով առ մարդը, ծշմարտությունն ու արդարությունը:

Յո աչքերի առաջ Օթելլոն սպանում է իրեն, բայց վեհացնող ու ազնվացնող ինչ-որ մի զգացում է առաջ բերում այդ մահը, զգացում, որ շատ ավելի ուժգին է, քան մահվան պատճառած տառապանքը, ավելի զորեղ, քան անդառնալի կորստի նկատմամբ մարդկային անզորության գիտակցումը: Այդպես է, որովհետև Փափազյանի Օթելլոն մեռնում է, բայց հպարտ, հաղթանակած և բարոյապես վեհացած: Նա մեռնում է ոչ միայն վերագտած իր հավատը դեպի մարդը, այլև համոզված, որ իր մահով հաստատում է կյանքը, հաստատում է ցեղային պատկանելությունից անկախ ամեն մարդու՝ երջանկության նկատմամբ ունեցած հավասար իրավունքը: Օթելլո-Փափազյանը հրաժարվում է կյանքից, բայց այն գիտակցությամբ, որ իր մահով հաղթանակում է մարդկայնությունը, իսկական և անկեղծ սերը, ծշմարիտ մարդու իշեալը:

Օթելլոն Փափազյանի բոլոր խաղերի պսակն է ձանաչված, նրա գլուխգործոցը, բեմական արվեստի այն շքեղ նմուշներից, որ գամկում է հիշողության մեջ, մնում անմոռաց, երբեմ վայելած և այլևս երբեք չգերազանցված արվեստի և գրականության գերագույն հաջույքների կողքին՝ Արամ Խաչատրյանի Զութակի կոնցերտի,

Մարտիրոս Սարյանի կենսախինդ գգացումով լի կտավների, Զարենցի հզորաթափ պոեմների, Թամանյանի հոլակերտ կառուցների կողքին:

Անցյալ տարի բոլորեց կես դար այն օրից, երբ Փափազյանը թեմ բարձրացավ Օթելլոյի դերում: Դրանից հետո խաղացել է ավելի քան երեք հազար անգամ: Համաշխարհային թատրոնի պատմության մեջ աննախընթաց երևույթ, որ հավասարագոր է սիրանցի: Նրա անունն այլևս կապվեց շեքսպիրյան այդ կերպարի հետ, ինչպես և Օթելլոյի պատկերացում՝ նրա անվան հետ: Փափազյանի մարմնավորած Օթելլոն ավանդական այնպիսի ուժ ծեռք բերեց, որ շատ հանդիսատեսներ այլևս չեն հաշտվում Օթելլոյի մեկ այլ պատկերացման հետ: Դրա համար էլ երբ Օթելլո ենք ասում, Փափազյան ենք հասկանում, երբ Փափազյան ենք ասում, Օթելլո ենք պատկերացնում:

* * *

Թեև Փափազյանը ավելի հաճախ բացակա է եղել, քան մասնակցել մեր թատրոնի կյանքին, այնուամենայնիվ, չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ հազվագյուտ դերասաններ են ազդեցության այնպիսի զորեղ չափերի հասել, որքան Փափազյանը: Փափազյանի արվեստը իրեն է ենթարկել դերասանական մի քանի սերունդ: Բեմ ոտք դրած երիտասարդ և ոչ մի դերասան գերծ չի մնացել նրա տաղանդի գերող հմալքից, նույնիսկ նրանք, որ հետագայում, սկզբունքային վեճի մեջ լինելով նրա հետ, իրենց համար որոնել են արվեստի զարգացման այլ ուղիներ, անգամ նրանք չեն զլացել խոստովանել, թե ինչպես են ժամանակին դյութված եղել նրա ամենահափշտակիչ խաղով: Դրանով հաստատվում է այն միտքը, թե այդքան բացակայելով հանդերձ, նա ներկա է եղել: Անգամ բացակա՝ նա ապրել է ամեն մի դերասանի խաղի մեջ, մեկի մոտ իբրև խոսքի շեշտ և ինտոնացիա, մյուսի մոտ իբրև գեղեցիկ մշակված կեցվածք, մի երրորդի մոտ՝ պլաստիկականության նորը զգացողություն:

Թատրոնի պատմությունից, օրինակ՝ Սիրանույշի ու Երմոլովյանի կյանքից հայտնի են դեպքեր, երբ ներկայացման ընթացքում,

հմայված խաղընկերը՝ փորձված դերասան, դուրս է եկել կերպարից, մոռացել է, որ բեմում է և շվար հիացմունքով հետևել է դերասանուին խաղին: Փափազյանի կյանքից պատմում են այլ, ծիշտ հակառակ, դեպքեր: Նրա ներկայացումների ներգործության ուժը երբեմն այնպիսի ցնցող չափեր է ընդունել, որ հետը խաղացող ոչ դերասանը, անփորձ խաղընկերը, բեմում ամեն ինչ իրեն ենթարկելու արտիստի հզոր թափից ուժ առած, մտել է կերպարի մեջ, անկեղծորեն ապրել նրա ցավերով ու տառապանքներով:

Փափազյանի արվեստի գերող հմայքը տարածվել է նաև բեմական շրջապատից դուրս: Խոսքն այն բազում պատանիների մասին չէ, որ առաջին անգամ տեսնելով Վարպետի խաղը՝ այնքան են հափշտակվել, որ բեմին նվիրվելու ձակատագրական վճիռ են կայացրել: Եվ անկախ այն բանից՝ դարձե՞լ են արդյոք դերասան թե ոչ, — որովհետև կամենալը դեռևս կարենալ չէ, — եականը մեծ արվեստի ներգործուն ուժն է, որ մարդկանց մղում և ծգում է տալիս: Այս մասին խոսելիս ծիշտ կինի ասել, որ Փափազյանի ագործության շրջանակները չափազանց ընդգրկուն են եղել: Լինելով արտիստներից ամենաարտիստիկը, նա, գուց ավելի քան որևէ մեկը, գեղեցկության զգացում է հարուցել հանդիսատեսի մեջ՝ այդ հասկացության ամենակատարյալ ըմբռումով: Նա հանդիսատեսին ներշնչել է արտիստայնություն, և ամեն մեկի, անկախ նրա գրադարձից, մղել է վիրտուոզության, այն բանին, որ ամեն մարդ իր գործի մեջ պետք է արտիստ լինի:

Երևի հենց դա նկատի ուներ ոուս թատերագետը, որ ազնիվ վրդովմունքով առարկելով Փափազյանի թափառումներից դժգոհողներին, ասում էր՝ թող իրենք, թատերական այդ հեղինակությունները փորձեն գնալ գյուղերը, երկրի ամենախոլ անկյունները, ուր չկա բեմ ու հարմարություն, և խաղան Շեքսպիր, խաղան առանց շրեղ ծևավորման, առանց բարձրորակ խաղընկերների և խաղան այնպես, որ, ինչպես դա հաճախ պատահում էր Փափազյանի ներկայացումներին, նրանց ելույթն էլ դառնա իրադարձություն, կենսագործական փաստ հանդիսատեսի կյանքում:

* * *

Փափազյանը ոչ միայն նշանավոր դերասան է, այլև նույնքան

Նշանավոր գրող: Ոչ ոք չեր կասկածում, որ աշխարհ շրջած, իտալական, ֆրանսիական և ոուսական բեմերի մեժագույն դեմքերին ծանաչած, հայրենական թատրոնի անզուգական ուժերի հետ համագործակցած Փափազյանը պատմելու հարուստ նյութ կունենար ամբարած: Բայց բոլորի համար անակնկալ էին նրա հուշերի գրական հազվագյուտ արժանիքները՝ արտահայտիչ պատմելածն, տիպեր կերտելու զարմանալի հմտություն, վերլուծող միտք, նուրբ հումորով լի աշխայիշ գժանկարներ, ջերմ քնարականությամբ համակված էջեր, գործուն երևակալություն: Եվ եթե այս ամենին ավելացնենք ոչ միայն գրքի բացառիկ հարուստ բառապաշարը, այլև ձկուն ու գունագեղ ոճը, որ լինելով արևելահայ լեզվի ատաղծի վրա արևմտահայերենի ոճերն ու ծեսերը հաջող ներդաշնակելու փորձ, ապա միանգամայն հասկանալի կլինի այն խանդավառ մթնոլորտը, որ առաջ բերեց «Հետադարձ հայացքի» երկիատոր հուշագրությունը: Ընթերցողն ընդունեց և սիրեց գիրքը, իսկ Փափազյանին հայտարարեց երևելի գրող, որի հետ չափվել կարող են վարպետ հեղինակներ միայն: Եվ երբ համեմատում ենք Փափազյանի բեմական կատարումները նրա իսկ գրական արժեքների հետ, դժվար է մեկին մյուսի նկատմամբ առավելություն տալը, որովհետև դերասանն ու գրողը մրցման մեջ են միմյանց զգիշող և հավասար ուժով: Եվ ինչ կարևոր է, վերջապես, թե դրանցից որն է առավել, երբ երկուսի ակունքն էլ նույն է՝ Փափազյանը, որով հիացած է նրա ժամանակակիցը:

Ահա այսպես է ներկայանում մեզ սովետահայ մշակույթի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը՝ Վահրամ Փափազյանը:

Գրում ենք նրա մասին, խոսում, սակայն այն դառը համոզումով, որ ոչ մի գեղեցիկ խոսք, որքան էլ անկեղծ ու համակ ոգևորություն, ի վիճակի չէ քիչ թե շատ ամբողջական պատկերացում տալու նրա հոյակապ կատարումների մասին նրանց, ով Փափազյանին բեմում չի տեսել: Մեր սերունդը և մեզանից մեծերը, որ մի քանի տասնամյակ եղել են ժամանակակիցը արտիստի, վկա են եղել նրա երիտասարդության հզոր թափի բռնկուն փայլատակումներին, երջանիկ առավելություն ունեն այն սերնդի նկատմամբ, որ նրան միայն հիմա է տեսնում: Ուրեմն, որքան բախտավոր ենք մենք, նույնքան ավելի զուրկ կլինեն դրանից գալիք սերունդները,

որ չեն տեսնելու Փափազյանի խաղը: Նրանք կկարդան ժամանակակիցների թողած վկայությունները արտիստի մասին և, մի աղոտ գաղափար կազմած նրա հանձարից, կիամակվեն ազգային հպարտության բարձր զգացումով, ձիշտ այնպես, ինչպես ալժմ մենք ենք հպարտ, որ մեր թատրոնի անցյալը ծոխացած է եղել Աղամյանի և Սիրանուշի անուններով:

* * *

Ըստունված է հորելլանական հանդեսներին լավագույն ցանկություններ մաղթել այն անձին, որ պատճառն է այս բազմամարդ հավաքութիւն: Սիրելի և առաքինի սովորություն: Եվ, այնուամենայնիվ, ուզում ես շեռվել ավանդական այդ սովորութիւնը: Ի՞նչ ցանկանալ նրան, եթե ամեն ինչ՝ և՛ առողջություն, և՛ եռանդ, և՛ հոգեկան թարմություն, և՛ գործելու կամք,— այլ խոսքով այն ամենը, ինչ կարող է թելադրել խոսողի բարի սիրտը,— նա ունի և ունի այնքան շատ, որ կարող է բաժին հանել ուրիշներին ևս:

Արդ, թույլ տվեք բոլորի անունից՝ և՛ նրանց, որ ներկա են այս հավաքութիւն, և՛ նրանց, որ կարող էին լինել, բայց, հակառակ իրենց կամքի նստած են տանը, և՛ նրանց անունից, որ Երեսականից շատ հեռու են՝ հսկա տարածությամբ մեզանից անջատված, բայց նոյնքան հարազատ ու նոյնքան չերմությամբ լի,— ահա այդ բոլորի անունից շնորհակալության խոսք ուղղել Վահրամ Փափազյանին՝ բուռն կրքերի, մեծ մտքերի ողբերգակին, այն արվեստագետին, որի Ներկայությունն իսկ շուրջ է տվել մեր թատրոնին, հանդիսավորություն, ազնվականություն, փայլ, չթողնելով երբեք, որ թատրոնը դադարի թատրոն լինելուց:

Փափազյանը ստիպել է հանդիսատեսին թատրոն գալ տոնական տրամադրությամբ, ոչ միայն արտաքուստ զարդարված, այլև հոգեպես խնդուն, լի՝ գեղագիտական բավականության մեծ սպասումներով, որ մարդս ունենում է արվեստի բարձրաթռիչք նմուշներին ի տես, և հանդիսատեսը սիրով ենթարկվել է նրան:

Քանի-քանի սերունդ է ոտք դրել թատրոն Փափազյանի խաղը դիտելու, իմանալով, որ ոչինչ չի թողնելու այստեղ, իր խանդավառ

ծափերի արծագանքից բացի, բայց տանելու է հետը հոգեկան այն-պիսի բերկրանք, որի ծշմարիտ գինը անկարելի է սահմանել:

Սիրելի Վարպետ, սրտագին շնորհակալություն հոգեկան այն վայելքների համար, որ այսքան տարիներ պատճառել է քո ար-վեստը: Հանում ենք մեր գլխարկները և խոնարհում ենք մեր գլուխ-ները բազում հաղթանակներ շահած քո արվեստի առաջ, հավա-տացնում, որ հայ ժողովուրդը, որին պատկանելու հպարտությունն ես կրում քո մեջ, այսօր բազմապատիկ հպարտ է քեզնով աշխարհի առաջ, բոլորի առաջ:

ԶԵԿՈՒՑՈՒՄ, ՈՐ ԱՅՊԹԵՍ ԷԼ ՀԿԱՅԱՑԱԿ

Վարպետաց վարպետ.

Երկար մտածեցի, շատ երկար, թե ինչ ասեմ և ինչպես ասեմ: Առաջին անգամը չէ, որ խոսում եմ Զեր մասին, և առիթներն ել եղել են բազմազան: Այսօր առանձնահատուկ օր է: Դուք ոտք դրիք Զեր կյանքի 80-րդ տարին: Մտածեցի ու գտա, որ ամենապատշաճ ձևը, երևի, կիհնի ժողովրդի անունից խոսք ասելը: Նրա տարբեր խավերի՝ ուսուցչից մինչև արհեստավորը, գյուղացոյց մինչև ծարտարապետը, բանվորից մինչև ֆիզիկոսը, մի խոսքով՝ այն բոլոր հայերի անունից, որ այս փոքրիկ, բայց գեղեցիկ երկրի տերն են, համայնական դաշտերից մինչև գիտնականներով, նկարիչներով, բանաստեղծներով, ուսանողներով լի երևան քաղաքը և, իհարկե, այն հայերի նույնպես, որ օտարության դատապարտված, ապրում են մայր հայրենիքից հեռու: Խկապես՝ ի՞նչ կասեր ժողովուրդն իր զավակին՝ նրա ծննդյան օրը:

Ու քանի որ ամբողջ ժողովրդի սրտից է լինելու իմ խոսքը, թույլ տվեք, մեծահամբավ արտիստ, մոռանալ մեզ իրարից բաժանող քսանամյա տարածությունը, թույլ տվեք մոռանալ մի պահ այն տարբերությունը, որ Զեզ դնում է լեռան կատարին, իսկ ինձ նույն այդ լեռան փեշերին, թույլ տվեք մի կողմ դնել Զեր բոլոր տիտղոսները և պաշտոնական Դուքը փոխարինել մտերիմ դուռով և խոսել այնպես, ինչպես կխոսի ծնողը հարազատ որդու հետ:

* * *

Ես աշխարհ բերի քեզ այն օրերին, երբ ծնշված մի ազգություն էի, տառապած ու հալածված, ավեր ու գաղթ տեսած, սրի քաշված, բայց չթաղված, մեռած ու կրկին հարություն առած: Ես

ապրեցի, մնացի աշխարհիս երեսին տոկալով ու մաքառելով, իմ սիրտը բարի էր, կյանքիս տենչը՝ անմար: Հազարամյակների միջով էի անցել, ուստի և հասկացա, որ պետք է շինարար զավակներ ունենալ, տաճարներ ու ամրոցներ կանգնեցնել, հոգիներ կառուցել: Ես հասկացա, որ Շնշված ու փոքրաթիվ մի ազգ կարոտ է մեծ անհատների՝ գրականության, երաժշտության, նկարչության, գիտության մեջ: Եվ, իհարկե, թատրոնում: Ու ես քեզնից առաջ աշխարհ բերեցի Պետրոս Ադամյանին ու Սիրանույշին: Ադամյանը մոալլ ու Շանր Շակատագիր ունեցավ, բայց իր կյանքի խորհուրդը կատարեց և հանգավ այնպես, ինչպես խարուկն է մարում՝ բոցը մի պահ երկինք նետելով, ապա իր կրակը մոխիրների տակ անթեղելով: Աշխարհ գալով՝ դու Շանապարհ ընկար ադամյանական կրակը քո սրտում: Շամփի վրա էիր, որ հանդիպեց քեզ Սիրանույշը, բարձրաշնորհ մի եակ, որ քեզ ու շատերի համար ուսուցիչ եղավ, որի օրինող աջը քո գլխի վրա եղավ: Որոշեցի քեզ ոչինչ չխնայել, տալ քեզ ամեն ինչ՝ և՛ գեղեցկություն՝ առասպելական չափերի հասնող, և՛ անսպառ հմայք, և՛ բարձրաթոիչ միտք, և՛ զգալուն սիրտ, և՛ հուժկու խառնվածք, և՛ ծովածավալ երևակայություն: Նաև՝ բեմական տեխնիկա՝ վիրտուոզ չափերի, որի օգնությամբ արտիստի համար անկարելին կարելի է դառնում: Եվ այս ամենի հետ՝ աստվածային այն կայծը, որ մարդուն հասցնում է անմատչելի բարձունքների:

Ու ես, քո Շնողը, քեզ աշխարհ բերի՝ քեզ վրա դնելով մի խորհուրդ, մի պարտք՝ ներկայացրու ժողովրդիդ այնպես, որ ոչ միայն լավ ու բարի մտածեն նրա մասին, այլև հիանան, համոզվեն, որ այս ժողովուրդը իր մտքի ու հոգու անհատնում գանձերով իր սեփական տեղն ունի ազգությունների շարքում:

Ես քեզ աշխարհ առաքեցի, որ քո մեջ եղած կրակով սրտեր վառես, բարեկամության խորհուրդով գնաս օտար ափեր, եղբայրության ու սիրո կամուրջ դառնաս մեր ու նրանց միջև:

Անհեռատես մարդիկ քեզ շատ են կշտամբել թափառիկ կյանք վարելու համար, բայց նրանք չգիտեն, որ ես՝ Շնողդ եմ այդ պատվերը տվել քեզ: Այն, ինչ վստահել չէի կարող նրանց՝ քեզ եմ տը-վել: Նրանք չհասկացան, որ ամեն մի ժողովուրդ, իսկ թվով փոքրը՝ ևս առավել, պիտի իր դեսպաններն ունենա ինչպես գիտության,

այնպես էլ երաժշտության, ուազմի ու գրականության մեջ, թատրոնի, որոնց հանձարների շնորհիվ մի ամբողջ ժողովուրդ հանրածանաչ է դառնում աշխարհին: Իմ զավակներից մեկը՝ քո ժամանակակից Դերենիկ Դեմիրջյանը, նույր ճաշակի, սուր ու թափանցող մտքի տեր մի մարդ, որին իհմա ամենքը իմաստուն են համարում, շատ վաղ հասկացավ, որ մեր իրականությունը նեղ էր գալու քեզ. «Մեր հասարակությունը փոքր լիծ էր այդ մեծ նավի համար»:

Այդ ես եի, որ ասի՝ գնա ու չափվիր աշխարհի մեծերի հետ և տուն չդառնաս, քանի դեռ նրանք՝ այդ աշխարհածանաչ արվեստագետները, սիրով թե ստիպված, հոժարակամ թե պարտադրված, տեղ չտան քեզ իրենց կողքին:

Դու իմ կամքը կատարեցիր անվարան: Տանելով քո արվեստը ուրիշ երկրներ, ուրիշ թատրոններ, նույնիսկ ուրիշ լեզուներով, երբեք չդադարելով քո ժողովուրդը լինել:

Այ անգամ չէ, որ խոստովանել ես, թե աշխարհի սեղանին որպես կոչնական հաճախ ես նստել, բայց քո հոր տան համեստ սեղանից ես միայն կշտացել: Եվ ծիշտ ես միանգամայն՝ թող արծիվը հազարավոր փարսախ հեռու թոշի իր բնից, թող անչափելի հորիզոնների գլխապտույտ հարթությունները լայնացնեն նրա բիբերը՝ միշտ իր հարազատ ժայռի գագաթին է ամփոփում նա իր հոգնած թևերը, երբ արևն իշնում է ծյունոտ լեռներին:

* * *

Եվ դու, սիրելի զավակն իմ ժողովուրդի, ընդամենը տասնչորս տարեկան էիր, որ առաջին անգամ բեմ բարձրացար: Հիշո՞ւմ ես: Աշակերտ էիր, ներկայացումն էլ՝ դպրոցական մի ցերեկութ Պոլսում: Ու ամենքը, ոչ միայն ծնողք և ուսուցիչք, այլ նաև թերթերը դեռ այն ժամանակ գրեցին, թե ամեն ինչ տրված է քեզ «... ապագա պարծանքը ըլլալու համար հայ բեմին և անմահ Աղամյանի աջունեն նոր փլունիկ մը վերականգնելու»:

Դա ծշմարտություն էր: Իսկ ծշմարտությունն այնպիսի մի բան է, որ վաղ թե ուշ հաստատվում է: Ու Վենետիկում, բեմի վարպետ իտալացի Կալաբրեզին երկրորդեց՝ «Մեծ արտիստ մը ըլլալու բոլոր

193

ձիրքերը ունիս»: Իսկ հետո հոչակված դեմքեր՝ Երկու Երմետե՛ մեկը Նովելի, մյուսը Ցակկոնի, դրանց հետ նաև Էլենորա Դուգետ, առան քեզ իրենց թների տակ ու ցուց տվին աշխարհի բեմահարժակները տանող ծամփաները:

Թատրոնի ասպարեզը ոտք դնող Երիտասարդների համար քռկյանքի պատմությունը մի դաս է:

Բեմահարթակը, որքան էլ ընդարձակ՝ փոքր տարածություն է Ներկայացնելու և պատկերելու համար շատ երկրներ և շատ դարաշրջաններ՝ անհիշելի ժամանակներից մինչև մեր օրերը: Ինչ հերոսներ միայն չի տեսել բեմը՝ Եգիպտական փարավոնից մինչև հսպանական տորեադրո, հոռվմեական պատրիկից մինչև քաղաքացիական կոհվների մարտիկը:

Քո կյանքի ընթացքն այնպես եղավ, որ շատ երկրներ ու տարբեր ժողովորոններ տեսար՝ Խոտալիա, Ֆրանսիա, Անգլիա, Իսպանիա, Հունաստան, Եգիպտոս, Ռուսաստան: Ոտքիդ տակ առար երկրագնդի կեսից ավելին: Լեզուներ իմանալով, դու կարողացար օտար վայրերում անմիջական շփումներ հաստատել այդ երկրի ու նրա մարդու հետ, զգալ ոչ միայն բնությունը, այլև այն տարբեր հայացքը, խոսվածքն ու շարժվածքը, որ զանազանում է, ասենք, գերմանացուն իտալացուց: Դու որոնեցիր ոչ ալնքան տարբերիչ կողմերը գուցե, որքան այն, ինչ մարդկանց՝ տարբեր ծովերի ու ցամաքների, տարբեր գործի ու հավատքի, մերձեցնում, կապում է միմյանց:

Եվ իհմա, ինչպես պարզվում է քո գրքերից, դեռ բոլորովին Երիտասարդ, երկրե երկիր անցար ոչ այն մարդու հոգեբանությամբ, որ տարիների կոտակած եռանդը քամուն է տալիս մեկ այս, մեկ այն քաղաքում, մեկ թղթախաղի սեղանի շուրջ, մեկ գինարբութի մեջ: Շրջագայությունը քեզ համար նախ աշխարհագրության, ապա և պատմության դասագիրք է եղել՝ հասկանալու այն ժողովրդին, որի հետ ես դու, գտնելու այն անկրկնելի բնորոշը: Որ այդ ազգությունը, երբեմն մոռացված ու հալածված, ունի այս մեծ ու ընդարձակ աշխարհում, այս պայծառ կապուտի տակ, որ երկինք է կոչվում: Իսկ այդ նշանակում է գտնել գլխավորը՝ ժողովրդի գոյության իմաստը, նրա պատմության փիլիսոփայությունը: Լոնդոնը քեզ համար Շեքսպիրի հայրենիքը չէր միայն, այլ նաև Բրիտիշ-Մուզեւ, ոչ էլ Փարիզը Կոմեդի ֆրանսեզի նման թատրոն ունեցող քաղաք,

այլ նաև Լուվր մտնելու թանկ հնարավորություն: Եվ դու ժամերով կանգնել ես մարդկային հանձարի պայման դրսնորումների առաջ. մի դեպքում՝ Խոալիայից Փարիզ ընկած Մոնա-Լիզայի առեղծվածային ժպիտը, մյուս դեպքում հունական մտքի թոփշքը՝ Պարենոնն ու Երեքտենոր: Այդ համր ժամերը, կրթել ու մշակել են քո միտքը, քո սիրտը, մղել քեզ մի ուրիշ երկիր, դեպի մի նոր ժողովորդ, ստիհաբել քեզ գիշերներ լուսացնել գրեթի վրա, պատմության խորքերը սուզվել, բլուզանդական արքունի դավերն իմանալ, բերանացի անել ոչ միայն հույն և բլուզանդ պատմիչներին, այլև լատին բանաստեղծներին:

Ու դու Նետվեցիր աշխարհ, նրա բեմերը՝ գիտելիքների հարուստ պաշարով:

Սա քեզ համար չեմ ասում: Ասում եմ այն երիտասարդների համար, որ մեր թատրոնի վաղվա օրն են:

Բնությունը շատ բան կարող է տալ, միայն թե նրա տվածք պետք է մշակվի, պետք է զարգանա, հղկվի ու խորանա:

Մեծությունը ամայի տեղում չի ծնվում: Մեծությունը, եթե իրոք մեծություն է, ծնվում է ազգային հողի վրա, առանց, սակայն, սահմանափակելու իրեն հայրենականով: Ոու, սիրելի զավակս, հայոց պատմությունից գնացիր դեպի համաշխարհային պատմությունը, հայոց արքեստից գնացիր դեպի համաշխարհային արվեստը, ազգայինից՝ համամարդկայինը: Եվ տուն դարձար՝ բազմապատիկ հարդարացած, քան, երբ ցուադ ձեռքիդ ծանապարհ էիր ընկնում օտար երկրներ:

Դու ազգային արտիստ ես: Ոչ թե խաղացանկով, թեև մեկնեկ հայկական դերեր էլ խաղացել ես: Ազգային ես ոգով, լեզվով, մոտեցումով: Քո խոսքը հայկական շեշտ ունի և շատ ավելի հարազատ է ազգային հասկացողությամբ, քան իր զավադի շեշտադրումները մինչև վերջ չհաղթահարած դերասանինը: Խոալիա էիր, Ֆրանսիա, իսկ հետո էլ Ռուսաստան, չինական պատով չպարապեցիր քեզ, ընդհակառակը, հափշտակվեցիր, ագահաբար վրա ընկարվեցնելու՝ ինչ պակասում էր քեզ, համեմատեցիր, ստուգեցիր, մի խոսքով՝ ապրեցիր հագեցման այնպիսի պահեր, որ անհրաժեշտ էին քեզ, ինչպես արևի ձառագայթը ծաղկին: Հիշիր քո ժամանակի մյուս մեծերին՝ Զարենց, Թամանյան, Սարյան: Կողանային նրանք

այս, ինչ եղան, եթե ամփոփվեին ազգայինով: Նրանք, ինչպես նաև դու, ածեցին ու հասակ առան, որովհետև կյանքի բախտավոր դասավորությամբ երիտասարդ տարիներին, երբ մտքի ու հոգու ընկալումը հասնում է գերագույն լարվածության, գտնվեցին գրականության և արվեստի միջազգային խաչմերուկներում:

Եվ դու մեծ ծանապարհ ընկնելուց առաջ, դարձար քո ժննդավալը, Պոլիս, հայրենի թատրոն՝ մայր ժողովրդի օրինությունն առնելու:

Բայս տարեկան եիր ընդամենը, մի պարզ պատանի, գեղեցկադեմ, ծով հմայքով, երազ աչքերով, բուռն ծգուռմներով՝ ինչպես կապույտ երկնքից իշած մի ժիր: Հանդուգն եիր նաև: Եվ շատ: Ալդպես էլ պետք է լիներ: Էլ ի՞նչ երիտասարդ, որ հանդուգն չլինի: Ու դու ինքնավստահ նետվեցիր ասպարեզ: Խաղացիր Օթելլո, Սանատրուկ, Կորրադո: Ու քեզնով խանդավառ պոլսահայ հասարակությունը ի լուր աշխարհի հայտարարեց, թե նոր Ադամլան է ծընվել: Եղան այնպիսիք, որ դեռ այն օրերին մարգարեացան՝ եթե ջանք թափի, կդառնա համաեվրոպական հեղինակություն:

Հիշո՞ւմ ես, թե՞ օրերի ու տարիների աղմուկը խլացրել ու մոռացնել է տվել: Չեմ կարծում, բայց արի միասին՝ ժնող ու որդի, հիշենք անցած-գնացածը: Թերթերը հեղեղված էին գովեստներով: Եվ մի օր դու բացեցիր թերթերից մեկն ու կարդացիր.

«Ապագան իրն է. ինք անով հաղթական պիտի ըլլա, իր անհավասարելի փառքը պիտի կազմե այն համբավը՝ որով արդեն պսակված է իր ծակատը, այսչափ երիտասարդ հասակի մեջ և որ տարիներուն հետ արևու չափ լայնասփյուր ու պայծառ պիտի փողփողե աշխարհի չորս կողմը, կազմելով նաև բոցավառ փառքերեն մեկը հայ ազգին»:

Ժպտո՞ւմ ես: Իրավունք տալիս եմ քեզ, միաժամանակ հասկանում՝ Շոռում է, բայց դա՞ է կարևոր այս պահին՝ վաթսուն տարի անց, թե այն ծշմարտությունը, որ իբրև մարգարեություն թաքնըված է ոչի վերամբարձության ետևը:

Թեև բոլորովին երիտասարդ, բայց քեզ արդեն Վարպետ էին կոչում: Եթե չինսեին քո արտակարգ տվյալները, տպավորությունը, իհարկե, թերևս ալդչափ ցնցող չէր լինի: Բայց կար քեզանից դուրս

ն քեզանից անկախ զորեղ մի ազդակ, որ կրկնակի չափով բարձրացնում էր թողածդ տպավորությունը:

Քեզ եմ ասում, բայց կամենում եմ, որ ասածս լսեն և ականջներին օդ անեն հիմիկվա երիտասարդները: Թող սա ել քո կյանքի պատմության երկրորդ դասը լինի նրանց համար:

Բնությունը որքան ել շռայլ լինի մեկի հանդեպ, միևնույն է, նրա ապագան չի լինի այն, ինչին նա սպասում է, եթե մայր-քնությունից առատորեն շոյված մարդո չզգա կյանքը, չզգա ժամանակը: Ո՞ւմ և ինչի՞ է պետք ապառաժի վրա ընկած ժաղկի սերմը: Մեծ է նա, ով մեծ էլ ասելիք ունի: Մեծ է նա, որ ժամանակի մեջ գրտնում է իրեն, գտնում ձիշտ, ձիշտ է տեսնում կամ զգում ժամանակի հոլովումը, հասկանում է, թե այդ ընթացքը կյանքն առաջ է մոլում, թե ետք: Ասելիքը ծնվում է ժամանակի զգացողությունից: Ասելիքն առածգական ուժ ունի, կարող է ընդարձակվել և հակառակը՝ սեղմվել, փոքրանալ: Եթե ձիշտ ես ասում, ասում ես ժամանակին, ասում ես հենց այն, ինչ սպասվում է, ապա հրացանի մի զարկը շիկացած այդ մթնոլորտում որպես թնդանոթի պայթյուն, որպես ամպրոպ է ծալթում:

Քո «Օթելլոն» մի այդպիսի պայթյուն էր:

Հարցն այն չէ, թե հայկական ներկայացումներն արգելված եին, և հանկարծ՝ հայոց լեզվով բեմադրություն, այն էլ ծեքսպիր, մանավանդ՝ «Օթելլո»: Դա լոկ մի արտահայտությունն էր պատմական մեծ տեղաշարժի: Բոնակալ սուլթան Համիդին փոխարինել եին նոր մարդիկ, նոր ուժեր, որոնց ազդարարած սահմանադրության համաձայն, երկրում ապրող օտարն էլ հավասարապես ազատ էր: Ու դու, որ մի ծնշված ժողովրդի զավակն ես, համարձակ կանգնեցիր ամբողջ հասակով, գլուխու բարձր, մի հպարտ հայացք նետեցիր աշխարհի չորս ծագերը:

Միանգամայն իրավացի ես, երբ ասում ես, թե քո «Օթելլոն» մի ներկայացում լինելուց ավելի՝ տարիների խավարից ազատագրության հուլս փայփայող մի ամբողջ ժողովրդի հավաքական պահանջն էր, ինքնագիտակցության առաջին երգը, որի շեփորումը բախտի բերումով վիճակվել էր քեզ:

Ժամանակը բարձրացրեց քեզ, լուսապսակ դրեց քո ծակատին, բայց և պարտավորեցրեց: Ժամանակը մեծ խորհուրդ դրեց

քեզ վրա, մանավանդ որ ոռմանտիկ խանդավառությանը հաջորդեցին հուսահատության ժանր ժամանակներ: Դու եղար պատմական բավական բարդ խմորման ծնունդ՝ ազատ կյանքի երազանք, ժրագիր ու ծգուում, դրանց իրական հնարավորությունների առաջին քայլեր, և, հանկարծ, այդ բոլորի հակառակը՝ ոչ միայն հուլսերի խորտակում, այլև հոշոտված ու արյունաթաթախ մի հայրենիք: Ու հետևանքը՝ հասկանալի մի պահանջ. ազգի արդար դատը ներկայացնել աշխարհին, ասել մարդկությանը, թե առանց այն էլ սակավաթիվ ու իհմա էլ սրի քաշված այս ժողովուրդը դարերի ընթացքում մտցի ու հոգու ինչ գանձեր է կուտակել, որ մի ազգի ազնվականության վկայականն են:

Ու այսպես, ժամանակը քեզ դարձրեց մի Խորայել Օրի, մի Հովսեփ Էմին՝ արվեստում: Եթե սրանք օտար պետությունների դռներ բախեցին, ապա դու, քո մեծ նախորդների օրինակով, ձանապարհ պիտի գտնեիր դեպի օտար սրտերը: Դու հայրենիք որոնեցիր ու աշխարհե-աշխարհ անցնելով, կամեցար հաստատել քո ժողովուրդի կենսունակության հիմքերը: Քո ասելիքը դարձավ ազգահաստատման գաղափարը, պաշտպանությունն այն մտցի, որ մի ժողովուրդ, որի ազնվականության վկայականի տակ իրենց ստորագրությունն են որել Բայրոնը, Բրյուսովը, Ստրժիկովսկին և ուրիշներ, իրավունք ունի իր խաղաղ տեղն ունենալու մյուս ժողովուրդների կողքին: Դու երկրե-երկիր գնացիր իմ արդար ծիչը ականջումդ:

Ու այդ օրերին արվեց մի բան՝ շատ սրտառուց, խիստ խորիքրդանշական, խորապես պարտավորեցնող, որ երբեք չէր արվել հայոց թատրոնում ոչ մինչ այդ, ոչ էլ դրանից հետո: Ներկայացումներից մեկի ժամանակ, թատերասրահի խելահեր ծափերի ու աղաղակների ներքո, Աղամյանի վերարկուն նետեցին քո ուսերին:

Դու հուզվեցիր, դու արտասվեցիր, դու երդում տվիր. «Այս թանկագին բեռը կրելու թեն ույժ չեմ զգար տակավին, անհիկա խըթան մը պիտի ըլլա իրեն տիպար արվեստագետին հետևելու և օր մը Աղամյան ըլլալու, զոր կիսուտանամ իրապարակավ, ի պատիվ հայության» (1909 թ.):

Դու պատահ էիր՝ հախուռն, կստահ քո ուժերին, քեզ թվում եր, որ ամեն ինչ հնարավոր է՝ նույնիսկ երկնքից աստղեր վայր բերել: Եվ այդ ո՞ր զինվորն է, որ չի երազում զորավար դառնալ:

Հավատա, չեմ հիշի, եթե կյանքիդ հետագա տարիները չլինեին արդարացումը անմոռաց մի գիշերվա հուզումնալի մի պահի արածող հայտարարության:

Ու այդ օրվանից՝ Ներողություն՝ այդ ժամից, կյանքդ դարձավ մի վազք, անկարգ մի վազք աշխարհով մեկ, Երկրե-Երկիր, քաղաքից-քաղաք, թատրոնից-թատրոն։ Դու եկար Կովկաս։ Անցար Ռուսաստան։ Ռուսաստանի անժայր տարածությունները քեզ առան իրենց մեջ և հրապուրեցին նոր հորիզոններով։ Քաղաք չմնաց, որ դու ոտք չդնես՝ հյուսիսից-հարավ, արևելքից-արևմուտք։ Եղար Մերձբալթյան Երկրներում։ Թեհրանից հրավեր ստացար։ Հասար Փարիզ։ Եվ ամեն տեղ հաջողություն՝ աղմկալի ու ցնծագին։ Մի օր Համլետ, մյուս օրը՝ Շոն-Շուան։ Երբեմն Արքենին, Մակբեթ, Քին, Կորրադո, Ուրիել, Լիր։ Բայց ամենից ավելի՝ Օթելլո։ Եվ ամեն անգամ հոյակապ մի կերտվածք, միշտ հիացում, միշտ խանդաղատայի ոգևորություն, այնպիսի մթնոլորտ, որ թատրոնը հիշում է Սառա Բեռնարի, Թոմազոն Սալվինիի և Պետրոս Աղամյանի օրերից։

Երբ դու եկար Մոսկվա, հետո Լենինգրադ և առաջին անգամ երբ բեմ պիտի մտնեիր, ես կանգնած եմ թիկունքիդ՝ քեզ ծնող ու աշխարհի հեռուները առաջող ժողովուրդը։

Դու հասկանում եիր, ինքը ես խստովանել այդ, որ դա մեծ քննություն եր քեզ համար, ավելի մեծ, քան մինչ այդ բռնած բոլոր քննություններդ։ Դու գիտեիր, որ այդ նրբաճաշակ և դժվարահած հանդիսատեսը կամ դափնեպսակով է զարդարելու քեզ, կամ սուլցներով է ձանապարհ դնելու թատրոնից։ Այդ ես եի, որ քո մեջ մտած, անցած քո հոգու խորքերը, հեռու եմ վանում ամեն փոքրոգություն, վախ ու կասկած։ Այդ ես եի, որ հիշեցրի քեզ Ադամյանի Վերարկուն, ականչիդ շշնչալով՝ «Մի վախենա, հաջողության դափնեպսակը սպասում է քեզ»։

Քո գիտակցության խորքում զգում եիր դու, որ այդ գիշերվա ո՞չ հաղթանակը, ո՞չ ել պարտությունը միայն քոնք չե և չեր կարող լինել։

Մոսկվան՝ շատ մեծ դերասաններ տեսած այդ քաղաքը, քո մեջ գտավ այն ողբերգակին, որից սովետական թատրոնը պիտի իմանար, թե հիմա, այս նոր ժամանակներում ինչպես պետք է Ծեքսափիր խաղալ։

Մի հուզվիր, խնդրեմ, և անհարմար մի գգա. դա իմ ասածը չէ, այլ մոսկովյան մամուլի:

Դու բարձրացար Մոսկվայի Մեծ թատրոնի բեմը: Բո վիճակը ժանր էր կրկնապատիկ: 'Նախ' հեշտ չէր 20-ական թվականների Մոսկվան նվաճել, քանի որ նրան լավ ժանոթ էին եվրոպական մեծությունները: Երկրորդ՝ վերապահություն կար քո շուրջը: Խորհրդադային թատրոնի պատմության այն տարիներն էին, երբ դասականները և առաջին հերթին Շեքսպիրը, առանձնապես տեղ չէին գրավում թատրոնների խաղացանկում: Ժամանակի պահանջը այլ էր: Բո հայտագրերը քաղաքով մեկ ազդարարում էին, թե դու դասական խաղացանկի դերասան ես, խաղում ես Շեքսպիր, Մոլիեր, որ դու Էլեոնորա Ռուզեի և Սառա Բեռնարի աշակերտն ես եղել: Այս ամենը, եթե չասեմ քո դեմ էին լարել մայրաքաղաքի թատերական աշխարհը, համենայն դեպս քո օգտին չէին: Քեզ համարում էին հնաոծ արվեստի ուշացած պատվիրակ, որ Մոսկվա է գալիս թանգարանային փոշին ուսերին: Պետք էր կարենալ ահա այս վերապահությունը չեզոքացնել: Եվ դա՝ ամենից առաջ: Դու կարողացար անել դա և դրանով էլ հաղթեցիր: Հենց այն մարդիկ, որ կանխակալ սրտով մտան թատրոն, մյուս օրը հենց նրանք հոչակեցին քեզ աշխարհի ուժեղագույն ողբերգակներից մեկը, ընդունեցին քո խաղածնի արդիականությունը, նրա համապատասխանությունը ժամանակակից թատրոնի ոգուն: Սրա հետ միասին խոստովանեցին, որ իրենք չէին պատկերացնում, թե կարելի է Շեքսպիրին այդքան մոտեցնել մեր ժամանակներին:

Փառք և պատիկ քեզ:

Մոսկվայում դու ստացար «անցաթուղթ», որ տրվում է միայն առաջին կարգի մեծություններին: «Անցաթուղթ» տակ դրված էր թատերական աշխարհի երեք մեծագույն հեղինակություններից մեկի ստորագրությունը և վավերացված էր հայրենի տան կիրքով: Ինչպե՞ս կընդուներ քեզ օտար աշխարհը, ի՞նչ կասեր Փարիզը, կերկրորդե՞ր, արդյոք, Նեմիրովիչ-Դանչենկոյին, թե կմերժեր, հետ կմղեր: Փարիզը միշտ էլ կասկածով է վերաբերվել այլ վայրում հոչակված դերասանի, հեգնական ժամանակակիցին, որ մոռանա ոչ միայն եկած ծանապարհը, այլև սեփական տան դուռը:

Երբ դու Փարիզ հասար, դարձլալ քեզ հետ էի: Այս անգամ էլ հիշեցրի Ադամյանի վերարկուն: Մի դող անցավ մարմնովդ, հիշեցրի դու Պոլիսը, ականջներումդ աղմկեց դահլիճը, զգացիր Ադամյանի վերարկուն ուսերիդ և միտդ եկավ հրապարակավ տրված երդումդ: Այս անգամ ոչ թե շշնչացի, այլ պատգամեցի՝ գնա ու հաղթիր: Ես հետդ մտա բեմ որպես քո եռությունը, որպես ոգի և միտք, որպես ներքին ձայն: որ ամեն պահ հիշեցնեմ, թե զավակն ես այն ժողովրդի, որի հեռավոր նախնիք Զվարթնոց են կառուցել՝ կամքի ու ծգտումի հոյակապ արտահայտություն, որ նրանք՝ քո հեռավոր պայերը, Նարեկացի են տվել՝ աստծո հետ գրուցի բռնված բանաստեղծ:

Երբեք դու այդքան չէիր զգացել դրությանդ պատասխանաւտվությունը, ինչպես այդ գիշեր: Դու Եկել-հասել էիր Փարիզ՝ ունենալով շատ ձակատամարտեր փայլուն հաղթանակներով, բայց սա իր բազմապատասխան հետևանքներով ծանրկշիռ էր ոչ միայն քեզ համար, ոչ միայն քո ազգի համար, այլև այն մեծ ժողովրդի, որի պատվո տիտղոսը կրում էիր քեզ վրա և որը եղբայրաբար վստահել էր քեզ այդքան հեռուները տանել իր արվեստի դրոշը:

Սրանք քո խոսքերն են: Եվ ես ուրախ եմ այդպես լայն հայցը ունենալուդ համար:

Դու մտար բեմ՝ հանձարներին հատուկ սրբազան մի երկյուղ սրտիդ մեջ, բայց և նրանց նման վստահ հաղթանակիդ: Ումերի գերագույն լարում: Մտքի և հոգու հազվագյուտ կենտրոնացում: Նպատակին ինչ գնով էլ ուզում է լինի հասնելու ոչ միայն վծիռ և գիտակցություն, այլ նաև կամք, ամբողջ ներքին աշխարհը իրեն հըպատակեցնող ուժ: Դու կարողացար տաղանդներ ու հանձարներ տեսած փարիզեցուն Ենթարկել քեզ, հմայել քո արվեստով, ստիպել, որ նրա սիրտն ալեկոնծվի, որ «անկարելի է մտահղանալ և մարմնավորել ավելի կատարյալ, ավելի կենսունակ մի Օթելլո»: Երբ առաջին ներկայացումն ավարտվեց՝ քմահած Փարիզը քոնց էր՝ որպես գեղեցիկի, որպես ծշմարտության, որպես բարձրագույն արվեստի անկեղծ երկրպագու:

Վերադարձար Մոսկվա, հետո Լենինգրադ, ապա Երևան՝ անկեղծ մի խոստովանությամբ. դու չէիր ուզում պատմել, թե ինչ էր

քո այցելությունը Փարիզ: Դու ասացիր, որ քո բերած դափնիները դու փոռում ես ժողովրդիդ ոտքերի տակ, և որ նրա յուրաքանչյուր թերթիկը ավելին կասի, քան քո երախտապարտ լեզուն, քան, ինչպես ինքը էիր ասում, քո բորբոքված երևակայությունը: Եվ դու մարդկանց ուղարկեցիր թանգարան, որ այնտեղ գտնեն ֆրանսիական մամուլում տպված հիացական տողերը՝ ֆրանսիացի քննադատների ստորագրությամբ:

Փառք և պատիվ քեզ:

Այսօրվա օրը չեմ կարող, պարզապես իրավունք չունեմ, չիշելու մի մարդու:

Որքան հիշում եմ, 1927-ին եր, քո առաջին հոբելյանից հետո, երբ արդեն վաստակավոր էիր ծանաչված պաշտոնապես:

Պյատիգորսկում խաղում էիր «Օթելլո»: Ներկայացումից հետո քեզ մոտեցավ ծերմակամորուս մի ծերուկ: Ներկայացավ՝ Ռոսսով Նիկոլայ Պետրովիչ: 90-ական թվականներին Ռուսաստանում ծանաչված եր որպես շեքսպիրյան ողբերգակ: Դրվատեց քո խաղը, ասաց, որ դու պետք է անպայման մեկնես Մոսկվա, հանդես գաս մայրաքաղաքի հանդիսատեսի առաջ:

Զբավականացավ դրանով: Նամակ գրեց Ստանիսլավսկուն և հավատացրեց, որ քո Օթելլոն արվեստի մեծ տոն է: Նա ասաց, որ դու համոզիչ կերպով բացում ես Շեքսպիրի մեծությունը, քո Մավրի միջոցով ցուց ես տալիս ոչ թե միակողմանի, կոպիտ խանդուտի, այլ ազնվագույն մի սիրտ, որ լի է մարդկանց լավագույն հատկությունների նկատմամբ անսահման հավատով և կործանվում է հենց այդ հավատի պատճառով:

— Կերչին քսան տարվա ընթացքում,— հավատացնում եր ծեր ողբերգակը,— ես ալդախիս Օթելլո չեմ տեսել: Նա ասում եր, որ իր տեսած Օթելլոների մեջ, Սալվինիից հետո, Փափազյանինը լավագույն է:

Ռոսսովը բացեց դուռը քո առաջ՝ դեպի հաջողությունների մեծ աշխարհ: Ու ես շատ ուրախ եմ, սիրելիս, որ դու քո կյանքի այդ բախտորոշ օրը հիշելիս՝ անվերապահ երախտագիտությամբ ես մը տաքերում ալեզարդ դերասանին:

Եվ փառքը չպակասեց քեզ: Փարիզից հետո, նախ Վրաստանը, հետո Ադրբեյջանը, ապա նաև Հայաստանը ժողովրդական արտիստի

տիտղոսով պսակեցին քո Շակատը: Ու շատ երկար տարիներ, կարծեմ երկու տասնամյակից ավելի, դու միակ դերասանն էիր խորհըդդային ողջ թատրոնում, որին ժողովրդական էին ծանաչել կողքկողքի ապրող երեք ժողովուրդ:

Եվ այդ ժողովրդականը շատ էր պատշաճում քեզ ոչ միայն այս պատճառով, որ բարձր տաղանդի տեր էիր, հավասարդ չունեցող ուժ: Դու ժողովրդական էիր նաև քո գործունեության բնույթով:

Դու գնացիր դեպի ժողովուրդը: Դու հասար մեր անժայրածիր երկրի ամենահեռավոր անկյունները, որ ոչ մի դերասան ուտք չէր դրել: Դու խաղացիր ամենաաննպաստ պայմաններում, երբ բեմը բեմ չէր, երբ խաղընկերներդ քեզ հետ հավասար լուծ քաշել չէին կարող: Ես վատ չեմ մտածում նրանց մասին: Թող որ թույլ էին նրանք որպես թատերական ուժ, բայց ժողովրդին նվիրված, թատրոնի սերն իրենց սրտում պահած խանդավառ երիտասարդներ էին, որ, հանձն առնելով ամեն զրկանք, ամեն նեղություն, շրջում էին տոնն ու ընտանիք թողած, սակայն համոզված, որ եթե քեզ հետ են գործում, ուրեմն արվեստի անշեշ հուրն են տանում ամեն տեղ: Քեզ մեծարելիս իրավունք չունենք այսօր քո բազում խաղընկերներին անտեսել: Դրանց թիվը մեծ է, մի ամբողջ լեզիոն, բայց դրանք այս դերասաններն են, որ մի-մի Հորացիո դառած, նվիրվել են քեզ, մթնոլորտ ստեղծել քո շուրջը, որ դու ամեն երեկո բեմ բարձրանաս:

Դու միշտ ծանապարհի վրա ես եղել: Մի օր հարազատներիդ հետ, շաբաթներ ու ամիսներ տանից բացակա: Դու չես հասցրել նույնիսկ ծանապարհների փոշին վրայիցդ թոթափել: Եթե ցանկանայիր, կարող էիր գործել մի թատրոնում: Զցանկացար: Ավելի ծիշտ՝ չկարողացար: Կոչումդ գտար թափառումների մեջ: Քեզ կը տամբողները թող փորձեին անել նույնը: Այս ժամանակ կերևար, թե նրանց ունեցած, իսկ հաճախ նաև՝ վերագրված մեծությունից ինչ կմնար: Քո տաղանդը, քո փայլը միայն կարող էին աննշան ուժերից կազմված թատրոնը թատրոն դարձնել: Քեզ համար էին գալիս մարդիկ թատրոն, և դու մենակ՝ արդեն իսկ թատրոն էիր, մեծ հաշվով ծշմարիտ արվեստ, որ ընդունակ է սրտեր հուզել, միտքը գործի դնել, աշխարհի լավի ու վատի շուրջը խորհել տալ:

Ես չեմ ուզում մեկ-մեկ հիշել քո դերերը, որոնք թեև շատ չեն,

բայց նրանցից լուրաքանչյուրը այնպիսի գլուխգործոց է, որ միայն դու կարող եիր ստեղծել: Ոչ ոքի մտքով չի անցել թաշկինակի մտահղացումը, ոչ մի դերասան հանդիսատեսին չի ստիպել վերապրել Մավրի պատանեկությունը Հայեպում: Ոչ մի Արբենին չի խելագարվել քեզ նման՝ սերը կորցնելու ցավից ու կսկիծից: Ոչ մի Համլետ լինել-չլինելու խնդիրը չի ապրել այնպիսի տանջալի հակասությամբ, ոչ մի Օթելլո սենատում չի ունեցել քո Օթելլոյի արժանապատվությունը: Դա այն է, ինչ կոչում ենք փափազանական խաղ, այն, ինչ կրկնել չի կարելի, ինչ մարդու բուն եռությունն է, որով և նա դառնում է անկրկնելի: Դու հանդես եկար մարդու արժանապատվության պաշտպան, որպես բարի ու առաքինի արարածի ներդաշնակ կյանքի քարոզիչ: Բո երազը մարդն էր, այն ներդաշնակությունը, որ իբրև ծգտում ընկած է մարդկության ծանապարհին՝ նրա գոյության հազարամյակների ընթացքում: Բայց դա՝ հարցերի հարցը, որ քեզ համար սկզբում բարոյախոսական մի ըմբռնում էր միայն, կյանքի ազդեցությամբ բարդացավ ու առարկայացավ, եթք դու անդրադարձար այն մեծ ընտանիքին, որ ազգ է կոչվում և որին պատկանում է մարդ-աստվածը:

Պարզեմ միտքս:

Երբ պատանի եիր, և քո ուսման տարիներս անցնում եին արդասահմանում, դու անակնկալի առաջ կանգնեցիր. քեզ հետ սովորող ամեն պատանի, որտեղից ել եկած լիներ նա, հայրենիք ուներ, բացի քեզանից: Եվ դու մտածում եիր, թե հտալիան, որքան ել պաշտելի՝ քոնը չէր, ոչ ել դու՝ նրանը. այդպես ել Ֆրանսիան, այդպես ել ուրիշ-ուրիշ երկրներ: Մսիթարյանների ծեռքի տակ մեծացած՝ դու գիտեիր, թե ով է եղել մի ժամանակ քո ժողովուրդը, տեր՝ որպիսի վսեմ պատմության, որի արնաթաթավ էցերը քո նախնիների մաքառող ոգու վկայություններն են: Դառնացար, թախնեցիր, հայրենի հողի կարոտն ապրեցիր: Եվ ինչպես ինքը ես Նկատել՝ անհայրենիք հոգու մղջավանջը չարաշուք թուխայի նման կուտակվում էր քո հոգում և սպառնում մթագնել անհագ ու շենշող պատանու քո անամապ երկինքը:

Հայրենաբարադության տագնապը քո հոգում՝ չարչարեցիր միտքը հասկանալու համար, թե այդ ինչպե՞ս կարող է ժողովուրդ լինել, բայց հայրենիք չունենալ: Եվ դա քո ստեղծագործությանը հա-

դորդեց մի անհանգիստ լարվածություն, լսվեց տագնապալի մի ծայն, մի ծիչ, որ գալիս էր հոշոտված սրտից՝ ո՞վ է տվել իրավունք բնաշնչելու մի ամբողջ ազգություն, եթե նա ոչ ոքի վրա առաջինը սուր չի բարձրացրել, ու եթե մի փափագ է ունեցել՝ ապա խաղաղ ու բարի մի ծգտում՝ լսեն իրեն, լսեն, թե ի՞նչ է ասում ինքը, որ ինքը իր լեռների ու երկնքի ծշմարտությունն է բերում աշխարհին:

Զորացավ այս միտքը քո մեջ, երբ տեսար, թե ինչպես մի բուռ ժողովուրդ ցրիվ եկավ աշխարհով մեկ, աչքն այն մի կտոր հողին, որի վրա քո կովկասյան հայրենակիցները, հեղափոխության ռոմանտիկ հավատը սրտներում, մի նոր կյանք էին սկսել: Դու տեսար, որ քո ժողովրդի ծակատագիրը միայն քո ժողովրդինը չէ, և որ մենակ չէ քո ժողովուրդը: Ու եթե քո Համլետը ոչ միայն մտածեց մարդկության ծակատագրի մասին, այլև անհավասար կովի բռնը-վեց, ապա դրա պատճառը քո ժողովրդի պատմության դասերն էին: Դու հիշեցիր քո հայրենակիցների քաշած ծանր օրերը, բնաշնչումի ահեղ ժամանակները, և քո Համլետը իրեն զգաց ավելի ծնշված ու հալածված, նույնը և Օթելլոն, Քինը, Կորրադոն՝ քո մյուս հերոսները:

Ողբերգակի քո արվեստը աշխարհը ծանաչելու ծգտում է, մի շանք՝ հասկանալու նրա չարն ու բարին: Աշխարհածանաչողությունը քեզ համար դարձավ կիրք, որին դու ենթարկեցիր քո ողջ ստեղծագործությունը՝ հասկանալ կյանքը, հասկանալ մարդուն, նրա հոգու բռնկումները, հասկանալ, թե որտե՞ղ և ինչո՞ւ սկիզբ առավ հանցանքը, ինչո՞ւ և ինչպե՞ս կորավ կամ մոռացվեց արդարությունը, որ և խախտեց կյանքի ներդաշնակությունը: Ո՞չ միայն հասկանալ, ո՞չ միայն փիլիսոփայի նման լոկ նայել, այլ վերաբերմունք մշակել՝ գործուն վերաբերմունք, երբեմն պարզ, նույնիսկ խիստ հստակ, թերևս հաճախ նույնքան բարդ, որքան ինքը՝ կյանքն է իր հակասություններով: Բայց միշտ գործուն: Դրա համար ել քեզ հարազատ ու մոտ եղան Օթելլոն, Լիրը, Համլետը՝ իրենց ողբերգական նկարագրով: Նրանք արդարություն փնտրեցին, ինչ-որ տեղ խճկվեցին, սիսալվեցին, բայց միշտ պատրաստ եղան զոհաբերելու սեփական կյանքը, միայն թե գտնվի ծշմարտությունը, միայն թե վերստին հաստատվի արդարությունն աշխարհի վրա:

Դու նման չեղար իմ այն անառակ զավակներին, որոնք առատորեն ստացան և ոչինչ չտվին, կամ տվին քիչ բան: Ես չխնայեցի, բայց դու էլ ոչինչ չխնայեցիր: Ինձնից ստացածը վերադարձրիր բազմապատիկ, մշակված, բյուրեղացած, ինչպես լինում է կատարելությունը: Եվ դա միայն նրա համար, որ դու մի պահ անգամ կանգ չառար, չորոնեցիր հանգիստ ու դադար, մտածեցիր, որ արվեստից հանգստանալը արվեստագետի համար հավասարազոր է մեռնելուն, ու գործեցիր, գործեցիր, ստիպեցիր, որ քո միտքն աշխատի. Երկու Ներկայացման արանքում, որ գալիքն առավել լինի անցյալից, միշտ նոր լինես, միշտ թարմ:

Մշտապես քեզ հետ եմ եղել, աչքս չեմ կտրել քեզանից: Հիշում եմ, մի անգամ, դա քսան տարի առաջ եր, Երևանի թատրոնով հափշտակված երիտասարդները հարցրին, թե Ճի՞շտ է, որ դու Օթելլոյի դերում հասել ես Կերպարի նույնացմանը: Ես սրտատրոփ պատասխանի՛ արդյոք քո մեջ կխոսի հաջողություններից արբեցած արտի՛ստը, թե Շշմարիտ արվեստագետը, որի համար կատարելությունը մշտնշենական ծգում է, ինչպես հորիզոնը, որին ինչքան էլ ծգուե՛ չես կարող հասնել: Եվ դու, ի պատիվ քեզ, մնացիր մեծ արվեստի բարձրության վրա: Արտիստը, ասացիր դու, պետք է իր մտապատկերում ունենա Կերպարի բարձրագույն պատկերը, որին ծգտելու է շարունակ, բայց չի հասնելու երբեք: Եթե կարողացավ հասնել և նույնանալ նրա հետ, ստեղծագործող կանգ կառնի: Եթե համոզվեմ, որ հասել եմ իմ Օթելլոյին, ապա Փափազյան չկա, չկա ստեղծագործողը: Բայց ես միշտ նպատակ եմ դրել հասնել նրան, ամբողջ կյանքումն ընկել եմ նրա ետևից և չեմ հասել: Երբեմն ինձ թվացել է, թե ահա հասնում եմ, անգամ բըռնել եմ նրա փեշերից, բայց նա հեռացել է, փախել է հեռու, և իմ կատարումից նա եղել է միշտ ավելի բարձր, ավելի կատարյալ:

Այսպես կարող է մտածել միայն մեծ արտիստը: Իսկ դու մեծ արտիստ ես: Չուր չէ, որ սկզբում ուսւները, ապա և ֆրանսիացիք քեզ դասեցին համաշխարհային ողբերգակների շարքը:

Հիմա դու հասել ես քո այն տարիքին, որ մեկ-մեկ էլ կարող ես ետ նալել, զննել անցածդ ծանապարհը, հասկանալ կյանքիդ սխալն ու ճիշտը: Դու իհմա ել նպատակներ ունես: Թող կյանքը երկար լինի, օրերդ անբավ: Ես գիտեմ ու լավ եմ ծանաչում քեզ.

դու հանգիստ ապրել չես կարող, դու անկարող ես միտքդ պարապության մատնել: Դու մի բան պիտի անես:

Ես դերասան եմ ասում, բայց դու արտիստ ես: Ոչ թե դարձել ես արտիստ, այլ ծնվել ես ալրպիսին: Արտիստ ես ծնվել, ինչպես քո պապերը կասեին՝ ողորմությամբն աստծո: Բեմը քո զբաղմունքը չէ, այլ կոչումը: Բո ամեն ինչը արտիստիկ է ո՞չ միայն բեմում, այլև կյանքում, ո՞չ միայն խաղալիս, այլև գրիչ բռնելիս: Եվ ինչ էլ անում ես դու, անում ես լավ, գեղեցիկ ու տարբեր ուրիշների արածից, քո անհատականության դրոշմը վրան:

Մի բան էլ եմ ուզում ասել ոչ այնքան քեզ համար, որքան երիտասարդ ունկնդիրների: Այս էլ թող լինի երրորդ դասը:

Աշխարհ եկար առանձնաշնորհված: Բնության մի տվածը կըրկնապատկեցիր: Ամենակարևորը՝ հասկացար, այն էլ բավական վաղ, կյանքի խորհուրդը: Բայց երսի այս երեք՝ մեկը մյուսից կարևոր ազդակները, չտային այն արդյունքը, որ այսօր կոչվում է «Կահրամ Փափազյան», եթե չիներ քո մի ուրիշ ընդունակությունը՝ «ուզենալը», «ցանկանալը», այսինքն մի անմասցորդ սեր, որ քեզ հափշտակեց ամբողջությամբ: Սա հազվագյուտ ընդունակություն է, երբ մարդ կարող է գիշերը ցերեկ դարձնել, ցերեկը՝ գիշեր, երբ մարդ ներքուստ այրվում է, թվում է թե հիմա կիալչի ինչպես վառվող մոմը, բայց շարունակում է բռցկլտալ: Դա հենց այն մեծ, իսկական սերն է, որ կյանքում ամեն ինչ իրեն է ենթարկում, երբ մարդ ինչ էլ անում է, միշտ էլ վերադառնում է իրեն համակած նըպատակին, ու այդ նպատակը նրա հետ է օրվա բոլոր պահերին: Դա այն սերն է, որը որոշում է մարդու գոյության իմաստը: Դա այն զգացումն է, որ մարդուն մղում է դեպի ծակատամարտ, թույլին ուժ է տալիս, ուժեղին դարձնում անպարտելի: Թերևս ամեն կին խանդուտ է, բայց բեմը՝ հազարապատիկ ավելի և ընդունակ չէ կնոշը հատուկ մեծահոգի ներողամնության, խստորեն պատժում է ամեն մի շեղում, ամեն մի անհավատարմություն, պահանջում նվիրվածություն մինչև վերջ, պահանջում մոռանալ ամեն ինչ՝ տուն, տեղ, կին ու զավակ, ամենքին՝ բացի իրենից:

Ահա ալրպիսի սիրուց ես ծնվել դու:

Քեզ համար թատրոնը ամեն ինչ է՝ և տուն, և սրբավայր: Թատրոնը եռությանդ անբաժան և լավագույն մասն է: Թատրոնը ե-

դել է ու հիմա էլ շարունակում է մնալ կյանքի գերագույն իմաստը: Դու չես պատկերացնում կյանքն ու աշխարհը առանց թատրոնի: Դրա համար էլ ինձ միանգամայն հասկանալի է, երբ ասում ես, թե քեզ միշտ թվացել է, որ եթե թատրոն գոյություն չունենար, միևնույն է, ինքը կստեղծեիր նրան, ինչպես բնական մի պահանջ:

Այսպես պետք է սիրել թատրոնը: Այսպիսի մեծ սիրով պետք է մտնել նրա դունից ներս: Այդ մեծ հուզմունքով պետք է ապրել թատրոնում: Ու այդ սերը պետք է հասնի հափշտակության այնպիսի չափերի, որ մարդ, նույնիսկ խոր ժերության հասած, չպատկերացնի, թե կարող է անթատրոն օր լինել իր կյանքում:

Ո՞ւր են բեմի քո ավագ ընկերները՝ Սիրանույշը, Աբելյանը, Զարիֆյանը: Ո՞ւր են քո Ռեզինեմոնան ու Յագոն՝ Արուս Ռուկանյանն ու Միքայել Մանվելյանը: Ո՞ւր են 10-ական, 20-ական, 30-ական թվականների հանդիսատեսները՝ հրաշք-Փափազյանի ականատես-Վկաները: Այդ մարդիկ եին, որ քեզ առասպել դարձրին:

Հաջողությունը, որքան էլ մեծ ու շոնդալի, երբեք չմթագնեց քո միտքը, և գրեթե միշտ խոնարի որդի մնացիր քեզ ծնող ժողովը համար: Բայց այսօրվա օրը, քո ծննդյան ութսունամյակի հանդեսը, այս նվիրական ժամը քո կյանքի այն պահն է, երբ ծնողն է գլուխ խոնարհում իր հանձարեղ զավակի առաջ, այն զավակի, որ ուր որ գնացել է, հայրենի երկրի պատիկը բարձր է պահել և, ծանապարի գտնելով դեպի օտար սրտերը, ներշնչել է ամենքին, թե ժողովուրդը, որի ներկայացուցիչն է ինքը, գեղեցիկ է ու բարի, մարդկային, հոգին խորն է, ինչպես իր երկրի մթամած ծորերը, միտքը բարձր՝ երկնասլաց լեռների նման, ու եթե մի ժողովուրդ կարող է ծնել քեզ ու քեզ նման մեծություններ՝ դեռ կենսունակ է, չնայած իր բազմադարյան գոյությանը, դեռ երիտասարդ է, ուրեմն դեռ ասելիք ունի աշխարհին:

Դրանից ավելի ոչինչ չի կարող պահանջել ոչ մի ժողովուրդ իր զավակից: Այս դեպքում է միայն, որ ժողովուրդը երախտապարտ է լինում իր զավակին:

Ծնորհակալություն:

Ոչ մի ածական չեմ կամենում հավելել երախտիքին: Ամեն մի ածական, այնուամենայնիվ, չափ է:

Ի լրումն այս ամենի, ալյօրվանից տալիս եմ քեզ կոչումներից՝ բարձրագույնը՝ անմահության վկայականը, բանաստեղծի լեզվով ասած՝ «Եղ վկայականը Են վկայականներից չի, որոնց վրա դրված է մարդկային իշխանության կնիքը, եղ Են վկայականներից Ե, որոնց վրա բնությունն ու աստվածն Են դրել իրենց կնիքը»:

ԴԵՐԱՍԱՆԻ ԴԱՍԵՐԸ Խոսք Փափազյանի արվեստի շուրջ

Թվում է, թե հարկ չկա Փափազյանի կյանքի մանրամասնությունները պատմել՝ երբ ու որտեղ է ծնվել: Ոչ ել պատմել, թե ինչպես է անցել նրա մանկությունը Բոսֆորի ափին: Ոչ ել այն մասին, թե ինչպես Պոլսից հասել է Խոտալիա, ու որոնք են եղել նրա բեմական կյանքի առաջին քայլերը: Դրանց մասին առայժմ մեր գիտցածքը դերասանի հաղորդած կցկուրը տեղեկություններից այն կողմէի անցնում: Ոչ ել, երևի, կարիք կա արդեն պատմությանը պատկանող մամուլի դեղնած Եջերից նրանով խանդավառված քննադատների հիացումը հաստատող քաղվածքներ բերել: Ոչ ել, մանավանդ, վկայակոչել հանդիսատեսին, կարդալով ավելի սիրո խոստովանություն հիշեցնող հատվածներ հեռավոր ու մոտավոր անցյալում հայերեն, ֆրանսերեն ու ռուսերեն գրված նամակներից...

Փափազյանը շատերիս ժամանակակիցն էր: Տեսել ենք նրան բեմում, հանդիպել կյանքում, բարեկամություն արել հետք, մի գավաթ սուրծի շուրջ գրուցել թատրոնի հարցերից: Վիճել ենք, ընդհարվել, հետո նորից հաշտվել և շարունակել մեր առաջվա պես անամպ բարեկամությունը: Այսօր նրա մասին պետք է խոսվի որպես ոչ թե պատմությանը պատկանող արվեստագետի, այլ որպես ժամանակակիցի, որպես ոչ թե մեզանից ընդմիշտ հեռացած մի մարդու, այլ որպես մեր ընկերոջ, որ այստեղ էր հիմա, նոր միայն դուրս եկավ, և որպ-որ է դուռը կբացվի, ներս կգա ու կգրավի իրեն հատկացված շքեղ բազկաթոռը:

Թատրոնի մարդիկ սովոր են ամենահեռավոր ժամանակների դեպքերին ու դեմքերին անդրադառնալ որպես հիմա, այս պահիս կատարվող իրադարձության: Եվ բնավ դժվար մի բան չէ մեզ համար պատկերացնել Փափազյանին մեր կողքին նստած և իրեն հասցեագրվող գրվեստները լսելիս: Երևի հայ դերասաններից ոչ ոք

ալնքան չի գովաբանվել, որքան նա և, այնուամենայնիվ, երեխայի ազահությամբ էր ունկնդրում իր մասին ասված ամեն մի հաճելի խոսք: Տեսնում եմ նրան՝ գլուխը ծախ ծեռցին կործնած, իր վաստակից ու արվեստից խոսողին լսելիս և դեմքին այն լրջությունը, որով իրեն լավ ծանաչողներից քողարկում էր գովեստներից բարակող սիրտը:

Փափազյանով հիացել են առաջին իսկ օրվանից: Եվ այդպես է եղել միշտ: Ոչ միայն միշտ, այլ նաև ամենուրեք: Եվ նրանով հիացել ենք ոչ միայն մենք: Այլազգիները նույնպես: Ու հաջախ նրանք ավելի, քան մենք:

Բայց սա չի նշանակում, թե նրա արվեստը հակառակորդներ չուներ: Արվեստի պատմությունը, թեկուզ նմուշի համար, չի հիշում մի մեծություն, որն անվերապահ ընդունված լինի, քննադատված չլինի, և նույնիսկ ցեխ շարտողներ չգտնվեն: Փափազյանը ևս բացառություն չեւ: Եվ նա էլ, որ հաղթանակի դափնիներ է շահել ոռուսական իրականության մեջ և այլոր, մեկ-մեկ իր առջև փակ է գտել հայրենի թատրոնի դռները: Թողնենք, սակայն, այս տիսուր մտքերը, մանավանդ որ ինքը՝ Փափազյանը ընդհանրապես հիշացար չեր: Ոչ միայն բնավորությամբ ու խառնվածքով: Նա լավ գիտեր, որ իր մեծ նախորդի կյանքում էլ այդպիսի մարդիկ եղել են և գիտեր նաև, թե ժամանակը, որ պատմությունն անունն Է կրում, ինչ ծանր ծակատագիր բաժին հանեց այդ չնչին հոգիներին:

Ասում են, որ մեծն Արելյանը, չարախոսներին սաստելով, Փափազյանին անվանում էր «Հայ բեմի կորյուն»: Հրաչյա Ներսիսյանը, որ հայ թատրոնի արտասովոր երևոյթներից էր, հայտարարում էր և միշտ՝ հապատությամբ, թե Փափազյանը իր ուսուցիչն է եղել: Զարմանալի չեւ կրտսեր արվեստակցի հայտարարությունը: Զարմանալի է ավագի, նրանից ավելի վաղ բեմ մտածի, այն էլ արվեստակցուիու խոստովանությունն այն մասին, թե Փափազյանն իր ուսուցիչներից է: Խոսքը Օլգա Գոլազյանի մասին է, որի համար, Սիրանույշից բացի, ուսուցիչներ են եղել նաև Արելյանն ու Փափազյանը: Կաչալովը գրուցներից մեկի ժամանակ ասել է, թե իրեն հայտնի չեւ Փափազյանի բեմական վիրտուոզությունն ունեցող մեկ ուրիշ դերասան: Մարջանիշվիլին և Ախմեթելին այն համոզմանն էին, թե Փափազյանի նման արտիստները հազվադեպ են աշխարհ գալիս:

Այս բոլորի կողքին՝ մի զարմանալի, շատ զարմանալի երևույթ:

Որ Փափազյանն ազդել է բազմաթիվ դերասանների վրա, լինեն դրանք հայ թատրոնից թե մեկ ուրիշ, հայտնի բան է: Որքան մեծ է արտիստը, այնքան ավելի ընդարձակ է նրա ներգործության շառավիղը: Բայց պատահում է, գուցե խիստ հազվադեպ, երբ դերասանը, որ ծևավորված է իբրև արվեստագետ և անուն հանաժ վարպետների շարքն է անցել արդեն, հանկարծ իրեն ուսուցիչ է հոչակում Փափազյանին, որի խաղը մինչ այդ տեսած չի եղել և ոչ էլ նոյնիսկ անոնը լսած:

Միխայիլ Զեխովը ծանաչված դերասան է աշխարհում: 1928-ին, երբ Զեխովն արդեն Զեխով էր, տեսնելով Փափազյանի խաղը Մոսկվայում, բացականչել է՝ «Վերջապես ուսուցչին գտա»:

Սա հազոյախոսություն չէ: Ոչ ել միայն վերաբերմունք: Երևի մի օր այդ հարցով զբաղվող կլինի և կգտնի այն աներևույթ աղերսները, որ կան այդ երկու մեծ դերասանների արվեստում, որ առաջին հայացքից այնքան տարբեր էին թվում միմյանցից: Բայց սա խոստովանություն է, որ ոչ այնքան աշակերտի համեստության ապացուց է, որքան մարգարեւություն: Ուսուցի խաղում նա, ըստ երևույթին, տեսնում էր արվեստի այնպիսի միտումներ, որոնց օքշմարիտ գնահատությունը տրվելու է վաղը. և դա այսօր կարող են գիտակցել միայն նրանք, որոնց միտքն ի զրոյ է կանխել տասնամյակները և, թիւը տեսնելով, պատկերացնել ցողունը:

Սա, իհարկե, ենթադրություն է միայն, որ դեռ կարիք ունի հաստատվելու:

Մի բան անկասկած է, սակայն, որ ոռու դերասանը հայ ողբերգուին հայտարարում է ուսուցիչ, որի զարմից է նաև ինքը:

Ուսուցիչը մնում է ուսուցիչ:

Փափազյանը լոթ գիրք է գրել: Եվ ոչ մեկը դրանցից դասագիրք չէ այն մասին, թե ինչպես կարելի է դերասան դառնալ: Եթե ապրեր, հազիվ թե նրա ութերորդ գիրքը դասագիրք լիներ: Նա համոզված էր, որ դերասան ծնվում են և ոչ թե դառնում:

Երևի ինքն էլ չգիտեր, որ ուսուցիչ է արդեն և որ իր դերակատարումները արդեն իսկ դպրոց է, որտեղ շատ դերասաններ են կրթվել: Եվ այսօր բնավ գաղտնիք չէ, որ չկա մի հայ դերասան, որ բեմական մասնագիտական դասեր առած չլինի նրանից:

Փափազլանի արվեստի շուրջ շատ է խոսվել ու գրվել:

Եվ, այնուամենալիվ, Փափազլանի մասին մինչև օրս չի գրվել և ոչ մի աշխատություն: Ում ասես, որ մենագրական աշխատություն չնվիրվեց, բայց ոչ մեծ ողբերգակին: Եվ դա չպետք է վերագրել ուշադրության պակասին: Թերևս պետք է բացատրել պատասխանատվության բարձր զգացումնվ, որ այսօր ապրող թատերագետներն ունեն իրենց մեծ ժամանակակի նկատմամբ: Չեմ կասկածում, որ այդ պարտամուրիակը կմարվի: Բայց ե՞րբ՝ դժվար է ասել: Թերևս այն ժամանակ, երբ իրենց ծեռքը գրիշ կվերցնեն բեմում նրան չտեսած թատերագետները: Երևի չտեսնողների համար դա ավելի հեշտ կլինի: Պարադոքս է: Գուցե: Բայց դա ծշմարիտ մեծերի ծակատագիրն է հաջախ:

Փափազլանի մասին հիմա գրելը դժվար է, որովհետև կա գիտակցությունը այն խորության, որ իրենից ներկայացնում է նրա արվեստը, լինելով տարբեր, նույնիսկ հակասական թատերական մշակույթների խաչածնման բարդ գումար:

Երբ նայում ես ծովի հեռվում գծագրվող հորիզոնին, թվում ե, թե լողալով կամ նավարկելով կիասնես: Գոտում ես, և քեզ հորիզոնից բաժանող տարածությունը չի կրծատվում, մնում է նույնքան անհասանելի, որըան ափից:

Նույնն է և Փափազլանի արվեստը: Քանի խորանում, այնքան ավելի ու ավելի ես համոզվում, թե որքան ուժեղ է «Նյութի դիմադրությունը»:

Այս խոսքը այն հարցի մասին է, թե ինչ դասեր կտար Փափազլանը իրենից հետո թատրոն եկած սերունդներին, եթե այդ նպատակով առաջարկվեր նրան մոտենալ ամբիոնին:

Կարելի է քաղել, և մի օր կարվի դա անպայման, նրա գրքերից այն բոլորն, ինչ վերաբերում է դերասանական արվեստին: Այստեղ հարկ չկա այդ անելու, քանի որ, նախ՝ դա մեզ շատ հեռուները կտանի և երկորո՛ միշտ չե, որ ինքը միշտ եղել է իր իսկ գրքերում քարոզածի նման:

Տեսել եմ Փափազլանին նրա բեմական կյանքի փայլուն տարիներին, երբ ընդամենը 37 տարեկան էր: Եվ դրանից հետո՝ մի քանի տասնամյակ: Եվ այստեղ ներկա գտնվողներից շատերի հետ, ավա՛ղ, վկա եմ եղել նրա ուժերի անկմանը: Ու ցավել, թե ինչու

ինքը չի հետևել ուրիշներին տված իր իսկ խորհուրդին՝ թողնել բեմը, քանի ինքը չի լրել քեզ: Ցավում եմ, բայց և հասկանում: Ասելը հեշտ է, անելը՝ դժվար: Սեփական խորհուրդին հավատարիմ չլինելու մեջ ձանաչում եւ իսկական արտիստին, որին ծանոթ է փառքի գենիթին գտնված լինելու պահին բեմից հեռանալու հաշվապահական սառը հեռատեսությունը: Երբ չգիտես, որ արդեն այն չես, ինչ մի ժամանակ էիր, ինչ խոսք, մոլորություն է, որ կարող է անգետներին մտածել տալ, թե իրենք ե՞րբ էր որ իրավացի էին՝ արդյո՞ք այն ժամանակ, երբ հիանում էին, թե հիմա, որ... Բայց այդ մոլորությունը բոլոր իսկական և մանավանդ մեծ արտիստներին «Ներվել» է ու հետո էլ մոռացվել:

Մարդկանց հիշողության մեջ արվեստագետը մնում է իր բարձը թոհիչքներով: Ոչ ոքի մտքով չի անցնի Ավետիք Խսահակլանի մասին դատողություններ անել, նկատի ունենալով խոր մերության տարիներին գրած ոտանավորները: Եվ ոչ ել Մարտիրոս Սարյանին գնահատողները աչքի առաջ կունենան նրա վերջին տարիների նըկարները: Դրանք ունեն, միայն և միայն, այսպես ասած, հավելյալ, լրացուցիչ հետաքրքրություն: Եվ ոչ ավելի:

Նույնը վերաբերում է և Փափազյանին:

Փափազյանը հիշվելու է և մնալու է թատրոնի պատմության մեջ որպես մի արվեստագետ, որ փառաբանում էր կյանքը, մարդուն և բնությունը: Փառաբանում էր մարդու միտքը, մարդկային մտքի թոհիչը: Փառաբանում էր մարդու ներդաշնակության ճգտումը: Եվ ի տարբերություն ուրիշ արվեստագետների, նույնքան մեծ, որքան ինքը, հարկատու չեր զվարթ լավատեսությանը: Նա գիտեր հոգու տքնության գինը և միաժամանակ ծանոթ էր գեղեցիկին հասնելու տառապանքին: Եվ հանդիսատեսին նա հաղորդում էր գեղեցիկին հասնելու տառապանքին: Եվ հանդիսատեսին նա հաղորդում էր գեղեցիկին հասնելու անդիմադրելի մղումն ու մտածել տալիս, թե որքան էլ մեծ լինի երկրագունդը և մարդկությունն անթիվ ու անհամար, մարդը մնում է մարդ, եթե չի կորցնում ճգտելու հոգեւկան պահանջը: Մարդը կարող է իրով գեղեցկացնել աշխարհը, կյանքը, եթե իր մեջ կրում է հրաշալի հատիկը և բերում է մարդկությանը իր հոգու անկրկնելիությունը:

Փափազյանը, ծիծտ է, համոզված էր, որ դերասան ծնվում են և ոչ թե դառնում: Բայց նա ուներ նաև այն համոզմունքը, թե մըն-

վելը բավական չէ, պետք է նաև դառնալ: Սա մի պարզ պարագոքս է, որ նշանակում է, թե բեմական օժտվածությունը կարիք ունի մշակվելու և հատկապես հարստացվելու և դա կարող է փրկարար լինել մանավանդ առաջին հաջողություններից գլուխը կորցրած դերասանին:

Սրա կողքին՝ ազգայինի գգացողություն: Եվ ոչ միայն պատմական ժակատագրի ցոլացում: Ավելի շուտ, որպես մի ժողովրդի, բանսատեղի խոսքով ասած, ազնվական ոգու վկայություն: Շինարար և արարող ժողովուրդ, որ մարդկությանը տվել է իր ազնվականության ապացուցներ: Դա է հաստատում Փափազյանն իր արվեստով:

Ոչ ոքի հայտնի չէ տաղանդի բաղկացուցիչ մասերի հարաբերակցությունը: Ոչ ոք չի կարող ասել, թե արվեստագետի մեջ որն է աստծու տվածը և որը՝ իր հավելածը: Մենք վկա ենք, սակայն, բնականի ու ստացականի բացարձակ խախտումներին, մանավանդ դրա այն ցավալի հետևանքներին, երբ դերասանը, ապրելով բնության տվածի հաշվին միայն, անհասկացողաբար դառնում է արգելք սեփական առաջադիմության:

Թատերական արդի երիտասարդության զարմանքը պետք է մեխմի Փափազյանի օրինակի վրա, որ դրա հակառակն է ապացուցում:

Ոչ մի հայ դերասանի նկատմամբ թերևս բնությունն այնքան շուալլ չի գտնվել, որքան Փափազյանի: Եվ, միաժամանակ, ոչ մի հայ դերասան առատորեն ստացած ալդ հարստությունը այդպես չի բազմապատկել, ինչպես նա: Սա այն դեպքն է, երբ թվարանական հասկացությունը պետք է փոխարինվի մաթեմատիկականով, այն ել բարձրագույն, որովհետև տվածուրիկն ու ստացականը մրցում են իրար հետ, հասնելով... բացարձակ ներդաշնակության:

Բնությունը ում շատ է տալիս, նա այնքան ավելի համեստ է լինում և հակառակը՝ նվազ օժտվածը առաջին իսկ հաջողությունից գլուխը կորցնում է ու կարծում, թե իրեն հայտնի է կատարելության սահմանն ու ինքն էլ հասել է դրան: Երևի դա ել հետևանք է այն պարզ ծշմարտության, որ պակաս օժտվածը և մանավանդ, եթե քիչ էլ գիտի, իրենով է չափում աշխարհը, որ նրա աչքին փոքր է գալիս: Մինչդեռ արտակարգ ընդունակությունների տեր արվեստա-

գետի համար աշխարհն անհայտներով լի անսահմանություն է, որի ո՞չ սկիզբն է երևում, ո՞չ վերջը, ու կատարելությունն էլ, որ այդ նույն անհայտների հայտնաբերումն է, նման է չքոնվող կապույտ թռչունի, որին համնելու ու բռնելու կամքը մարդուն պահում է մշտապես լարված թոփշի մեջ:

Այս իմաստով էլ մեծերի փորձը իր մեջ կրում է ոչ միայն հանձարի դրոշմը, այլև բնությունից ստացածը մշակելու, հոկելու խրատական իմաստը:

Ամբիոնին մոտեցող ամեն դերասան դեռ ուսուցիչ չէ, եթե անգամ մանկավարժի բարձրագույն տիտղոսին է հասել պաշտոնապես, բայց բեմում իր վարպետությամբ ու հանձարով փայլատակող ամեն մի դերասան ուսուցիչ է սեփական կամքից անկախ: Եվ հաճախ էլ նրան հետևողների կամքից անկախ, քանի որ ազդեցությանը դիմադրել չկարողանալը որոշում է ներգործող արվեստի հմալքի չափը:

Այն դասերը, որոնց մասին խոսք է լինելու, ընդհանրացած տպավորություններ են, որոնք գոյացել են ո՞չ երեկ և ո՞չ էլ միանգամից, այլ տասնամյակների ընթացքում: Նրա բեմական կյանքից բխող դասերի իմաստն այնքան ընդարձակ է ու ոչ միայն բեմական, որ նրան դասում է հայ մշակութի վերջին հիսնամյակի երեք մեծերի՝ Զարենցի, Սարյանի և Թամանյանի կողքին:

Ո՞րն է, այնուամենալիվ, այն առաջին դասը, որ մեծագույն ողբերգուի կյանքի պատմությունը թելադրում է մեր թատերական երիտասարդությանը:

* * *

Փափազլանի առաջին դասը վերաբերում է արդիականի զգացողությանը: Այդ զգացողությունը սկիզբ է առնում ոչ թե բեմ բարձրանալիս կամ ներկայացման փորձերի ընթացքում, այլ այն պահերից, երբ նա իր ծեռքն է առնում պիեսը: Այդ զգացողությունը կա ընդհանրապես, բայց անկախ այն պիեսից ու այն դերից, որի ուսումնասիրությունն իր հետ բերում է տվյալ կերպարին միայն վերաբերող զգացողության այդ արտահայտությունը: Դրա համար դերասանը պետք է կարողանա կերպարը տեսնել մյուս կերպարների.

ընդհանուր կապակցության շղթայում և նրա շրջապատի շարժման մեջ, որպեսզի հայտնվի այն կամուրջը, որի վրայով հերոսն իր ապրած ժամանակներից առնչվի քո ապրած ժամանակների հետ:

Մտքի բոնությունը չի օգնի, եթե դերասանը իր ժամանակի մարդը չէ: Ոչ էլ հարկավոր է, որ դերասանը մատը տանի քունքին ու մտածի, թե հեռավոր ժամանակների կյանքն ինչպես բերի ու կապի իր ժամանակի հետ: Եթե դերասանը զգում է ժամանակը, կրում է նրան իր մեջ, ժամանակի ոգին իր ոգին է,— կծնվեն այդ կապերը:

Սակայն այս հարցն ըստ Փափազյանի դերասանական փորձի՝ ունի մի այլ կողմ նույնպես: Ժամանակն, ըստ նրա, լայն հասկացություն է: Եվ Փափազյանի միտքը գործել է ընդարձակ շառավիղով. ոչ թե այսօրվա օրը, այսօրվա խնդիրը, այսօր վառվող և վաղը մոռացության տրվող հարցերը, մի խոսքով կյանքի անցողիկ կողմը, այլ մարդկային կյանքի բարդ հասկացություններն իրենց ամենաընդգրկուն ժավալներով:

Ըստ որում, և դա հետաքրքիր է անպայման, ժամանակի զգացողությանը զուգահեռ՝ հայրենի ժողովրդի պատմական ծակատագրի գիտակցում: Եվ սա ոչ Նեղ-ազգային ըմբռնումով, այլ պատմական-հասարակագիտական լայն զուգորդություններով: Եթե ուսումնասիրվեն Օթելլոյի կամ Համլետի կերպարների ըմբռնման տարրութերումները, ապա պարզ կդառնա Փափազյան-ողբերգակի արվեստի հմայքներից մեկը՝ թերևս կարևորագույնը: Մասլով հեղինակին հարազատ, նա չէր կորցնում հայրենի պատմության զգացողությունը: Եվ մնալով իր ժողովրդի զավակ, նա երբեք չէր սահմանափակում իրեն միայն ազգային պատմությամբ ու շարունակում էր իր անհանգիստ հետամտությունը՝ ի՞նչ սրեր են կախված այսօր մարդկության գլխին:

* * *

Դերասանի ստեղծագործական միտքը պետք է աշխատի Ներկայացումից Ներկայացում: Քանի որ նա խաղում է այդ կերպարը, դերը ենթակա է մշակման: Սա Էլ նրա դասերից մեկն է:

Փափազյանը որևէ դեր երբեք չէր համարում ավարտված: Դա է պատճառը, որ Համլետը լիներ թե, մանավանդ, Օթելլոն, ամեն Ներկայացման մեջ իրենց հետ բերում էին թարմություն: Երբեք նրա միտքը չէր սառչում մի կետի վրա: Հրաժարվում էր, մոռանում էր, կորցնում էր, բայց և՝ որոնում էր, գտնում և դժվար է ասել՝ կորցրա՞ծն էր ավելի արժեքավոր, թե գտածը: Դա կերպարի մշակման ընթացք չէր միայն, որ, ասենք, չէր դադարում: Կիրցրածն ու գտածը հաջախ համարժեք էին լինում: Ներկայացման հուզական ընդհանուր մթնոլորտը միայն կարող էր այդպիսի մանրամասնություն ծնել: Եվ, հակառակը՝ հաջորդ Ներկայացման մեջ դա կարող էր չժնվել, նույնիսկ՝ խանգարել: Սակայն սա չէ նրա այս դասից բը խող գլխավոր հետևությունը: Դերասանը, ըստ նրա, նույնիսկ հանձարեղ դերասանը, երբեք չի սպառում կերպարի ամբողջությունը: Եվ չի էլ կարող: Այդպիսի դերասան չի էլ եղել: Դերասանը լավագույն դեպքում հասնում է իր հնարավորությունների գերագույն բացահայտմանը: Եվ մեզ՝ հանդիսատեսներին է թվում, թե նա կարողացավ ընդգրկել կերպարի բոլոր խորքերը: Խսկական դերասանին լավ հայտնի է իր հնարավորությունների սահմանափակությունը կերպարի անսահմանափակության համեմատ:

Ըստ Փափազյանի, և սա խիստ կարևոր մի դիտարկ է, դերասանը ծգտում է նույնանալ կերպարին, բայց դա երբեք նրան չի հաջողվում: Արվեստը, ըստ երևութիւն, նախ հենց այդ ծգտումն է: Թվում է, թե այս է, կիասնես, բայց նա միշտ էլ մնում է անհասանելի տարածության վրա:

Ահա այստեղ, այս հողի վրա է մշակվում այն համեստությունը, որ կյանքի վերջում դերասանին բերում է խոր հիասթափություն մի դերից, որով նա հոչակվել է գրեթե ամբողջ աշխարհում: Խոսքն այն ապրումի մասին է, որ ունեցել են Սալվինին և Փափազյանը՝ առաջինը «Օթելլոն» նորից կարդալուց հետո, երբ վաղուց այլև չէր խաղում այդ դերը, իսկ երկրորդը՝ Օթելլոյի մասին իր գրքի վերջին էջերը շարադրելիս: Մեծ է այն դերասանը, որը բեմի վրա հաշիվները փակելուց հետո չի վախենա ասել, թե նոր, միայն նոր հասկացավ, թե ինչպես պետք էր խաղալ:

Մի առիթով Վախթանգովն այն միտքն է հայտնել, թե դերասանը իր դերի ռեժիսորը պետք է լինի:

Կարծես ասված է Փափազյանի մասին:

Եվ սա էլ, անշուշտ, նրա դերասանական արվեստի դասերից է:

Դերը մեծ լինի թե փոքր, միևնույն է, դերասանը պետք է կարողանա տեսնել նրան կողքից, «կողմնակի» այն աչքով, որ ունի ռեժիսորը: Մի տարբերությամբ, սակայն, ռեժիսորը տեսնում է բոլորի դերերը: Եվ, դրան գումարված, տարբեր կյանքերից մի համատեղ կյանք ստեղծելու կարողությունը:

Տշմարիտ ստեղծագործող դերասանն էլ հենց նա է, որ թատրոն է բերում ոչ միայն բեմադրող ռեժիսորի առաջարկած գաղափարի գեղարվեստական բացահայտումը: Բերում է իր հետ հերոսին ինչպես ինքն է տեսնում: Խոսքը բեմադրողի հետ հաջախ անտեղի վեծի բռնվելու դերասանական սովորութիւն չի վերաբերում: Խոսքն այն մասին է, որ դերասանը կարողանա գտնել մի դերի՝ տվյալ դեպքում իր դերի, ռեժիսորական պատկերն այն ընդհանուր պատկերների շրջանակում, որ գծել է բեմադրողը: Ուրեմն՝ ոչ թե ռեժիսորի հաջվին ապրող դերասան, այլ ինքն իր ռեժիսորը եղող դերասան: Դրա համար պետք է ունենալ գործուն միտք, երևակայություն և նյարդային կոր կառուցվածք:

Ով գոնե մեկ անգամ լսել է կերպարների ու նրանց բեմական փոխհարաբերությանը վերաբերող ռեժիսոր Փափազյանի բացատրությունները, կխսուտվանի, որ ոչ մի ռեժիսորից չի լսել դերի այդպիսի բեմական ցայտուն բնութագրում: Բայց՝ ալթքանը միայն: Խակ հետո, երբ բացատրությանը պետք է հաջորդեր բացատրված Ներկայացումը որպես կենդանի գործողություն, ռեժիսոր Փափազյանը գիշում էր մեր երիտասարդ ռեժիսորներին անգամ: Ուրեմն, խոսքը ոչ թե ռեժիսոր լինելու մասին է, որի արվեստը գլխավորապես բազմանշանակ տարրերը ի մի բերելու և իր գլխավոր գաղափարին ամեն ինչ ենթարկելու կարողությունն է, այլ իր դերի ռեժիսորը լինելու մասին է, այն մասին, թե ինչ է ինքը և որն է այն ծանապարհը, որով անցնելու է իր հերոսի կյանքը:

Զգացվում է ինքնուրունությունը: Զգացվում է դերասանը: Գի-

տես, որ դերը Ներքուստ այնքան լավ է կառուցված, որ կարող է նույնիսկ բեմական ընդհանուր մթնոլորտից անկախ գոյություն ունենալ, առանձին, թեև միաժամանակ զգում ես, թե Ներքին ինչպիսի ուժեղ կապով է նա ամրացած Ներկայացման ընդհանուր շղթաին:

* * *

Մյուս դասը, թվով չորրորդը, Վերաբերում է կերպարի պլաստիկ լուժմանը: Թերևս ավելի ծիշտ կլինի ասել՝ Փափազյանի պլաստիկական մտածողությանը:

Պլաստիկան այն սահմանն է, որից այն կողմ գրականությունը դառնում է թատրոն:

Չեմ կարծում, որ առարկող լինի, անգամ արտիստի հակառակորդները կհաստատեն, թե իայ դերասաններից որևէ մեկի պլաստիկ զգացողությունը կարող է համեմատվել Փափազյանի պլաստիկայի հետ: Ավելի խորանալու դեպքում երևի անառարկելի դառնամի ծշմարտություն, որ մեր ամենապլաստիկ դերասաններն ի վերջոն ան հետևողդներն են ու շատ բան են նրանից փոխ առել:

Ըստ երևույթին, դերասան Փափազյանի կողքին ապրում եր ոչ միայն գրողը, այլև՝ նկարիչը:

Ոչ ոք չեր կարծում, թե Փափազյանը գրող է, բայց հետո, երբ գրիչը ծեռքն առավ, պարզ դարձավ, որ նա իսկապես գրող է, այն ել՝ առաջնակարգ: Ոչ ոք լուրջ նշանակություն չեր տալիս Կարդան Աճեմյանի ի միջի այլոց, կատակով արվող մատիտանկարներին, բայց հետո, երբ տպագրության հանձնվեցին դրանք, պարզվեց, որ անուն հանած այսօրվա մեր Ժաղաննկարիչներն անգամ դժվար թե կարողանան նրա հետ ոտք մեկնել: Սակայն սրանք ավելին են, քան հաճելի անակնկալ: Աճեմյանը, որպես ուժիսոր, Ներկայացումը տեսնում է նկարչորեն կառուցված: Նույնը և՝ Փափազյանը:

Ի՞նչ կլիներ, եթե Փափազյանն ել նկարեր,— հայտնի չէ: Կը-հասնե՞ր, արդյոք, իր խաղընկերներից մեկի՝ Լաքայի աստիճանին, նույնպես հայտնի չէ: Բայց որ դերասանական պատկերացման մեջ կար և նկարչական տարրը՝ վեր է ամեն մի կասկածից:

Հիշեք Օթելլոն, Համլետը, Արքենինը, Քինը, Ռուս-Ժուանը, Կոր-րադոն: **Ո՞ր** մեկն ասեմ: Եվ բոլորի համար արտիստը գտել էր այն-պիսի դերապատկեր, որ հանդիսատեսին թվում էր առավել համո-գիչը և միակ հնարավորը:

Մի օրինակ միայն:

Լոուրենս Օլիվյեի Օթելլոն նայում էի Վարդան Ածեմյանի հետ միասին: Երբ ներկայացումը վերջացավ, հետաքրքրվեցի, թե ինչ կարծիքի է ռեժիսորը: Պատասխանը եղավ՝ «Փափազյանին տեսնե-լուց հետո, ինձ ոչ մի Օթելլո չի համոզել: Թվում էր, թե դերապատ-կերը գտնված չէ, քայլվածքը, շարժումը, նույնիսկ ծախս այն չեն: Փափազյանի մի անգամ թողած տպավորությունը խանգարել է ու-րիշների նույնիսկ հաջողությունը տեսնել, գնահատել: Այս առաջին անգամն էր, որ Փափազյանը չխանգարեց»:

Հարցը Օլիվյեի Օթելլոյի գնահատությանը չի վերաբերում, այլ Փափազյանի սպառիչ տպավորության հասնելու կարողությանը, որ խանգարել է նույնիսկ անսպառ երևակայության տեր ռեժիսորին՝ հնարավոր համարել Օթելլոյի բեմական մի որևէ այլ պատկերում:

Հարցը չի վերաբերում կերպարի արտաքին կողմին միայն: Հանդիսատեսը տեսնում է դերի նախ արտաքին պատկերը և հետո միայն, ժամանակի ընթացքում, ժանոթանում կերպարի կյանքին, նրա, ինչպես ընդունված է ասել, հոգու շարժմանը: Եվ հասկանում էիր, որ եթե այսպես է դերի արտաքին պատկերը և ոչ այլ կերպ, ապա կերպարի բնույթի թելադրանքով միայն:

Փափազյանի փայլուն ժամանակների հանդիսատեսը թող հիշի Ռուս-Ժուանի քայլվածքը: Եվ դրա հետ միասին մտաբերի Մակբերի, Օթելլոյի, Համլետի քայլվածքները: Շարժման, գործողության ար-տաքին պատկերն էր այլ, Մակբերի քայլերը ժանր էին, Օթելլոյինը՝ Նլարդային, Համլետինը՝ սկզբում հանդարտ, հետո անհանգիստ ու տագնապալի: Իսկ Ռուս-Ժուանը հողի վրայով անցնում էր այնպես թեթևասահ, որ ո՛չ հողն էր զգում, որ ոտք է դիպել իրեն և ո՛չ էլ ոտքն էր զգում, թե իր տակ հող կա: Ասես երջանիկ մի զգացում նրան արբեցրել էր այնչափ, որ չէր զգում կյանքի ժանրությունից ոչ մի բան:

Այս դասից բխում է երկու կետ, որ, ի միջի այլոց, այսօր հա-

Ճախ ապրում են միմյանցից անկախ, մինչդեռ պետք է նրանք միասին լինեին կամ իրարով պայմանավորված:

Արդի թատրոնում կամ Շնը մղված է հետ, կարելի է ասել մոռացլած է, կերպարի Ներքին կյանքի համար դերասանը չի որոնում համապատասխան ձև, թողնում է, որ ձևն ինքն իրեն գա, առանց իր միջամտության: Կամ ել ծիշտ հակառակը՝ ձևի մշակումը, պատմական լուծումը դառնում է ինքնանպատակ, և մոռացվում է կյանքը, հարցը, ներքին աշխարհը, այսինքն՝ ամենագլխավորը, այն, ինչը լավ տեղ հասցնելու համար պետք է սրվի դերասանի պատմիկ գգացողությունը:

Սա դերասանական արվեստի մի այնպիսի կողմ է, որ պահանջում է ինչ-որ տեղ ու ինչ-որ չափով օժտվածություն բնությունից: Ինչպես լսողությունը երաժշտության մեջ: Հետո գալիս է աշխատանքը: Բայց դա ել քիչ է, եթե մարդ ընդունակ չի զոհաբերություն-ների:

* * *

Հինգերորդ դասը ես կանվանեի ամբողջության գգացում:

Որ ամբողջը մասերից է կազմված, հայտնի է: Բայց որ մասերը, որքան ել շատ, միասին վերցրած դեռ ամբողջ չեն, լավ գիտեր Փափազյանը: Ըստ նրա՝ արվեստում, հատկապես թատերական արվեստում, ոչ թե մասերից է գոյանում ամբողջը, այլ ծիշտ հակառակը՝ ամբողջից են առաջանում մասերը: Ումից և ինչպես, դրվարանում եմ ասել, Փափազյանը հենց սկզբից, որպես անառարկելի խրատ, ընդունեց այն միտքը, թե պետք չէ շտապել մտածել մանրամասների մասին, եթե դեռ հայտնի չէ ամբողջը: Ավելի ծիշտ՝ հեղինակի առաջարկած ամբողջը դեռ քո ամբողջը չէ, եթե մտադիր չես քեզ վրա վերցնել բեմից վերապատմողի տխուր պարտականությունը միայն: Ուսումնասիրիիր և համբերությամբ սպասիր, կարդա, լավ կարդա հեղինակին ու նրա հետ միասին՝ նաև ժամանակի գրականությունը, ու քո աչքի առաջ կբացվի նրան Շնող աշխարհը, կզգաս նրա ժամանակի նյարդը: Մինչև կզգաս, որ Շնուր է ամբողջի քո գգացողությունը: Եվ դա իր հետ կբերի ալր ամբող-

շին կենդանություն տվող անհրաժեշտագույնը, այն, ինչը այդ աշխարհն ու նրա մարդկանց դարձնում է տարբեր և միաժամանակ հարազատ, նույնիսկ հար և նման քո ապրած օրվան, քեզ ու քո ժամանակակիցներին հուզող հարցերին:

Ահա այդ պահին կերպարի ամբողջական զգացողությունը, գուցե և ոչ անմիջապես, կընի մանրամասնությունները, որոնք կիաստատեն կենդանությունը և ընդհատակյա առնչությունը արտիստի ապրած ժամանակի հետ՝ դրա ծշմարտացի հասկացողությամբ:

Այս ժամանակ ամբողջ կառուցվածքը կլինի լավ տրամաբանված, մասերի հարաբերությունը՝ հասկանալի, մեկը մյուսին լրացնող ու միմյանցով պայմանավորող և ոչ թե միմյանցից անկախ, մի միասնության չենթարկված, ինչպես դա պատահում է միշտ, երբ մանրամասները «կանխում» և խանգարում են ամբողջի ժնունդին:

Երբեք Փափազյանը չի հանգել մանրամասների իրարից անջատ լինելու վտանգին: Ամբողջին տիրելով, նա ազատություն է տալիս իր երևակայությանը, որի թոփչքը որքան էլ բարձր, միևնուն է, չեր կորցնում ամբողջի հետ նրա ունեցած և մեզ չերևացող կապը:

Երևի դրանով պիտի բացատրել, որ մի ներկայացման մեջ Փափազյանը հանկարծ հրաժարվում էր մի շաբաթ առաջ, կամ նույնիսկ նախորդ ներկայացմանը հանդիսատեսի հիացմունքին արժանացած մանրամասներից: Ամբողջության այսօրվա զգացողությունը, իբրև թելադրող տրամադրություն, ժնում էր մի այլ, բոլորովին տարբեր գույնի, տարբեր հնչյունի պահանջ, որ կարող էր արտահայտվել ուրիշ մանրամասների մեջ: Միմյանց հաջորդող մանրամասների առատության կողքին կային նաև կայունները, որոնք կամ միանգամից էին ժնվում, հանկարծ, ինչպես արցունքի հատիկը «Համլետում», նամակի այրման տեսարանը «Կենդանի դիակի» մեջ, կամ ել մշակվում էին տարիների ընթացքում, ինչպես թաշկինակի տեսարանը «Օթելլոյում»: Եվ դրանք մնում էին իբրև այնպիսի մանրամասներ, առանց որոնց թվում էր, թե ամբողջությունը ամբողջություն չեր լինի: Միամտաբար չենք անդրադառնում այն հարցին, թե ինչպես էինք, հապա, հիանում նույն Համլետով և Օթելլոյով, համարում դրանք բարձրագույն կատարելություն, երբ նույն

այդ մանրամասները դեռ մշակման այդ մակարդակին չեին հասել, կամ բոլորովին չեին ծնվել:

Կարևոր այստեղ հաջող, նույնիսկ փայլուն մանրամասն չեն: Կարևոր ամբողջությունն է, դրա զգացողությունը՝ ծնված ծիշտ ժամանակին: «Ինս ամիս» հետո՝ ո՞չ ավել, ո՞չ պակաս, իբրև բնական հասունություն, որ լուս աշխարհ է հայտնվում, ունենալով, քեզանից բացի, մի ծնող ևս՝ հեղինակը, բայց իբրև քո եղայան անկրկնելիություններից մեկը:

* * *

Փափազյանի մի դասն էլ, ասենք, վեցերորդը, վերաբերում է բեմական խոսքի ունախտական զգացողությանը:

Արտիստի բեմական խոսքը ուներ մի հրապուր, որ հետևանք էր, ինչպես Լևոն Քալանթարն էր ասում, խայտաբղետ և խայտալեզու Բյուզանդիոնից Կովկաս չված լսանդացի լինելուն: Այսինքն՝ արևմտահայ և արևելահայ լեզուների մի բնական խառնուրո, որ ունեին Ադամյանն ու Սիրանուլշը, բայց չունեցան Արուսն ու Հրաչյան, առաջինը նույնիսկ հակառակ այն բարձրագույն գիտակցության, որ իբրև պահանջ ներկայացնում էր ներասաններին հանուն բեմական խոսքի: Իսկ երկրորդը՝ հակառակ իր զգայուն ներքինի: Ուրեմն, հասկանալը և գիտենալը դեռ բավական չեն:

Փափազյանի բեմախոսքի այս կողմը չի կարող որպես դաս հայորդվել մի երիտասարդության, որ մեծացել է հիշածն իրականություններից մեկում միայն:

Բայց կա մի ուրիշ և շատ թանկագին կողմ:

Փափազյանի հայերենը հայերեն էր: Սրա վրա մարդիկ ուշադիր եղան, երբ դերասանի գրեթե կարդացին: Այսինքն՝ գրականությունից ստացած տպավորության տակ անդրադարձան բեմական խոսքին: Բնական է դա: Բայց Դեմիրջյանը, որի թափանցումը դեռ ըստ հարկի չենք կարողացել գնահատել, նրա լեզվի հայկականությունը նկատել է, երբ դեռ չկային «Հետադարձ հայացքի» հատորները, և ոչ չեր կարծում, թե մի Փափազյանի կողքին ապրում է մեկ ուրիշ Փափազյան ևս:

Նշանավոր գրողի ասած հայկականությունը, այսինքն՝ հարա-

զատությունը մեր լեզվի ոչ այնքան կանոններին, որքան եռթյանը, նրա ոգուն, շնչին, տարերքին, բարձրագույն օրինակ է, մինչդեռ դերասանների բեմական խոսքը, այն էլ շնորհալի, տաղանդավոր դերասանի, թե անցյալում և թե, մասսամբ, նաև հիմա, վտանգում է գավառի շեշտը՝ լինի դա Թիֆլիսը թե Պոլիսը, Ղարաբաղը թե Գյումրին:

Երբ Փափազյանը կար, գուցե մենք այնքան էլ չեինք զգում ու գնահատում նրա բեմական խոսքի հմալքը: Հիմա, երբ նա չկա այլևս, չկան մեր բեմի մլուս վարպետները նույնպես, ու մնացել է նրանց ծայնը, Փափազյանի և նրա արվեստակից ընկերների բեմական խոսքի տարբերությունը հակադրելի լինելու չափ նկատելի է: Մի դեպքում երգեցիկ, մի այլ դեպքում պաթետիկ, մանավանդ՝ դրամատիկական-ողբերգական դերերում, և դրա դիմաց՝ Փափազյանի զարմանալի պարզ ու բնական խոսքը:

Չկա Փափազյանի գեղեցկությունը, չկա նրա տեխնիկան, կա միայն խոսքը, միայն ինտոնացիան, շեշտը, արտաքերումը և, այնուամենայնիվ, առկա է նյութի հմաստի խոր թափանցում: Եվ, անշուշտ, նորբ զգացողություն, որով տարբերվում են Տերյանն ու Վարուժանը միմյանցից, իբրև հեղինակային ատաղձներ: Եվ երկու դեպքում էլ ինքը՝ Փափազյանը:

Փափազյանին հաջախ են մեղադրել արագախոսության համար: Եվ զուր: Նախ՝ ոչ ոք չի ասի թե նրա խոսքը Օթելլո կամ Արբենին խաղախս ուներ այն արագությունը, ինչ Շոն-Շուանում: Եվ հատկապես արված: Ոչ միայն ըստ բեմական կացության պահանջի, երբ սիրո խոստովանությունը պետք է շուտասեղուկի նմանվեր: Նման լիներ խաղի: Շոն-Շուանը խաղում է կյանքի հետ: Ավելի ստուգ՝ խաղ սրտերի հետ: Ուրեմն՝ կերպարը բնութագրելու միջոց:

Ոչ թե արագախոսություն է դա, այլ խոսքի արագ ոիթմ: Ոչ միայն արագ, այլև թեթև: Թեթև, հեշտ, դյուրին, ասես՝ ի միջի ալլոց:

Եվ մեր դերասանները դիմել են և հիմա էլ դիմում են երբեմն Փափազյանի խոսքի այդ առանձնահատկությանը, սակայն հաջախ շահելու փոխարեն կորցնդրմ են, որովհետև կարելի բան չէ մի կերպարի համար գտածը անհարկի տարածել ուրիշ և մանավանդ:

բնույթով խոր, ծանր և ավելի հանդարտ խոսք պահանջող կերպար-ների վրա:

Փափազյանի խոսքը, որ լի է Ներքին պաթոսով, պարզ էր ու բնական: Մեկ-մեկ նա ճգում էր խոսքի վերջին վանկը, բայց դա ընդհանրական ուժ չուներ: Նա այդ անում էր, ինչպես ասվեց, մեկ-մեկ միայն և դիտավորյալ, իր առաջ խնդիր ունենալով, որի լու-ծումը, նրա կարծիքով, պահանջում էր վերջին վանկի ճգում:

* * *

Փափազյանի արվեստի մի կողմն էլ այն էր, որ նրան տարբե-րում էր իր ժամանակի բեմի շատ հայտնի վարպետներից և կապում դերասանական ստեղծագործության արդի միտումների հետ:

Այն ժամանակ, երբ դերասանի վարպետության աստիճանը չափվում էր նրանով, որքան նա անձանացելի էր լինում մի դերից մյուսը, Փափազյանը արտաքինը փոխում էր ալնքան, որքան պա-հանջում էր կերպարը: Երբեք չեր թաքնվում արտաքին ծածկի ետև: Հարցն այն չէ, թե արտաքնապես փոխվելու չափը որքան էր: Հարցն այն է, որ նա, մարմնավորելով կերպարները, պատկերում էր նաև իր հոգուց մի մաս, իրենից ինչ-որ մի բան: Ուրեմն, ոչ միայն կեր-պարի ստեղծում, այլ դրա հետ միասին՝ նաև ժամանակակից մար-դու ներքին աշխարհի բացահայտում: Ընդհանուրի կողքին իրենը, մասնավորը, պատմության դիմաց այսօրվա մարդու ապրումը: Դա չի նշանակում, որ նա կերպարի հաշվին խաղում է ինքն իրեն: Բայց ոwa նշանակում է, որ նա, կերպար դառնալով, չի դադարում ինքը լինելուց: Դա չի նշանակում նաև, որ նա պատմությունը ար-դիականացնում է: Բայց դա նշանակում է, և խիստ կարևոր է դա, որ նա պատմությանը նայում է քսաներորդ դարի մարդու աչքերով: Բայց որպեսզի անցած-գնացած ժամանակների ողբերգական իրա-դարձությունների, մի խոսքով, պատմության դիմաց կանգնի այս-օրվա մարդը և կերպարի կողքին ինքն էլ լինի, դրա համար մարդ-պետք է հարուստ ներքին ունենա, մտքերի և հույզերի ալնպիսի աշխարհ, որ հետաքրքիր լինի հանդիսատեսին:

Թվում է, թե կարելի է կանգ առնել: Դասերի թիվը յոթի հասցելը պայմանական է, որովհետև արտիստի հարուստ փորձից կարելի էր երեք այդքան նյութ քաղել:

Խոսքիս սկզբում ծովը հիշեցի: Վերջերս, Փափազյանի մասին մտածելիս, աչքիս առցև միշտ գծագրվում է ծովի պատկերը: Ինչո՞ւ ինքս էլ չգիտեմ: Որ Սիրանույշը սիրում էր ծովը՝ հայտնի է: Աբելյանի անվեհեր լողորդ լինելու մասին նույնպես գրվել է: Արուսին մոտիկից ծանազողները գիտեն, թե ինչ էր ծովը նրա համար: Իսկ թե ծովը ինչ տեղ ուներ Փափազյանի կյանքում, գոնե ես չգիտեմ: Եվ, այսուամենայիվ, նրա անունը իմ մտապատկերում գուգորդվում է ծովի հետ: Ու ոչ փոթորկոտ ու խոռվահույզ ծովը, որ ավելի մոտ էր նրա անհանգիստ խառնվածքին: Թերևս ոչ այնքան ծովն ընդհանրապես, որքան նրա հորիզոնը, որտեղ ողջագործվում են ծովն ու երկինքը: Երբեմն երբեմն, դա պատահում է խիստ հազվադեպ և միայն կանուխ առավոտյան, երկինքը ծովից երիզող գիծը չքանում է, նրանք մերվում են, և այդ անսահմանությունը քեզ հաղորդակից է դարձնում հավերժությանը:

Գոգենը 1891-ին թողեց Փարիզը, թողեց իր նկարիչ ընկերներին ու տեղափոխվեց Թաիթի կղզին:

Մայրաքաղաքի աղմուկից հեռու, հեռու արվեստագետ ընկերների վեճերից, գտություններից, Թաիթիում նա գտավ մի անդորր, որ մոռացնել տվեց ամեն ինչ, նաև՝ ժամանակի հասկացությունը:

Նկարիչը հայտնեց այն միտքը, թե եվրոպացին կորցրել է հավիտենականության զգացողությունը: Նրա ասելով՝ քաղաքի մարդիկ, չունենալով հավերժության զգացումը, չունեն ներկայի ընկալում: Եվ այդ պատճառով մարդիկ իրենց միսիթարում են անցյալով կամ ապագա կյանքի ժրագրեր են կազմում: Մի խոսքով՝ անցածի և գալիքի արանքում են:

Ո՞չ տեղն է, ո՞չ էլ հարկ կա հիմա քննության առնելու, թե որքանով էր իրավացի արվեստագետը: Բայց տեղն է ու խկական ժամանակը խոսելու այն մասին, որ արվեստի խոշոր երևույթները հաղորդակից են դարձնում մեզ հավերժությանը:

Արվեստի մյուս տեսակների հետ նաև՝ բեմը, թատրոնի մեծա-

գույն Ներկայացուցիչները: Եվ, ինչ խոսք, նաև կամ ավելի ծիշտ՝ նախ և առաջ Փափազյանը: Մի դերասան, որ թատերական մշակույթի մի ամբողջ դարաշրջան է:

Նույնը կարելի է ասել Սարտիրոս Սարյանի և Ալեքսանդր Թամանյանի մասին:

Փափազյանը մեկն է ժողովրդական ոգու թանձրագույն խտացումներից: Նա միայն իր ժամանակի ծնունդը չէ: Ինչ-որ մի տեղ նա նաև անցյալից է գալիս: Եվ ինչ-որ մի տեղ էլ՝ կանխում է պապան:

19-րդ դարը ծնեց Աղամյան, 20-րդը՝ Փափազյան. Նկատի է առնվում հենց դա: Այդպիսի մեծություններ աշխարհ են գալիս հարյուրամյակը մեկ: Ժամանակ է պետք, հասունության այն ինը ամիսը, որ այս դեպքում տասնամյակներ են: Ոչ թե մի սերունդ գնաց, մյուսը եկավ, այլ դարը փոխվեց: Եվ դարերի հաջորդականությունը տեղի է ունենում ոչ թե թվականից թվական, այլ հասարակական կյանքի մեծ տեղաշարժերի թելադրանքով: Այսինքն՝ երբ արվեստը փոխվում է: Ավելի ծիշտ՝ երբ չի կարող արվեստը չփոխվել, ու այդ փոխվածը ծնում է իր մեծ զավակին: Խոսքն այն արվեստագետի մասին է, որ գալիս է անսպասելի հնարավորություններով: Գալիս է որպես կուտակումների խտացում, գալիս է մղելու արվեստը դեպի զարգացման ավելի լայն հորիզոններ:

Ուշադիր քննության առեք Փափազյանի արվեստը և կտեսնեք ոչ միայն հայկական, այլ նաև եվրոպական, ռուսական թատերարվեստների գործուն ներկայությունը: Ըստ որում, դա այնպիսի միքարդ միջնորդավորում է, որ եթե մի հնարով կարելի լինի ազգային հիմքից անջատել ոուսականն ու եվրոպականը, ծանաչելի չի լինի ո՞չ ոուսների և ո՞չ ել եվրոպացիների համար: Արտիստի հոգու խառնարանում դրանք այնպես են վերաձուլվել, այնպես են մեկից մյուսին հաղորդվել, հասել միմյանցը շնչող փոխադարձության, որ դժվար է նույնիսկ պատկերացնել, թե ինչ-որ ժամանակ դրանք գոյություն են ունեցել միմյանցից անկախ:

Սա այն է, որ երևի չի եղել մինչև Փափազյանը և գուցե չըր լինի, եթե աշխարհ չգար Փափազյանը: Զիներ Փափազյանը, ժամանակը կծներ մեկ ուրիշին: Եվ այդ ուրիշը կբերեր իր արվեստը՝ չեղած և անկրկնելի: Որքան ել արտիստը իր ժամանակի ոգուց

լինի, միևնույն է, նրա արվեստը անհատական արտահայտություն է: Եվ ամեն մի այլ մշակույթի յուրացում տեղի է ունենում ընկալման ու վերարտահայտման անհատական ուղիներով:

Նոյնը կիաստատեն Սարյանի և Թամանյանի արվեստը հետազոտողները:

Եվ գուցե մեծագույն դասը, ամենակարևորը բոլոր դասերից, կիխի հետևալ հետևությունը: Եվ դա վերաբերում է ոչ միայն թատրոնի մարդկանց, կամ նկարչության ու ձարտարապետության ասպարեզին, այլ ամենքին ու, նախ և առաջ, մեր երիտասարդությանն ընդհանրապես:

Որքան էլ մարդը բնությունից առատորեն շնորհված լինի, չի մեծանա, եթե նրա հայացքն ամփոփվի իր երկրի բարձրաբերձ լեռների մեջ միայն: Շահում է նա, որմ հայտնի է, որ լեռներից այն կողմ էլ կյանք կա: Եվ շահում է անպայման, երբ հաղորդակից է լինում այդ կյանքին: Մի խոսքով՝ հաստատված ծշմարտություն է, թե իսկական մեծությունները ժնվում են համաշխարհային արվեստի աղմկալի խաչմերուկներում: Վկա՝ Սարյանը, Զարենցն ու Թամանյանը: Եվ սրանց հետ Փափազյանը:

Թվում է, այս դեպքում ոչ մի նշանակություն չունի՝ ազգայինից ես գնում դեպի համամարդկայինը, թե համամարդկայինից ես գնում ազգայինին: Միայն թե աշխարհի հարստությունների առաջ գավառացի շմաս: Եվ ընդհակառակը՝ աշխարհով հարստացած ժամանակդ չկտրվես ազգային արմատից: Կարևորը աշխարհում շահած հարստությունդ հայրենի երկրի բերել կարողանալն է: Եվ հակառակը՝ երկրիդ, ժողովրդիդ ու հայրենի արվեստի անկրկնելիությունը աշխարհին հասցնելու խորհուրդը:

Ու երևի Փափազյանը, նրա հետ միասին նաև Սարյանն ու Թամանյանը այդ իմաստով վեր են գովեստներից: Նրանք մեր ժամանակներում արին ալն, ինչ չի արել ո՞չ մի դերասան, ո՞չ մի նկարիչ, ո՞չ մի ձարտարապետ:

Սարդն ապրում է կարծ' յոթանասուն, ութսուն տարի: Երբեմն մի փոքր ավելի: Բայց իր կարձատն կյանքում նա ապրում է հոգեկան մեծ կյանքով, որ ունեցել են իր հայրերը, պապերն ու նախնիները դարերի ընթացքում՝ Հոմերոսի ժամանակներից սկսած: Բայց անցյալը, այնուամենալիվ, պատմություն է, ու մարդը, որքան ել

խոր ընկալումների տեր, երևի չգգար անցած դարերի այրող ներկայությունը, եթե իր կողքին ապրող մեծերն իրենց մեջ չխտացնեին հազարամյակների կուտակումը՝ որպես խոսք, որպես միտք, որպես հնչյուն, որպես գույն: Զինեին այդ հազարամյակները, կյանքի չեին կոչվի գրականության և արվեստի այդ մեծերը: Զինեին այդ մեծերը, որոնք իրենց հեռավոր նախնիների հետ «դու»-ով են խոսում, չեինք զգա մեզ հավիտենականության ընթացքի մեջ:

Երբ կողքիդ մեծություն է ապրում, դու ել ես քեզ այլ կերպ զգում: Եթե պարտք ես վերցնում, գիտես, որ կարող ես նաև պարտքը տալ: Երբ կողքիդ ապրում են գրականության և արվեստի հանձարներ, ապրում ես հոգու մի լիությամբ, որի ժայիտի և թախսիծի բերած հարստությունը օրվա հոգսերից հեռու է պահում քեզ, չի թողնում, որ մանրանաս, կենցաղայնանաս: Ու դա ել հետո տարիներ շարունակ պահում է քեզ, ինչպես անթեղված կրակի շերմությունը:

Ժամանակները փոխվում են: Սերունդները՝ նույնպես: Փոխվում են ձաշակները՝ տարափոխիկ հիվանդությունների նման: Եվ նման դեպքերում է, որ թվում է, թե «չես զգում մոխրի տակ եղած կրակը, բայց փորձիր ապա ձեռքերով վերցնել մոխրը...», այն ժամանակ կզգաս կրակի այրող ներկայությունը:

Զարենցի սրտովք չեր, երբ որևէ մեկը իր նման էր գրում՝ «ալյա Զարենց»: Նովյն՝ Սարյանը, Թամանյանը, Փափազյանը: Երբ նրանք աշխարհ եկան՝ շատերից սովորեցին, բայց ոչ մեկին չնըմանվեցին: Նրանցից հետո եկողները պետք է սովորեն իրենցից, ուրիշներից, բայց չպետք է նման լինեն դրանցից որևէ մեկին: Պետք է իրենք լինեն, լինեն այն, ինչ են բնությունից, կյանքից, դարից: Կիեռանան մարդիկ Զարենցից, Փափազյանից, Թամանյանից ու Սարյանից, բայց կանցնի ժամանակ ու նորից կվերադառնան նրանց՝ որպես արվեստի մայրուղիների վրա կախված կանաչ լույս:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՈՒԲԵՆ ՎԱՐՈՍԻ ԶԱՐՅԱՆ

ՓԱ.ՓԱ.ԶՅԱՆ

Խմբագիր՝ Ս. Ս. ՀԱՐՈԵՆՅԱՆ
Նկարիչ՝ Զ. Ե. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Գեղ. և տեխ. խմբագիր՝ Զ. Ի. ՍԱՐԳՍՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ՝ Բ. Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

РУБЕН ВАРОСОВИЧ ЗАРЯН
ПАПАЗЯН
(На армянском языке)
Союз театральных деятелей Арм. ССР
Ереван-1988

ԿՖ 08550

Հանձնված է շարվածքի 18. 01. 1988 թ., ստորագրված է տպագրության 29. 03. 1988 թ., թուղթ տպագրական № 1, չափսը $60 \times 84^{1/16}$, տառատեսակը՝ «Արմենութիւն», տպագրության եղանակը՝ «Բարձր», ներդիրը՝ օֆսեթ, 10,6 հրատ. մամ. +8 ներդիր, 14,5 պայմ. տպ. մամ., '15,2 պայմ. ներկ. թերթ, գինը՝ 1 ռ. 10 կոպ., պատվեր 177, տպաքանակ՝ 1000:

Հայաստանի թատերական գործիչների միություն, Երևան 15,
Կարմիր բանակի փ. № 8:

Երևանի պետհամալարանի տպարան, Երևան, Արովյան փ. 52:
Союз театральных деятелей Армении, Ереван-15, ул. Кармир Банаки, 8.
Типография Ереванского Госуниверситета, Ереван, ул. Абовяна, 52.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0214356

A 76518

18. 10 500.



76518